Դատական Գործ N: ԵԿԴ/0189/01/17

Կենտրոն և Նորք-Մարաշ

Նոր քրեական գործ

Երբ է գործը ստացվել:	14-07-2017
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	58209617
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Սամվել Բաբայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա դրդել է մի խումբ անձանց՝ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով ռազմամթերք հանդիսացող <<Իգլա>> տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիր ձեռք բերելուն, փոխադրելուն և պահելուն, ինչպես նաև փոխարկման արդյունքում ձեռք է բերել հանցավոր ճանապարհով ստացված գույք: Սանասար Գաբրիելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մի խումբ անձանց հետ՝ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով ձեռք է բերել, փոխադրել և պահել ռազմամթերք հանդիսացող <<Իգլա>> տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիր: Արմեն Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մի խումբ անձանց հետ՝ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով ձեռք է բերել, փոխադրել և պահել ռազմամթերք հանդիսացող <<Իգլա>> տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիր: Կարեն Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է հանցավոր ճանապարհով ստացված գույքը՝ դրա հանցավոր ծագումը և իրական բնույթը խեղաթյուրելու և օրինական շրջանառության մեջ մտցնելու նպատակով ձեռք բերելուն: Անդրանիկ Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է հանցավոր ճանապարհով ստացված գույքը՝ դրա հանցավոր ծագումը և իրական բնույթը խեղաթյուրելու և օրինական շրջանառության մեջ մտցնելու նպատակով ձեռք բերելուն: Ժորա Զաքարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է հանցավոր ճանապարհով ստացված գույքը՝ դրա հանցավոր ծագումը և իրական բնույթը խեղաթյունելու և օրինական շրջանառության մեջ մտցնելու նպատակով ձեռք բերելուն: Դավիթ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է հանցավոր ճանապարհով ստացված գույքը՝ դրա հանցավոր ծագումը և իրական բնույթը խեղաթյուրելու և օրինական շրջանառության մեջ մտցնելու նպատակով ձեռք բերելուն:

Մեղադրյալ

Անձ

Անուն	Սամվել
Ազգանուն	Բաբայան
Հայրանուն	Անդրանիկի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒

Հոդված_1

Հոդված	38-235 Մաս 2
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Սանասար
Ազգանուն	Գաբրիելյան
Հայրանուն	Անդրանիկի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Հոդված_1	
Հոդված	235 Մաս 2
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Արմեն
Ազգանուն	Պողոսյան
Հայրանուն	Նշանի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Հոդված_1	
Հոդված	235 Մաս 2
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Կարեն
Ազգանուն	Քոչարյան
Հայրանուն	Իշխանի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Հոդված_1	
Հոդված	38-190 Մաս 1

Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Անդրանիկ
Ազգանուն	Քոչարյան
Հայրանուն	Իշխանի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Հոդված_1	
Հոդված	38-190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Ժորա
Ազգանուն	Զաքարյան
Հայրանուն	Գերասիմի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Հոդված_1	
Հոդված	38-190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Դավիթ
Ազգանուն	Հարությունյան
Հայրանուն	Վլադիմիրի
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ծննդյան ամսաթիվ	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Հոդված_1	
Հոդված	38-190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	

Ազգանուն	
Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	8.21
Իրեղեն ապացույց	
Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խափանման միջոց:	Կալանավորում
Խափանման միջոց:	Կալանավորում
Խափանման միջոց:	Կալանավորում
Խափանման միջոց:	Ստորագրություն չհեռանալու մասին
Խափանման միջոց:	Ստորագրություն չհեռանալու մասին
Խափանման միջոց:	Ստորագրություն չհեռանալու մասին
Խափանման միջոց:	Ստորագրություն չհեռանալու մասին
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո
Չափահաս:	Այո
Մակագրել	
Երբ:	14-07-2017
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Արշակ Վարդանյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	
Ընդունվել է վարույթ	
Երբ:	17-07-2017
Որոշումը ուղարկվել է կողմերին:	18-07-2017
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	18-07-2017
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	31-07-2017
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան

Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր	
Անուն	Արամ
Ազգանուն	Արամյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Ավետիս
Ազգանուն	Քալաշյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Կարապետ
Ազգանուն	Աղաջանյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Գագիկ
Ազգանուն	Մայիլյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Վիկտորյա
Ազգանուն	Կիրակոսյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Ավետիս
Ազգանուն	Քալաշյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Ավետիս
Ազգանուն	Քալաշյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Արարատ
Ազգանուն	Գրիգորյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն	Վաղարշակ
Ազգանուն	Գևորգյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Դատավարության կողմեր	
Անուն:	
Հասցե:	
ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	7
Նիստը:	Կայացվել է

Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	28-08-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	04-09-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	7
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	11-09-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	23-09-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	7
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	25-09-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	02-10-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	

Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	09-10-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	16-10-2017
ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	23-10-2017
ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	06-11-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	13-11-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	20-11-2017
ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	27-11-2017
Ժամ:	11:00
Նիստերի դադարի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	28-11-2017
Ժամ:	11:00
Նիստերի դադարի համարը:	5
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Կայացվել է դատավճիռ	
Ամսաթիվ:	28-11-2017
Այլ նշումներ:	

Մեղադրական	
Մեղադրյալ	
Անուն	Սամվել
Ազգանուն	Բաբայան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	38-235 Մաս 2
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	190 Մաս 1
Այլ հանցագործության հոդվածներով:	Դատապարտվել է
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	
Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	

Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	

Մեղադրական

Մեղադրյալ

Անուն	Սաևասար
Ազգանուն	Գաբրիելյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017

Առավել ծանր հանցագործության հոդված

Հոդված	235 Մաս 2
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է

Այլ հանցագործության հոդվածներ

Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	
Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	
Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	

Մեղադրական

Մեղադրյալ

Անուն	Արմեն
Ազգանուն	Պողոսյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017

Առավել ծանր հանցագործության հոդված

Հոդված	235 Մաս 2
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է

Այլ հանցագործության հոդվածներ

Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում

Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	
Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	
Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	

Մեղադրական

Մեղադրյալ

Անուն	Կարեն
Ազգանուն	Քոչարյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017

Առավել ծանր հանցագործության հոդված

Հոդված	38-190 Մաս 1
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է

Այլ հանցագործության հոդվածներ

Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	Պատիժը պայմանականորեն չի կիրառվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	
Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	

Մեղադրական

Մեղադրյալ

Անուն	Անդրանիկ

Ազգանուն	Քոչարյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	38-190 Մաս 1
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	Պատիժը պայմանականորեն չի կիրառվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	
Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	
Մեղադրական	
Մեղադրյալ	
Անուն	Ժորա
Ազգանուն	Զաքարյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	38-190 Մաս 1
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	Պատիժը պայմանականորեն չի կիրառվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Քրեական պատասխանատվությունից	

ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	
Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	

Մեղադրական

Մեղադրյալ

Անուն	Դավիթ
Ազգանուն	Հարությունյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Ամսաթիվ:	28-11-2017

Առավել ծանր հանցագործության հոդված

Հոդված	38-190 Մաս 1
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է

Այլ հանցագործության հոդվածներ

Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել:	Պատիժը պայմանականորեն չի կիրառվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով:	
Բռնագանձնված գույքի չափը:	
Օրենսգիրք:	Քրեական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քրեական դատավարության օրենսգիրք
Այլ նշումներ:	
Կիրառվել է քրեաիրավական հարկադրանքի միջոց:	

Դատական ակտ

Դատական ակտի բովանդակությունը:	Գործ ԵԿԴ/0189/01/17 ԴԱՏԱՎՃԻՌ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան)՝ նախագահությամբ դատավոր՝ Արշակ Վարդանյանի, քարտուղարությամբ՝ Դարինա Բեգլարյանի,

մասնակցությամբ՝

մեղադրող՝ Արամ Արամյանի,

պաշտպաններ՝ Վաղարշակ Գևորգյանի,
Միհրան Պողոսյանի,
Արարատ Գրիգորյանի,
Ավետիս Քալաշյանի,
Վիկտորյա Կիրակոսյանի,
Կարապետ Աղաջանյանի և
Գագիկ Մայիլյանի,

նույն Դատարանում՝ դռնբաց դատական նիստերի կարգով քննեց և 2017թ. նոյեմբերի 28-ին ավարտեց քրեական գործն ըստ մեղադրանքի՝
1. Սամվել Անդրանիկի Բաբայանի (ծնված 1965թ. մարտի 5-ին, ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, նախկինում չդատապարտված, ամուսնալուծված, խնամքին՝ կենսաթոշակառու մայրը /ըստ ամբաստանյալի հայտարարության/, հաշվառված է Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 21-րդ շենքի 3-րդ բնակարանում, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորում, արգելանքի տակ է 2017թ. մարտի 22-ից),
2. Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի (ծնված 1961թ. հունվարի 11-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 2003թ. սեպտեմբերի 18-ին ծնված որդին, նախկինում չդատապարտված, հաշվառված է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Չարենցի փողոցի 4-րդ շենքի 46-րդ բնակարանում, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորում, արգելանքի տակ է 2017թ. մարտի 22-ից),
3. Արմեն Նշանի Պողոսյանի (ծնված 1959թ. դեկտեմբերի 25-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ մասնագիտական կրթությամբ, վատառողջ է, ամուսնացած, խնամքին՝ գործազուրկ կինը և կենսաթոշակառու ծնողները, նախկինում չդատապարտված, հաշվառված է Վաղարշապատ քաղաքի Մաշտոցի փողոցի 61-րդ շենքի 5-րդ բնակարանում, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորում, արգելանքի տակ է 2017թ. մարտի 22-ից),
4. Կարեն Իշխանի Քոչարյանի (ծնված 1975թ. հունվարի 20-ին, Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, վատառողջ, ամուսնացած, խնամքին՝ 2004թ. փետրվարի 13-ին և 2007թ. հուլիսի 22-ին ծնված զավակները, նախկինում չդատապարտված, հաշվառված և փաստացի բնակվում է Երևան քաղաքի Հալաբյան փողոցի 34 ա շենքի 38-րդ բնակարանում, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն, արգելանքի տակ է գտնվել 3 օր),
5. Անդրանիկ Իշխանի Քոչարյանի (ծնված 1960թ. փետրվարի 15-ին, Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, վատառողջ է, աշխատում է Կոտայքի մարզի ,Բուժականի Գ.Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ-ում՝ որպես զինղեկ, նախկինում չդատապարտված, հաշվառված և փաստացի բնակվում է ՀՀ Կոտայքի մարզ, Բուժական գյուղի 1-ին փողոցի 20-րդ տանը, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու վե-րաբերյալ ստորագրություն),
6. Ժորա Գերասիմի Զաքարյանի (ծնված 1950թ. հունիսի 1-ին, ՀՀ Կոտայքի մարզի Բուժական գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի,

բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, նախկինում չդատապարտված, հաշվառված և փաստացի բնակվում է Բուժական գյուղի 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի 8-րդ տանը, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն, արգելանքի տակ է գտնվել 3 օր) և
7. Դավիթ Վլադիմիրի Հարությունյանի (ծնված 1977թ. ապրիլի 15-ին, Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 1999թ. դեկտեմբերի 13-ին և 2012թ. հունվարի 18-ին ծնված զավակները, 2-րդ խմբի հաշմանդամ մայրը, նախկինում չդատապարտված, հաշվառված և փաստացի բնակվում է Երևան քաղաքի Հալաբյան փողոցի 34ա շենքի 13-րդ բնակարանում, սույն գործով մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախա-տեսված արարքի կատարում, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն, արգելանքի տակ է գտնվել 3 օր) :

Գործի դատավարական նախապատմությունը.
2014թ. հունիսի 9-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վար-չությունում Հրաչյա Մայիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58207414 քրեական գործը, որի վարույթը 2015թ. սեպտեմբերի 19-ին կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի ինքնությունը պարզված չլինելու հիմքով:
2016թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է մեկ այլ, թիվ 58213816 քրեական գործը:
2017թ. մարտի 20-ին որոշում է կայացվել թիվ 58207414 քրեական գործի վարույթը վերսկսելու մասին, իսկ 2017թ. մարտի 22-ին որոշում է կայացվել թիվ 58207414 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նոր՝ թիվ 58204317 քրեական գործը հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին:
2017թ. մարտի 30-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում որոշում է կայացվել թիվ 58204317 և 58207414 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և նախաքննությունը 58204317 համարով շարունակելու մասին:
2017թ. ապրիլի 18-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում որոշում է կայացվել թիվ 58204317 և 58213816 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և նախաքննությունը 58204317 համարով շարունակելու մասին:
2017թ. հունիսի 16-ին որոշում է կայացվել թիվ 58204317 քրեական գործից Սամվել Բաբայանի, Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի, Կարեն Քոչարյանի, Անդրանիկ Քոչարյանի, Ժորա Զաքարյանի և Դավիթ Հարությունյանի վերաբերյալ մաս անջատելու և անջատված մասին թիվ 58209617 համարը շնորհելու մասին:
Թիվ 58209617 համարի տակ միավորված քրեական գործերով՝
2016թ. սեպտեմբերի 20-ին Արմեն Հակոբյանը և Գոռ Շակոյանը բերման են ենթարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք:
2016թ. սեպտեմբերի 21-ին ձերբակալվել է նույն օրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք բերման ենթարկված Դավիթ Վլադիմիրի Հարությունյանը:
2016թ. սեպտեմբերի 21-ին ձերբակալվել է նույն օրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք բերման ենթարկված Կարեն Իշխանի Քոչարյանը:
2016թ. սեպտեմբերի 21-ին ձերբակալվել է նույն օրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք բերման ենթարկված Ժորա Գերասիմի Զաքարյանը:
2016թ. սեպտեմբերի 23-ին նախաքննական մարմնի որոշմամբ Ժորա Գերասիմի Զաքարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն:
2016թ. սեպտեմբերի 23-ին նախաքննական մարմնի որոշմամբ Դավիթ Վլադիմիրի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է

կիրառվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն:
2016թ. սեպտեմբերի 23-ին նախաքննական մարմնի որոշմամբ Կարեն Իշխանի Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն:
2016թ. սեպտեմբերի 27-ին Դավիթ Վլադիմիրի Հարությունյանին մեղադրանք է առա-ջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:
2016թ. սեպտեմբերի 27-ին Կարեն Իշխանի Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:
2016թ. սեպտեմբերի 27-ին Ժորա Գերասիմի Զաքարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:
2017թ. մարտի 21-ին Հրաչյա Սարգսի Մայիլյանը բերման է ենթարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք, նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն:
2017թ. մարտի 22-ին ձերբակալվել է նույն օրը ՀՀ ազգային անվտանգության ծառա-յության վարչական շենք բերման ենթարկված Սանասար Անդրանիկի Գաբրիելյանը:
2017թ. մարտի 22-ին ձերբակալվել է նույն օրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք բերման ենթարկված Արմեն Նշանի Պողոսյանը:
2017թ. մարտի 22-ին ձերբակալվել է նույն օրը ՀՀ ազգային անվտանգության ծա-ռայության վարչական շենք բերման ենթարկված Սամվել Անդրանիկի Բաբայանը:
2017թ. մարտի 24-ին Արմեն Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը, մեղադրյալ Արմեն Պողոսյանի նկատմամբ երկու ամսով որպես խափանման միջոց է ընտրել կալանավորում, որի ժամկետը հետագայում երկարացվել է:
2017թ. մարտի 24-ին Սանասար Գաբրիելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը, մե-ղադրյալ Սանասար Գաբրիելյանի նկատմամբ երկու ամսով որպես խափանման միջոց է ընտրել կալանավորում, որի ժամկետը հետագայում երկարացվել է:
2017թ. մարտի 24-ին Սամվել Բաբայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը, մեղադրյալ Սամվել Բաբայանի նկատմամբ երկու ամսով որպես խափանման միջոց է ընտրել կալանավորում, որի ժամկետը հետագայում երկարացվել է:
2017թ. մարտի 24-ին նախաքննական մարմնի որոշմամբ որպես խափանման միջոց չհեռանալու վերաբերյալ ստորագրություն է կիրառվել Հրաչյա Մայիլյանի նկատմամբ, վերջինս կասկածյալի կարգավիճակով հարցաքննվել է:
2017թ. մարտի 24-ին Ռոբերտ Աղվանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում:
2017թ. մարտի 24-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդ-հանուր իրավասության դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը, հետախուզվող մեղադրյալ Ռոբերտ Աղվանյանի նկատմամբ երկու ամսով որպես խափանման միջոց է ընտրել կալանավորում:
2017թ. մարտի 31-ին Հրաչյա Սարգսի Մայիլյանին առաջադրված

մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:
2017թ. մարտի 31-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Դ.Թորոսյանը որոշում է կայացրել գործով ամբաստանյալ Սամվել Անդրանիկի Բաբայանի գույքի վրա կալանք դնելու մասին, համաձայն որի՝ կալանք է դրվել վերջինիս անվամբ գրանցված ,MERCEDES-BENZ S600, մակնիշի 44 UU 444 համարանիշի ավտոմեքենայի վրա:
2017թ. մարտի 31-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Դ.Թորոսյանը որոշում է կայացրել գործով ամբաստանյալ Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի գույքի վրա կալանք դնելու մասին, համաձայն որի՝ կալանք է դրվել վերջինիս անվամբ գրանցված ,NISSAN PATHFINDER 3.5, մակնիշի 05 SO 075 համարանիշի ավտոմեքենայի և Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում գտնվող վարելահողի (համատեղ սեփականության իրավունք), խանութի, անասնաշենքի և 3 միավոր պահեստի, և վերջինիս անվամբ գույքագրված տնամերձ հողամասով բնակելի տան (համատեղ սեփականության իրավունք) վրա:
2017թ. մարտի 31-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Դ.Թորոսյանը որոշում է կայացրել գործով ամբաստանյալ Արմեն Նշանի Պողոսյանի գույքի վրա կալանք դնելու մասին, համաձայն որի՝ կալանք է դրվել վերջինիս անվամբ հաշվառված՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի 61-րդ շենքի 5-րդ բնակարանի վրա:
2017թ. հունիսի 7-ին որոշում է կայացվել մեղադրյալ Սամվել Բաբայանին առաջադրված մեղադրանքի մասը վերացնելու, մեղադրանքը փոփոխելու և լրացնելու մասին, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:
2017թ. հունիսի 7-ին որոշում է կայացվել մեղադրյալ Հրաչյա Մայիլյանի կողմից ինքնակամ ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և ,9M39, տեսակի 03277 համարի հրթիռը իրավապահներին ներկայացնելու հիմքով /ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով/ մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու և պահելու դրվագով նրա նկատմամբ քրեական հետապնդում չհրականացնելու մասին:
2017թ. հունիսի 9-ին որոշում է կայացվել Հրաչյա Մայիլյանին առաջադրված մեղադրանքի մասը վերացնելու, մեղադրանքը փոփոխելու մասին, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով:
2017թ. հունիսի 9-ին որոշում է կայացվել Արմեն Պողոսյանին առաջադրված մեղադրանքի մասը վերացնելու և մեղադրանքը փոփոխելու մասին, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով:
2017թ. հունիսի 12-ին որոշում է կայացվել Կարեն Քոչարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:
2017թ. հունիսի 12-ին Անդրանիկ Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:
2017թ. հունիսի 13-ին որոշում է կայացվել Դավիթ Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:
2017թ. հունիսի 13-ին որոշում է կայացվել Ժորա Զաքարյանին առաջադրված մե-ղադրանքը փոփոխելու մասին, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:
2017թ. հունիսի 13-ին որոշում է կայացվել Սանասար Գաբրիելյանին առաջադրված մեղադրանքի մասը վերացնելու և մեղադրանքը փոփոխելու մասին, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով:
2017թ. հունիսի 16-ին նախաքննական մարմնի որոշումներով Մարատ

Նալբանդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:
2017թ. հունիսի 16-ին նախաքննական մարմնի մեկ այլ որոշմամբ մեղադրյալ Մարատ Նալբանդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու վերաբերյալ ստորագրություն:
2017թ. հուլիսի 14-ին թիվ 58209617 քրեական գործը Սամվել Անդրանիկի Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով, Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Արմեն Նշանի Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարեն Իշխանի Քոչարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով, Անդրանիկ Իշխանի Քոչարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով, Դավիթ Վլադիմիրի Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով և Ժորա Գերասիմի Զաքարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով հաստատված մե-ղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, նախագահող դատավորին փաստացի հանձնվել 2017թ. հուլիսի 17-ին, նույն օրն ընդունվել է վարույթ, 2017թ. հուլիսի 21-ին նշանակվել դատական քննության:

Ապացույցների հետազոտում և գնահատում.
Առաջադրված մեղադրանքների շուրջ Դատարանում հարցաքննվելիս ամբաստանյալ Սամվել Բաբայանն իրեն մեղավոր չճանաչեց՝ պատճառաբանելով, որ նրան վերագրված ռազմամթերքի ձեռքբերմանը գործնականում որևէ առնչություն չի ունեցել, դրա ձեռքբերման համար Սանասար Գաբրիելյանին չի դիմել, նրան վճարելու խոստում չի տվել, իսկ իրեն պլանշետ-համակարգչով ցուցադրված ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համակարգն անհրաժեշտ բաղադրամասերի բացակայության պատճառով նպատակային օգտագործման համար պիտանի չէ, որի մասին տեղեկացրել է Ս.Գաբրիելյանին: Իրեն մեղավոր չճանաչեց նաև փողերի լվացման դրվագով՝ պատճառաբանելով, որ տեղեկացված չէր որպես պարտքի մարում Մոսկվայից իրեն ուղարկված 5.000 եվրո գումարի հափշտակված լինելու մասին, հանցավոր ճանապարհով ստացված այդ և այլ գումարները ՀՀ-ում իրացնելու մտադրություն չի ունեցել, որպես դրա հիմնավորում մեղադրող կողմի վկայակոչած ապացույցում՝ իր և Մարատի հեռախոսային խոսակցությունների վերահսկման արձա-նագրություններում խոսել է ոչ թե ներկված գումարների, այլ ներկեր ձեռք բերելու շուրջ:
Ամբաստանյալ Սանասար Գաբրիելյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց՝ պատճառաբանելով, որ ՀՀ զինված ուժերին նվիրաբերելու համար ցանկացել է իր նյութական միջոցների հաշվին գնել զենք և ռազմամթերք, առաջարկել են ,Իգլա, տեսակի զենիթահրթիռային համակարգ, սակայն Սամվել Բաբայանի հետ խորհրդակցելով և ԶՀՀ-ի լուսանկարները պլանշետ-համակարգչով նրան ցուցադրելով՝ պարզել է, որ այն պիտանի չէ նպատակային օգտագործման համար, ավելին՝ բացակայում են նաև նման ԶՀՀ-ի կոմպլեկտի մեջ մտնող արձակման մեխանիզմը և ևս 2 հրթիռները, որի կապակցությամբ հրաժարվել է այն Արմեն Պողոսյանի և Հրաչյա Մայիլյանի միջոցով ձեռք բերելուց, այդ կերպ՝ կամովին հրաժարվել է իրեն վերագրված հանցանքը կատարելուց:
Ամբաստանյալ Արմեն Պողոսյանն առաջադրված մեղադրանքի շուրջ դատական քննության ընթացքում ներկայացված իրարամերժ դիրքորոշումներ, սակայն պնդեց նախաքննական խոստովանական ցուցմունքները՝ բացառությամբ ռազմամթերքի ձեռքբերմանը ամբաստանյալ Սամվել Բաբայանի առնչության վերաբերյալ՝ պատճա-ռաբանելով, որ դատաքննության արդյունքներից, հատկապես՝ Ս.Բաբայանի և Ս.Գաբրիելյանի դատաքննական ցուցմունքներից համոզվեց, որ Ս.Բաբայանը ռազմամթերքի ձեռքբերմանը որևէ առնչություն չի ունեցել:
Ամբաստանյալ Ժորա Զաքարյանն առաջադրված մեղադրանքի շուրջ

Դատարանում հարցաքննվելիս նախ՝ հայտարարեց, որ իրեն մեղավոր է ճանաչում մասնակիորեն, ապա՝ գրեթե անմիջապես հրաժարվեց մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց, սակայն նախաքննական ցուցմունքների հրապարակումից և հետազոտումից հետո հայտարարեց, որ դրանք պնդում է:
Ամբաստանյալ Դավիթ Հարությունյանն առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս նախ՝ որևէ դիրքորոշում չհայտնեց, սակայն պնդեց հրապարակված և հետազոտված նախաքննական, այդ թվում՝ քննվող դեպքին առնչվող այլ անձանց դերակատարության վերաբերյալ ցուցմունքները, իսկ դատական քննության ավարտական փուլում՝ հայտարարեց, որ առաջադրված մեղադրանքն ընդունում է:
Ամբաստանյալներ Կարեն Քոչարյանը և Անդրանիկ Քոչարյանն առաջադրված մեղադրանքների շուրջ Դատարանում հարցաքննվելիս իրենց մեղավոր չճանաչեցին՝ պատճառաբանելով, որ տեղեկացված չէին մաքրման համար նրանց ներկայացված ներկոտված թղթադրամների՝ հափշտակված լինելու մասին, սակայն նախաքննական, այդ թվում՝ քննվող դեպքին առնչվող այլ անձանց դերակատարության վերաբերյալ ցուցմունքների հրապարակումից և հետազոտումից հետո պնդեցին դրանք՝ նշելով, որ այդ ցուցմունքները ճիշտ են:
Դատարանը փաստում է, որ վերագրված արարքներում նրանց առնչությունը հերքող կամ դերակատարությունը նվազեցնող ամբաստանյալների պատճառաբանություններն անհիմն են և մտացածին, հետապնդում են քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ: Հանցագործությունների դեպքերի առկայությունը, դրանց գործով ամբաստանյալների առնչությունը հաստատվել, իսկ պաշտպանական կողմի պատճառաբանությունները հերքվել են պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակ-ներում դատաքննությամբ հետազոտված հետևյալ ապացույցներով.
1.1 Ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու և պահելու հանցագործության դեպքի և դրա հանգամանքների (կատարման տեղ, ժամանակ և եղանակ) ստուգում և հաստատում.

Վերոնշյալ հանցագործության դեպքի առկայությունը Դատարանը հաստատված է համարում հետևյալ ապացույցների համադրման և գնահատման արդյունքներով.
Հրաչյա Մայիլյանին բերման ենթարկելու մասին արձանագրությամբ, համա-ձայն որի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով 2017թ. մարտի 21-ին՝ ժամը 19.50-ին, ՀՀ ԱԱԾ վարչական շենքի բերման ենթարկվելուց հետո վերջինս վարույթն իրականացրած մարմնին է ներկայացրել ,SAMSUNG, ապրանքանիշի, ,GT-P3100, մոդելի և ,RF1C9601LNN, սերիական համարի պլանշետ - համակարգիչը, որը ծրարվել և կնքվել է ,ՀՀ ԱԱԾ թիվ 20, կնիքով:
Որպես ապացույց ճանաչված և գործին կցված առարկայի՝ Հրաչյա Մայիլյանի ,SAMSUNG, ապրանքանիշի ,GT-P3100, մոդելի ,RF1C9601LNN, սերիական համարի պլանշետ - համակարգչի առկայությամբ և Դատարանում այն զննելու արդյունքներով (արձանագրությամբ):
Վարույթն իրականացրած մարմնին ինքնակամ ռազմամթերք ներկայացնելու (կամովին հանձնելու) մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ 2017թ. մարտի 21-ին ՀՀ ԱԱԾ վարչական շենքի բերման ենթարկված և մինչև ժամը 21.50-ը կասկածյալի կարգավիճակում հարցաքննված Հրաչյա Մայիլյանը 2017թ. մարտի 22-ին՝ ժամը 00.45-ից մինչև 01.30-ն ընկած ժամանակահատվածում նախաքննական մարմնին կամովին ներկայացրել է հանգուցյալ հորեղբորը պատկանող՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Թամանյան 15ա հասցեում գտնվող ավտոտնակում պահած զենիթային հրթիռի 9Պ39 տեսակի արձակման խողովակը և դրա մեջ առկա 9Մ39 զենիթային հրթիռը: Նշված առարկան փաթեթավորվել է պոլիէթիլենային թաղանթով և կպչուն ժապավենով, կնքվել ,ՀՀ ԱԱԾ թիվ 10, կնիքով և վերցվել: Զենքի ինքնակամ ներկայացումը տեսաձայնագրվել է ,Սոնի, ապրանքանիշի տեսախցիկով, դրա սկավառակը և լուսանկարչական հավելվածը կցվել են

արձանագրությանը:
Իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված առարկաների՝ 2017 թվականի մարտի 22-ին Հրաչյա Մայիլյանի ինքնակամ ներկայացրած ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի 9Պ39 տեսակի արձակման խողովակի և ռազմամթերք հանդիսացող 9Մ39 տեսակի, 03277 համարի հրթիռի առկայությամբ և Դատարանում դրանց զննման արդյունքներով (արձանագրութ-յամբ):
Դատածգաբանական փորձաքննության 2017թ. մարտի 22-ի եզրակացությամբ և ՀՀ ԶՈւ ՀՕՊ զորքերի ԶՀԶ բաժնի պետ Ռ.Համբարձումյանի ստորագրությամբ հաստատված՝ 2017թ. մարտի 22-ի ստուգման ակտով, համաձայն որոնց՝ փորձաքննությանը ներկայացված դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը՝ զենիթային հրթիռով, հանդիսանում է ռազմամթերք, հրթիռը պիտանի է մարտական կիրառման համար, պատրաստվել է գործարանային պայմաններում, ԽՍՀՄ-ում՝ 1989 թվականին, որի վերաբերյալ առկա է համապատասխան գրառում՝ ,03-89-2,, որտեղ ,03,-ը՝ արտադրության խմբաքանակի համարն է, ,89,-ը՝ արտադրության տարեթիվն է, իսկ ,2,-ը՝ արտադրող գործարանի ծածկագիրն է: ,ԻԳԼԱ, դյուրակիր զենիթահրթիռային համալիրը մարտական նշանակության ռազմամթերք է, նախատեսված է թռչող օդային նշանակետերի խոցման և ոչնչացման համար: Զենիթային հրթիռի (արձակման խողովակի) իրանի տրամաչափը 72մմ է, արձակման խողովակը 9Պ39 տեսակի է, որի մեջ առկա է 9Մ39 զենիթային հրթիռ՝ բեկորաֆուգասային մարտական մասով: Դյուրակիր զենիթահրթիռային համալիրի 9Պ39 արձակման խողովակը 03277 գործարանային համարով է և 9Մ39 տիպի, 03277 գործարանային համարով զենիթային հրթիռը տեխնիկապես սարքին է և պիտանի է նպատակային օգտագործման համար 9Պ516-Մ արձակման մեխանիզմով և 9Բ238 տիպի վեր-գետնյա սնուցման բլոկով հագեցնելու դեպքում:
Փորձաքննության ավարտից հետո ներկայացված առարկաները վերադարձվել են փաթեթավորված կապույտ պոլիէթիլենային թաղանթի մեջ՝ կնքված ՀՀ ՊՆ 70839 զորամասի կնիքով և վավերացված որպես փորձագետ ճանաչված Ա.Հասրաթյանի և Ի.Գալստյանի ստորագրություններով:
Դատածգաբանական փորձաքննության 2017թ. մարտի 22-ի եզրակացության շուրջ փորձագետ, ՀՀ ԶՈՒ հակաօդային պաշտպանության զորքերի վարչության տեխնիկական ապահովման բաժնի պետ Արթուր Հասրաթյանի ցուցմունքով, ով Դատարանում վերահաստատեց, որ եզրակացության հետևությունները ճիշտ են, դրանք պնդում է: Փորձագետը նաև հայտնեց, որ դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և զենիթային հրթիռը հանդիսանում են ռազմամթերք, քանզի հրթիռը պարու-նակում է պայթուցիկ և պայթունավտանգ նյութեր: Հայտնեց նաև, որ եթե այն լրահամալրված լիներ արձակման մեխանիզմով և վերգետնյա սնուցման մարտկոցով, կհանդիսանար զենի-թահրթիռային համալիրի մեկ ամբողջական միավոր և պիտանի կլիներ ըստ նպատակային նշանակության օգտագործման՝ օդային թիրախներ խոցելու համար: Ըստ փորձագետի ցուցմունքի՝ հրթիռը պիտանի է մարտական կիրառման համար և դրա նկատմամբ ֆիզիկական ազդեցությունը, հարվածը, հրդեհը և այլ, կարող է հանգեցնել պայթյունի:
Պաշտպանական կողմի հարցադրումներին ի պատասխան՝ հայտնեց, որ ըստ արտադրող կազմակերպության՝ ,ԻԳԼԱ, դյուրակիր զենիթահրթիռային համալրի լրակազմությունը թե՞ նախկինում և թե՞ ներկայում բաղկացած է արկղի մեջ առկա՝ երկու արձակման խողովակներից, յուրաքանչյուրը՝ մեկական հրթիռով, արձակման մեկ մեխանիզմից, որը լինում է առանձին արկղով և վերգետնյա սնուցման 2-ից 4 մարտկոցով /բլոկներով/, վերջիններիս քանակը կախված է կոմպլեկտավորումից: Պաշտպանի հարցադրմանն ի պատասխան՝ նշեց նաև, որ լաբարատոր պայմաններում ստուգվել և պարզվել է, որ փոր-ձաքննությանը ներկայացված 03277 գործարանային համարի զենիթային հրթիռը պիտանի է շահագործման համար:
Համակարգչատեխնիկական փորձաքննության 2017թ. մարտի 24-ի թիվ 17-0554/1 եզրակացությամբ, համաձայն որի՝ փորձաքննության արդյունքներով վերականգնվել է Հրաչյա Մայիլյանի ,SAMSUNG,

ապրանքանիշի ,GT-P3100, մոդելի RF1C9601LNN սերիական համարի պլանշետ- համակարգչից ջնջած լուսանկարչական ,jpg, ձևատեսակի 19 ֆայլերը, որոնք ստեղծվել էին 2017 թվականի մարտի 15-ին՝ ժամը 20:19-ից մինչև 20:29-ն ընկած ժամանակահատվածում և մարտի 17-ին՝ ժամը 18:11-ից մինչև 18:13-ն ընկած ժամանակահատվածում, որոնց վրա պատկերված է ,Իգլա, տեսակի զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և հրթիռը, մի մասը ,ժառանգություն Համախմբում Հաղթանակ, գրառումներով նախընտրական քարոզաթերթիկի ֆոնի վրա /գունավոր տպիչով տպագրված լուսանկարչական հավելվածը և լազերային սկավառակը կցվել է եզրակացությանը/: Նույն եզրակացությամբ նաև փաստվել է, որ պլանշետային համակարգչի օրացույցի և ժամացույցի ընթացիկ ցուցմունքները համապատասխանում են իրականին:
Քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ 2017թ. մարտի 28-ին կատարված այդ քննչական գործողության ընթացքում գործով մեղադրյալ Հրաչյա Մայիլյանը մատնացույց է արել ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ գյուղի այն վայրերը, որտեղ 2017թ. մարտ 15-ին լուսանկարել է, իսկ մարտի 17-ին Ռոբերտ Աղվանյանից ձեռք է բերել ու իր կողմից շահագործվող ավտոտնակ/ այսինքն՝ կամովին ներկայացնելու վայր/ է տեղափոխել ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրը: Փորձարարության արդյունքներով կազմվել և վերոնշյալ արձանագրության են կցվել՝ սխեմա և բջջային հեռախոսով կատարված լուսանկարահանման արդյունքները՝ լուսանկարչական հավելվածի տեսքով:
Ռազմամթերք հանդիսացող 9Մ39 տիպի 03278 գործարանային համարի զենիթային հրթիռը կամովին ներկայացնելու վերաբերյալ արձանագրությամբ, համաձայն որի՝ ՀՀ իրավապահների կողմից սույն գործից անջատված մասով հետախուզվող Վրաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկում պահվող, Ռոբերտ Աղվանյանը 2017թ. մայիսի 4-ին՝ ժամը 12.06-ից մինչև 15.55-ն ընկած ժամա-նակահատվածում նախաքննական մարմին կատարած հեռախոսազանգով տեղեկացրել է ,Իգ-լա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիր ներկայացնելու մտադրության մասին և մատնանշել ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ գյուղը, որտեղից վարույթն իրականացնող մարմինը հայտնաբերվել և վերցվել է ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը՝ առանց արձակման մեխանիզմի և մարտկոցի, խողովակում՝ ասեղանման պայթուցիչով հրթիռ, այդ կերպ Ռոբերտ Աղվանյանը կամովին հանձնել է ռազմամթերք հանդիսացող մեկ այլ ,Իգլայի, տեսակի դյուրակիր ՋՀՀ-ի խողովակ և հրթիռ:

1.2 Հանցագործության վերոնշյալ դեպքին ամբաստանյալների առնչության, նրանց մեղավորության, արարքներում քրեական օրենքով նախատեսված հատկանիշների առկայության ստուգում և հաստատում.

Վերոնշյալ հանգամանքների առկայությունը Դատարանը հաստատված է համարում հետևյալ ապացույցների համադրման և գնահատման արդյունքներով.
Որպես ապացույց ճանաչված և գործին կցված փաստաթղթերով՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումների հիման վրա Հրաչյա Մայիլյանի, Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի նկատմամբ ՀՀ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների իրականացրած ,հեռախոսային խոսակցությունների վերահսկում, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով և դրանց զննման արձանագրությամբ, մասնա-վորապես՝
- Հրաչյա Մայիլյանի և Սանասար Գաբրիելյանի միջև 22.02.2017թ, ժամը 11:26-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-02-22_11-26-18_37498504762_out_7700995579493300_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Հրաչյա Մայիլյան՝ Ալյո:
Սանասար Գաբրիելյան՝ Այ, ախպեր ջան, բարլուս:

Հրաչյա Մայիլյան՝ Բարլուս, բարլուս:
Սանասար Գաբրիելյան՝ Ապեր ջան, էդ կորած արշավախումբը դառավ, խի՞ չեք հեռախոս վեկալում:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր ե՞րբ ա զանգել, հեսա նոր եկել ա, ես վեկալել եմ: էս վրացական համար ա գրում, գիտես չէ՞:
Սանասար Գաբրիելյան՝ Այ մարդ, ինչ համար ուզում ա գրի, էդ համար գրողի մերը …(հայհոյանք), ես ասել եմ իմ համարը վրացերեն գրի՞, էն էլ երևի տեսաք վրացական համար, դրա համար վեկալիք, տենց ա՞, թե՞ չէ:
Հրաչյա Մայիլյան՝ Տո չէ հա, ես վեկալում եմ, իմին բան չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Այ ախպեր, սարքել ա աշխարհի վերջը: էս որ վրացական համար կա, զանգում էմ, վեկալ այ մարդ, ի՞նչ կա, պարոն Ժորա՝ զանգում եմ տներով-մներով:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, ասեց՝ խոսացել եմ:
Սանասար Գաբրիելյան՝ Ի՞նչ ա խոսացել, ցավդ տանեմ, ասա հերիք ա՝ սուտ ասես:
Հրաչյա Մայիլյան՝ Ասեց՝ խոսացել եմ հետը:
Սանասար Գաբրիելյան՝ Ասա՝ ինչ ես խոսացել, այ տուպոյ, էթում եմ հանդիպման, մարդիկ հարց են տալի, չեմ իմանում՝ ինչ պատասխան տամ, հիմա ասի՝ հեսա խաբար կանեմ, զանգում եմ, զանգում, կոտորվեցի երեկվանից զանգելով, չի վեկալում:
Հրաչյա Մայիլյան՝ Խաբար մինչև իրիկուն նոր կասի, չի կարա հիմա խաբար ասի, պտի մինչև իրիկուն էլ ոտդ կախ գցես: Հիմա ես զանգում եմ Մառնաուլի, ինքը գնացել ա Թիֆլիս, դեղ կա, վեկալի, գա: Դեղ պտի բերենք Երևան, գնաց վեկալի գա: Հեսա մի ժամից ստեղ կլնի, կլնի ու շարժվում ենք, գալու ենք: Արդեն մնում ա հեռախոսի խոսակցություն, էլ լռվելու բան չկա էլի:
Սանասար Գաբրիելյան՝ Այ ախպեր, ես էն օրն եմ ջոգել, որ հեռախոսի խոսակցություն ա մնում, որ թողեիք: Արխային մնա, ես էդքան հո բան չեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, դե երեկ էլ ենք գնացել, մարդ ենք տեսել նորից ուրիշ տեղ, հեսա էլի հեռախոսի սպասողական սպասելու բան կա, բրատ, էդ ա:
Սանասար Գաբրիելյան՝ Բա ի՞նչ ես անում:
Հրաչյա Մայիլյան՝ Հեսա գալիս ենք 100 տոկոսանոց էսօր, ձև չկա էլ մնալու, համ փողերն ա պրծել, համ էլ մնալու ձև չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Բա ձեր մոտ փո՞ղ կար որ:
Հրաչյա Մայիլյան՝ Բա 1250 դոլար փող էր էլե, 150-ն իմ մոտ էր, վոբշեմ չկա էլ, ոչ թե կրվել ենք, այլ չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Ապեր ջան, ես լրիվ ձեր ուղին նայում եմ, գիտես ես հեռվից չեմ նայու՞մ՝ ինչ եք անում, ես գիտեմ՝ ինչ եք անում: Գալի՞ս եք, թե՞ չեք գալիս, կանկրետնո:
Հրաչյա Մայիլյան՝ Գալիս ենք, դու Կիրովականից ձեն-մեն ունե՞ս:
Սանասար Գաբրիելյան՝ Ես Կիրովականից ոչ մի ձեն էլ չեմ կարա հանեմ, քանի որ արդեն չգիտեմ մարդիկ փող են ուզելու, բան են անելու, զանգեմ բզբզեմ, ինչ ք…քի (անվայել արտահայտություն) մեջ եմ ընկնելու:
Հրաչյա Մայիլյան՝ Պրոբլեմ չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Պահ, պրոբլեմ չկա:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, բա էլի որ չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Արա ցավդ տանեմ, երբ նաղդ կլնի, Կիրովականը նաղդ ա:
Հրաչյա Մայիլյան՝ Ասում եմ նաղդ ա, ախպեր:
Սանասար Գաբրիելյան՝ Լավ էլի, Հրաչ ջան: Այ ախպեր, ես քեզ գիտես, ուրիշ ձևի տենում եմ՝ աշխարհ տեսած Սերոբն ես, հո դու էլ Ժորոն չես, կանկրետնո…
Հրաչյա Մայիլյան՝ Ախպերս, նայա, էդ փողը որ վեկալվե եկել ա ստեղ, էդ փողից ա վեկալվե եկել, նենց ա, որ ասում եմ կա, հո բան չի, նենց որ դու արխային կարաս բզբզաս:
Սանասար Գաբրիելյան՝ Հա, էդ փողից ա…
Հրաչյա Մայիլյան՝ Վրից քաշել ենք, որ եկել ենք էստեղ, հո մենք մեր տներից չենք վերցրե:
Սանասար Գաբրիելյան՝ Հա, վրից քաշվել ա, ես չգիտեմ՝ դուք ինչ եք անում, ինչ եք քաշում, ապեր, դա ես չգիտեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Ուզում եմ ասեմ՝ կա:
Սանասար Գաբրիելյան՝ Ինձ ոչ մեկ դրա համար բան չի ասել, կա, թե չկա,

ես ի՞նչ գիտեմ:
Հրաչյա Մայիլյան՝ էն, օրը որ դու ինձ հարցրիր, ասի՝ մենք բեհը իրանց զառանի տալիս ենք, թող ասենք, 2 օրում ա, 4 օրում ա, 5 օրում ա, 10 օրում են բերում, ինչքան ա, բեհ ենք տալիս:
Սանասար Գաբրիելյան՝ էն մարդի հետ խոսացի, ասեց ախպեր, ես կարում եմ 100 լիտրով, ես քեզ տեղյակ եմ պահել:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, ասենք 100-ով մինչև ինչքա՞ն, 10 ռես ա բերում, 20 ռես ա բերում, ինչքա՞ն:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, ասում ա՝ երբ տվիք էդ վախտ, 100-ով, ոչ ավել:
Հրաչյա Մայիլյան՝ Հասկացա, բայց ասենք սենց, իմանանք՝ մի ամսվա մեջ մեզ ինչքա՞ն կարա տա, էդքան բան:
Սանասար Գաբրիելյան՝ Ապեր, ես չեմ ուզում իրան զանգեմ, որովհետև զանգեմ, պտի էթամ, եթե ստաբիլ…
Հրաչյա Մայիլյան՝ Կասես, պետք ա, գամ մտնեմ ընդից թող տան, վեկալեմ, բերեմ հետս:
Սանասար Գաբրիելյան՝ Չեմ կարա, որտև ինքը մարդ չի ուզում ճանաչի:
Հրաչյա Մայիլյան՝ Դե վայո, ավելի լավ, թող քո միջոցով ղրգի:
Սանասար Գաբրիելյան՝ Ինձ ա ճանաչում, ասում ա ես ուրիշ մարդկանց հետո գործ չունեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Դե վայո, խոսա, արխային:
Սանասար Գաբրիելյան՝ Հլա եկեք բարով-խերով տեղ հասեք, ես մի տեղ էլ եմ արխային խոսացել, փող եմ վեկալել:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, հասկանալի ա:
Սանասար Գաբրիելյան՝ Տուպոյն ասեց՝ ախպեր, 50 հազար, մարդիկ համաձայնեցին, ասեց՝ փող վեկալ, գնացի վեկալի, եթե մնա սաղ իմ վզին, ես ժորիկի հետ ուրիշ խոսակցություն կանեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Դե հիմա վիզ դրած…
Սանասար Գաբրիելյան՝ Դե վիզ դրած, ցավդ տանեմ, էդ մարդն ասում էր՝ 2 հատ կա, գնա, արխային, փողերը վեկալ: Գնացել եմ, վեկալել եմ:
Հրաչյա Մայիլյան՝ Հիմա ընդեղից բան չեն ասել մեզի, որ չի լնում, սենց բան չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպերս, արի հեռախոսով երկար-բարակ չանենք, նստենք, մի հատ ախպերավարի… հո թուրքի թալան չի՞, ես էթամ մարդկանց խաբեմ, անունը ի՞նչ դնեմ, ես տենց բաներ չունեմ, ախպերս: Հիմա կանկրետնո, դա ա, դա ա, նետ ա նետ ա, ես էլ իմանամ՝ ինչ եմ անում: Սխա՞լ եմ ասում, Հրաչ ջան:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, չէ, պրոստա էդ ա, սիստեմն ա ք..ք (անվայել արտահայտություն) սիստեմ, որ սենց սպասողական, սպասի, հա սպասի: Թե չէ ուրիշ բան չկա, հեսա գա, մեկա շարժվում ենք, արդեն, ստեղ նստելու բան չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Էսօր կտենա՞նք, թե՞ էգուց:
Հրաչյա Մայիլյան՝ Էսօր:
Սանասար Գաբրիելյան՝ 7 անց կես հանդիպում ունեմ, իրավաբաններն են կանչել, պրծնեմ, սպասեմ քո զանգին:
Հրաչյա Մայիլյան՝ Լավ, ախպեր ջան:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 28.02.2017թ, ժամը 17:21-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-442-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-597-17_2017-02-28_17-21-44_37493180736__out__094655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Ալո:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, ախպեր:
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր, զանգեց էդի ինձի:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, ինձ էլ էր զանգել, նոր Ռուստամի հետ էի խոսում, զանգում ա, չեմ հասցրել խոսամ, ի՞նչ ա ասում:
Արմեն Պողոսյան՝ Հա, ուզում եմ ասեմ՝ էլ մի հարցրա, ասում ա՝ էթում ա Վրաստան, ասի հա, համարդ ուզեց, ասում ա՝ արի հանդիպենք, ասի գործ ունեմ, պրծնեմ, զանգեմ, բա՝ ինչքա՞ն վախտվա, ասի երևի մի ժամվա, բա՝ մի հատ հանդիպենք-խոսանք:
Հրաչյա Մայիլյան՝ Բա ի՞նչ ա ասում, բերել ա՞, թե՞ չի բերել:

Արմեն Պողոսյան՝ Ասի բերել ե՞ս, բա հա, արի խոսանք:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, էդ ա, ինձ ա զանգում, հեսա մի հատ զանգեմ տենամ՝ ինչ ա ասում:
Արմեն Պողոսյան՝ Ուզում եմ ասեմ՝ իրան չասես, որ հարցրել եմ, էլի:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, չէ, ես իրան ասելու եմ՝ էթում եմ, գալիս ե՞ս, էդքան բան:
Արմեն Պողոսյան՝ Վսյո, եղավ:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 01.03.2017թ, ժամը 17:00-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-03-01_17-00-00_37494655885__in__995579493300_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝

Հրաչյա Մայիլյան՝ Զանգեցի բանիկ, էն Ռամազին, վոբշեմ զանգել ա ընդեղ, ակազի-վայետսյա, էդ պիդ…ը (անվայել արտահայտություն) ԱՏՍ են քանդում, սարերի մեջ են, ասում ա՝ հարցրի, ասի՝ էդ մարդիկ Հայաստանից եկել են, ի՞նչ անեն, եթե չի ըլնելու, ես իրան ասի՝ եթե չի լնում, ասեք՝ չի լնում, մենք մեր անելիքը հասկանանք, ասել էր, ասել էր՝ չէ, 100 տոկոսանոց ատբոյ մի տուր, պատալոկ 2-3 օրվա մեջ կասեմ:
Արմեն Պողոսյան՝ Հա:
Հրաչյա Մայիլյան՝ Ասել էր 2-3 օրվա մեջ կասեմ պատալոկ: Որտև ասի՝ ասա՝ եթե չէ, մենք ատբոյ տանք, ընենց չլնի, հետո գան, ասեն մենք չարչարվել ենք, գնացել ենք, էս ենք արել, էն ենք արել, ֆլեշկեն վեկալե, եկել ենք բան, բա ատբոյ մի տուր 2 օր, պատալոկ 2 օր, մինչև շաբաթ-կիրակի, ասի լավ:
Արմեն Պողոսյան՝ Դուք հմի էսօր գալու ե՞ք, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, սրանք հմի վեցին ուզում են դուրս գան ըտեղից, կամ էլ թե չէ առավոտ վեցին, հեսա մի ժամից պարզ կլնի, գան ստեղ, մի երկու ժամ ա ստեղ, սրանցից պրծնեմ ու թափով գանք:
Արմեն Պողոսյան՝ Հա՞:
Հրաչյա Մայիլյան՝ Դու ըտե ի՞նչ նորություն ունես, եկա՞վ, գնացել եկել ա՞, թե՞ չի գնացել եկել:
Արմեն Պողոսյան՝ Չէ, գնացել ա, որ էթա, ասել են՝ էսօր մի արի, պահեստապետը ստեղ չի, վաղը առավոտ շուտ կամ մենք կվեկալենք, կամ կբերենք Երևան, կամ դու կգաս կտանես: Ընդե լսի մի հատ ուրիշ բան ասեց, ասում ա՝ ընդեղ ուրեմն ըտեղի տեխնոլոգը որ կա, ըտեղ ինչ-որ բաներ կա, հատիկներ կա, ինչ-որ բան ես խառնում ա, դառնում ա մեր ուզածը, էդի եսիմ ինչ չորացրած վիճակ ա, ինչ ես խառնում, դառնում ա էդի: Ասի՝ դրանից էլ թող բան անի, դասավորի բերենք, մի հատ հասկանանք ինչ ա, կարողա էդ չոր վիճակն ավելի ա մեզի ձեռ տալի, քան թե թաց:
Հրաչյա Մայիլյան՝ Հա: Թող փորձի:
Արմեն Պողոսյան՝ Հիմա ես եկա հանդիպեցի, շատ լուրջ մարդ էր նորմալ, շատ կարգին մարդու հետ, ասում ա՝ պրոբլեմ չունես, որից ուզում ես՝ տալիս եմ, խնդիր չունես, 15 օր էլ օր ա ուզում, ինչ քանակություն ուզում ես:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, պրոստո հետաքրքիր ա՝ խի ա 15 օր ուզում էլի:
Արմեն Պողոսյան՝ Անգլիայից ա գալիս:
Հրաչյա Մայիլյան՝ Հա-ա-ա, էդի հնարավոր ա:
Արմեն Պողոսյան՝ Բայց ամենամաքուրը, էդի ա:
Հրաչյա Մայիլյան՝ Հա:
Արմեն Պողոսյան՝ Հիմա ինքը վաղը մեզի բան կանի, բան կքցի, դրա աբրազեցը մի 3 օրում էն ինչ սվյազ կա, որ 3 օրում բերում են է:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, Կարգո:
Արմեն Պողոսյան՝ Ըտենց մի հատ սվյազ ասեց, ասեց 100 գրամ կբերեն, վռազ կնայեք, ու վսյո քո ուզածը, ինչը թղթի վրա կգրես, եթե տենց բան կա, կբերեմ ես: Ասենք էդի լավ ա, բայց հմի արդեն, սրանք ուրեմն եկել են Մեղրի, իրանց ավտոն թողել են, ուրիշ ավտոյով եկել են, մառախուղ բան ա եղել ճամփեքին: Զանգել են…
Հրաչյա Մայիլյան՝ Ուշացել են:
Արմեն Պողոսյան՝ Հա, ասում ա՝ հեսա մինչև 5-6-ը կհասնեն, զանգել Գարիկի համարն էր ուզում, որ Գարիկին ասեն, Գարիկը տաքսով որպես

տաքսի էլի, դրանց վեկալի գա: Ասի՝ դե հիմա նայեք, եթե չեք գալիս, փող ղրգեք, փող չկա, (հայհոյանք), հո չեմ առնելու:
Հրաչյա Մայիլյան՝ Հա:
Արմեն Պողոսյան՝ Ասեմ, հենց հմի բանկով ղրգի, ասի չէ, եթե մինչև առավոտ ստեղ եք ըլնելու, էլ պետք չի բանկով ղրգի, մինչև առավոտ յոլա կեթանք:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, բան չասի:
Արմեն Պողոսյան՝ Փողն էլ չելավ, ես էս իմ դվիժենին անեի, հլը չի էլե, էն մի հոգավորը զանգել ա, ասել ա՝ ասելու բան ունեմ, հմի էն բաները, որ մենք վեր ենք կալե, կարող ա՞ էդ դրա մոտա, էդի պտի տա իրա մոտից: Հլա դու ինձի մի ժամից զանգա, ես հեսա բան եմ անում, զանգեմ մի հատ, տենամ՝ ինչ ա ըլնում՝ կզանգեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Իսկ դու այփադդ վեկալա՞ր:
Արմեն Պողոսյան՝ Չէ, հլը չեմ հասել էջմիածին, էդի հա զանգում ա, ասում ա՝ արի տենանք, արի տենանք, չեմ կարում հմի:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, տենալը, ասա՝ էլի եմ գալի այ տիրուդ…, սարքե՞լ ես այփադս, տալի՞ս ես, թե՞ չես տալիս:
Արմեն Պողոսյան՝ Ասում ա՝ հա, արի, կտենանք կխոսանք:
Հրաչյա Մայիլյան՝ Հա արի: (Ծիծաղում է:)
Արմեն Պողոսյան՝ Հորս արև, տենց ա անում արա, չեմ կարում հասկանամ:
Հրաչյա Մայիլյան՝ Քու տեղը դաբլ-դուբլ անելով 200 դոլար կրվի:
Արմեն Պողոսյան՝ Կրի՞ր, թե կրվա՞ք:
Հրաչյա Մայիլյան՝ Կրվանք, անհաջողակ …
Արմեն Պողոսյան՝ Դուք կրում եք էլ՝ չեք անում, ո՞վ ա մեղավոր:
Հրաչյա Մայիլյան՝ Հեսա էթում ենք Օթարի ջանին ընգնենք մի 2-300 դոլար վեկալենք, մինչև էգուց էդ գ…ը (հայհոյանք) գան հասնեն: Մատանին կոխեմ լոմբարդ:
Ծիծաղում են:
Հրաչյա Մայիլյան՝ Դե կզանգվենք:
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր, ես հենց բան անեմ, կզանգեմ քեզի:
Հրաչյա Մայիլյան՝ Դու հենց էդ այփադից մի բան իմանաս, մի հատ ծնգցրա էլի:
Արմեն Պողոսյան՝ Լավ, ապեր:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 06.03.2017թ, ժամը 18:26-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-442-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-597-17_2017-03-06_18-26-57_37493180736__out__094655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Ու՞ր եք հասել բա:
Արմեն Պողոսյան՝ Ստեփանակերտ նստած՝ կոֆե ենք խմում:
Հրաչյա Մայիլյան՝ Նոր ե՞ք հասել:
Արմեն Պողոսյան՝ Չէ, մի ժամ առաջ ենք հասել, մտել ենք մինիստրի մոտ, դուրս ենք եկել, խոսացել ենք, հմի մնում ա՝ էթանք նայենք:
Հրաչյա Մայիլյան՝ էն Սանոյից խաբար չկա՞, չի զանգե՞լ, նմուշ վեկալել ա՞:
Արմեն Պողոսյան՝ Ապեր, չեմ զանգել, հեռախոսը որ թողել եմ մեքենայի մեջ, ինքը ինձի զանգել ա, բայց ոչ իրանից էլի մենակ, դու էլ ես զանգել:
Չհամաձայնան: Երեկ ասի առեք էդ հազարը տամ, թող մնա, եթե չվեկալանք, էդի ձեզ, բայց եթե հանկարծ դաբրո էլավ, ուրեմն էդ հազարը հաշվարկ անենք, չհամաձայնան … (անվայել արտահայտություն) էդ սիստեմով:
Արմեն Պողոսյան՝ Բա ի՞նչ ասին իրանք:
Հրաչյա Մայիլյան՝ Իրանք ասին՝ ախպեր չէ, կամ լրիվ ես տալիս, թեմա չկա էլ շարունակելու էդ 1000 մանեթը, կամ էլ թե չէ, էդ 5000 մանեթը բեր թող մինչև ժամը իրեքը, ասա՝ հա ա, հա ա, չէ ա, ուրեմն մենք էլի թեմա չունենք իրար հետ: Ոնց որ քյասար կորցնում ենք էլի, հասկանում ե՞ս: Լավ, հեսա եկավ, հետո կխոսանք:
Արմեն Պողոսյան՝ Լավ:

- Սանասար Գաբրիելյանի և Արմեն Պողոսյանի միջև 19.03.2017թ, ժամը 5:05-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-451-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-882-17_2017-03-19_05-05-18_37498504762__in__094655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սանասար Գաբրիելյան՝ էդ ախպորդ վրա ե՞ս անջտում, արա:
Արմեն Պողոսյան՝ Ալո: Անջատվավ, անհասանելի ընգար:
Սանասար Գաբրիելյան՝ Ես հասա տուն: Բա դու՞ որդե ես:
Արմեն Պողոսյան՝ Ես էլ դուրս եմ գալիս, հենց հիմա:
Սանասար Գաբրիելյան՝ Ապեր, առավոտ մի հատ խոսակցություն անենք, որ էթանք էն մեր առաջինի մոտ, ապեր ջան:
Արմեն Պողոսյան՝ Հա:
Սանասար Գաբրիելյան՝ Կլնի՞:
Արմեն Պողոսյան՝ Խի՞ չի լնի: Չլնող բան կա՞:
Սանասար Գաբրիելյան՝ Ապեր, թե չլնող ա, (հայհոյանք)… ըլնեմ:
Արմեն Պողոսյան՝ Հա, բա, դե կեթանք առավոտը:
Սանասար Գաբրիելյան՝ Դե, բարի խաղարկություն:
Ծիծաղում են:
Սանասար Գաբրիելյան՝ Լավ, բարի գիշեր, ցավդ տանեմ:

- Սանասար Գաբրիելյանի և Արթուր Պետրոսյանի միջև 19.03.2017թ, ժամը 9:59-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտն/ալսմամբ, գրառված X-442-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-880-17_2017-03-19_09-59-33_37498504762_out_097235001_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արթուր Պետրոսյան՝ Հեյ, ախպեր:
Սանասար Գաբրիելյան՝ Էն հուվ ասս: Մի ջեբս թուղթ կա, հլը էդ թուղթը տուր, դեղին թուղթ (Դիմելով կողքինին): Արթուր, բարլուս:
Արթուր Պետրոսյան՝ Բարև:
Սանասար Գաբրիելյան՝ Ո՞նց ա ընգերս:
Արթուր Պետրոսյան՝ Ոչինչ, էլի:
Սանասար Գաբրիելյան՝ Բա խի՞ ես տենց տնքալով ասում;
Արթուր Պետրոսյան՝ Տնքալով չեմ ասում, ջիգյար ջան:
Սանասար Գաբրիելյան՝ Տնեցի՞ք ոնց են:
Արթուր Պետրոսյան՝ Նորմալ:
Սանասար Գաբրիելյան՝ Արթուր, էս շենը շտեղ ա՞, հեսա հիմա ասում եմ ախպորս: Նարիշտար:
Արթուր Պետրոսյան՝ Նարիշտարը, ես ու դու քյացել ենք, չե՞ս հիշում: Ասեմ էդ գյուղը, հիշու՞մ ես, էն որ մի անգամ պապիի գյուղում տեխնիկեքը բարձրացրինք, է, բուլդոզերը բանը, որ /1 բառ/ անտառը, էնդեղից մի քիչ ձախ ա, էլի,: ընկնում ա, էն որ դուրս ես գալիս /1 բառ/ մաքրելու, ընդեղից ձախ ա ընկնում, էն մեր անտառից դեպի Վանքի յանը՝ Գանձասարի, Գանձասարի ու էդ սարերի արանքում ա, էլի:
Սանասար Գաբրիելյան՝ Հա-ա-ա: Նարիշտարն ա:
Արթուր Պետրոսյան՝ Հա, հա Նարիշտար:
Սանասար Գաբրիելյան՝ Բնակիչ բան կա՞ հիմա ըտեղ:
Արթուր Պետրոսյան՝ Դե, անասուն պահողներ, բան, մի քանի հոգի, սար ա,

էլի:
Սանասար Գաբրիելյան՝ Լավ: Դե, միտդ պահի, Նարիշտար, էս թուղթը ճղում եմ:
Արթուր Պետրոսյան՝ Ըհըն:
Սանասար Գաբրիելյան՝ Ճղեցի: Հեսա էս երկու օրը կգամ, քեզ տենամ, Արթուր:
Արթուր Պետրոսյան՝ Լավ:
Սանասար Գաբրիելյան՝ Հի՞նչ պիրիմ, Արթուր ջան, աղջիկ-բան պետք չի:
Արթուր Պետրոսյան՝ Յանի Հայաստան աղջիկ որտեղի՞ց:
Սանասար Գաբրիելյան՝ /Դիմում է կողքինին/ Ազիզ, լսու՞մ ես, ինչ ա ասում, ասում ա՝ Հայաստան աղջիկ որտեղի՞ց, ասում ա՝ ստեղ լիքն ա, պետք չի: /Ծիծաղում են/:
Արթուր Պետրոսյան՝ Գործերդ լա՞վ ա, ախպերս:
Սանասար Գաբրիելյան՝ Նորմալ, նորմալ: Էսօր ըտեղանք ե՞ս լինելու, կարող ա՝ այսօր էլ գամ:
Արթուր Պետրոսյան՝ Հա, էսօր էլ, վաղն էլ, մյուս օրն էլ, արձակուրդ եմ 3 օր:
Սանասար Գաբրիելյան՝ Լավ, ախպերս:

- Հրաչյա Մայիլյանի և Սանասար Գաբրիելյանի միջև 19.03.2017թ, ժամը 13:00-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-03-19_13-00-09_995579493300__out__98504762_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Հրաչյա Մայիլյան՝ Ալյո:
Սանասար Գաբրիելյան՝ Ալյո:
Հրաչյա Մայիլյան՝ Սանոյին էի ուզում:
Սանասար Գաբրիելյան՝ Սանոն ա:
Հրաչյա Մայիլյան՝ Բարլուս, ապեր, ձենդ փոխվել ա, չլնի՞ գիշերային սմեն եք էլե:
Սանասար Գաբրիելյան՝ Հա:
Հրաչյա Մայիլյան՝ Վառվա զանգելով՝ ժորիկը գլուխոյ անջտե, ոնց-որ անջտված ըլնի:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, առավոտն էլ հետը բան էի պայմանավորվել, գնացի, համ շտաբն ա փակ, համ ընդե ա փակ:
Հրաչյա Մայիլյան՝ Լրիվ խելքը քցել ա, հորս արև:
Սանասար Գաբրիելյան՝ Ի՞նչ անեմ, ցավդ տանեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Ի՞նչ կա-չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, ասում ա՝ դրանից իրեք հատ պտի ըլնի, արա ախպեր, ասում եմ՝ մթամ մեկը ճարել ենք, հմի էլ իրեք հատ պտի լնի, ասի տենց բան չի լնում, ցավդ տանեմ, իրեք հատը ո՞նց եմ ես ճարում:
Հրաչյա Մայիլյան՝ Հա: Կոնկրետ ի՞նչ պտի անենք, դրանք ինձի կերել են արդեն, հինգ րոպեն մեկ զանգում են, ժորիկն էլ ոնց որ անջտված ըլնի:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, ես ժորիկի հետևից գնացել եմ, ոչ ընդե կա, ոչ էլ ընդե, ոչ էլ շտաբում: Ասա՝ ի՞նչ անեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Չեմ իմանում, էլիզին էլ չես կարում գտնե՞ս:
Սանասար Գաբրիելյան՝ էլիզն էլ խռովել ա, շտաբն ա փակել, ախպեր:
Հրաչյա Մայիլյան՝ Արա, էս ի՞նչ մարդ են արա, չեմ հասկանում սրանց:
Սանասար Գաբրիելյան՝ Ասա, եթե էթալու, գալու տեղ-մեղ կա, ես անեմ, ապե ջան:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, էթալ-գալու բան չկա, էդ մարդկանց ես էն օրը իրան ասեցի գշերը 4 մանեթ ճարել եմ արյուն տալով, տարել եմ, տվել եմ, հիմա լրիվ կրակի մեջ եմ, հա ու չէ-ն պտի իմանայի, ստից լռվել եմ ստեղ, ինչ պետք էր, երեկ եկա արի:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, մենք առավոտն ենք հա ու չէ-ն իմացել, ես ասել եմ բանին, բա դու իրա հետ չես խոսացե՞լ:
Հրաչյա Մայիլյան՝ Ես զանգել եմ, ասեց՝ ես զանգել եմ բանին, գնացել ա շտաբ, չի վեկալում համարները:
Սանասար Գաբրիելյան՝ Ո՞վ ա ասել՝ չի վեկալում համարները:
Հրաչյա Մայիլյան՝ Ինքը, ժամը երկուսն էր, իրեքն էր, ասում ա՝ հլը չեմ կարում կապնվեմ, ախպեր ասի՝ իրեքին եմ զանգել, որտև դրանց ասել էի մինչև երկուսը, ախպեր, հա յա՝ հա յա, չէ՝ վայո, ձեզ ըլնի, փագում ենք

խոսակցությունը, ժամը իրեքին, իրեք անց կես զանգել եմ, ասում եմ, ախպեր, մի հատ գնա էդ մարդուն տես, իմացի հա, ա, հա ա, չէ ա, չէ ա՝ ես իմ անելիքն իմանամ, ասում ա՝ չեմ կապնվել, որ կապնվեմ, կզանգեմ:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, իմ հեռախոսը ոչ մի րոպե անհասանելի չի եղել, գիշերն էլ իրար հետ ենք եղել, այ ցավդ տանեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, գիշերվանից ոչ մի հատ զանգել ա, ոչ մի հատ բան ա արել, եղավ, կարեցավ հագցնել, լավ ա արել, վսյո, հարց չկա: Աստված իրա հետ: Եթե տենց ճիշտ ա, եթե տենց հեռախոսը անջատելով գիտի լուրջ մարդկանց հետ լուրջ թեմայով … բերեց կոճկեց, ապրի, պրոբլեմ չկա, հալալ ըլնի: Պրոստո հանկարծ տենաս, թող մի հատ զանգի, էլի:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, ես հարցրեցի գումարի համար, ասում ա՝ գնացինք եզդու մոտ, գումարը չի եղել:
Հրաչյա Մայիլյան՝ Արա, ասա՝ գնա, բերանս չբացեմ, եղավ ախպեր, Աստված իրա հետ, ոչինչ, լավ, որ կապի մեջ ըլնի, թող մի հատ զանգի:
Սանասար Գաբրիելյան՝ Ի՞նչ անեմ, ասա, էթամ ո՞րդե՝ իրանց տու՞ն, ասա անեմ, Հրաչ ջան, նեղանալու չկա:
Հրաչյա Մայիլյան՝ Չեմ մանում, ախպեր, պտի գտնվի, մի հատ զանգի, մի հատ բան կա իրանից ճշտվի, սենց շշկռվել, մնացել եմ, չեմ իմանում՝ ինչ անեմ:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, որ համարին որ զանգում եմ, տուպոյի նման անջտել ա, չգիտեմ, ախպեր:
Հրաչյա Մայիլյան՝ Չեմ իմանում:
Սանասար Գաբրիելյան՝ Աշոտի հետ էինք, գնացինք շտաբ, շտաբը փակ, գլուխոյ, եկել ենք հայաթով՝ ավտոն չկա:
Հրաչյա Մայիլյան՝ էլիզի համարը որ զանգում ես, չկա՞:
Սանասար Գաբրիելյան՝ Չի վեկալում, ուզում ե՞ս մի հատ էլ էլիզին զանգեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, մի հատ էլ զանգի:
Սանասար Գաբրիելյան՝ Զանգեմ ասեմ՝ թող շուտ կապ տա Հրաչին, հա՞:
Հրաչյա Մայիլյան՝ Հա:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 19.03.2017թ, ժամը 14:40-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-03-19_14-40-02_995579493300__out__94655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Ալյո:
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Ո՞նց ես:
Արմեն Պողոսյան՝ էշի պես:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, դե հելնում էթում եք, (հայհոյանք), 100 հատ հարց կա, դրա վախտն ա՞, էս (հայհոյանք) հետ ստե երեկ հագել ենք եքա, իրարից նեղանալ, ավտոյից իջավ գնաց: Ընդեղից վայրկյանը մեկ զանգում են, սրան էլ մեղք դնելու չի, էդ տուֆտին էլ զանգում եմ, ասում ա՝ ես երեկ առավոտ Ժորիկին ասել եմ՝ ինչ պետք ա, բան-ման: Ասի՝ մինչև ժամը իրեքը ես Ժորիկի հետ սաղ վախտ կապի մեջ եմ էլե, որտև էդ մարդկանց ասել էի՝ ես մինչև իրեքը պատասխան կտամ, ի՞նչն ես կապի մեջ էլել, մինչև իրեքը քո հետ չի կարեցե կապվի: Ասի՝ դուք մեզի դրել եք բանի տեղ, նենց բանի տակ ես դրել, ասում ա՝ Ժորիկն ասեց՝ եզդուց գնացինք փող չվեկալանք. ով որ դրա համար 4000 դոլար չի տվել, ալամ աշխարհը նրա մեր ու կնիկը (հայհոյանք), ասում ա՝ եզդին ասում ա՝ գնացինք: Ասում եմ՝ արա, եզդին տունն ա, տունը չի, դու քո համար գնացիր, Սանո ջան, սաղ գիշեր վիզ եմ դրել, 4000 ով որ չի տվել, ալամ աշխարհը…, խո ես լակոտ չեմ: Ասում եմ՝ դու հասկանում ե՞ս, մեզի ինչի դեմ ես դայաղ արել: Հիմա էլ ասում ա՝ ախպեր, գնացել եմ, ցույց եմ տվել, ասել եմ՝ իրա հետ մի հատ չի լնում, ասի ուրեմն իմ … …. (հայհոյանք) տենց բան ասողը, զավադսկոն մի հատ ա ըլնում, եթե մի հատ մարդ կգտնես, որ ուբեդիտ կանի, որ մի հատի տեղը 2 հատ, իրեք հատ ա ըլնում, ուրեմն … ա, տենց բան գոյություն չունի: Կանչել ենք, ախրանի պետի հետ էլ ենք խոսացել, էստեղ 2-3 մարդ էլ եմ տեսել էդ թեմաներով, մարդիկ ասում են, ախպեր հա, հենց ինքը մի հատ ա: Պրոստո, ասենք, էն

մեկի մեջը սերեբրո ա, պտի դրա հարցը բան անես մի հատ, որ ասենք՝ հանում ես սերեբրոյի հմար, կամ պտի էդ օգտագործածներից գտնենք, որտե որ ես ու դու էինք գնացել, ընդե, ըտուց ասում ա՝ կարաք, էդի որ մի հատ բան արիր, ասում ա, գցում ես մի յան, ոչ մեկի (անվայել արտահայտություն) պետք չի, երկրորդ անգամ չես բան անում, մատորը որ խփեց, պտի հանես գցես մի յան, չես կարա ռեմոնտ անես: Հիմա ինքը դրել ա, լոլո ա կարդում, ես դրա մերը … (հայհոյանք), ասի՝ չեմ հասկանում: Հա՝ հարց չկա, չէ, չէ, ապրես, հազգրիր, դու բան էիր ման գալիս, ուզում էիր, էն էլ հմի, կառոչի, ինքը մեր գլխին սարքեց, ես ըտենց եմ հասկանում, ու պրծանք էս թեման: Ինձ ըտենց ա թվում, հմի ես սրա հետ թուր ու թվանք, հետ ա՝ եկել եմ, հյուրանոցի դեմն եմ: Ասի՝ իջի, ախպեր, երկու բառով խոսանք, էթանք Հայաստան, տենանք, ոնց ենք անում, ես քեզի ճամփին կասեմ: Հմի դրա համար առանձնացել եմ, էն վախտ ---ը (չի հասկացվում) ավտոյի մեջ էր, չէի ուզում իրա հետ…
Արմեն Պողոսյան՝ Հա, հասկացա: Հմի ինքը ասում ա՝ դրա հետ երկու հատ էլ պտի ըլնի:
Հրաչյա Մայիլյան՝ Տենց բան ասա, … (հայհոյանք):
Արմեն Պողոսյան՝ Ես էլ ասի, ասում եմ՝ դու էն վախտ ասում էիր 2 հատ, մենք հարցուփորձ ենք անում՝ մի հատ:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր, ասա, գիրք գոյություն ունի, ինտերնետ գոյություն ունի, այ ցավդ տանեմ, ինտերնետը բաց ա, մեջը հատիկ-հատիկ գրում ա՝ ինչ ա ըլնում, ինչի հետ, ի՞նչ ես ստից հեքիաթ պատմում, արա: Ոնց որ ասես՝ ավտո եմ առնում, 06 եմ առնում, հետը պտի երկու հատ զապաս ակ ըլնի, հո դու դեբիլ չե՞ս, արա:
Արմեն Պողոսյան՝ Դե ասեցի՝ ախպեր, չգիտեմ՝ ի՞նչ ես ասում, մենք ում հարցնում ենք՝ ասում են էդի…
Հրաչյա Մայիլյան՝ Ա, ում հարցնել չի, այ ցավդ տանեմ, եթե ինքը էդքան անգրագետ ա, թող մի հատ գրագետ մարդ ճարի, ինտերնետը բացի, հենց հմի նայի:
Արմեն Պողոսյան՝ Բան չասի, ապեր: Դե երեկ քեֆը լավ էր, որ տեսա, բան չարեցի, խառը-խշտիկ, եսիմ ում հետ ծիծաղում, վոբշեմ, մենակ էդ հասցրի իմանայի, որ սենց ա, սենց ա: Հմի ասեց՝ առավոտ մի հատ տենանք, մի քիչ խոսանք, ասի՝ տենանք, բայց ինքն էլ նայում եմ հեռախոսին, մեկ անց կես զանգել ա, հեսա զանգեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր, ես իրան եմ զանգել, բա էլիզը խռովել ա, օֆիսը փակել են, էսա, էն ա, սենց-նենց, ասում եմ՝ ախպեր, օֆիս են փակել, բացել, դու չես հասկանու՞մ՝ մեզի ինչի տակ ես բերել, եթե դու մտածում ես՝ մեր գլխին մի հատ բան սարքես, ընենց կսարքեմ, որ դու լրիվ կխելառես, էդ նույն նկարով ես քո բերանը նենց (հայհոյանք), որ կիմանաս, հիմա դու կտենաս, վերջը ի՞նչ ա ըլնելու, ինձի կանկրետնի բան ասա: Դու Հրանտիկի մոտ ոտդ ոտիդ գցած նստում ես, ընձի ուղարկում ես թրի բերան, էսի անելու բան ա՞, որ դու իմ գլխին սարքիր: Հիմա եթե սարքոցի ա, դու սարքելը կտենաս, հեսա հասնեմ Հայաստան, (հայհոյանք), հեսա պետք էլավ, մինչև կանցովկի մոտ էլ էթալու եմ էս բազարով, այ քեզի բան, հո տուն-տուն չենք խաղում, քեզի 50 բերան ասել ենք՝ ինչը ինչից հետո ա, գնա բեր, էթամ բերեմ, 4000, ես ինչի՞ տեր եմ, էսքան հագած վիճակիս դու ինձի դնես հագցնես: Իրա հեռախոսը միացրած ա, ինքն էլ ասեց՝ հեսա կզանգեմ էլիզից կիմանամ՝ ուր ա, ինչ ա, գիշերը իրար հետ ենք եղել, ընդե ենք եղել, ասի, որ գիշերը ընդե եք եղել, մի հատ զանգեիք, ինձի ասեիք, ես իմանամ, ես սրան վեկալել-բերել եմ…
Արմեն Պողոսյան՝ Ապեր, ես չէի առաջինը, ես ժամը 12-ին գնացել եմ, հետս էլ բանն ա, Արսենն ա էլե:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, գիտեմ, Արսենին էլ զանգի, ասի՝ ապեր, մի հատ գտի, էս գյադի հետ թուր ու թվանքի մեջ եմ ստեղ, իրան չասի, էլի, որ թուր ու թվանքի մեջ եմ, ասի՝ պետք ա ժորիկը զանգի, ես հասկանամ՝ գամ-չգամ, ասի՝ մի հատ գտի, էլի, բա՝ հեսա գտնեմ, ոչ խեր, ոչ խաբար: Հմի, ախպեր, մի հատ իրան տես սռոչնի, մի հատ հասկանանք՝ էդի ոնց ա, իրան ասա՝ դու տենց կապիկություն մի արա, էդի մի հատի հետ մի հատ ա լինում, եթե տենց ա, դու իրան բացատրա, ասա՝ քո երեսից մենք 4 մանեթ տուժվում ենք, էն որ դու ասում էիր՝ ծախս ենք անում, էս ա, էն ա, քո երեսից դառել ենք թուր ու թվանք: Մի հատ ջոգա՝ ինչ ա, կզանգվենք:
Արմեն Պողոսյան՝ Հա:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 19.03.2017թ, ժամը 15:36-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-03-19_15-36-36_995579493300__out__94655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Ալո:
Արմեն Պողոսյան՝ Ասա, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Չես հանդիպե՞լ, հլը ախպեր:
Արմեն Պողոսյան՝ Չէ, հլը չեմ հանդիպել, տունը մարդ կա, հեսա դուրս գա, դուրս գամ:
Հրաչյա Մայիլյան՝ Մի հատ հանդիպի, էսի … (հայհոյանք)- թողեց, առանձնացել եմ, ասի՝ գամ, մի հատ խոսամ, ջոգենք՝ ինչ ենք անում, դե սրան ասել եմ յանի պտի Վլադիկավկազ իջնենք, բան: Ճղում ա ….)անվայել արտահայտություն), մի հատ որ հանդիպես, ասա՝ արա, բա ասում էիր գնացել եմ, ասել եմ, մարդիկ դրել են ապրանքի տակ, արդեն բերել են: Բա ասա՝ ասում էիր տղա յա, բա ո՞նց ա ըլնում էդ տղությունը: էդ ի՞նչ մահանեք եք բռնում, մի հատ էդ սաղ կանկրետնի դիր դեմը, ես իմանամ՝ ինչ ա ըլնում: Հմի ես սրան ասեմ՝ էթում ենք Հայաստան, կասի՝ ախպեր, բա ի՞նչ ա ըլնում, ո՞նց ա ըլնում: Դրանից վերջնական շուտ իմացի, որ ես ասեմ կանկրետնի՝ ախպեր, չի լնում, ո՞նց ենք անում, ի՞նչ ենք անում՝ պրծնենք:
Արմեն Պողոսյան՝ Լավ, ցավդ տանեմ, հեսա դուրս են գալիս, տանեմ ճանապարհեմ:
Հրաչյա Մայիլյան՝ Հա էլի, մի հատ զանգի պայմանավորվի, թող գա էդ կաֆեն, մինչև գա, դու ջոգա՝ ի՞նչ ա, ո՞նց ա:
Արմեն Պողոսյան՝ Լավ, հեսա անեմ, Հրաչ ջան:

- Հրաչյա Մայիլյանի և էդգար Մայիլյանի միջև 19.03.2017թ, ժամը 19:11-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-03-19_19-11-48_37477101515_in_995579493300_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
էդգար: Պա:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, էդ:
էդգար: Ի՞նչ կա, ի՞նչ եք անում:
Հրաչյա Մայիլյան՝ Հեչ, սպասողական նստել ենք էլի, էս յան, էն յան:
էդգար: Չհելա՞ք հլը:
Հրաչյա Մայիլյան՝ Չէ, չենք հելե, հեսա Օթարը պտի գա ստե մի հատ, մի հատ էն մարդուն տենանք, նոր շարժվենք էլի, Խիչան էլ ասեց, որ բան ըլնի, պասիլկի պես սարքեմ դնեմ տաքսին, դիմավորեք, էն էլ չի զանգում, Թուրքիայից պտի գան: Դու ի՞նչ արիր:
էդգար: Քնած էի, նոր հելա:
Հրաչյա Մայիլյան՝ Հա, տենց տրանզիտներով շատ մի ֆռա, մեկ էլ էդ ավտոյի մոմենտը հանկարծ բան չասեն, որ ,Օպելի, համար, որ Աբեսն ասում էր, որտև էն Ժորիկի ու Սանոյի հետ բազար կա էդ ,Օպելի, վրով, պտի փող տան իրանք, ջոգում ես, չեն ստացել էդ փողը, տենց բան չկա, Գարիկ-մարիկ՝ ով զանգեց, ասի 3.2-ով առել ենք, լավ, հեսա կզանգեմ, էդ:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 19.03.2017թ, ժամը 19:21-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-441-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-518-17_2017-03-19_19-21-18_37494655885__in__995579493300_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Հը՞ն, ի՞նչ արիր:
Արմեն Պողոսյան՝ Նոր խոսացի, Հար, գյուղ իջացրի իրան, վոբշեմ, ասում ա՝ էդի իրա ուզածը չի, էնի իրեք հատա, էնի նենց ա, վոբշեմ, ասա՝ թող գա, էդի չի լնի: Ասում ա՝ ես իրան ասել եմ, որ չի լնի, ինքը զանգել ա ինձի:
Հրաչյա Մայիլյան՝ (Հայհոյանք), չի ըլնին ո՞րն ա, դու իրան ասում ես՝ էն տղեն ա, որ ինքը գիտի, պերեվոզկա ենք արել, բերել ենք, հմի բերի, 100

անգամ, մինչև նկարը տանելը, այփադը, իրան ասել ենք, որ մի հատ ա, ինքն էլ գնացել, սաղ պատմել ա, ի՞նչ ստից հավեր ա տալիս: Վոբշեմ, իրա լավը (հայհոյանք), ես գիտեմ՝ ինքը ինչ էր ուզում արած լիներ, հեսա կգանք, էդի մի հատ մեծ ռազբորկի բազարա արդեն, էդի ես լրիվ ջոգեցի: Եթե ինքը կարում ա հիմա բերի, դակազատ անի, որ էդի երեք հատ ա ըլնում, էդի իրան նվեր ենք տալիս, եթե չէ, իրա հարցերը պտի լուծվի, իրա հոր էշը չենք, որ ստից տրյուկներ անի: Թող բերի մի հատ, էթանք լյուբոյ մասնագետի մոտ, թող ասի, եթե կլնի մեկը, որ ասի մի կոմպլեկտի հետ 3 հատ ա ըլնում, ուրեմն հարց չկա: Հավայի սարքեց գլխներիս՝ չելած վախտը, սրա հետ էլ լրիվ թուր ու թվանք, չեմ էլ ջոգում՝ ո՞նց պտի անեմ, ի՞նչ պտի անեմ:
Արմեն Պողոսյան՝ Դու ե՞րբ ես ուզում գաս:
Հրաչյա Մայիլյան՝ Ես հեսա Խիչային եմ մի հատ էլ զանգել, մի հատ մոմենտ կա, էլ ոչ էլ նաստրայենի կա, ոչ էլ Բաթում եմ էթում, թողում եմ գամ: էլ ի՞նչ էթամ, ու՞ր էթամ, (հայհոյանք)՝ ,դու էդի բեր, ես էթում եմ Կիրովական,, խաբեբա լակոտ, կայնի գամ, տես հեսա ինչ բազար եմ դնելու վրեն, կանկրետնի հագցրեց, 4000 դոլար ընչի տեր եմ, (հայհոյանք):
Արմեն Պողոսյան՝ Արի, կխոսանք էլի, էսօր կգա՞ս:

- Սանասար Գաբրիելյանի և Արմեն Պողոսյանի միջև 20.03.2017թ, ժամը 11:51-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-452-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-880-17_2017-03-20_11-51-18_37494655885_out_098504762_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Ապեր, Հրաչը զանգեց:
Սանասար Գաբրիելյան՝ Արա, անպայմանա էլիզը զանգի՞, որ վերցնես:
Արմեն Պողոսյան՝ Չէ, ախպեր, ասում եմ՝ Հրաչի հետ էի նոր, հեռախոսը ավտոյի մեջ էր: Գալիս եմ, ու՞ր գամ, ապեր:
Սանասար Գաբրիելյան՝ Ես արդեն դուրս եկա: Ի՞նչ անեմ, 3 ժամ զանգում եմ, չես պատասխանում:
Արմեն Պողոսյան՝ Ապեր, դե եկավ, համ պլանշետը տվի, համ էլ խոսում էինք, բանը թողել էի ավտոյի մեջ, իբր մոռացել էի, ասեմ, որ իմանաս: Տենց, եկավ բանի մոտը, տվեցի, տենց խոսացի: Հիմա դու գնացի՞ր արդեն:
Սանասար Գաբրիելյան՝ Հրաչի ուզածը ո՞րն ա, ես չեմ հասկանում: Վերջը, սաղ գիշեր գլուխս տրաքցրի, այ տղա:
Արմեն Պողոսյան՝ Ապեր, լավ, հիմա էդ հեչ: Հիմա դու գնում ես օֆիս, գաս էդ Կիրովականն էլ մի հատ իրար տուր, էլի:
Սանասար Գաբրիելյան՝ Ախպեր, լսի եթե ամեն ձեռ տալուց պիտի խաղ անե՞նք, հասկանու՞մ ես…
Արմեն Պողոսյան՝ Չէ, պիտի խաղ անենք, բա ոնց: Եթե ձեռ ենք տվել…
Սանասար Գաբրիելյան՝ Չէ, լսի: էդ ձեր օրենքներով, էդ որ ցույց են տալիս՝ պիտի էսքան տանք, էնքան տանք, ես գործ չունեմ տենց խաղերից, արա, այ ախպեր: Ես խաղի մեջ չեմ:
Արմեն Պողոսյան՝ Արա, այ ցավդ տանեմ, էդ ի՞նչ ես ասում, որ: էդ յանի ի՞նչ ասիր ինձ, Սանո ջան:
Սանասար Գաբրիելյան՝ Բա էդ ասեցի, բա էդ ա դառնում: Բան ենք ցույց տալիս, պիտի--(չի հասկացվում): Ժորա ջան, տենց գործ չի .../ծիծաղում է/
Արմեն Պողոսյան՝ Չէ, տենց չի, ախպեր: Այ ախպեր, արա, տենց բան չկա, տենց մոմենտ չկա, այ քեզ բան: Ուղղակի կտենա, ես կասեմ հլը ինչ մոմենտ ա, հլը էդի հետ չի գնացել, ուղղակի էդ ա հարցը:
Սանասար Գաբրիելյան՝ Ո՞վ չի գնացել:
Արմեն Պողոսյան՝ Բա հետ չի գնացել: Հլը իրա մոտ ա, էդ ա հարցը:
Սանասար Գաբրիելյան՝ Իրա մոտն ա, թող հետ տա, ի՞նչ կա:
Արմեն Պողոսյան՝ Բա իրանք էլ ստեղ չեն, հետը տարել են բան, լավ՝ կտեսնենք, կխոսանք, էլի, Սանո ջան: Մի քիչ էդ ա բանը, թե չէ ի՞նչ կա բան անելու:
Սանասար Գաբրիելյան՝ Արա հա, բայց ինչի՞ չէ: Ինձ պատասխանի, մարդը սպասեց, ես իրան ասեցի, որ պետք չի: էլ հետը տանում ա, էս ա լինում, այ էդ /1 բառ/ ոնց եմ զզվում, տրաքում… /հայհոյում է/:
Արմեն Պողոսյան՝ Հա, ես էլ եմ տենց բաներից տրաքում: Հիմա ես էլ իրան ասեցի՝ ախպեր, կանչի տուր ձեռները, էն մեր պայմանավորված ախպեր,

ամենավերջում էդ հազարն էլ տուր, մի հատ էլ պետք ա՞, ախպեր, ես զանգեմ ասեմ: էլ ի՞նչ ասեմ ախպեր, էլ ոնց ասեմ էլ: Ասի՝ սենց ա, ախպեր, վիճակը, հիմա սխալ ենք հասկացել, գիտես՝ ոնց ենք խոսում, կարանք սխալ հասկանանք: Ի՞նչ կա դրա մեջ:
Սանասար Գաբրիելյան՝ Ժորա ջան, տենց բաներ չեն անում: Մենք հասուն մարդիկ ենք, հո դուք գի՞ժ չեք, արա: Արա, սա խելքը գլխի մարդու խոսակցություն ա, դրա համար էլ … /հայհոյում է/՝ ես լավ պրծա: Հասկանու՞մ ես…/հայհոյում է/:
Արմեն Պողոսյան՝ Լավ, հլը գնա, արի: Ոչ մի գործ չի ստացվում, ախպեր: Հա, ապեր: Լավ բան անենք, տեսնենք՝ ինչ անեք, դալշե մի բան անենք:
Սանասար Գաբրիելյան՝ Ուրեմն ոչ մի գործ չի կարելի անել, որովհետև շառլատանության, եսիմ մյուս-մյուս խաղեր չի լինում, արա:

- Սանասար Գաբրիելյանի և Արմեն Պողոսյանի միջև 20.03.2017թ. ժամը 11:55-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-452-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-880-17_2017-03-20_11-55-22_37498504762__out__094655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝

Սանասար Գաբրիելյան՝ Խոսալով ընկա, շտաբը անցա /հայհոյանք/: Ապեր, տես ինչումն ա հարցը՝ ժորա, ես սիրում եմ մաքուր, պարզ: Վաղն էլ գնամ էդ Կիրովականի գործը խոդ տամ, ապեր, վաղն էլ մի շառ, մի /անվայել արտահայտություն/, ես տենց կեղտոտ գործերի հետ գործ չունեմ, ախպոր նման:
Արմեն Պողոսյան՝ Չէ, ախպեր: Ախպոր նման, էդ պիտի մի բան անենք:
Սանասար Գաբրիելյան՝ Մի բան անենք, որ ի՞նչ անենք խոդ տամ, խոդ տամ, որ /չի շարունակում/: Ասի՝ ախպեր, սենց ասեցիր, նենց ասեցիր:
Արմեն Պողոսյան՝ Չէ, ապեր, տոչնի կպայմանավորվենք, կանենք, ի՞նչ ա եղել, այ քեզ բան: Տենց բան չկա:
Սանասար Գաբրիելյան՝ Խնդալու գործ, արա/ծիծաղում է/: Ասում ա՝ ախպեր, բանը տեսել ես՝ պիտի տաս: Արյուն թափեցի, ասում ա, 4000 դոլար փող եմ դրել: Արուն թափեցի էդ գիշերով: էդ ինչի ասելու բան ա՞: Ես իրան նույն հարցը տալիս եմ, ասում եմ՝ ապեր, բա որ մարդը չուզեց, ասում ա՝ էդ քո գործը չի, թող մնա իմ մոտ: Թող մնար, մնար, բա էդ, որ մնա քո մոտ, մեզ ինչի՞ ես ասում դրա համար: Կարող ա՝ դու ուրիշ կլիենտ ունես, եսիմ ինչ ունես:
Արմեն Պողոսյան՝ Տե՞նց ա ասել, որ՝ թող մնա իմ մո՞տ:
Սանասար Գաբրիելյան՝ Ինչի՞ դու իմ մոտ նստած չէիր, արա ասի՝ թող մարդը գա տեսնի, կարող ա ասում ա՝ առ սաղ եմ տալիս, կարող ա ասում ա՝ ախպեր, դուրս չի գալիս: էդ որ տալիս ես իրան, ասեցի, հիմա առանց նայել տամ իրան, անունը ի՞նչ դնեմ, ապեր: Բա՝ թող մնա, ոչինչ, թող մնա իմ մոտ:
Արմեն Պողոսյան՝ Դե թող մնա, ի՞նչ ասեմ, ախպեր: Ես էլ ասեցի, ասեցի՝ ախպեր ինչի՞ց բան արել, ինչի՞ չես բրդել բան-ման: Բա՝ ես բան արեցի, որ իբր հեսա լրիվ, հեսա նենց բան սենց բաներ: Ասի՝ բայց դու հլը չգիտեիր՝ լրիվ-լրիվ, ինչի՞ ես ասել լրիվ-մրիվ:
Սանասար Գաբրիելյան՝ Արա, լրիվ բա մարդը պիտի տեսնի, հո տավար չե՞ս, ասա, այ սևատավար: Ես իմ ճիշտը պահել եմ, ախպեր, ես չգիտեմ: Ով սխալ ա, թող/հայհոյում է/: Նայի ինչ եմ ասում, ես սխալ բաներ չեմ սիրում, ես մաքուր ապրած մարդ իմ, ապեր ջան: Հլը, փառք քեզ տեր աստված, որ տենց վերջաբան ունեցավ: Խաբողի /հայհոյում է/: Արա /անվայել արտահայտություն/ ձեր հետ գործ բռնելը:
Արմեն Պողոսյան՝ Դե լավ էլի, ինչի՞ ես ասում ձեր հետ բռնելը: Ես էդ չեմ կարա հասկանամ, սաղ պարզ ա եղել, էդ ինչի՞ համար ես ասում ձեր հետ:
Սանասար Գաբրիելյան՝ Պարզ, տենց ա եղե՞լ: Նախ ես Հրաչի հետ գործ չունեի՝ մեկ:
Արմեն Պողոսյան՝ Հա, բան չասի, ախպեր:
Սանասար Գաբրիելյան՝ Ամենակարևոր մոմենտը քեզ ասեմ:
Արմեն Պողոսյան՝ Լավ դե, կգաս, կխոսանք:
Սանասար Գաբրիելյան՝ Արա, ես խոսալու ի՞նչ ունեմ: Արի տեսնենք մեր գործերը լինում ա, լինում ա: Չի լինում /հայհոյում է/: Ավելի լավ եղավ, էնքան ուրախ եմ, որ /չի շարունակում/:
Արմեն Պողոսյան՝ Հա, իմ սրտով էլ ա, ախպեր ջան: Լրիվ:

Սանասար Գաբրիելյան՝ Որովհետև վաղը ուրիշ բազարներ էր դուրս գալու, դու գլխից չէիր տեսնում ինչ վրդովված՝ հո ես մենակ չեմ, բան: Ես գործ եմ բերել, ասում եմ՝ ախպեր, կարում ե՞ք անեք չանեք, ասեք, չեք անում, չեք անում: Ես մենակ իմ վրա չեմ վերցնում: Լավ, /անվայել արտահայտություն/, ոչ խոսալու ունեմ, ոչ տալու, ոչ էլ առնելու: Կիրովականի գործը խոդ տուր:
Արմեն Պողոսյան՝ Հա:
Սանասար Գաբրիելյան՝ էդ էլ գործ չունեմ: Ասում ա, հա:
Արմեն Պողոսյան՝ Հա: Դե լավ էլի, կգաս կխոսանք: Մի բան արա էլի, լավ:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 20.03.2017թ. ժամը 16:50-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-442-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-597-17_2017-03-20_16-50-01_37493180736__out__094655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր, էս շտաբը չե՞ս:
Արմեն Պողոսյան՝ Չէ, տունն եմ, Արմենի հետ:
Հրաչյա Մայիլյան՝ Ավտոն կայնած էր, Վահանին տեսա, ասեց չգիտեմ ուրա: Ասի զանգեմ:
Արմեն Պողոսյան՝ Բա որտե՞ղ ես:
Հրաչյա Մայիլյան՝ Ես եկա էդ վուլկանիզացիան, հետևի ակը նստում ա, տենամ՝ ինչ են անում:
Արմեն Պողոսյան՝ Դե հեսա մի քիչ հետո շտաբը կլնեմ: Գամ շտաբը, պրծի արի ընդե, ապեր:
Հրաչյա Մայիլյան՝ Լավ:

- Հրաչյա Մայիլյանի և Արմեն Պողոսյանի միջև 21.03.2017թ. ժամը 10:16-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-442-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-597-17_2017-03-21_10-16-57_37493180736_in_094655885_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Հրաչյա Մայիլյան՝ Ալո:
Արմեն Պողոսյան՝ Բարլուս, ախպեր:
Հրաչյա Մայիլյան՝ Բարլուս, հելել ես:
Արմեն Պողոսյան՝ Կերած խմածդ անուշ, թոռնիկի ծնունդը շնորհավոր: … Կենցաղային զրույց:
Արմեն Պողոսյան՝ Ես եկել եմ Երևան, ուզում եմ հետ գամ, մի կես ժամ 40 րոպեից ըտեղ կլնեմ: Դու ո՞րդե կլնես:
Հրաչյա Մայիլյան՝ էջմիածնում եմ, էլի: էդ Աշտարակի թեման բան չենք անելու՞, էդ Կոստյան զանգեց:
Արմեն Պողոսյան՝ Հա, ապեր, հեսա գամ, զանգենք իսպանացիներին, տենանք՝ ի՞նչ ա, տալի՞ս են էդ ճամփեն սարքենք, թե չէ, հետո մի հատ էլ զանգեմ պարսիկներին:
Հրաչյա Մայիլյան՝ Բայց պարսիկները եթե պատրաստ են, ես մի հատ Կոստյայի հետ խոսամ:
Արմեն Պողոսյան՝ Պատրաստ են, պրոբլեմ չկա, պրոստո մի հատ գամ խոսանք, նոր:
Հրաչյա Մայիլյան՝ Լավ:
Արմեն Պողոսյան՝ Իմանանք՝ ինչ ունենք մեջը, նոր էթանք:
Հրաչյա Մայիլյան՝ Դե սպասեմ, արի, լավ:

- Հրաչյա Մայիլյանի և Ռոբերտ Աղվանյանի միջև 21.03.2017թ. ժամը 12:53-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-443-17 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-598-17_2017-03-21_12-53-02_37443337735_out_995568629883_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Ռոբերտ Աղվանյան՝ Հա, ախպեր:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր, ի՞նչ գործի ես, ի՞նչ ես անում:
Ռոբերտ Աղվանյան՝ Ոչ մի: Ընգերներին տեսա, դրանք էին զանգում, կյանքս ուտում էին:
Հրաչյա Մայիլյան՝ Ապեր, էդի վոբշեմ նենց բացատրական աշխատանք ա

տարել, որ էդ մատորը էդ խփած ավտոյի վրա չի լնի դնել, կոմպլեկտավորել, ձև չկա, ասում ա:
Ռոբերտ Աղվանյան՝ Ընգեր, զանգել եմ, մարդ կա, Սկայպով հետը խոսացել եմ, որ քեզ ասում էի որ կա, ասում ա՝ ապեր, մենք հանում ենք, տակինները սաղի դրանց վրա հագցնում ենք, էսքան բան: Այսինքն, 100 տոկոս եմ ասում:
Հրաչյա Մայիլյան՝ Դե ախպեր հիմա…
Ռոբերտ Աղվանյան՝ Հիմի ես ասեմ՝ էդ մարդը կոնկրետ էդ գործով ա, ասում ա մենք հանում ենք, փոխում ենք, դնում ենք վրեն:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր, հմի որ նայում ա, ասում ա՝ սենց չի լնում, որ հանդիպենք, կխոսանք: Դու կարում ե՞ս գաս: Կարա՞ս էսօր գաս:
Ռոբերտ Աղվանյան՝ Չգիտեմ: Հմի դու քո ասածն ասի՞ր, վերջացրի՞ր: էդ ընկերոջ հետ խոսացի, ասում ա՝ ով- որ որ ըտե բան ա անում, մեր մոտ որ կար, հիշում ե՞ս, որ քեզ ասի, ասում ա՝ սենց ա խնդիրը, ասի մի հատ մասնագիտական հարց եմ ուզում տամ:
Հրաչյա Մայիլյան՝ Ախպեր, էդի հեռախոսով չէ էլի, իրար կտեսնանք, կխոսանք: Ես պտի 2 օրից ըտեղ ըլնեմ: Նոր խոսացի, երկու օրից նոր պտի գամ, ո՞նց անենք, դու գա՞ս ստեղ:
Ռոբերտ Աղվանյան՝ Չգիտեմ, ո՞նց ես ուզում, անենք:
Հրաչյա Մայիլյան՝ Գալդ ճիշտ ա, գաս, ստեղ ջոգենք, տեսնենք՝ ի՞նչ ենք անում, էլի: Ստեղ մոմենտներ կա, հեռախոսներս էլ պտի մի հատ փոխեմ, կգաս, կխոսանք վոբշեմ, կարող ա՞ էսօր երևաս:
Ռոբերտ Աղվանյան՝ Չգիտեմ, ընգեր, հլը մի հատ զանգեմ, ընգերոջս եմ ասում, զանգել եմ, պտի գա:
Հրաչյա Մայիլյան՝ Դե հլը մի հատ նայի ինչ ա, հետո կխոսանք:
Ռոբերտ Աղվանյան՝ Դե, էդ մարդն եկավ, խոսացինք, դվիժենի եմ արել, քեզ չեմ էլ ասել, փող էլ հանել, տվել եմ, ասել եմ՝ գնա բեր, ծախսի փող էլ եմ տվել, էն էլ եմ տվել իմ ջեբից:
Հրաչյա Մայիլյան՝ Եղավ, դե նայի՝ երբ ես գալիս, արի, կխոսանք:

Որպես ապացույց ճանաչված և գործին կցված՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման հիման վրա Սամվել Բաբայանի նկատմամբ ՀՀ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների իրականացրած ,Ներքին դիտում, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներով և այդ կապակցությամբ կազմված արձանագրություններով, մասնավորապես՝
- Սամվել Բաբայանի և Սանասար Գաբրիելյանի միջև 18.03.2017թ. ժամը 11:29:56-ին տեղի ունեցած զրույցի ձայնագրությամբ, գրառված 18.03.2017 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 01b80017 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան- Այ ցավդ տանեմ ես տենց կոնկրետացրել եմ, որ կանկրետնո մի հատ պրոմոխ չեթա, վտանգավոր ա---: (չի հասկացվում) Դրա համար էդքան բան արեցի: (Դադար) - Նայի: Տես, սա վիստրելն ա:
Սանասար Գաբրիելյան-Գիտեմ:
Սամվել Բաբայան-Սրա տակ պիստալետն ա լինում, մտնում ա տակը, ցավդ տանեմ: Սա երեք հատ ինքը պիտի քեզ տա, ոչ թե մի հատ:
Սանասար Գաբրիելյան- Երեք հատ, իրա կոմպլեկտի մեջ ինչ հասնում ա: Ամենադժվար ցավը էս էր, որ կարողացանք հասնենք:
Սամվել Բաբայան- Խի՞:
Սանասար Գաբրիելյան- Որովհետև դժվար էր բերելը, դու գիտես, ցավդ տանեմ, էշ մերը …./հայհոյանք/ էն բանը սիդելնիկը ճղել ա եքա:
Սամվել Բաբայան- Գնա մի հատ յաշիկ զակազ տուր, որ հողի մեջ դնես, չփչանա:
Սանասար Գաբրիելյան- էսօր պիտի սիկտիր լինենք, սա ստից տանենք, գոնե, մեկ ա մաս-մաս չի անցնի, ցավդ տանեմ: Մեզ էջմիածին պահելը ձեռ չի տալիս էլի:
Սամվել Բաբայան- Հիմի գյուղի անուն ասեմ, գրի:
Սանասար Գաբրիելյան- Ասա:
Սամվել Բաբայան- Նարիշտար/Դադար/
Սանասար Գաբրիելյան- Տուր ես գրեմ, էլի:
Սամվել Բաբայան- /Խոսում է շատ ցածր/Նարիշտար: Նարիշտար գյուղին կպած ա, Մատաղիսը: Առաջին գյուղն ա, Լաչինից որ անցնում ես

Քյալբաջար, սարն ա:
Սանասար Գաբրիելյան- Հասկացա:
Սամվել Բաբայան- Այ ըտեղ, էդ անկյունի վրա Նարիշտար, մաքուր մտնելու ա, վերցնի, իջնի: Ընդեղ քանդված տներ ա: Փոս ես անում, դնում ես մեջը, յաշիկը մի լավ ---(չի հասկացվում), ժեշտի վրա գցում ես մի քարի կտոր,--- մի հատ չխկցնես ---(չի հասկացվում) թևավոր-թևավոր գնան վերցնեն: Ամսի 25-24-ը գումարը քեզ կտա Լուսինեն:
Սանասար Գաբրիելյան- Էսօր շարժ անենք, ես ձև չունեմ: Մարդիկ եկել են, ցավդ տանեմ: Ռազբորկա են անում սաղ օրը:
Սամվել Բաբայան- 24-ից շուտ քեզ չեմ կարա տամ: Քառսունհինգ հազար-- /չի լսվում/
Սանասար Գաբրիելյան- Գեներալ ջան, գոնե… իրեք օր էս կողմ, վզիս նստած են, ցավդ տանեմ: Շարժ անես, գոնե էթամ գամ, մեռնեմ քեզ:

- Սամվել Բաբայանի և Սանասար Գաբրիելյանի միջև 19.03.2017թ. ժամը 11:00:56-ին տեղի ունեցած զրույցի ձայնագրությամբ, գրառված 19.03.2017 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 01b80016 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սանասար Գաբրիելյան- Կարելի ա, պարոն գեներալ: Ո՞նց ես:
Սամվել Բաբայան- Ոչինչ:
Սանասար Գաբրիելյան- Հազում-մազում ես:
Սամվել Բաբայան- Հիվանդ եմ…
Սանասար Գաբրիելյան- Ասիր էգուց… /չի ավարտում/
Սամվել Բաբայան- /ընդհատելով/ Իրիկվա կողմը: Մոսկվայից մարդ ա գալիս, էդ կեղտը բերում, գնում: Իրիկվա կողմը կգանգեմ, կգաս, մի 10 մանեթը կտամ, կտաս իրանց, հանգիստ վեր ընկնեն: Ամսի 24-ին էլ մնացածը կտամ, կգնաս:
Սանասար Գաբրիելյան- Եղավ, ցավդ տանեմ, հարց չկա: Իրիկվա կողմ գամ ստե՞ղ, թե՞ զանգեմ:
Սամվել Բաբայան- Զանգի, եկ, էլի: Բերած կլինեն, էլի:
Սանասար Գաբրիելյան- Լավ, ցավդ տանեմ: Ուղղակի ես էդ 10-ի համար չեմ ասում է: Ես մաշինի վրա եմ, գոնե մի 1000 տվեք, հասնեմ-տեղավորեմ, հետ գամ, էլի:
Սամվել Բաբայան- Կոպեկ չունեմ: Քո արև:
Սանասար Գաբրիելյան- Ոնց կասես: Իրիկվա յան կգամ: /Սանասար Գաբրիելյանը դուրս է գալիս:/

- Սամվել Բաբայանի, Սուսսաննա Հարությունյանի ու Աշոտ Շուշանյանի միջև 22.03.2017թ, ժամը 12:01:29-ին տեղի ունեցած զրույցի ձայնագրությամբ, գրառված 22.03.2017 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 01b80018 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սուսսաննա- Բարև ձեզ:
Սամվել Բաբայան- Բարև:
Սուսսաննա- Ցավակցում եմ, կներես որ չեմ կարացել մասնակցել, զբաղված եմ եղել: Նստի: Աշոտը Գրիբոյեդովի մեր Սանոյի հարազատ ընկերն ա, մոտիկն ա, երեկ իրանց կանգնացրել են Սևանից գալուց: Պատմի:
Աշոտ- Չէ, Սևանում էինք: ԳԱԻ-ն կայնցրեց, կայնանք, բա դակումենտներդ, մեկ էլ Սանոն ն ներկայացավ՝ ով ա, ինչա, տոմսը, պրավեն-բան սաղ հանեց տվեց իրան, բա ԱՊՊԱ չկա՞: Ասեց՝ հա, չկա: Վերջը, բա՝ արի: Կապիտանն եկավ ավտոյի վրա, ես ավտոյից չիջա, ասի նենց անեմ հանկարծ ավտոյի մեջ բան-ման չքցեն էլի: Ինքը ԳԱԻ-ի ավտոյի մեջ խոսաց մայորի հետ: Մեկ էլ քրեականն եկավ: Ես էլ նստած մեքենայի մեջ: Բա խնդրում ենք, իջեք, քրեականից ենք: Ասի՝ ուրախ եմ: Ես էլ ուդոն հանի ցույց տվեցի, ասի՝ էս մարդն եմ: Վերջը տենց: Բա մեքենայից դուրս արի: Ասի ինչի համար, ինչ ա եղել, որ մեքենայից դուրս գամ: Բա՝ դուրս արի, կասենք: Դուրս եկա: Մեկ էլ նորից զանգեց մի քանի տեղ, բա կարանք մեքենան ստուգենք: Սանոն ասեց՝ ասեք ինչ ա եղել: Բայց ասի հանկարծ բան-ման չքցեք մեջը: Բա՝ չէ: Վերջը սկսին ավտոն քանդել-մանդել բան, էթում են, խոսում, գալիս, էթում են խոսում, գալիս: Ասի՝ սե՞նց եք հարգում կռված տղերքին: Բա, հեսա կճանապարհենք:

Կհարգենք՝ կճանապարհենք: Ասի, էս ա՞ ձեր հարգանքը: Սանոն էլ մի երկու բառ .../չի ավարտում/: Սկսան նորից ավտոյի մեջ մի 5-6 անգամ: էլի զանգին էս յան-էն յան: Բա հինգ րոպեից կեթաք: Նորից զանգին: Հետո բա ախպեր, արծանագրություն կազմենք, գնացեք: Արծանագրություն կազմեցին, հելանք եկանք, հոգնած էինք, դե գիշեր էր: Իրան թողել եմ էջմիածնում, ես հելել, եկել եմ տուն: Իրիկունը զանգեց, ասեցի՝ մեքենան բերե՞մ, բա՝ չէ, թող մնա, առավոտը կզանգեմ, կգաս: Առավոտը հելնեմ, տենամ՝ զանգ չկա: Գյուղի մեջը կանգնած եմ: Մեկ էլ ԿԳԲ-ի ավարյոննի մեքենաներով՝ մի տասը մեքենա:
Սուսաննա- Բայց էջմիածնի՞նն էր:
Աշոտ- Կեսն էջմիածինն էր, կեսը՝ Երևան: Գյուղի մեջը կանգնած էի արդեն: Եկան, բա դու՞ ես Աշոտը: Ասի՝ հա: Բա, արի մոտիկ հլը: Գնացի, բա՝ մեքենայիդ բանալիները տուր: Ասի՝ ո՞վ ես, քեզ բանալիները տամ: Բա՝ Սանոն ա ուզում: Ասի՝ Սանոն ու՞ր ա, թող գա, ասի: Վերջը: Ասի չեմ տա մեքենայի բանալիները: Վերջը, նայեցին ավտոյիս մեջ ---: (չի հասկացվում:) Բա՝ ինչ ա եղել, ինչ ա եղել-- (չի ավարտում:)
Սամվել Բաբայան- Սանոյին են բռնե՞լ:
Սուսաննա- Հա: Ես երեկ տեսա իրան, խոսացի: Կանչեցի, ասի՝ Սանո, ուր ես, չկայիր: Ասեց էդ պատմությունը: Ասեց՝ ինչ ես մտածում: Ասի՝ մի քիչ ուշադիր եղի տունը, ավտոյի մեջ:
Աշոտ- Հինգ անգամ նայեցին: Բա արի էս կողմ, կապոտը բացենք: Ասի կապոտի հետ ի՞նչ գործ ունեք:
Սամվել Բաբայան- Կայնի, ու՞րդեից էիք գալիս:
Աշոտ- Սանոյի հե՞տգ էթում էինք, առավոտ էր, առավոտն ա եղել երեկ:
Սամվել Բաբայան- Ու՞ր էիք էթում:
Աշոտ- Ասեց՝ գնանք Ղարաբաղ, գանք:
Սամվել Բաբայան- Սևանո՞վ:
Աշոտ- Հա, Քելբաջարով:
Սամվել Բաբայան- Մեքենայում բան (կամ մարդ) չի՞ եղել:
Աշոտ- Չէ, երկուսով ենք եղել:
Սամվել Բաբայան- Բա իրա հետ հիմա կապ չկա՞:
Աշոտ- Չէ:
Սուսաննա- Հեռախոսը վեկալել են:
Սամվել Բաբայան- Չէ, դե պարզ ա, ինչի համար ա, ձեր միջիցա նավոդկա տվողը:
Սուսաննա- Ես էլ էդ ասեցիգ Ասեցի, ո՞վ ա իմացել՝ ուր եք գնում: Ասեցի՝ ո՞վ ա իմացել, որ դու ...
Սամվել Բաբայան (ընդհատելով)- Լավ, դու դուրս արի (Սուսաննան դուրս է գալիս:)
Աշոտ- Լսում եմ, պարոն գեներալ ջան:
Սամվել Բաբայան- Մեքենայում բան չի եղե՞լ Ղարաբաղ գնալուց:
Աշոտ- Չէ:
Սամվել Բաբայան- Դուք գնացել ե՞ք Վրաստան:
Աշոտ-Ես չեմ գնացել Վրաստան, տեղեկություն չունեմ:
Սամվել Բաբայան- Տոչնի՞:
Աշոտ- Ես Վրաստան չեմ գնացել:
Սամվել Բաբայան- Դու իրա ի՞նչն ես:
Աշոտ- Մտերիմ ընկերը, հարյուր տարվա:
Խոսում են շշուկով:
Աշոտ- ... 5 հազար: Բանի միջից (չի հասկացվում):
Սամվել Բաբայան- ...էդ բանը չի բերե՞լ ստեղ:
Աշոտ- ... Ինչը՞: Չէ, էդ չգիտեմ:
Սամվել Բաբայան (խոսում է շշուկով, չի հասկացվում)- .... շուտ արեք, ...էդ բանը շուտ պիտի սիկտիր արվի... շուտ էտ տղաներին ճարի, էդ բանը սիկտիր արեք (շարունակությունը չի լսվում:)
Աշոտ- Եղավ: Գնացի, ցտեսություն:

- Սամվել Բաբայանի և քննությամբ դեռևս չպարզված տղամարդու միջև 22.03.2017թ, ժամը 12:11:56-ին տեղի ունեցած զրույցի ձայնագրությամբ, 22.03.2017 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 01b80018 և 01b80019 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝

Տղամարդ- (շշուկով ինչ-որ բան է ասում):
Սամվել Բաբայան- Ուզում են, բայց իմ կարծիքով, չեն կարանա:
Տղամարդը շարունակում է շշուկով խոսել:
Սամվել Բաբայան- Հլը ոչ մի բան, ինքը ոչինչ չունի, էլի: Ոնց որ դե որ զենքը/՞/ պահեն, /2 բառ/ չլինի:
Տղամարդ- /Շշուկով/ Բա որ երգի՞:
Սամվել Բաբայան- /2 բառ/ բերել ա, ստեղ քցել ա, Լիդայից հարցրի, ես ու դու ենք խոսել, /մի քանի բառ/ վաբշե կապ չունեմ: Ես իրան ճանաչում եմ տախտակ/՞/ ծախող, տախտակի հարցով:
Տղամարդ- Բա որ երգի՞:
Սամվել Բաբայան- Դե երգի, ասում եմ՝ դու տենց ես ասում, էս ձև, հարց չկա, եթե երգի էլ... Չի կարա երգի, ինքը իրա վրա պիտի երգի, դա հասկանում ա:
Տղամարդ- /Մի քանի բառ/Հո ասեղ չի: Փոքր բան չի, ֆիքսած կլինեն:
Սամվել Բաբայան- Ո՞նց ֆիքսած կլինեն, որ ֆիքսած լինեն սաղ էլ կիմանան, չէ՞, /մի քանի բառ/, դրա համար ասի, տես ով որ գնացել ա Վրաստան, եկել, նրան շուտ տես, թե տենց բան կա, շուտ ս. արեք, դաժե ինքը զարմացավ/՞/:
Տղամարդ- Շուխուր բան պետք չի դնել, չէ՞:
Սամվել Բաբայան- Չէ, հլը ոչ մի բան չեն /1 բառ/, հիմա հարցնելու են՝ ասում են՝ չէ, տենց բան չկա:
Տղամարդ- Ինքն ա եղե՞լ:
Սամվել Բաբայան- Չէ, նա տեղյակ չէր, ասում ա՝ ուրիշ մարդ հարցրեց, /չի լսվում/, ասի էդ բանը կոխեք ոռներդ, ս. արեք, թե չէ տանելուց ձեզ են տանելու:
Տղամարդ- Ինքը իմացա՞վ ինչ /1բառ/, թե ՞ դուք կիմանաք:
Սամվել Բաբայան- Չէ, չիմացավ, ասեց՝ գիտեմ, որ բերել ա, բայց չգիտեի, որ բերել ա, ասի՝ չգիտեի՞ր նկարել ա, բերել:
Մի կին՝ Սուսաննա, ներս է մտնում: Սամվել Բաբայանը դիմում է նրան:
Սամվել Բաբայան- Դու դրան ասա՝ ձեր հետևից նայելով գա:
Սուսաննա- Աշոտի՞ն, կասեմ: էդ Սանոն մի քիչ բերանից թույլ ա, կասեմ, հեսա կզգուշացնեմ:
Որից հետո դիմում է տղամարդուն:
Սամվել Բաբայան- Դե մեր վրա չի կարա դուրս գա, 100 տոկոս ձև չունի:
Տղամարդ- Սա տեղյա՞կ էր:
Սամվել Բաբայան- Ոչ մեկ, ես ու դու ենք խոսել, ես քեզ մի քանի կոպեկ եմ տվել, գնացել ես, եկել ես, գնացել ես, եկել ես, ու դու ոչ անողն ես, ոչ էլ գիտես ոնց, ինչ, ինչ պիտի լինի էդ ապրանքը, ինքը ոչ մի բան ա, ինքը պիտի իրա բանը լինի, էլի, ինքը տռուբա ա մի հատ: Դրանով չես էլ կարա դաժե /չի ավարտում/: Հա հետո՞, բերել ա, ի՞նչ, դրանով ո՞նց ես կրակում: /Մի քանի բառ/ Ուրիշ պատճառ են ճարել, դրան վերցրել են, մի հատ հասկանանք:
Տղամարդ- Ստեղ էլ /1բառ/ պետք չէր իրան: էն օրը ես իրան տեսա ստեղ:
Սամվել Բաբայան- Դե, ինքը եկել ա ստեղ ոչ թե, եկել ա ընտրություններով ա զբաղվում:
Տղամարդ- /2 բառ/ բերելու ա, թե չէ, ձեր զգալով, էս տղեն, դրսի տղեն, բերելու ա, թե՞ չէ:
Սամվել Բաբայան- Գիտեմ, որ բերելու ա, բայց ինչքան ա բերելու տեսնենք:
Տղամարդ- էդքան ո՞նց ա բերելու:
Սամվել Բաբայան- Բերելու պրոբլեմ չունեն:
Տղամարդ- Բա ի՞նչ, չի հավատու՞մ, թե՞ չի վստահում:
Սամվել Բաբայան- Չէ, իրանց թվում ա, որ լավ գնում ենք, ասենք՝ սենց գնալու ենք, հավայի գալու ա, ասի՝ ախպեր էս ինչ որ արել եք, համարեք՝ ջուր ա լցրած, վսյո 7 տոկոս էլ չեք կարա:
Տղամարդ- 100 տոկոս, չի կարա, գարանտիա եմ տալիս: 15 տոկոս չկողմնորոշված զանգված կա, դու առանց շուխուրի, /1 բառ/ աշխատանքի ո՞նց ես էդ զանգվածին վերցնում քո կողմը, չես կարա: Դուք թերագնահատում եք PR-ի դերը, բայց տենց չի:
Սամվել Բաբայան- Ես թերագնահատե՞լ եմ, ես ասել եմ մի հատ նստեք, նայեք, տեսեք ինչ ա, եթե թերագնահատեմ, էդ բաներով չեմ զբաղվի: Ասի՝ նայեք, տեսեք ինչ կարաք /1 բառ/, ինչ ա մնում, ինչ ա, որ ռեալ պիտի

տաք, որ տաք, որ գործը գնա:
Տղամարդ- Սաղ տվել են, ու ասել են՝ որտեղ կա /1 բառ/ նյութ, բայց տողեր կա, որ ասել են՝ եթե կպնեք, լավ չի լինելու: Կա ծախս, որ արդեն արված ա, /մի նախադասություն/ էդ ապրանքն էլ հանեն/՞/:
Սամվել Բաբայան- Չէ, չէ:
Տղամարդ- Երկրորդը, խայտառակ կանեն՝ էդ դատական պրոցեսներ…
Սամվել Բաբայան- Չէ, դե օրինակ Արաբոյի Մանվելը գնա ելույթ ունենա, փող ենք դնում դրա համար, /1 բառ/ նուժնո, էս մեկ, էն մեկ:
Տղամարդ- Մի հատ եթեր ա, էլի:
Սամվել Բաբայան- Չորս եթեր եք դրել, ի՞նչ մի հատ:
Տղամարդ- Չէ, փոխել ենք սաղ, դրել ենք Սեյրան, Ռաֆֆի, չէ, դե ինչ-որ ձեն պիտի հավաքի չէ ՞ էդ մարդը, էդքան փող ենք տվել:
Սամվել Բաբայան- Ո՞վ:
Տղամարդ- Մանվելը:
Սամվել Բաբայան- /ճպպացնում է/:
Տղամարդ- Բա եթե չի հավաքելու, ինչի՞ ենք փող դնում:
Սամվել Բաբայան- (չի պատասխանում):
Տղամարդ- Մեկ էլ մի հատ էդ հարցը որ կարենանք տոնկի ձևով ճշտենք:
Սամվել Բաբայան- Կճշտեմ, կիմանամ:
Տղամարդ- Հասկանում եք, չէ՞ էդ ինչ ա նշանակում, ինքը հետույքը խաղացրեց, որ վերջում գնա իրա անվան տակ բան անի: Չէ, ինչ եմ ուզում ասեմ՝ էս գրասենյակի բանի ծախսերը դնեն ընդեղ /չի ավարտում/: Բա ո՞նց փակեմ էդ գրասենյակը, հիմա որ նստած ենք, արենդայի փող պիտի տանք, ամսի 1-ով հո՞ չենք պրծնում, մի ամիս էլ կոպիտ ասած, դաժե եթե փակվելու լինենք, լիկվիդացիոն ծախս …/1 բառ/: Աշխատավարձ կա, բան կա, աշխատավարձ պիտի տանք, չենք պրծնի:
Սամվել Բաբայան- Ես ենթադրում եմ, նա ինձ էլ /1բառ/ անի:
Տղամարդ- էսի չէ՞: Կարա, ինքն էլ ծակվում ա:
Սամվել Բաբայան- Ասենք՝ ծակվել ես, հետո՞:
Տղամարդ- Ես Ձեզ հիշու՞մ եք մի քանի օր առաջ ասեցի, ասի՝ նավոդկա են տալիս հոդվածներով, բանով, ձեր վրա նավոդկա ա գնում:
Սամվել Բաբայան- Դրանք եթե իրոք էդ բանն ա, իրանք պիտի սպասեն, հավաքես, բերես, այսինքն՝ քեզ բռնացնեն, էլի: Մի հատ տռուբա ես բերել, /2բառ/, բռնել ես, ի՞նչ, դու ես բերել, /1 բառ/ կա, որ ասել են, ես եմ ասել, բայց չէ, հավայի բերել, տարել եք, դրել էդ /անվ. բառ/-ի մոտ, ի՞նչ: Իրանք որ /անվ. բառ/ որ դուրս են եկել, ինչ ուզում ա լինի: էդ ի՞նչ ասնավանի ա: Ասենք քեզ որ մեկը ծեծել ա, ասել ա՝ ասա, որ էդ ինքն ա ասել, դու էլ ասել ես: Ուրիշ ո՞վ ա դակազատ անում, որ ասել ես:
Տղամարդ- Չէ, բայց աշխատանքներ տարվում են:
Սամվել Բաբայան- Վուա, ասում են՝ գիշեր-ցերեկ իմ վրա դրել աշխատում են, դու էլ ասում ես՝ տարվում ա:
Տղամարդ- Չէ, ես նավոդկով տեսա:
Սամվել Բաբայան- էդ ավելի շուտ բան են անում, իմ կարծիքով/չի ավարտ./:
Տղամարդ- Պուգա՞տ են անում:
Սամվել Բաբայան- Հա, յանի բան են բացահայտում: Չէ, /2 բառ/ ընտրություններով ա, կողքին ծառայել եմ, բան: Ուրիշ բան չի կարա ասի:
Տղամարդ- էս կնիկն էլ գիտե՞ր:
Սամվել Բաբայան- Չէ, որտեղի՞ց:
Տղամարդ- Բա, ասեց՝ հա, ջոկեցի:
Սամվել Բաբայան- Ասի, դե հետևից գալու են, նայեն: Տո չէ, այ ախպեր, ինքը ո՞վ ա: Չեն կարա պահեն, եթե ուրիշ գործ չբերեն վրեն, մի ժամ կպահեն, բաց կթողեն, եթե ուրիշ գործ չունեն:
Տղամարդ- Իսկ որ բացատրեցինք էդ գյադուն, հասկացա՞վ, թե՞ չէ:
Սամվել Բաբայան- Ասի՝ ինչ որ բան ա եղել, չէ՞, բան, ասեց՝ հա, դե նկարը ջնջել ենք, ասեց՝ նկարը ջնջել ենք, ասի՝ ես գիտեմ, որ էդ ապրանքը բերել ա ստեղ հասցրել, էդ ինչ որ նկարել են, գնա տես՝ որտեղ ա:
Տղամարդ- Ինքը ջոկե՞ց ինչի մասին ա խոսքը:
Սամվել Բաբայան- Բա ինքն ա ասում նկարը ջնջել եմ: Ձնջել ես, գնա ջնջի, էդ ում հետ որ գնացել է, նրանց էլ չեն բռնել իլը:
Տղամարդ- Որ նորություն լինի, ձեր ասածը ամսի 24-ի՞ն է լինելու:
Սամվել Բաբայան- Հա: Մինչև 24-ը պիտի բերես, իրան ասել եմ, որ չբերի

թողում եմ գնամ տուն:
Տղամարդ- Բայց նաև ասեիք, որ էդ սաղ ձեր արածը զրո է դառնում:
Սամվել Բաբայան- Ասել եմ, ասել եմ էլ չգաս: /1/ ստեղի վարիանտը պրծնում է:
Տղամարդ- 100 տոկոս, միլիոն տոկոս: Իսկ եթե բերի էլ, դրանով ես կարծում եմ, որ քանի որ /1/ տա Աստված գոնե / չի ավ./:
Սամվել Բաբայան- Չէ, եթե բերի, շատ էլ կվերցնենք:
Տղամարդ- Ես տեսա ինչ վիճակ է, մարդ չունենք է, էդ է ցավը: Տեղերում աշխատող, Սահակյան Տիգրանին էլ ոչ մի կոպեկ, Թալինում երեկ խայտառակություն է եղել, մարդ չի կարացել հավաքի, մեր գնացած մարդիկ են եղել:
Սամվել Բաբայան- Մարդ չի կարացել հավաքի՞:
Տղամարդ- Հա, ես պրոստը երեկ մոռացա զանգեի ձեզ ասեի, ես ինֆորմացիան ստանում եմ էլի տեղից, ասեցին մարդ չկա Թալինում,Արթիկում է հավաքվել, Մարալիկում ոչինչ, Գյումրին ամենալավն է: Գյումրին եղածների մեջ ամենալավն է:
Սամվել Բաբայան- Խի Քյավառը վա՞տ էր:
Տղամարդ- Չէ, Գյումրին ավելի լավ է եղել: Գյումրին գմբցրել ես, լավ վատ համեմա-տության մեջ եմ ասում, կարար ավելի լավ լիներ, ուզում էինք Հախվերդյան Ռուբոյին տանենք այնտեղ, համերգ տանք միտինգից հետո, մի 5000 մարդ կհավաքեինք էլի:
Սամվել Բաբայան- էդ ո՞վ է:
Տղամարդ- Դե էն երգիչ կա մի հատ, դրան սիրում են Լենինական: Ջեռները փող չի եղել:
Սամվել Բաբայան- /1/ հետևը ճղում է:
Տղամարդ- Բարգավաճից հելավ մտավ:
Սամվել Բաբայան- Քյավառում / /1/:
Տղամարդ- Գողակա՞ն է գնացել: Տիպը ես գործ տվող չեմ, ես իմ հարցերը կլուծեմ հա՞:
Սամվել Բաբայան- Երևի:
/Տղամարդը հեռախոսով է խոսում/:
Սամվել Բաբայան- Ի՞նչ կա:
Տղամարդ- Գնամ գրասենյակ էդ /1 շշուկով/:Եթե փողը/՞/ կլինի, ձեն հանեք:
Սամվել Բաբայան- Լավ:
Տղամարդ- Ջգույշ եղեք:

Տեսաձայնագրային փորձաքննության 2017թ. հունիսի 7-ի թիվ 31611706 եզրակացությամբ, որով նախ՝ վերծանվել են Դատարանի թույլտվությամբ իրականացված ,Ներքին դիտում, օպերատիվ - հետախուզական միջոցառմամբ ֆիքսված՝ Սամվել Բաբայանի վերոնշյալ խոսակցությունները, բացի այդ՝ փաստվել է, որ հետազոտված ձայ-նագրություններում մոնտաժման հետքերը բացակայում են:
Վկա Սուսաննա Հարությունյանի ցուցմունքներով, ով Դատարանում հայտնեց, իսկ հակասական նախաքննական ցուցմունքը հրապարակելուց հետո՝ պնդեց, որ ապրելով Վաղարշապատ քաղաքում՝ մոտ քսան տարի է, ինչ ճանաչում է Սանասար Գաբրիելյանին, 2017 թվականի մարտի սկզբին նրան տեսել է ,Համախմբում, կուսակցության գրասենյակում՝ Երևան քաղաքում: Համախմբում կուսակցության գրասենյակ գնացել է իր մտերիմ՝ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանի առաջարկով, ում հետ ծանոթ է եղել դեռևս 2005 թվականից, նրան կրկին հանդիպել է Հայաստան վերադառնալուց հետո: Վերջինս առաջարկել է իրեն զբաղվել քաղաքակա-նությամբ՝ խորհրդարանական ընտրություններին առաջադրել իր թեկնածությունը, ինքը պատասխանել է, որ առողջական խնդիրներ ունենալու պատճառով անմիջական ներգրավ-վածություն այդ գործընթացներին ունենալ չի կարող, սակայն հնարավորության սահմաններում փորձելու է օգնել նրա քաղաքական թիմին: Նախընտրական շրջանում էջմիածնում բացվել է ,ՕՐՕ, կուսակցության նախընտրական շտաբը և ինքը հանդիսացել է դրա պետը: Նշանակվելուց հետո ինքն ավելի հաճախ է սկսել շփվել Սամվել Բաբայանի և Սանասար Գաբրիելյանի հետ: Սանասարը հանդիսացել է էջմիածնի շրջանի պատասխանատուներից մեկը և նրա հետ հանդիպումներն ունեցել են աշխատանքային բնույթ, փորձել են միասին

համակիրների շարքում ներգրավել նոր մարդկանց: Սամվել Բաբայանի հետ հանդիպել են Երևանում՝ Վարդանանց փողոցում գտնվող ,ՕՐՕ, կուսակցության գրասենյակում, քննարկել են կուսակցության նախընտրական քարոզչության հետ կապված կազմակերպչական հարցերը:
Վաղուց ճանաչել է նաև էջմիածնի բնակիչ Արմեն Պողոսյանին, որին բոլորը դիմել են Ժորա անունով, նրա հետ անմիջական շփումներ չի ունեցել: Ճանաչել է նաև Ժորայի կնոջը՝ էլիզա Սողոմոնյանին, ով որպես ,ՕՐՕ, կուսակցության պատգամավորի թեկնածու՝ առաջադրվել է էջմիածնի տարածքից, ճանաչում է նաև Վաղարշապատ քաղաքի բնակիչ Հրաչյա Մայիլյանին:
2017թ. մարտի 7-ից մինչև 12-ն ընկած ժամանակահատվածում մեկ անգամ տեսել է Ժորային, երբ նա Սանասարի հետ եկել է իրենց շտաբ՝ քննարկելու կուսակցական հարցեր, մասնավորապես՝ քաղաքում շտաբերի միջև ընտրատեղամասերի բաշխման հարցը, նրանք ցանկացել են որոշ ընտրատեղամասերում անձամբ աշխատանք տանել, ինչին ինքը պատասխանել է, որ այդ հարցը պետք է բարձրացնեին ժողովի ժամանակ: Ժորան իրեն պատասխանել է, որ այդ ժամանակ նրանք Հայաստանում չեն եղել և գործով Վրաստան են գնացել: Իր կարծիքով Ժորան և Սանասարը մտերիմներ են, իսկ Սամվել Բաբայանի հետ կապ չեն ունեցել, քանի որ Ժորան ,ՕՐՕ,-ի մյուս անդամների հետ կապ չի պահպանել: Իր իմանալով՝ Ժորան, բացի վերը նշված անձանցից, կապ է ունեցել միայն Հրաչյա Մայիլյանի հետ, ում հետ մտերիմ է եղել:
Սանասարին ծերբակալել են 2017 թվականի մարտի 22-ի առավոտյան, այդ մասին իմացել է նրա փեսայից՝ Վարդանից, որից հետո զանգել է Սամվել Բաբայանին և տեղեկացրել, որ ազգային անվտանգության ծառայությունը ծերբակալել է Սանասարին, ինչին ի պատասխան Սամվել Բաբայանն ասել է, որ լավ են արել: Սամվել Բաբայանի հետ խոսալուց հետո իրեն զանգել է Սանասարի փեսան՝ Վարդանը և ասել է, որ Սանասարի տղան՝ Անդրանիկը և ընկերը՝ Աշոտը, ցանկություն են հայտնել գնալ կուսակցության գրասենյակ և հանդիպել Սամվել Բաբայանի հետ: Ինքը նրանց տվել է հասցեն և բացատրել է դրա գտնվելու վայրը՝ ավելացնելով, որ ինքը նույնպես գնալու է գրասենյակ և այնտեղ կհանդիպեն: Գրասենյակ են եկել առանձին մեքենաներով, ինքը՝ րոպեներ առաջ, քան Աշոտը և Անդրանիկը: Ժամը 13-ի սահմաններում Երևանի Վարդանանց 16 կամ 18 հասցեում գործող կուսակցության գրասենյակում հանդիպել է Սամվել Բաբայանին, ներկայացրել է իրավիճակը և հարցրել, թե ինչու՞ են ծերբակալել Սանասարին, ինչին Բաբայանը պատասխանել է, որ տեղյակ չէ, կպարզի: Բաբայանի հետ խոսել է նրա աշխատասենյակում, մոտ 5 մետր հեռավորությունից: Ինքը նրան ասել է, որ Սանասարի ընկերներից Աշոտը գրասենյակում է և ցանկություն է հայտնել նրան տեսնելու, քանի որ խոսելու ինչ-որ թեմա կար: Ինքն Աշոտին հրավիրել է Սամվել Բաբայանի սենյակ, որտեղ գտնվել են ինքը, Սամվել Բաբայանը և Աշոտը: Աշոտը պատմել է դրա նախորդ օրվա դեպքը, երբ Սանասարի մեքենան կանգնեցրել են Երևան-Սևան մայրուղում՝ պատճառաբանելով, որ մեքենան ապահովագրված չէ, տուգանել են 100.000 ՀՀ դրամի չափով, իսկ մեքենան խուզարկել: Մեքենայի խուզարկության ժամանակ Աշոտը գտնվել է Սանասարի հետ: Խոսակցության կեսից Սամվել Բաբայանն իրեն առաջարկել է դուրս գալ սենյակից: Ինքը դուրս է եկել և գնացել է էջմիածնի շտաբ, իսկ հետո շտաբում գտնվող աղջիկներից մեկը տեղեկացել է, որ Սամվել Բաբայանը նույնպես ծերբակալվել է: Թե Սամվել Բաբայանի սենյակից դուրս գալուց հետո վերջինս և Աշոտը ի՞նչ են խոսել, տեղյակ չէ:
Հարցադրմանն ի պատասխան՝ վկա Ս.Հարությունյանը նշեց, որ իրեն հարցաքննած քննիչի գործողություններից որևէ դժգոհություն չունի, իր ցուցմունքները արձանագրվել են ճշգրիտ:
Հերթական հարցադրմանն ի պատասխան՝ վկան նշեց, որ Հրաչյա Մայիլյանը և Արմեն Պողոսյանը Սամվել Բաբայանին անձամբ չեն ճանաչել, Արմեն Պողոսյանը և Հրաչյա Մայիլյանը միմյանց ճանաչել են, իսկ Կարեն Քոչարյանը Սամվել Բաբայանի մտերիմն է:
Վկա Աշոտ Շուշանյանի դատաքննական և նախաքննական ցուցմունքների համադրման և գնահատման արդյունքներով արժևորված

փաստական տվյալներով. Այսպես, վկան Դատարանում տվեց նախաքննական ցուցմունքներին տրամագծորեն հակասող ցուցմունք՝ պատճառաբանելով, որ Սամվել Բաբայանի հետ վերջինիս գրասենյակում կայացած զրույցից անմիջապես առաջ Սուսաննա Հարությունյանը սեփական նախաձեռնությամբ սենյակից դուրս է եկել, իրենց զրույցին ներկա չի գտնվել, Բաբայանին, ում տեսնում էր առաջին անգամ, պատմել է ՃՈ Սևանի հեռակետի մոտ իրեն և ընկերոջը՝ Սանասար Գաբրիելյանին կանգնեցնելու, վերջինիս վարած ավտոմեքենան զննելու մասին, իսկ Վրաստանի, այդ թվում՝ այդտեղից Հայաստան ինչ-որ առարկա բերելու, ավտոմեքենայի մեջ դրա գտնվելու վերաբերյալ որևէ հարցադրում կամ խոսակցություն չի եղել: Զրույցի ժամանակ Ս.Բաբայանը խոսել է ինչ-որ պլանշետի մասին, առաջարկել է պլանշետի ,մեջինը, ջնջել տալ, սակայն չհասկանալով, թե ինչի մասին է խոսքը՝ համաձայնել և հեռացել է: Նշեց նաև, որ Բաբայանի ձայնը խզված էր, նա հիվանդ էր, պահեր կար, որ նրա խոսքը չէր հասկանում: Նշեց նաև, որ տեղյակ չէր, թե Սևանում իրենց կանգնեցնելու ժամանակ Սանասարի մեքենայով ուր էին գնում, սակայն մեքենան Սանասարը վարում էր Սևանի ուղղությամբ:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի կարգով հրապա-րակվեցին և հետազոտվեցին վկա Ա.Շուշանյանի նախաքննական հակասական ցուցմունք-ները, որոնց արձանագրությանը ծանոթացվելով՝ վկան ընդունեց, որ դրանում առկա ստորագրություններն իրենն են, թեև ի սկզբանե նշեց, որ ցուցմունքի էջերից մեկում առկա գրառումները կատարվել են այլ անձի կողմից, սակայն ի վերջո չբացառեց, որ դրանք ևս կատարվել են իր կողմից:
Համաձայն վերոնշյալ ցուցմունքների՝ 2017թ. մարտի 20-ին կամ 21-ին համագյու-ղացի ու վաղեմի ընկեր Սանասար Գաբրիելյանը զանգահարել և առաջարկել է մեքենայով գնալ Ղարաբաղ, ինքն էլ համաձայնել է: Ճանապարհին՝ ճանապարհային ոստիկանության Սևանի պահակակետի մոտ, իրենց կանգնեցրել են պետավտոտեսուչները, պահանջել փաստաթղթեր, Սանասարը ցույց է տվել ազատամարտիկի վկայականն ու փաստաթղթերը: Այնուհետև Սանասարը դուրս է եկել մեքենայից, նստել տեսուչների մեքենան, որոնք որոշ ժամանակ անց մոտեցել են նաև իրեն և պահանջել փաստաթղթերը, ցանկություն են հայտնել ստուգել մեքենան: Ինքը իջել է մեքենայից, ստուգել են, վրդովմունք է հայտնել ,կռված տղերքի, նկատմամբ նման վերաբերմունքից: Դրանից հետո եկել են քրեական հետախուզության աշխատակիցները և ճանապարհային ոստիկանության բարձրաստիճան սպա, ով ցուցում է տվել Սանասարի անունով ակտ կազմել՝ ԱՊՊԱ կտրոն չունենալու համար: Հետո իրենց բաց են թողել, վերադարձել են էջմիածին, Սանասարին իջեցրել է, իսկ ինքը վերջինիս մեքենայով գնացել է գյուղ: Հաջորդ օրը գյուղ են ժամանել ԱԱԾ աշխատա-կիցները, պահանջել են Սանասարի ավտոմեքենայի բանալիները, ինքը պատասխանել է, որ դրանք կտա միայն Սանասարին, ինչին պատասխանել են, որ նա ձերբակալվել է: Ինքը տվել է բանալիները, որոշել է այդ մասին պատմել Սամվել Բաբայանին, սակայն քանի որ նրա հետ անձամբ ծանոթ չի եղել, դիմել է ,ՕՐՕ, դաշինքի էջմիածնի պատասխանատու Սու-սաննա Հարությունյանին: Գնացել են Երևանում գտնվող ,ՕՐՕ, դաշինքի կենտրոնական շտաբ, մտել են Բաբայանի աշխատասենյակ: Սուսաննան Բաբայանին մոտ իրեն ներկայացրել է որպես Սանասարի ընկեր, ինքը մանրամասն պատմել է նախորդ օրը տեղի ունեցածը: Բաբայանն իրեն հարցրել է, թե որտեղից են վերադարձել, պատասխանել է, որ չէին վերադառնում, այլ գնում էին Ղարաբաղ՝ Քելբաջարով: Բաբայանը հարցրել է, թե մեքենայում ինչ-որ բան եղե՞լ է, ինքը բացասական է պատասխանել: Բաբայանը հետաքրքրվել է, թե ինքը Վրաստան գնացե՞լ է, թե՝ ոչ, տեղյակ էր, որ Սանասարը այնտեղից ինչ-որ հրթիռ պետք է բերեր: Ինքը պատասխանել է, որ Վրաստան չի գնացել, հրթիռից էլ տեղյակ չէ: Բաբայանն ասել է, որ շտապ պետք է գտնել Սանոյի ընկերներին և այդ հրթիռը կորցնել՝ վտանգից խուսափելու համար: Չի առարկել, սակայն քանի որ ոչ-ոքի չի ճանաչել և այդ խնդրի հետ որևէ առնչություն չի ունեցել, որևէ քայլ չի ձեռնարկել, որոշել է հեռու մնալ:
էական հակասությունների և դրանց պատճառի վերաբերյալ հարցադրումներին ի պատասխան՝ վկա Ա.Շուշանյանը հայտնեց, որ

պնդում է դատաքննական ցուցմունքը, առավոտից մինչև երեկո, սոված-ծարավ, գտնվել է ԱԱԾ վարչական շենքում, նախաքննության ընթացքում նման ցուցմունք է տվել քննիչի պահանջով, ով տեղեկացրել է, որ միայն այդ դեպքում ինքը կարող է հեռանալ ԱԱԾ-ի վարչական շենքից, ինքը հիվանդ տղա է, հարցաքննության ժամանակ գլխի ,պրիստուպը, բռնել էր, որի ազդեցության տակ է նման ցուցմունքներ գրել: Դատարանում նաև նշեց, թե իբր ամբողջ ցուցմունքի բովանդակությունը գրել է քննիչի թելադրանքով, այնուհետև՝ նշեց, որ չի կարող անհատա-կանացնել, թե ցուցմունքի կոնկրետ որ մասն է քննիչը թելադրանքով և որ մասն է կամովին գրել: Ընդհանրացնելով ցուցմունքները՝ ի վերջո նշեց, որ քննիչ թելադրանքով է գրել ,հրթիռ, բառը, քանի որ իր և Ս.Բաբայանի զրույցում նման բառ չի օգտագործվել, բացի այդ, քննիչին չէր հայտնել, որ Սանասարի հետ գնում էին Ղարաբաղ, մինչդեռ իր ցուցմունքում քննիչի թե-լադրմամբ գրել է նաև այդ մասին:
Իր և Ս.Բաբայանի միջև կայացած վերոնշյալ զրույցի՝ ,Ներքին դիտման, արձանագրության բովանդակության հրապարակումից հետո առաջադրված հարցերին պատասխանելիս՝ նշեց, որ Բաբայանի հետ զրուցել է միայն այդ անգամ, հերքեց նրա հետ նման բովանդակությամբ զրույց ունենալու, մասնավորապես՝ իր և Սանասարի կողմից Քելբաջարով ԼՂՀ ուղևորվելու, Բաբայանի կողմից ,տրուբայի, վերաբերյալ իրեն հարցադրում անելու հանգամանքները:
Պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում դատաքննությամբ հետազոտված՝ վկա Ա.Շուշանյանի դատաքննական և նախաքննական հակասական ցուցմունքները միմյանց, ինչպես նաև այլ ապացույցների հետ համադրելու և գնահատելու արդյունքներով Դատարանը, ի հաշիվ դատաքննականի, առավել արժևորում է նախաքննականը՝ հաշվի առնելով, որ դրանցում առկա փաստական տվյալների արժանահավատությունը հաստատվել է Դատարանի թույլտվությամբ 2017թ. մարտի 22-ին իրականացված ,Ներքին դիտում, ՕՀՄ արդյունքներով, մասամբ վկա Սուսաննա Հարությունյանի ցուցմունքով, ավելին՝ մեղադրողի ներկայացրած՝ ՀՀ ԱԱԾ վարչական շենքի անցագրի տվյալներով, համաձայն որի՝ վկա Աշոտ Շուշանյանի հարցաքննության օրը՝ 2017 թվականի մարտի 17-ին, վերջինս հարցաքննությունից րոպեներ առաջ՝ ժամը 16.18-ին մուտք է գործել ԱԱԾ վարչական շենք, ապա ժամը 19.29-ին հեռացել այնտեղից: Ինչ վերաբերում է վկայի նախաքննական ցուցմունքում արտացոլված ,հրթիռի, վերաբերյալ փաստական տվյալներին՝ Դատարանը, անհարկի շահարկումներից զերծ մնալու նպատակով, հիմք է ընդունում վկա Ա.Շուշանյանին ,տրուբայի, վերաբերյալ հարցադրումներ անելու և նրա պատասխանը ստանալու մասին փաստական տվյալները, որոնք հաստատվում են դատարանի որոշմամբ իրականացված ,Ներքին դիտում, ՕՀ միջոցառման արդյունքներով:
Վկա Ռուստամ Սադոյանի ցուցմունքներով, ով Դատարանում հայտնեց, իսկ հակասական նախաքննական ցուցմունքները հրապարակելուց հետո պնդեց, որ Հրաչյա Մայիլյանի հետ մտերմացել են վերջին 3 տարիների ընթացքում: Վերջինիս միջոցով ծանոթացել է էջմիածնի բնակիչ Արմեն Պողոսյանի հետ, որին կենցաղում ժորիկ են անվանել, սակայն մտերիմ չեն եղել: Ինքը զբաղվել է հողագործությամբ և հիմնականում՝ անասնաբուծությամբ: Հրաչյա Մայիլյանը, որպես գործարար, կապեր է ունեցել Վրաստանում: 2017 թվականի փետրվար ամսին նա իրեն հայտնել է, որ իրանական գործընկերները ցանկություն են հայտնել գառների մեծ խմբաքանակ ձեռք բերել և տեղափոխել Իրան, նրան անհրաժեշտ է եղել իր խորհուրդը և մասնագիտական հմտությունները գառների խմբաքանակ գտնելու համար: Նա առաջարկել է միասին մեկնել Վրաստան և այնտեղ փորձել գտնել այդ խմբաքանակը, պարզել գները և քաշերը: Հրաչյայի ասելով, այնտեղ նման գործով զբաղվող ծանոթներ է ունեցել, ինքը նույնպես ծանոթներ է ունեցել Վրաստանի եզդիների թվում: Հրաչյայի ավտոմեքենայով, երկուսով 2017թ. փետրվարի 16-ին մեկնել են Վրաստան՝ Գոգավանի մաքսակետով, հասել են Թբիլիսի և հանգրվանել են Օրթաչալո թաղամասից դեպի վերև տանող փողոցներից մեկում գործող հյուրանոցում: Նույն օրը երեկոյան Հրաչյայի հետևից եկել է Արմեն Պողոսյանը՝ ժորիկը և նրանք միասին գնացել են ինչ-որ տեղ, հավանական

է՝ խաղատուն: Ինքը մնացել է հյուրանոցում: Հաջորդ մի քանի օրը զբաղվել են գառների խմբաքանակ գտնելու գործով Հրաչյայի հետ գնացել են իր ծանոթների մոտ, այնուհետև՝ Հրաչյայի ծանոթների մոտ: Զբաղվել են այդ գործերով, երեկոյան գնացել են Թբիլիսի քաղաքի ավտոկայանի մոտ գտվող խաղատուն, այնտեղ հանդիպել են Ժորիկին, հասկացել է, որ Սանասարը ներսն է: Ինքը նրան չի տեսել, քնել է ավտոմեքենայի մեջ: Վերադառնալու օրը՝ փետրվարի 22-ն առավոտյան հյուրանոցում զարթնելուց, Ժորիկը եկել և Հրաչյային ասել է, որ նրան դուրսը հարցնողներ կան: Հրաչյան դուրս է եկել, հետո ինքն է դուրս եկել ու տեսել, որ Հրաչը հյուրանոցի սպասասրահի սրճարանում նստած զրուցել է ինչ-որ հայերի հետ, Ժորիկը հետն է եղել: Մոտեցել է, այդ տղամարդկանցից մեկը հարցրել է, թե նրան չի՞ ճանաչում: Ինքը չի մտաբերել, նա ասել է, որ անունը Ռոբերտ է, էջմիածնի նախկին քաղաքապետի որդին է: Հարցրել է, թե իրենց ի՞նչ է պետք, ասել են, որ գառների խմբաքանակ են որոնում: Նա վերցրել է իր հեռախոսահամարը, որոշ ժամանակ անց գնացել է, իսկ իրենք դուրս են եկել իրենց գործերով, հանդիպել են Հրաչյայի ծանոթին՝ վրացահայ Օթարին, ով օգնել է իրենց գառներ որոնելու գործում, տարբեր գյուղեր է տարել: Որոշ ժամանակ անց Ռոբերտը զանգահարել և խնդրել է իրեն ու Հրաչյային գալ նրա հյուրանոց, հեռախոսով նկարագրել է գտնվելու վայրը: Օթարն օգնել է գտնել հյուրանոցը, երբ հասել են այնտեղ,Հրաչյան և Օթարը մնացել են ներքևում, իսկ ինքն ու Ժորիկը բարձրացել են Ռոբերտի հյուրանոցային համարը՝ պարզելու, թե ինչու՞ է կանչել: Սենյակում մի սլավոնական արտաքինով կին է եղել, սուրճ և միրգ են հյուրասիրել, երբ դուրս են եկել սենյակից, Ռոբերտն իր հետ առանձնացել և ասել է, որ եթե հանկարծ ծանոթ եզդիներն արտասահման մեկնելու ցանկություն կունենան, ապա ուղարկի նրա մոտ, նա կարող է դա կազմակերպել: Բացի դրանից, ասել է, որ եթե քրդերից ոմանք կռվելու համար ,ուսի վրա դրվող,՝ ինքնաթիռ խոցող զենք ուզեն, կարող է օգնել նաև այդ հարցում: Երբ բաժանվել է Ռոբերտից և իջել ներքև, մեքենայի մոտ Հրաչյային մի կողմ է կանչել և ասել, որ Ռոբերտը լրիվ ցնդել է, պատմել է այդ խոսակցության մասին: Իր մտքով չի անցել, որ դա կարող էր ինչ-որ հետևանք ունենալ: Երբ այդ օրը շարժվել են դեպի Հայաստան ու հասել են Մառնեուլի, Ժորիկն ասել է, որ ինչ-որ դեղ է մոռացել Թբիլիսիում գնել, վերցրել է Հրաչյայի մեքենան և վերադարձել: Այդ ընթացքում ինքը հանդիպել է մի սպանդանոցի տիրոջ հետ և քննարկել է անասուն գնելու հարցերը: Մի քանի ժամ հետո Ժորիկը վերադարձել է Մառնեուլի և դրանից հետ մեկնել են Հայաստան: Դրանից ավել իրեն ոչինչ հայտնի չի եղել: Ռոբերտն իրեն չի ասել, թե որտեղի՞ց էր այդ զենքը տրամադրելու, ի՞նչ գումարով և քանա-կությամբ: Քանի որ դա իրեն հետաքրքիր չի եղել, այդ թեմայով չի հետաքրքրվել:
Ամբաստանյալ Արմեն Պողոսյանի ցուցմունքների ստուգման, այլ ապա-ցույցների հետ համադրման և գնահատման արդյունքներով արժևորված փաստական տվյալներով. Այսպես, առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս ամբաստանյալ Արմեն Պողոսյանը օգտվեց լռելու իրավունքից, որի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարակվեցին և հետազոտվեցին վերջինիս նախաքննական ցուցմունքները:
Վերոնշյալ ցուցմունքների համաձայն՝ ,Իգլա-3, տեսակի հրթիռ ձեռք բերելու համար իրեն դիմել է ծանոթը՝ ,Զվարթնոց, գյուղի բնակիչ Սանասար Գաբրիելյանը՝ ասելով, որ դա նվիրաբերելու է Ղարաբաղի բանակին: Ինքն այդ հարցով դիմել է ծանոթին՝ Հրաչյա Մայիլյանին, ով գործնական կապեր է ունեցել Վրաստանում, ինքն այնտեղ կապեր չի ունեցել:
2016թ. սեպտեմբերի 1-ին ինքը, Հրաչյա Մայիլյանը և Սանասար Գաբրիելյանն այդ հարցով մեկնել են Թբիլիսի՝ Հրաչյա Մայիլյանի ,Օպել, մակնիշի ավտոմեքենայով: Հասել են Թբիլիսի երեկոյան, մնացել են ,Ռիչ, հյուրանոցում, առավոտյան ինչ-որ երթուղային ավտոբուս բախվել է կայանատեղում թողնված Հրաչի ավտոմեքենային և ամբողջությամբ ջարդել: Նա կանչել է փեսային, ում ավտոմեքենայով էլ նույն օրը վերադարձել են էջմիածին, իրենց ուզած գործով չեն զբաղվել: Այդպես այդ թեման սառեցվել է մինչև դեկտեմբերի վերջ, երբ Սանասարն ասել է, որ այն ուժի մեջ է, դրանով զբաղվելը մոռացության են մատնել:

Երբ Հրաչին հիշեցրել է այդ մասին, ինքը հարցրել է, թե կոնկրետ ի՞նչ գին հայտնել Սանասարին, Հրաչն իրեն ասել է, որ այդ հրթիռի արժեքը սև շուկայում մոտավորապես 50.000 ԱՄՆ դոլար է: Ինքն այդ գինը փոխանցել է Սանասարին, ով պատրաստակամություն է հայտնել տրամադրելու այդ գումարը:
2016 թվականի դեկտեմբերի վերջերին ինքն ու Հրաչը՝ վերջինիս որդու ,Միցուբիսի Պաջերո, ավտոմեքենայով Գոգավանի մաքսակետով մեկնել են Վրաստան՝ այլ գործով, հասել են Մառնեուլի քաղաք, որտեղ Հրաչն իրեն մենակ է թողել և գնացել է ինչ-որ հանդիպման, վերադառնալուց հետո մեկնել են Թբիլիսի, այնուհետև Ռուսթավի քաղաք՝ բռնագրավված ապրանքների շուկա: Հրաչը ցանկացել է մեծ վառարանի օդափոխիչ ճարել, բայց ապարդյուն:
Հաջորդ անգամ հրթիռի ձեռք բերման հարցով ինքը, Հրաչն ու Սանասարը մեկնել են Թբիլիսի 2016 թվականի դեկտեմբերի 30-ին՝ վերջինիս ,Նիսսան, ավտոմեքենայով, Գոգավանի մաքսակետով: Թբիլիսի քաղաքում բնակվել են ավտոկայանի դիմաց գտնվող հյուրանոցում՝ անվանումը չի տպավորվել իր հիշողության մեջ, ,Օրթաճալո, թաղամասում՝ ,777, խաղատան դիմաց: Ցերեկը խաղատուն եկել է Հրաչի ծանոթ Օթարը՝ Մառնեուլի քաղաքից, նա արդեն տեղյակ է եղել ,Իգլա, տեսակի հրթիռի իրենց որոնումների մասին, ասել է, որ նրա իմանալով, Վրաստանում այն արտադրում են, խոստացել է հետաքրքրվել: Խոսակցությունը տեղի է ունեցել ,777, խաղատան ավտոկանգառում, զրուցել են ինքը, Հրաչը և Օթարը, վերջինիս չեն ասել, թե ինչքան են մտադիր վճարել հրթիռի համար: Թե որտեղից է Օթարն իմացել հրթիռ ձեռք բերելու իրենց մտադրության մասին, չի իմացել, իր կարծիքով նախորդ անգամ Վրաստան գալուց Հրաչն է հայտնել Մառնեուլի քաղաքում, երբ գնացել է ինչ-որ հանդիպման:
Նույն օրը՝ երեկոյան, ինքը, Հրաչը և Սանասարը իրենց հյուրանոցի հարևանությամբ ռեստորան են գնացել, այնտեղ է եկել Հրաչի ծանոթ Խվիչան՝ Վրաստանի Սենակի քաղաքից: Սեղանի շուրջ Հրաչը Խվիչային հայտնել է ,Իգլա, տեսակի հրթիռի որոնումների մասին, նա խոստացել է հետաքրքրվել Վրաստանում դրա ձեռք բերման հնարավորությամբ:
Հրաչը խնդրել է Սանասարին Խվիչային տալ 300 ԱՄՆ դոլար, Սանասարը տվել է այդ գումարը, որը Հրաչը փոխանցել է Խվիչային, թե ինչու՝ չի պարզաբանել: Այդ օրը Սանասարն Թբիլիսի քաղաքի ավտոկայանի խաղատան մոտ տվել է նաև 1000 ԱՄՆ դոլար, քանի որ նախաշեմին Նոր տարի է եղել, իրենք կիսել են այդ գումարը իրար մեջ: Թե ումի՞ց է Սանասարը վերցրել այդ գումարը, հստակ չի իմացել: Հաջորդ օրը մտել են խաղատուն, որից հետո վերադարձել են էջմիածին:
2017 թվականի հունվարի կեսերին Հրաչը մեկնել է Թբիլիսի, մեկ օր անց ինքն ու Սանասարը որոշել են վերջինիս ավտոմեքենայով գնալ Վրաստան՝ Հրաչին տեսնելու և պարզելու, թե ի՞նչ նորություններ կան այդ գործից: Բագրատաշենի մաքսակետով մուտք են գործել Վրաստան, հասել են Թբիլիսի քաղաք, որտեղ հանդիպել են Հրաչին: Որևիցե կոնկրետ նորություններ իրենց գործից չեն եղել, մնացել են ,777, խաղատան դիմաց գտնվող վերոհիշյալ հյուրանոցում, որից հետո երեքով վերադարձել են էջմիածին՝ 2 ավտոմեքենաներով:
Հաջորդ անգամ ինքը, Հրաչն ու Սանասարը մեկնել են Թբիլիսի 2017 թվականի փետրվարի 2-ին՝ վերջինիս ,Նիսսան, ավտոմեքենայով, Բագրատաշենի մաքսակետով: Թբիլիսի քաղաքում բնակվել են նույն հյուրանոցում՝ ,777, խաղատան դիմաց: Հրթիռի ձեռք բերման հարցով հանդիպումներ և քննարկումներ չեն եղել, գնացել են խաղատուն:
Այնուհետև ինքն ու Հրաչը որոշել են մեկնել Դոնեցկի մարզ, որտեղ Գորլովկա քաղաքում աշխատել են իր ծանոթները, հույս ունենալով, որ պատերազմող երկրում հնարավորություն կլինի ձեռք բերել նշված հրթիռը: Սանասարին հայտնել են այդ մտադրության մասին, նա գնել է ավիատոմսերը և երկուսով ինքնաթիռով մեկնել են Ռոստով, այնուհետև անցել են Ուկրաինայի տարածք, սակայն իր ծանոթներն ասել են, որ դա անհնարին է, ամեն ինչ հաշվառված է: Դրանից հետո տաքսի ավտոմեքենայով վերադարձել են Հայաստան, ճանապարհին՝ Մառնեուլի քաղաքում հանդիպել են Հրաչի ծանոթին՝ Օթարին, ով հայտնել է, որ նրա իմացած գործարանում միայն հակատանքային հրթիռներ են արտադրում,

նույնիսկ հեռախոսի մեջ դրա լուսանկարն է ցույց տվել: Պատասխանելով, որ դա իրենց ուզածը չէ, վերադարձել են էջմիածին:
Հաջորդ անգամ ինքը, Հրաչն ու Սանասարը մեկնել են Թբիլիսի 2017 թվականի փետրվարի 16-ին, քանի որ Հրաչի ծանոթ, ազգությամբ եզդի Ռուստամն այնտեղ ցանկացել է էժան գներով ոչխարների խմբաքանակ գնել, մորթել և տեղափոխել Իրանի Իսլամական Հանրապետություն: Հրաչն ու Ռուստամը մեկնել են Հրաչի որդու ,Միցուբիսի, մակնիշի ավտոմեքենայով՝ Գոգավանի մաքսակետով, իսկ ինքն ու Սանասարը՝ վերջինիս ,Նիսսան, ավտոմեքենայով, Բագրատաշենի մաքսակետով: Ինքը և Սանասարը որոշել են գնալ Թբիլիսի, հիմնականում, խաղատուն այցելելու նպատակով: Մի քանի օր անց Սանասարն իր ավտոմեքենայով վերադարձել է էջմիածին, իսկ ինքը մնացել է Հրաչի և Ռուստամի հետ: Մնացել են ,Ռիչ, հյուրանոցում, առավոտյան սպասասրահում իրեն մոտեցել են երկու տղամարդիկ և հայերեն հարցրել են, թե Հրաչն իր հե՞տ է, թե ոչ: Ինքը զարմացել է, քանի որ արտաքինով անծանոթ են եղել և սկզբից նույնիսկ մտածել է, որ ազգությամբ թուրք են: Այնուամենայնիվ գնացել և համարից կանչել է Հրաչին, ասելով, որ նրան հարցնողներ կան: Երբ նստել են հյուրանոցի սրճարանում, տղամարդկանցից մեկն իրեն հարցրել է, թե նրան չի՞ հիշում, ինքը բացասական է պատասխանել: Նա հիշեցրել է, որ էջմիածնի նախկին քաղաքապետ Երվանդ Աղվանյանի որդին է՝ Ռոբերտը, դրանից հետո է միայն նրան մտաբերել: Խոսակցության ընթացքում Ռոբերտն ասել է, որ բնակվում է Թբիլիսի քաղաքում, փոխանակվել է Ռուստամի հետ հեռախոսահամարներով: Որոշ ժամանակ անց հրաժեշտ են տվել, որից հետո ինքը, Հրաչը և Ռուստամը գնացել են խաղատուն: Ռուստամը ներս չի մտել, որոշ ժամանակ անց իրենց հայտնել է, որ զանգահարել է Ռոբերտը և խնդրել է գալ հանդիպման: Երբ իրենք հարցրել են հանդիպման նպատակի մասին, Ռուստամն ասել է, որ, հավանաբար, ոչխարների հարցով է զանգահարել: Գնացել են Ռոբերտի նկարագրած հյուրանոցը Թբիլիսի քաղաքի ,Սուրբ Գևորգ, հայկական եկեղեցու մոտակայքում, ինքը և Ռուստամը բարձրացել են Ռոբերտի սենյակ, իսկ Հրաչը մնացել է ավտոմեքենայի մեջ: Հյուրանոցի սրճարանում հանդիպել են Ռոբերտին և նրա կնոջը՝ սլավոնական արտաքինով, սուրճ են խմել, Ռոբերտն ու Ռուստամը մի պահ առանձնացել են, խոսալուց հետո հրաժեշտ են տվել և իրենք իջել են ներքև: Նստելով ավտոմեքենան, մեկնել են Մառնեուլի՝ ոչխարների գործով: Մառնեուլի քաղաքում Հրաչն իրեն առանձին ասել է, որ Ռոբերտն իրենց հետաքրքրող հրթիռի պահով ինչ-որ բան է ասել Ռուստամին, խորհուրդ է տվել մի պատրվակով, Ռուստամից թաքուն, մեկնել Թբիլիսի: Ռուստամին խաբել է, թե իբր Թբիլիսի քաղաքում մոռացել է դեղ գնել, որից հետո մենակ՝ Հրաչի ավտոմեքենայով մեկնել է Թբիլիսի, մտել է հյուրանոց և հարցրել է Ռոբերտին: Աշխատակցի հայտնած տվյալներով մտել է 101-րդ հյուրանոցային համարը, որտեղ հանդիպել է Ռոբերտին: Նա մենակ է եղել, ինքը հարցրել է, թե Հրաչին ի՞նչ է ասել, նա պատասխանել է, որ կարող է օգնել ,Իգլա, տեսակի հրթիռ ձեռք բերելու հարցում՝ 40.000 ԱՄՆ դոլարով, սակայն ,տակի մասը, չկա: Ռոբերտն ասել է, որ հրթիռը Վրաստանում է, 130 կիլոմետր հեռու, կարող են գնալ և այն տեսնել, թե կոնկրետ որտեղ՝ չի ասել: Քանի որ հստակ պատասխան տալ չի կարողացել, հարցրել է, թե ե՞րբ է գալու Հայաստան, թողել է իր հեռախոսահամարը կապ պաշտպանելու համար: Վերադարձել է Մառնեուլի, առանձին հայտնել է Հրաչին Ռոբերտի հետ խոսակցության մանրամասները: Էջմիածին վերադառնալուց հետո ինքը հայտնել է Սանասարին, որ Վրաստանում կարելի է ձեռք բերել ,Իգլա, տեսակի հրթիռ 40.000 ԱՄՆ դոլարով, սակայն դրա ,տակի մասը, բացակայում է: Նա ասել է, որ, հավանաբար, հրթիռը անպիտան է, հարցրել է, թե ի՞նչ են անելու առանց արձակման մեխանիզմի: Ամեն դեպքում, խորհուրդ է տվել այդ հրթիռը լուսանկարահանել և լուսանկարն իրեն տրամադրել՝ հասկանալու համար, թե այն ի՞նչ է իրենից ներկայացնում:
Մի 3-4 օր անց Ռոբերտը զանգահարել է իրեն հայկական՝ 094-437177 հեռախոսահա-մարից, պայմանավորվել են հանդիպել էջմիածնի ,Բոյնի, թաղամասում: Հանդիպման ժամա-նակ ասել է, որ առանց ,տակի մասի, հրթիռը պետք չէ, նա պատասխանել է, որ մի 20 օրվա ընթացքում այդ մասն էլ կճարի, դա խնդիր չէ, թեև մեջը, նրա ասելով, պարունակվել է մոտ

40 գրամ ոսկի:
Դրանից հետո Ռոբերտը մի քանի անգամ զանգահարել է իրեն նույն համարից, սակայն ինքը չի պատասխանել:
Դրանից հետո Ռոբերտին արդեն հանդիպել է մարտ ամսին էջմիածնի ,Տիգրան Մեծ, սրճարանում՝ Մաշտոցի փողոցում: Սրճարանում հավաքված են եղել իր ծանոթները, Ռոբերտը եկել է Հրաչի հետ, ինքը նույնիսկ զարմացել է: Որևիցե խոսակցություն հրթիռի մասին այդ ժամանակ չի եղել:
Ռոբերտին և Հրաչի ,Տիգրան Մեծ, սրճարանում տեսնելուց հետո, մարտ ամսին Հրաչն իրեն զանգահարել է Վրաստանից, վրացական հեռախոսահամարով և հայտնել է, որ Ռոբերտի հետ է, Օթարին թողել է մի օֆիսի մոտ, որի տնօրենից պետք է հետաքրքրվեր Վրաստանում արտադրվող հրթիռների ձեռք բերման հնարավորությամբ: Բացի դրանից, Հրաչը հայտնել, որ նույն հարցով դիմել է նաև Խվիչայինն և վերջինս խոստացել է տրամադրել ,Իգլա, տեսակի հրթիռ՝ առանց ,տակի մասի,, դրա համար Ռոբերտը գինն իջեցրել է մինչև 38,000: Հրաչն ասել է, որ կարող է գնալ և լուսանկարահանել հրթիռը, խնդիրը միայն նրանում է, որ բերելու համար տրանսպորտային միջոց է պետք, հրթիռը տրամադրողը խոստացել է 1-2 օրվա ընթացքում այդ հարցը լուծել: Դա իրեն հիմք է տվել մտածելու, որ Ռոբերտի նշած առանց ,տակի մասի, հրթիռն ու Խվիչայի խոստացած հրթիռը փաստացի նույն հրթիռն է եղել:
Մի քանի օր անց Հրաչը վերադարձել է Վրաստանից, մի օր, երբ ինքն ու Սանասարը նստած են եղել Մաշտոցի փողոցի ,ՕՐՕ, դաշինքի նախընտրական շտաբում, Հրաչը եկել է այնտեղ և իրենց հայտնել, որ կարող է գնալ և լուսանկարահանել հրթիռը: Որպեսզի Սանասարը վստահ լինի, որ այդ լուսանկարը կեղծ չէ, նա վերջինիցս վերցրել է բանալիների ,բրելոկը,, որ հրթիռի հետ լուսանկարի: Դրանից հետո գնացել է, անջատելով հեռախոսը: Հաջորդ օրն առավոտյան ինքն ու Սանասարը նստած են եղել սրճարանում, Հրաչը եկել և իր պլանշետի մեջ ցույց է տվել մթության մեջ կատարված հրթիռի անհաջող լուսանկար: Սանասարն ասել է, որ նրան լուսանկարը պետք չէ, կարո՞ղ է այն անձամբ տեսնել, թեկուզ կարճ ժամանակով: Հրաչն խոստացել է հետաքրքրվել: Բաժանվելուց հետո Սանասարը զանգահարել և ասել է, որ հրթիռը բերել պետք չէ, ուղղակի պետք է այն լուսանկարահանել ,ՕՐՕ, դաշինքի բացիկի հետ, համոզվելու համարի, որ լուսանկարը համացանցից չի ներբեռնվել:
Դրանից 2 օր անց՝ մարտի 17-ին Հրաչն իրեն ասել է, որ կարող են գնալ և հրթիռը լու-սանկարահանել իրենց տանը: Ինքը զարմացած հարցրել է, թե ինչու՞ է հրթիռը տուն բերել, նա պատասխանել է, որ դա արել է Սանասարի խնդրանքը կատարելու համար: Հրթիռը դրված է եղել Հրաչի տան ավտոտնակում, ժամը 17-ի սահմաններում այն լուսանկարահանել են Հրաչի պլանշետով, զանգահարել և դրա մասին հայտնել են Սանասարին: Նա խնդրել է սպասել, խոստանալով զանգահարել և ասել հետագա անելիքը, սակայն մինչև առավոտ այդպես էլ չի զանգահարել: Հրաչը պետք է գնար Վրաստան, թե ինչու՝ չի ասել, պլանշետը թողել է իր մոտ: Ուշ գիշերով Սանասարն իրեն զանգահարել և առաջարկել է հաջորդ օրը հանդիպել, զրուցել և միասին գնալ ,իրենց առաջինի, մոտ: Իր պատկերացմամբ, նա այդպես արտահայտվել է Սամվել Բաբայանի վերաբերյալ: Սանասարն իրական պատվիրատուն չի եղել, գումար տվողը չի եղել, նրա մեջքին ինչ-որ մարդիկ են եղել, թե կոնկրետ ո՞վ՝ չի իմացել, այդ իրական պատվիրատուների հետ չի շփվել, խոսակցություն չի ունեցել: Սանասարն այդ կապակցությամբ խոսակցություններում միշտ ասել է, որ պետք է համաձայնեցնի գումարն ինչ-որ մարդկանց հետ, լուսանկարը ցույց տա ինչ-որ մարդկանց, հետևաբար, իրական պատվիրատուն, իր հասկանալով, ինքը չի եղել: Նրա ասելով, այդ հրթիռն անհրաժեշտ է եղել Ղարաբաղի համար, այլ մանրամասներ չի ճշտել: Իր պատկերացմամբ, Սանասարն այդ հրթիռը որոնել է Սամվել Բաբայանին համար, իր այդ ենթադրությունը հիմնված է եղել նրանց մտերիմ կապերով, անձամբ Սամվել Բաբայանի հետ չի շփվել: Հիմք է տվել դա ենթադրելու նաև այն հանգամանքը, որ երբ 2017 թվականի մարտի 17-ին Հրաչի հետ պլանշետով լուսանկարահանել են հրթիռը Հրաչի ավտոտնակում՝ Սանասարի կողմից պատվիրատուներին ցույց տալու և հավանություն ստանալու համար, ինքը լուսանկարով պլանշետը մարտի 18-ին

փոխանցել է Սանասարին ,ՕՐՕ, դաշինքի երևանյան գրասենյակի մոտ և նա իր կնոջ հետ մտել է ներս, իսկ երբ իր կինը մենակ դուրս է եկել, ապա ասել է, որ նախընտրական շտաբի համար այդպես էլ գումար չեն տվել՝ դրամարկղում գումարի բացակայության պատճառով, Սանասարը ներսն է մնացել, գրասենյակում գտնվել է նաև Սամվել Բաբայանը: Ինքը շտաբ չի մտել, մնացել է ավտոմեքենայիս մեջ: Իր պատկերացմամբ, Սանասարը մտել է Սամվել Բաբայանի մոտ՝ գործարքի վերաբերյալ պատասխան ստանալու համար: Երբ Հրաչյա Մայիլյանն այդ օրն իրեն զանգահարել է Վրաստանից նորություններ իմանալու, ինքը նրան ասել է, որ պլան-շետը փոխանցել է Սանասարին և նա մտել է շտաբ, դեռևս չի դուրս եկել, ինչը, իր կարծիքով, նորմալ է, նորություններ առայժմ չկան: Թե Հրաչյա Մայիլյանն իր խոսքերն ինչպես է հասկացել, մեկնաբանել չի կարող, սակայն, իր իմանալով, նա նույնպես իմացել է, որ հրթիռի իրական պատվիրատուն Սամվել Բաբայանն է եղել:
Ցերեկը Սանասարը զանգով իրեն հանդիպման է կանչել, էջմիածնում հանդիպելուց տվել է պլանշետն ու ասել է, որ կոմպլեկտում պետք է երեք հատ հրթիռ լինի, ինքն էլ ջղայնանալով, ասել է, որ դա անլուրջ է, մեծ դժվարությամբ 1 հատն են ճարել, նրա ներկայությամբ ջնջել է հրթիռի լուսանկարները պլանշետից: Սանասարը չի ասել, որ հրթիռն իրեն պետք չէ, ուղղակի ասել է, որ կոմպլեկտում պետք է 3 հատ լինի, իր կարծիքով, այդպես ցանկացել է սակարկել գինը: Երբ Հրաչն իրեն զանգահարել է Վրաստանից կամ դեպի այնտեղ տանող ճանապարհից, ինքը հայտնել է այդ խոսակցության մասին, Հրաչը վրդովվել է, ասելով, որ նրան ,քաշել են,, որ այդ հրթիռի համար արդեն 4.000 ԱՄՆ դոլար տվել է, մնացածն էլ՝ 34.000 ԱՄՆ դոլարը սպասում են: Նա շատ վրդովված է եղել:
Հրաչը Վրաստանից վերադարձել է մարտի 21-ի առավոտյան, նա շատ վրդովված է եղել, ասելով, որ տուժել է 4.000 ԱՄՆ դոլարի չափով: Ինքը նրան հարցրել է, թե ի՞նչ է անելու, նա հստակ պատասխան չի տվել, ասելով, որ գնալու է Երևան, գալուց կխոսեն: Հաջորդ օրն առավոտյան իրեն զանգահարել է Հրաչի որդին, խնդրել է հանդիպել, երբ հանդիպել են նրանց շենքի բակում, նա տեսել է բակ մտնող մի ավտոմեքենա և հայտնել է, որ դա ԱԱԾ աշխատակցին է պատկանում: Ավտոմեքենան կանգ է առել իր կողքին, որից հետո իրեն ձերբակալել են:
Իրեն քննության ընթացքում ներկայացված հեռախոսազրույցների բոլոր գաղտ-նալսումներն իրոք իր հեռախոսազրույցներն են Հրաչյա մայիլյանի և Սանասար Գաբրիելյանի հետ, 094-655885 հեռախոսահամարն իր կողմից են օգտագործվել, խոսակցությունների ժամանակ, զենքի մասին խոսելուց օգտագործել են ,մատոր,, ,կոշիկներ, խոսքերը, իսկ ,էվակուատոր, ասելով՝ ի նկատի են ունեցել տրանսպորտային միջոցը, որով հրթիռը պետք է տեղափոխվեր Հայաստան: Խոսակցությունների մեջ քողարկված զրուցել են ,Իգլա, տեսակի հրթիռի ձեռք բերման վերաբերյալ և այդ գաղտնալսումները միայն ապացուցել են իր անկեղծությունը քննության ընթացքում:
Վերոնշյալ նախաքննական ցուցմունքների հրապարակումից հետո գործով ամբաստանյալ Ա.Պողոսյանը հայտարարեց, որ դրանք պնդում է, սակայն հրաժարվեց քննվող դեպքին Սամվել Բաբայանի առնչության վերաբերյալ տված ցուցմունքներից՝ նշելով, թե իբր դրանք իր անհիմն ենթադրությունների հետևանք են, որոնք դատաքննության ընթացքում հերքվեցին: Նշեց, որ հրաժարվում է թե՞ Ս.Բաբայանի առնչության վերաբերյալ եզրահանգումից, թե՞ դրա հիմքում դրված փաստարկներից:
Սույն գործի մեղադրանքի հետ առնչվող, մեղադրյալի կարգավիճակով հարցաքննված Հրաչյա Մայիլյանի ցուցմունքներով, ով Դատարանում օգտվեց լռելու իրավունքից, որի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարակվեցին և հետազոտվեցին նրա նախաքննական ցուցմունքները:
Համաձայն այդ ցուցմունքների՝ 2016 թվականի օգոստոս ամսվա վերջերին էջմիածին քաղաքի բնակիչ Արմեն Պողոսյանը, ում կենցաղում Ժորիկ են անվանել, իմանալով Վրաստանում իր գործնական կապերի մասին, խոսակցության ընթացքում խնդրել է հետաքրքրվել այնտեղ ,Իգլա-3, տեսակի զենք ձեռք բերելու հնարավորությամբ: Չիմանալով ,Իգլա, տեսակի զենքի նպատակային նշանակության մասին, այնուամենայնիվ խոստացել է հետաքրքրվել ու արդյունքների մասին տեղյակ պահել, որից

հետո Ժորիկը թղթի վրա գրել է այդ զենքի անվանումը՝ հիշելու համար: Այդ ժամանակ քննարկել են, թե ի՞նչ գումար պահանջել հրթիռի համար, իր հիշելով, ինքն է առաջարկել 50.000 ԱՄՆ դոլար գումարը: Ինքը հետաքրքրվել է այդ զենքի ձեռք բերման նպատակով, Ժորիկը պատասխանել է, որ տանելու են Ղարաբաղ և հանձնելու են բանակին՝ պաշտոն ստանալու համար, թե ու՞մ էին պաշտոն տալու՝ չի ասել: Ինքը մանրամասնություններով չի հետաքրքրվել, Ժորիկը միայն ասել է, որ դրա դիմաց խոշոր գումար են տալու: Քանի որ անձնական գործերով Թբիլիսի հաճախակի է գնացել, խոսակցությունից մի քանի օր անց՝ սեպտեմբերի 1-ին գնացել է Թբիլիսի: Ժորիկը ցանկություն է հայտնել ընկերոջ՝ ,Ձվարթնոց, գյուղի բնակիչ Սանասար Գաբրիելյանի՝ Սանոյի հետ իր մեքենայով գալ Թբիլիսի, ինչին ինքը համաձայնել է, քանի որ այդ պահին իր մոտ բավարար գումար չի եղել Թբիլիսիում ընթացիկ ծախսերի համար: Իմանալով դրա մասին, Ժորիկն ասել է, որ նրա ընկեր Սանոն գումար ունի և կհոգա մնալու ծախսերը: Երեքով մեկնել են Թբիլիսի, ընթրել ու քնել են: Մեքենան կայանել է հյուրանոցի բակում, հաջորդ օրվա առավոտյան դրան բախվել է ինչ-որ մեքենա, այն ամբողջովին վնասվել է: Քանի որ այն վարելն անհնար է եղել, զանգահարել է աղջկա ամուսնուն՝ Ալբերտ Միքայելյանին, ով անձնական մեքենայով եկել է Թբիլիսի և իրենց բերել է էջմիածին: Էջմիածին վերադառնալուց հետո Ժորիկն ասել է, որ ,Իգլան, իրականում պետք է եղել Սանոյին: Մոտ 4-5 օր անց մեկնել է Թբիլիսի՝ վթարի գործով քննիչի կանչով ու գտնվելով Թբիլիսի քաղաքում, փորձել է հետաքրքրվել, թե Ժորիկի ասած զենքը որտեղից կարող է ձեռք բերել: Այդ հարցով դիմել է ծանոթին՝ Վրաստանի քաղաքացի, Մառնեուլի քաղաքի բնակիչ Օթարի Խաչատուրյանին, սակայն վերջինս իրեն ասել է, որ Վրաստանում նման զենք չկա: Վերադառնալով էջմիածին, Ժորիկին ասել է, որ Վրաստանում նման զենք գտնելու հնարավորություն առայժմ չի ընձեռվել: Դրանից հետո Ժորիկն իրեն մի քանի անգամ նորից դիմել է նույն թեմայով, ասելով, որ Սանասարը մինչև 50 հազար դոլար փող է տալու զենքի համար: Դա ասել է, երբ Վրաստանում էին, Նոր տարվա նախաշեմին: Գումարի մասին խոսակցությունն այդ ժամանակ է եղել, Սանասարի հետ այդ թեմայով առանձին չի խոսել, խոսակցությունը միշտ Ժորիկի հետ է եղել: Վրաստանից կանչել է ընկերոջը՝ Սենակի քաղաքի բնակիչ Խվիչա Կոկայային, որը եկել է ավտոկայան, հացատանը նստել և խոսել են, ինքը՝ առանց Ժորիկի ու Սանոյի, Խվիչային թղթի վրա գրված զենքի անվանումն է փոխանցել և հարցրել է, թե կարող ե՞ն ճարել, Խվիչան խոստացել է հետաքրքրվել: Ճաշելուց հետո, բաժանվելուց առաջ, Ժորիկին ասել է, որ Նոր տարվա նախաշեմին Խվիչայի ձեռքին փող չկա, առաջարկել է մի քիչ փող տալ, Սանոն Ժորիկի միջոցով Խվիչային փոխանցել է 300 դոլար, նշելով, որ դա Նոր տարվա նվերն է, տվել է ճանապարհածախսի համար, որ գնա և հետաքրքրվի: Թբիլիսի քաղաքում՝ ավտոկայանի մոտ Սանասարը իրեն և Ժորիկին տվել է 1.000 ԱՄՆ դոլարը, որը կիսել են իրար մեջ, թե ումի՞ց է Սանասարը վերցրել այդ գումարը, չի իմացել: Դրանից հետո վերադարձել են Հայաստան:
Որոշ ժամանակ անց Խվիչան իրեն հեռախոսազանգով հայտնել է, որ նման զենք ճարել անհնար է, ինքը հետաքրքրվել է այն Աբխազիայում գնելու հնարավորությամբ, նա էլ պատասխանել է, որ այնտեղ չեն կարող գնալ, խոստացել է ծանոթ լինելու դեպքում հետաքրքրվել: Դրանից հետո Ժորիկը ու Սանասարը հասկացել են, որ հրթիռը Վրաստանում հնարավոր չէ ճարել, Ժորիկն առաջարկել է գնալ Ուկրաինա՝ նրա ծանոթների մոտ: Գործից դուրս չմնալու համար ինքը որոշել է գնալ նրա հետ, ինքնաթիռով մեկնել են Ռոստով, այնտեղից մեքենայով գնացել են Ուկրաինայի Գորլովկա քաղաք, մի օր մնացել են այնտեղ: Ժորիկի ծանոթներն ասել են, որ այնտեղ նման զենք ճարել անհնար է, որից հետո իրենք վերադարձել են Ռոստով, որտեղից տաքսիով՝ Հայաստան:
2017 թվականի փետրվարի 16-ին կամ 17-ին է նորից մեկնել է Վրաստան, ինքն ընկերոջ՝ Ռուստամի հետ է գնացել՝ անձնական գործերով, իսկ Ժորիկն առանձին է եկել Սանասարի հետ: Հանգրվանելով ավտոկայանի դիմացը գտնվող հյուրանոցում, հաց են կերել ու քնել, որոշ ժամանակ անց Ժորիկն իրեն արթնացրել է, ասելով, որ Սանոն ցանկություն է հայտնել իրեն տեսնելու: Ժամը 1-ի սահմաններում դուրս է եկել, տեսնելով, որ Սանոն չկա, Ժորիկի հետ գնացել են դիմացը գտնվող ,777, խաղատուն,

որտեղ Սանոն նստած խաղացել է: Ինքն ու Ժորիկը նույնպես նստել են խաղալու, երբ իր փողը սպառվել է, վերադարձել են հյուրանոց, քնել են, իսկ Սանոն մնացել է խաղատանը: Հաջորդ օրն էլ Սանոն մինչև լույս մնացել է այդտեղ: Հաջորդ օրը նորից հանդիպել են, Սանոն հետաքրքրվել է նորություններից, ինքը պատասխանել է, որ Վրաստան եկել է իր գործերով, Սանոն հարցրել է, թե Ժորիկի ասած բանից ոչ մի նորություն չկա՞: Ինքը պատասխանել է, որ այդ հարցով զբաղվել է, բայց դեռևս ապարդյուն: Զրուցելուց հետո Սանասարը՝ Ժորիկից նեղված, մեքենայով գիշերը մենակ գնացել է Հայաստան, Ժորիկն առավոտյան եկել ու ասել է, որ Սանոն մեկնելուց ոչ հացի, ոչ էլ սիգարետի փող չի թողել: Դրանից հետո հյուրանոցը փոխել են, խաղատան մոտից տեղափոխվել են այլ հյուրանոց: Մի օր բաղնիքից դուրս գալուց Ռուստամն ու Ժորիկն իրեն ասել են, որ իրեն դրսում հարցնողներ կան: Դուրս գալով, տեսել է ծանոթին՝ Հարութին ու մի տղամարդու: Բարևելուց հետո այդ տղամարդը հիշեցրել է, որ 15-20 տարի առաջ են հանդիպել, իրենց տանը հաց են կիսել, դա Ռոբերտ Աղվանյանն է եղել՝ էջմիածնի նախկին քաղաքապետ Երվանդ Աղվանյանի որդին: Առաջարկել է հյուրանոցի առաջին հարկում թեյ կամ սուրճ խմել, Ռոբերտը զրույցի ընթացքում հետաքրքրվել է Վրաստան գալու նպատակով, պատասխանել է, որ եկել են գառ գտնելու: Ռոբերտն ասել է, որ կինն այդտեղ դեսպանատանն է աշխատում, մի քիչ իր մասին է պատմել, հետո դուրս գալով, բաժանվել են: Ռոբերտը հեռախոսահամարներով է փոխանակվել ընկերոջ՝ Ռուստամի հետ, իրենից հեռախոսահամար չի վերցրել, Ռուստամին ասել է, որ եթե հանկարծ եզդիները արտասահման մեկնելու ցանկություն ունենա, իր տուրիստական ընկերություն միջոցով ամեն հարց կարող են լուծել: Հետո իրենք գնացել են ավտոկայանի խաղատուն, ինքն ու Ժորիկը մտել են սրահ, իսկ Ռուստամը մնացել է դրսում: Որոշ ժամա-նակ անց Ռուստամը ներս է մտել և հայտնել, որ Ռոբերտն է զանգել ու կանչել հանդիպման, երբ ինքը հետաքրքրվել է դրա նպատակով, Ռուստամն ասել է, որ չգիտի, հնարավոր է՝ գառ-մառ է ճարել: Զանգահարել են Ռոբերտին, ով բացատրելով իր հյուրանոցի գտնվելու վայրը, կանչել է հանդիպման: Հասնելով այնտեղ, սկսել է կայանատեղի որոնել, Ռուստամն ու Ժորիկն իջել և գնացել են Ռոբերտին հանդիպելու: Ինքը նույնիսկ չի հասցրել իջնել, նրանք վերադարձել են: Ռուստամը հայտնել է, որ թեման դարձյալ վերաբերել է դեպի Եվրոպա ուղևորություններին, Ռոբերտն ասել է, որ լավ ընկերություններ կան, ինքը շատ բանով կարող է օգնել: Դրանից հետո Ռուստամն իրեն առանձին ասել է, որ Ռոբերտն առաջարկել է զենք ծախել՝ ,ուսին դնելու, զենքերից, նա էլ հրաժարվել է: Ինչպես հետագայում է պարզվել, Ժորիկը խոսակցության այդ հատվածին չի մասնակցել, չի լսել: Ռուստամը Ռոբերտին պատասխանել է, որ նրան դա հետաքրքիր չէ: Հասնելով Մառնեուլի, Ժորիկին պատմել է Ռոբերտի և Ռուստամի այդ զրույցի մասին, պարզվել է, որ նա դա չի լսել: Ժորիկին խորհուրդ տվել է գնալ ու հանդիպել Ռոբերտին, պարզել, թե կարո՞ղ է զենքի ձեռք բերման հարցում օգնել: Որոշել են Ռուստամին չասել Ռոբերտի մոտ նոր հանդիպման գնալու մասին, խաբել, որ Ժորիկը մոռացել է Թբիլիսիում դեղ գնել՝ Երևան տանելու համար: Այդ պատրվակով Ժորիկն իր ավտոմեքենայով վերադարձել է Թբիլիսի, իսկ ինքն ու Ռուստամը մնացել են Մառնեուլիում: Վերադառնալուց հետո Ժորիկը պատմել է, որ հանդիպել ու խոսել են, Ռոբերտը խոստացել է զբաղվել այդ հարցով, որից հետո եկել են Հայաստան:

Ահագին ժամանակ անց Ժորիկն իրեն հայտնել է, որ Ռոբերտը Հայաստան է եկել ու հանդիպել են, Ռոբերտն ասել է, որ իրենց ուզած ապրանքը կա, Ժորիկն էլ տվել է ,այփադը,՝ լուսանկարելու ու ցույց տալու համար: Ինքը մի քանի օրից Ժորիկից հետաքրքրվել է նորութ-յուններով, վերջինս պատասխանել է, որ հրթիռն իրականում գոյություն ունի, ըստ Ռոբերտի բերած լուսանկարների ինչ-որ ավտոտնակում է, բայց դրանք անհաջող են ստացվել մթության պատճառով: Քանի որ Ժորիկը մի քանի օր այդ մասին չի խոսացել, մտածելով, որ իրեն ուզում են շրջանցել այդ գործում, գնացել և հանդիպել է Ռոբերտին, ով սկզբից խուսափել է այդ թեմայի շուրջ զրուցելուց, չի ցանկացել պատմել, որ Ժորիկի համար հրթիռ է լուսանկարել: Ինքը Ռոբերտին ասել է, որ այդ զենքն իրականում իրեն է պետք, Ռոբերտը զարմացած ասել է, որ Ժորիկի խոսքերից տանելու էին

Ղարաբաղ և նվիրաբերելու էին բանակին: Իր պնդումներից հետո Ռոբերտը խոստովանել է Ժորիկի հետ խոսակցության մասին, նշելով, որ զենքի վրա պակաս մասեր են եղել և ավելացնելով, որ դրանք կարելի է ճարել Վարդիկ անունով ազատամարտիկից: Ռոբերտը հայտնել է, որ բացակայել են հրթիռի ,տակինը, և մարտկոցը, բայց ինքը չի կարող Վարդիկին զանգահարել, քանի որ վերջինս նրան պարտք է և զանգելու դեպքում չի պատասխանի: Ռոբերտի իմանալով՝ նա գտնվել է Եվրոպայում, ինքը Ժորիկից հարցրել է Վարդիկի մասին, վերջինս պատասխանել է, որ անունը լսել է, սակայն ծանոթ չի եղել: Հարցրել են Սանոյին, պարզվել է, որ Վարդիկը նրա բարեկամն է՝ փեսայի եղբայրն է: Մի երկու օրից Ժորիկն ասել է, որ Սանոն զանգահարել է Վարդիկին, ով Ռուսաստանում է եղել, Սանոյին հայտնել է, որ նման մասեր այժմ չունի: Ինքը հայտնել է այդ մասին Ռոբերտին, ով կասկածի տակ է դրել Վարդիկի խոսքերը ու խնդրել է տալ վերջինիս հեռախոսահամարը՝ անձամբ զանգահարելու նպատակով: Ինքը խոստացել է հեռախոսահամարն իմանալ, սակայն գործերի բերումով անհրաժեշտություն է առաջացել մեկնել Վրաստան: Իմանալով այդ մասին, Ռոբերտը ցանկություն հայտնել է իր հետ գալու, մարտի 7-ին կամ 8-ին միասին են մեկնել, հասնելով Թբիլիսի, բաժանվել են, ինքը զբաղվել է անձնական գործերով, վերադառնալուց հանդիպել են, գնացել են ճաշելու: Ռոբերտը առաջարկել է գնել հրթիռը ,կիսատ, վիճակում, ինքը հետաքրքրվել է դրա առկայությամբ, Ռոբերտը դրական է պատասխանել: Ինքը հրթիռը տեսնելու ու լուսանկարելու ցանկություն է հայտնել, Ռոբերտը պատասխանել է, որ խնդիր չկա, որպես հրթիռի արժեք նշել է 40.000 ԱՄՆ դոլար, սակայն պատրաստակամություն է հայտնել ,կիսատ, վիճակում 38 հազարի դիմաց տրամադրել: Ինքը պատասխանել է, որ հարցը գումարի մեջ չէ, հրթիռի անպիտան լինելու դեպքում կարող է չուզեն, այլ բան է, եթե կարողանան ճարել պակասող մասերը: Ինքը զանգել է Ժորիկին, ով Սանոյի հետ նախընտրական շտաբում է եղել, հայտնել է, որ ապրանքը կա, իր կարծիքով Վրաստանում է, բայց բացակայող մասերը չեն ճարվում, հարցրել է, թե ինչ պատասխանել Ռոբերտին: Հեռախոսազրույցից հետո գնացել է հարևանությամբ գտնվող հյուրանոցում հանգրվանած Ռոբերտի մոտ, վերջինիս հարցին, թե ի՞նչ են որոշել, պատասխանել է, որ պատվիրատուները ,կիսատ, վիճակում ռազմամթերքը գնելուց կարծես հրաժարվել են: Դրանից հետո վերադարձել են Հայաստան:

Հայաստանում Ռոբերտը հերթական հանդիպման ժամանակ հետաքրքրվել է, թե գնելու՞ են այդ հրթիռը, ինքն էլ վերջնական գինն է հարցրել: Ռոբերտը որպես վերջնական գին նշել է 35.000 ԱՄՆ դոլար, ինքը դրա մասին հայտնել է Ժորիկին և խորհուրդ տվել է Սանոյին վերջնական որպես գին փոխանցել 40.000 ԱՄՆ դոլարը՝ յուրաքանչյուրի կողմից 2.500 ԱՄՆ դոլար վաստակելու նպատակով: Թեև Ժորիկն նախկինում ասել էր, որ հրթիռի համար պատրաստ են վճարել 50.000 ԱՄՆ դոլար, ինքը, այնուամենայնիվ, խորհուրդ է տվել նշել 40.000 ԱՄՆ դոլար գինը, քանի որ ապրանքը ,կիսատ, է եղել: Ժորիկն ասել է, որ պակասող հատվածները պետք է նորմալ լուսանկարել՝ մասնագետին ցույց տալու համար: Ինքը Ռոբերտին համոզել է հրթիռը ,պլանշետով, նկարել, վերջինս ռազմամթերքի կոնկրետ գտնվելու վայրը չի հայտնել՝ նշելով միայն, որ այն հեռու չէ, մի 50 կմ ճանապարհ է պետք գնալ: 2017 թվականի մարտի 15-ին՝ երեկոյան, Ռոբերտ Աղվանյանի հետ գնացել են ,Իգլա, տեսակի հրթիռը լուսանկարահանելու, դրանից առաջ՝ ցերեկը Ռոբերտ Աղվանյանը խնդրել է իրեն ավտոմեքենայով տանել նրան Երևանի Հանրապետական հիվանդանոց՝ այնտեղ ինչ-որ մի աղջկա տեսնելու: Մանրամասներով չի հետաքրքրվել, տարել է նրան այդ հիվանդանոց, որտեղ նա իջել և մոտ 1 ժամ բացակայել է: Երբ դուրս է եկել, Ռոբերտը խնդրել է տանել էջմիածին, նրան իջեցրել է ,Բոյնի, թաղամասի մոտ և գնացել է տուն: Երեկոյան զանգահարել է իրեն, պայմանավորվել են հանդիպել նույն վայրում և գնալ ,Իգլա, տեսակի հրթիռը լուսանկարահանելու: Իր ավտոմեքենայով, էջմիածնից դեպի Արմավիր տանող մայրուղով մի 3-4 կմ գնալուց հետո թեքվել են ձախ, բավականին երթևեկելուց հետո կանգնել են ու երկար սպասել: Ինքն անհանգստություն է հայտնել, որ մթության պատճառով լուսանկարները

նորմալ չեն լինի, Ռոբերտը խնդրել է համբերել, առանձնացել և հեռախոսով է խոսել, թե ում հետ՝ ինքը չի իմացել: Ռոբերտ Աղվանյանը ճանապարհին հեռախոսով անընդհատ ինչ-որ մեկի հետ զրուցել է բջջային հեռախոսով, հայերեն լեզվով, իր հասկանալով, զրուցակիցը հեռախոսով ուղղորդել է իրենց ճանապարհը: Մոտ 1 ժամ սպասելուց հետո, գնացել են էջմիածնի շրջանի գյուղերից մեկը՝ իրեն դեղ, իսկ Ռոբերտին ծխախոտ գնելու: Ռոբերտը կարծես ժամանակ է ձգել, ինքը դրանից նյարդայնացել ու ասել է, որ եթե գալու են, թող գան, եթե՝ ոչ, ապա առաջարկել է վերադառնալ: Ռոբերտը նորից ինչ-որ մեկի հետ է հեռախոսով է զրուցել, որից հետո առաջարկել է շարժվել: Արշալույս գյուղի ցուցանակից թեքվել են ավտոմեքենայով դեպի աջ և շարժվելով գյուղամիջյան ճանապարհով մոտ 600 մետր, հասել են մի գրատարի, ուր ճանապարհը ճյուղավորվել է դեպի աջ ու ձախ, կանգնել են ավտոմեքենաների կմախքների մոտ: Ռոբերտն իջել է մեքենայից, քանի որ լրիվ մութ էր, ինքը դուրս չի եկել, 2-3 րոպե հետո Ռոբերտը վերադարձել և բերել է հրթիռը՝ ցելո-ֆանով և կպչուն ժապավենով փաթեթավորված վիճակում: Մեքենայի դուռը բացելով՝ այն տեղադրել է սրահում և առաջարկել է բացել մեքենայի մեջ: Ինքը սկզբից առարկել է մեքենայի մեջ բացելուն՝ պատճառաբանելով, որ ամեն ինչ կարող է պատահել: Փորձել են փաթեթը բացել, սակայն այն կպչուն ժապավենով լավ կապված է եղել: Ռոբերտն իրեն հարցրել է, թե դանակ ունե՞ի ավտոմեքենայի մեջ, ինքը բացասական է պատասխանել: Լսելով դա, նա դուրս է եկել ավտոմեքենայից և նորից շարժվել է ճանապարհով դեպի աջ, մի քանի րոպեից վերադարձել է դանակը ձեռքին, որով բացել են փաթեթը: Դանակն այդպես էլ մնացել է իր ավտոմեքենայում: Քանի որ այդ պահին ինչ-որ գյուղացի է անցել՝ բահը ձեռքին, Ռոբերտի ցուցումով ավտոմեքենայով շարժվել են դեպի ձախ և անցնելով մոտ 200-300 մետր, կանգնել են մի ամայի տարածքում: Հրթիռը հանել են ավտոմեքենայից և մթության մեջ լուսանկարահանել են իր պլանշետ-համակարգչով: Մինչ այդ ինքը Սանոյից բանալիների կախազարդ էր վերցրել՝ լուսանկարելուց ապրանքի վրա դնելու համար՝ լուսանկարի հանդեպ վստահություն ներշնչելու նպատակով: Բանալիների կախազարդը դնելով հրթիռի վրա, մթության մեջ լուսանկարել է, հետո նորից հրթիռը փաթաթել են ցելո-ֆանով, դրել են մեքենայի մեջ ու շարժվել: Հասնելով ջրատարի մոտ նույն խաչմերուկին, Ռոբերտը հրթիռը հանել է սրահից, դուրս է եկել, մի քանի րոպե անց առանց դրա նստել է ավտոմեքենայի մեջ և գնացել են էջմիածին:

Ինքը զանգել է Ժորիկին, կանչել է լուսանկարները նայելու, Ժորիկն ասել է, որ դրանք նորից չեն հաջողվել: Մեկ օր անց Ժորիկն առաջարկել է հրթիռը նորից բերել ու լուսանկարել՝ նկարները մասնագետին ցույց տալու ու հասկանալու համար, թե ի՞նչն է պակաս և հնարավո՞ր է պակասորդը գտնել, թե ոչ: Ինքը Ռոբերտին ասել է այդ մասին, վերջինս էլ պատասխանել է, որ առանց կանխավճարի ապրանքը չեն տա, թեկուզ նկարելու համար: Ինքն ասել է, որ փող չունի, Ժորիկից հարցրել է, թե ինչքան է տևելու հրթիռը բերելն ու լուսանկարելը, նա ասել է՝ մի 2-3 ժամ: Պայմանավորվել են բերելու համար, խոստացել է, որ իր մոտ հրթիռը չի մնալու: Ռոբերտին համոզել է մի 3-4 ժամով հրթիռը բերել՝ խոստանալով տալ 5.000 դոլարի չափով ,բեհ,՝ մինչև որոշում կայացնելը, իսկ հավանելու դեպքում տրամադրել ամբողջ գումարը: Միաժամանակ նշել է, որ միանգամից ամբողջ փողը չեն կարող տալ, որովհետև ապրանքը տանելու են Վլադիկավկազ, գնորդի ձեռքին ընդամենը 5.000 ԱՄՆ դոլար է, իսկ մնացածը քարտի վրա է, պիտի գնա Վլադիկավկազ՝ այնտեղ փողը կանխիկացնելու համար: Ասելով դա՝ Ռոբերտին խաբել է, որովհետև վերջինս դեմ է եղել հրթիռը Ղարաբաղ տանելուն՝ ասելով, որ այդ դեպքում բոլորն էլ բռնվելու են: Ի վերջո՝ Ռոբերտին համոզել է այդ 5.000 ԱՄՆ դոլարի դիմաց ժամանակավոր հրթիռը վերցնել՝ գնոր-դին ցույց տալու համար, խոստացել է, որ հրաժարվելու դեպքում կտա 1.000 ԱՄՆ դոլար: Ռոբերտը գնացել է հեռախոսով խորհրդակցելու, վերադառնալուց համաձայնել է: 2017 թվա-կանի մարտի 17-ին՝ ժամը 16-ի սահմաններում, առաջարկել է գնալ և բերել ապրանքը: Նստել են իր ավտոմեքենան և գնացել են նույն գյուղը: Ճանապարհին Ռոբերտին նույնպես ինչ-որ մեկը հեռախոսով ուղղորդել, հուշել է ճանապարհը: Երբ հասել են Հայթաղ և

Արշալույս գյուղի սահմանագծին, ինչ-որ մեկը՝ Արշալույս գյուղի ցուցանակին չհասած Ռոբերտին հեռախոսով ասել է, որ շարժվի դեպի ծուխը: Ռոբերտը սկսել է փնտրել այն վայրը, որտեղից ծուխ է բարձրացել, խնդրել է իրեն օգնել: Ի վերջո, Հայթաղ գյուղում կանգնելով մի կիսակառույց շենքի մոտ, Ռոբերտը իջել է, ուսումնասիրելով շրջակայքը, նորից զանգահարել է ինչ-որ մեկին, հետո խնդրել է իրեն իջնել ավտոմեքենայից: Շենքի պարիսպի կողքով, արանքով մտել են կիսակառույց շենքի ներսը, ապրանքը վերցնելով, բերել ու տեղադրել են իր մեքենայի մեջ: Այնուհետև եկել են էջմիածին, իրենց տանը մարդ չի եղել, զանգել է Ժորիկին իմանալու, թե հրթիռն ու՞ր տանեն: Մինչև Ժորիկի պատասխանը, Ռոբերտի հետ հրթիռը տեղավորել է իրենց բակում, Ռոբերտին առաջարկել է հեռանալ՝ հայտնելով, որ կանչելու է գնորդ օսեթին ապրանքը նայելու: Դրանից հետո գնացել ու Ժորիկին հայտնել է, որ զենքն իրենց տանն է, առաջարկել է գալ և որոշել, թե ի՞նչ են անելու, ու՞ր են տանելու, ո՞ր մասնագետին են ցույց տալու: Վերջինս պատասխանել է, որ ոչ մի մասնագետի ցույց տալ պետք չէ, առաջարկել է գնալ ու լուսանկարել՝ Սանոյին նկարը փոխանցելու համար: Եկել են իրենց տուն, բակում լուսանկարել են հրթիռը, Ժորիկին ձեռքին ,ՕՐՕ, դաշինքի բացիկ է եղել, դրել է հրթիռի վրա ու լուսանկարել: Նկարելուց հետո Ժորիկից հետաքրքրվել է հետագա քայլերով, նա առաջարկել է համբերել՝ մինչև Սանոն տեսնի և լուսանկարը տանի մասնագետի մոտ: Ապրանքը մնացել է իր ավտոտնակում, անցել է մի 2 ժամ: Ռոբերտն անընդհատ զանգահարել և հարցրել է արդյունքների մասին: Ընտանիքի անդամների վերադառնալուց առաջ, վախից հանել է հրթիռը տնից, պահել է մահացած հորեղբոր հարևանությամբ գտնվող տան ավտոտնակում է: Ժորիկից հեռախոսազանգով հետաքրքրվել է, թե ի՞նչ են անելու, Ժորիկը զանգել է Սանոյին, առաջարկել է հանդիպել: Ժորիկի հետ գնացել են ,Մուսալեռ, ռեստորան, ուր տեսնելով Սանոյին, Ժորիկը հայտնել է ապրանքը բերելու և լուսանկարելու մասին: Բայց ,այփադն, այդ պահին արդեն Ժորիկի մոտ չի եղել, տանն է թողել: Ինքը Սանոյին ասել է, որ հրթիռն իր տանը չի կարող պահել, նա պատասխանել է, որ տեղ չունի տանելու, առաջարկել է վերադարձնել, նշելով, որ հաջորդ օրը մասնագետը լուսանկարով կասի, հնարավո՞ր է արդյոք վերականգնել հրթիռը: Ինքն ասել է, որ այդ մարդիկ մինչև որոշում կայացնելը փող են պահանջել՝ 5000 ԱՄՆ դոլար: Սանոն խնդրել է համբերել մի օր: Ինքը ասել է, որ հրթիռի տերը չի կարող համբերել, պահանջել է 5000 դոլարը, մտածելով, որ հյուրանոցում մարդ կա Օսեթիայից, որից ինքը պիտի 5000 վերցնի: Սանոն պատասխանել է, որ ոչնչով չի կարող օգնել, փող չի կարող տալ: Ինքը բարկացած ասել է, որ իրեն փաստացի խաբել են և նեղացած դուրս է եկել, փորձել է ընկերներից փող ճարել՝ Ռոբերտի հարցերը կարգավորելու համար: Ժորիկին հայտնել է Ռոբերտին տված խոստման մասին, որ նույնիսկ հրթիռը չվերցնելու դեպքում նրան 1000 ԱՄՆ դոլար է տալու, Ժորիկն ասել է, որ դա երկուսով կվճարեն: Ինքն արդեն Ռոբերտին ասել էր, որ հրթիռն օսեթներն են առնելու, հավանելու դեպքում փողը մինչև կիրակի բերելու են Կազբեկի ներքևը: Փորձելով ժամանակ շահել՝ Ռոբերտին կանչել և ասել է, որ Վրաստան է գնալու որդու հետ, 5000 դոլար է ճարել, դրանից 4000-ը կարող է տալ նրան, իսկ 1000 դոլարը պահել է իր մոտ: Ռոբերտն ասել է, որ փողը պետք է տանի ինչ-որ մադկանց, ցանկություն հայտնել է իր հետ գալ Վրաստան: Վերցնելով գումարը, գնացել է, իսկ վերադառնալուց ասել է, որ իր հետ Վրաստան գնալու ցանկության մասին, նշելով, որ վերջնական պատասխանն իմանալուց միանգամից կարող են գնալ փողը վերցնելու: Մեկնել են Վրաստան, կիրակի օրը ավտոշուկայից որդու համար ավտոմեքենա է գնել և նա վերադարձել է Հայաստան, իսկ ինքը մնացել է Վրաստանում՝ Թբիլիսի քաղաքում: Ռոբերտն անընդհատ հետաքրքրվել է վերջնական որոշմամբ, ինքն էլ անընդհատ զանգահարել է Ժորիկին, մի պահ կարողացել է միանալ, Ժորիկն հայտնել է, որ Սանոն էլիզի՝ իր կնոջ հետ մտել է շտաբ և մնացել է այնտեղ, ոչինչ դեռևս չի որոշվել: Թե ու՞մ պետք է շտաբում հրթիռի լուսանկարը ցույց տար, իրեն հայտնի չի եղել: Դրանից հետո Ժորան հեռախոսներն անջատել է, մի շարք ապարդյուն զանգերից հետո ստիպված զանգել է Սանոյին, ասել է, որ իրեն արդեն ,խեղդում են,: Սանոն կիսավիրավորական հայտնել է, որ Ժորիկին արդեն ասել է, որ գործարքը ձախողվել է, կոմպլեկտը պետք է

երեք հատ հրթիռից բաղկացած լինի, կիսատ ոչ մեկին պետք չէ: Ինքը ջղայնացած ասել է, որ իրեն խաբել են, Հայաստան գալուց կպարզաբանեն այդ խնդիրը: Նեղված Ռոբերտին ասել է, որ նորություններ չկան, իր կարծիքով, գործը չի լինելու, ինքը գնալու է Հայաստան, առաջարկել է միասին գնալ և իրենց տնից հրթիռը հանել: Ռոբերտը հրաժարվել է գալուց, ասելով, որ գործեր ունի: Ինքը վերադարձել է Հայաստան, հաջորդ օրը ժորիկին կանչել և հարցրել է, թե ի՞նչ են ,սարքել, իր գլխին: Ժորիկը բերել է ,այփադը, և ցույց տվել է, որ ջնջել է նկարները, հայտնել է, որ Սանոն հրթիռը վերցնելուց հրաժարվել է, քանի որ պակասող մասերը շատ են եղել: Ժորան առաջարկել է Ռոբերտին կանչել և առաջարկել վերցնել հրթիռը և տանել: Երբ Ռոբերտը զանգել է, նրան հայտնել է գործարքի ձախողման մասին, նա ջղայնացած ասել է, որ այդ պակասող մասերի համար արդեն փողեր է բաժանել: Իր կարծիքով, դա հայտնել է իր տված 4000 դոլարը չվերադարձնելու համար, քանի որ մինչ այդ ասել է, որ այդ գումարը թողել է Երևանում, առհասարակ գումար չունի: Ինքը Ռոբերտին ասել է, որ 1000 դոլարը կարող է պահել, խնդրել է մնացածը բերել և ապրանքն էլ տանել: Դրանից հետո, մի քանի ժամ չանցած, եկել են ազգային անվտանգության աշխատակիցները և իրեն բերման ենթարկել:
Ինքն ի սկզբանե իմացել է, որ Սանասարն իրական պատվիրատուն չի եղել, գումար տվողը չի եղել, նրա մեջքին ինչ-որ մարդիկ են եղել, թե կոնկրետ ո՞վ՝ չի իմացել, այդ իրական պատվիրատուների հետ չի շփվել, խոսակցություն չի ունեցել: Սանասարն այդ կապակցությամբ խոսակցություններում միշտ ասել է, որ պետք է համաձայնեցնի գումարն ինչ-որ մարդկանց հետ, լուսանկարը ցույց տա ինչ-որ մարդկանց, մասնագետին՝ հավանություն ստանալու համար: Նրա ասելով, այդ հրթիռն անհրաժեշտ է եղել Ղարաբաղի համար, այլ մանրամասներ չի ճշտել:
Իրեն քննության ընթացքում ներկայացված հեռախոսազրույցների բոլոր գաղտ-նալսումներն իրոք իր հեռախոսազրույցներն են, +00995579493300 և 093-180736 հեռախոսահամարն իր կողմից են օգտագործվել, խոսակցությունների ժամանակ, զենքի մասին խոսելուց օգտագործել են ,մատոր,, ,կոշիկներ, խոսքերը, իսկ ,էվակուատոր, ասելով, ի նկատի են ունեցել տրանսպորտային միջոցը, որով հրթիռը պետք է տեղափոխվեր Հայաստան:
Վերոնշյալ ցուցմունքների հրապարակումից հետո մեղադրյալ Հր.Մայիլյանը հայտարարեց, որ դրանք պնդում է, իսկ մեղադրողի հարցադրումներին ի պատասխան՝ նշեց, որ վերոնշյալ ռազմամթերքը հայթայթելու առաջարկով իրեն դիմել էր Արմեն Պողոսյանը, ինքը հայթայթել է, այդ գործին ներգրավված են եղել նաև Սանասար Գաբրիելյանը, Ռոբերտ Աղվանյանը, իսկ թե վերջին անձը՝ մասնագետը, ով էր, ում պետք է ռազմամթերքը ցուցադրվեր, չգիտի:
Մեղադրողի այն հարցադրմանը, թե ինչու է Ս.Գաբրիելյանը հրաժարվել ,Իգլայի, համար վճարելուց, մեղադրյալի կարգավիճակով հարցաքննվող Հրաչյա Մայիլյանը հայտնեց, որ Արմեն Պողոսյանը, նախապես խոսելով Սանասար Գաբրիելյանի հետ, իրեն փոխանցել է Գաբրիելյանի խոսքերն առ այն, որ ,Իգլան, կիսատ է, հրթիռները պետք է երեքը լինեն, մեկ հրթիռով այդ ռազմամթերք նրան հարկավոր չէ, ինքն էլ իր հերթին զանգել և այդ մասին տեղեկացրել է Ռոբերտ Աղվանյանին:
Սամվել Բաբայանի հարցադրմանն ի պատասխան՝ Հրաչյա Մայիլյանը նշեց, որ իրեն բռնել են, դրա համար էլ ,Իգլան, հանձնել է: Վերոնշյալ հարցադրումներից հետո Հրաչյա Մայիլյանը հրաժարվել այլևս որևէ հարցի պատասխանելուց:
Ամբաստանյալ Սամվել Բաբայանի ցուցմունքների ստուգման, այլ ապացույցների հետ համադրման և գնահատման արդյունքներով արժևորված փաստական տվյալներով. Այսպես, ռազմամթերքի դրվագով առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս իրեն մեղավոր չճանաչեց, հայտնեց, որ հնգամյա բացակայությունից հետո Հայաստան է վերադարձել 2016թ. մայիսին և չէր կարող դեռևս այդ թվականի մարտ ամսից Սանասարին և այլոց դրդել ապօրինաբար ռազմամթերք ձեռք բերելուն, փոխադրելուն և պահելուն, այդ կապակցությամբ իրեն առաջադրված մեղադրանքն անհիմն է:
Հայտնեց, որ 2017թ. մարտի 17-ին իրեն է զանգահարել Սանասար

Գաբրիելյանը և հայտնել, որ ինչ-որ բան ունի, որը ցանկանում է իրեն ցուցադրել: Սանասարը չի կարողացել հեռախոսով հստակ բացատրել, թե դա ի՞նչ զենք է, ինքը հարցեր է տվել հասկանալու համար, սակայն ապարդյուն, որից հետո առաջարկել է ,,չխկացնել,, այսինքն՝ լուսանկարել և բերել լուսանկարը իր մոտ՝ տեսնելու համար: Հաջորդ օրը՝ մարտի 18-ին՝ ժամը 12-ի սահմաններում Սանասարը եկել է իր մոտ՝ ,ՕՐՕ, դաշինքի գրասենյակ, ցույց է տվել մի պլանշետ-համակարգիչ, որում առկա է եղել ,Իգլա, տեսակի համակարգի լուսանկար՝ առանց կրակի արձակման մեխանիզմի: Ինքը բացատրել է Սանասարին, թե դա ի՞նչ է իրենից ներկայացնում, որ դա ամբողջական չէ և այդ վիճակում նպատակային նշա-նակությամբ չի կարող օգտագործվել: Դրանից հետո Սանասարն իրեն հարցրել է, թե արդյոք դա իրենց պետք գալու՞ է, թե՝ ոչ, ինքը պատասխանել է, որ միգուցե մի օր Արցախի պաշտպանության համար կարող է պետք գալ և օգտագործվել: Նրան առաջարկել է դա տանել Արցախի Նարիշտար գյուղ և այնտեղ պահել: Թե Սանասարը ինչպե՞ս է վարվել իր ասելուց հետո, տեղյակ չէ: Ինքը Սանասարին ոչ թե հանձնարարել է, այլ խորհուրդ է տվել: Թե ե՞րբ, ի՞նչ եղանակով, ու՞մ կողմից և որտեղի՞ց էր այդ ռազմամթերքը ձեռք բերվել, Սանասարին չի հարցրել, այդ ,Իգլան, տեսել է միայն լուսանկարով: Դրա ձեռքբերման հետ կապված ծախսերի և արժեքի վերաբերյալ տեղյակ չի եղել, դրա համար որևէ գումար չի տվել և չի էլ պատրաստվել տալ:
Հայտնեց, որ մտադրվել էր Սանասարի հետ Թիֆլիսից տախտակ բերելու գործ ունել, պլանշետ-համակարգչով նկարն իրեն ցույց տալու օրը՝ 2017թ. մարտի 18-ին՝ նա տախտակի գործի համար է կանխավճար խնդրել, գրասենյակի համար գումարներ էլ էին անհրաժեշտ, որ այդ աշխատանքները Սանասարը կազմակերպեր: Սանասարը պլանշետով իրեն նկարներ է ցույց տվել, հարցրել, թե դա ինչ է, որին ի պատասխան, որպես մասնագետ, նրան պարզաբանել է, որ բացակայում է գլխավոր մասնիկը, որն աշխատեցնում է ամբողջ ,Իգլա, ԶՀ համակարգը, նշել է, որ հրթիռները պետք է լինեին երեք հատ, բացակայում է նաև ատրճանակը, որի պայմաններում միայն այն կկազմեր մեկ կոմպլեքս: Սանասարը հարցրել է, թե կարող է դա բանակին պետք գա, պատասխանել է, որ կարող է, սակայն նշել, որ այդ վիճակում չի կարելի պահել, կարելի է դնել մի արկղի մեջ, շորով փաթաթել, Սանասարին հայտնել է նաև այն պահելու վայրը՝ ԼՂՀ Նարիշտար գյուղը, տեղանք, որին Սանասարը ծանոթ էր դեռևս ծառայության ժամանակվանից, այնտեղ նաև բարեկամություն ուներ: Սանասարին նաև զգուշացրել է, որ եթե դա նրա ձեռքին բռնեն, կարող են քրեական գործ հարուցել, խորհուրդ է տվել, որ նա այն նկարի, տա մի սպայի՝ ,թևավորի,, որ վերջինս գա այն վերցնի և տանի:
Սանասարը լսել և հեռացել է: Սանասարից չի հետաքրքրվել, թե որտեղից դա նրան, վերջինս իրեն ոչինչ չի հայտնել այն որպես նվեր բանակին նվիրաբերելու մտադրության մասին: Դրանից հետո՝ արդեն քրեական գործի նյութերից է տեղեկացել, որ Սանասարը իր հետ հանդիպումից հետո զանգել և իրեն ցուցադրածը գնելուց հրաժարվելու մասին հայտնել է Արմեն Պողոսյանին՝ պատճառաբանելով, որ հրթիռները պետք է երեք հատ լինեն: Իր հերթին Արմեն Պողոսյանը զանգել է մյուս անձին, փոխանցել Սանասարի դիրքորոշումը՝ վերոնշյալ առարկան գնելուց հրաժարվելու մասին: Դրանից կարելի էր եզրակացնել, որ ինքը ոչ թե դրդել է ,Իգլան, ձեռք բերելուն, այլ փաստացի կանխել է Սանասարի կողմից այն ձեռք բերելը:
2017թ. մարտի 19-ին Սանասարը, իր մոտ գրասենյակ գալով, գումար է խնդրել, նրան առաջարկել է այդ նպատակով հանդիպել Լուսինեն և վերցնել գումար:
2017թ. մարտի 22-ին Սանասարի ընկեր Աշոտը և Սուսաննայի հետ եկել են իր գրասենյակ, Աշոտը ներկայացել է որպես Սանասարի և՛ ընկեր, և՛ վարորդ, իրեն պատմել է Սևանում նրանց մեքենան կանգնեցնելու և ստուգելու մասին: Նրան հարցրել է, թե ինչ են ստուգել, արդյոք մեքենայում բան չեն գտել, նրանց հետ ուրիշ մարդ եղել է, թե՝ ոչ, նրան լսելուց հետո Աշոտին նաև բացատրել է, որ երկու օր առաջ Սանասարն իր մոտ էր եկել մի պլանշետով, Աշոտից հետաքրքրվել է, թե նա արդյոք այդ պահին ևս Սանասարի հետ էր, թե՝ոչ, այդ պլանշետի մասին գիտի, թե՝ ոչ, ապա առաջարկել է նրան շուտ գնալ և պլանշետում հիշեցված այդ

նկարները ջնջել, որից հետո Աշոտը դուրս է եկել և հեռացել:
Մեղադրողի հարցին ի պատասխան՝ նշեց, որ Սանասարն իրեղեն ապացույց ճանաչված առարկան իրեն է ցուցադրել, քանի որ նախ՝ իրեն վստահել է՝ որպես մարտական ուղի անցած ընկերոջ, բացի այդ՝ ինքն եղել է ՊԲ հրամանատարը, եզակի մաս-նագետներից մեկն, ով ,Իգլա, ԶՀՀ կոմպլեքսը, ոչ միայն տեսել, այլ անձամբ օգտագործել է, կարող է վստահաբար պնդել, որ դրա գործարանային արկղում տեղավորված այդ կոմպլեքսը բաղկացած է երեք հրթիռներից:
Նշեց նաև, որ Սանասարին տախտակի գործով ուղարկել էր Վրաստան, որ պայմանավորվեր այն ձեռք բերելու հարցով, նրան այդ նպատակով պետք է կանխավճար տար: 45.000 խոսակցություն վերաբերում է տախտակի գործի մասին, դրանից 10.000 ԱՄՆ դոլարի չափով կանխավճար պետք է տար, որ տախտակի գործը սկսվեր: Ընդունեց, որ իր շահագործած բջջային հեռախոսահամարների բոլոր գաղտնալսումներում խոսում է ինքը, սակայն իր հեռախոսազրույցների բովանդակությունը մեղադրող կողմը սխալ է մեկնաբանել:
Ամբաստանյալ Սանասար Գաբրիելյանի ցուցմունքների ստուգման, այլ ապացույցների հետ համադրման և գնահատման արդյունքներով արժևորված փաստական տվյալներով. Այսպես, առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս ամբաստանյալ Սանասար Գաբրիելյանն իրեն մեղավոր չճանաչեց, հայտնեց, որ ,Իգլա, տեսակի դյուրակիր զենքաիրթիռային համակարգ ձեռք բերելու մտահաղացումը իրենն էր, ցանկացել է այն ձեռք բերել բանակին նվիրելու նպատակով: Այդ մտադրությունն իր մոտ առաջացել է 2016թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում: Զենքը գտնելու հարցում օգնելու խնդրանքով դիմել է Արմեն Պողոսյանին՝ Ժորիկին: Ապրիլյան պատերազմի ժամանակ, երբ գտնվում էր Սիբիրում, իրեն է զանգահարել գեներալ Գագիկ Մելքոնյանը, հայտնել, որ իր օգնության կարիքն ունեն: Վերադարձել է իրենց գյուղ, հավաքել տղաներին՝ ԼՂՀ մեկնելու և դիրքերում հերթափոխն ընդունելու նպատակով: Ամսի 24-ին իրենց տեղեկացրել են, որ այլևս իրենց աջակցության անհրաժեշտությունը չկա, մարտական դիրքերից իջել են, վերադարձել ՀՀ-ն: Այդ ժամանակ Ժորիկը իրեն տեղեկացրել է, որ պարսիկներ են եկել ականազերծում կատարելու հարցով, խնդրել է իր աջակցությունը տվյալ գործողությունը իրականացնելու համար ԼՂՀ վարչապետից թույլտվություն ստանալու հարցում: Զանգահարել և պայմանավորվել է վարչապետի հետ, այցելել են նրան, որտեղից դուրս գալով՝ անցել են իր գումարտակի մոտով: Զրույցի ընթացքում Ժորիկին տեղեկացրել է, թե ժամանակին Բելառուսից ինչ քանակի զենքեր է տեղափոխել հայոց բանակի համար և հայտնել, որ եթե լավ վիճակում գտնվող զենք կամ զինամթերք լինի, իրեն տեղեկացնի, քանի որ տվյալ պահին ևս մտադրություն ունի գնել այն և նվիրաբերել իրենց բանակին:
2016թ. սեպտեմբերին Ժորիկը հայտնել է, որ Հրաչյա Մայիլյանը Վրաստանում զենքերի տեղ գիտի և վերջինիս ավտոմեքենայով ուղևորվել են Վրաստան: Այնտեղ հասել են գիշերը, սակայն ինչ-որ մեկի առողջական վիճակի վատթարացման պատճառով զենք գնելը չի հաջողվել: Դրանից հետո Հրաչյա Մայիլյանն իրեն հայտնել է, որ ,Իգլա, տեսակի զենք են վաճառում և դեկտեմբերի 30-ին գնացել են այն գնելու: Այդ ընթացքում Ժորիկի միջոցով, որպես պարտք, Հրաչյա Մայիլյանին տվել է 1.000 ԱՄՆ դոլար գումար՝ ամանորյա ծախսերի հետ կապված գնումներ կատարելու համար:
Արմեն Պողոսյանն իրեն հայտնել է, որ Հրաչյա Մայիլյանը 50.000 ԱՄՆ դոլարով վաճառվում է ,Իգլա, տեսակի զենք, սակայն այդ կամ այլ զենք գնելու մտադրության մասին Սամվել Բաբայանին երբևէ չի հայտնել և զենք ձեռք բերելու պայմանավորվածություն նրա հետ չեն ունեցել:
2017թ. մարտի 12-ին Ա.Պողոսյանի հետ գտնվել են սրճարանում, երբ նրանց է միացել Հրաչյա Մայիլյանը և հայտնել, որ Վրաստանից զենք է բերել: Արմեն Պողոսյանին առաջարկել է, որ այդ զենքը պլանշետով նկարվի և տրվի իրեն: Այն հարցին, թե ինչու է լուսանկարների մեջ պատկերված խողովակի վրա դրված եղել ,ՕՐՕ, դաշինքի լուսանկարը, պարզաբանեց, որ այդ լուսանկարը խողովակի վրա դնելու և լուսանկարելու գաղափարն իրենն էր, որով փորձել է հավաստիանալ, որ

տվյալ զենքն իրականում առկա է:
Դրանից հետո, Սամվել Բաբայանի հետ նախապես համաձայնեցնելով այդ հարցը, պլանշետով վերոնշյալ ,Իգլա, զենքի լուսանկարները ցուցադրել է նրան՝ ցանկանալով նրանից, որպես այդ հարցում մասնագետի, խորհուրդ ստանալ այդ զենքի աշխա-տունակության վերաբերյալ, ընդ որում՝ նման խնդրանքով դիմելն եղել է իր նախաձեռնությունը: Ս.Բաբայանը, տեսնելով լուսանկարները, հայտնել է, որ դա զենք չէ, այլ ,լոմ, է, այսինքն՝ օգտագործման համար ոչ պիտանի առարկա, պարզապես խողովակ է: Բաբայանի հետ ունեցած այդ զրույցից ժամանակ վերջինս իրեն հայտնել է, որ նշված իրը դեն չնետի, այլ դնի արկղի մեջ և տա սպաներից որևէ մեկին՝ հետագայում ինչ-որ հարցում անհրաժեշտ լինելու պատճառաբանությամբ: Այնուհետև, դուրս գալով Բաբայանի աշխատասենյակից և վերջինիցս տեղեկանալով, որ նշված ապրանքը, որպես զենք, չի կարող օգտագործվել, զանգահարել է Ժորիկին՝ հայտնելով, որ ,Իգլան, պետք է բաղկացած լիներ երեք մասից: Նշեց նաև, որ նախքան սույն քրեական գործ հարուցվելը չգիտեր, որ նշված զենքի մասերը գտնվում էին Հրաչյայի մոտ:
Այն հարցին, թե Սամվել Բաբայանի հետ գումար ստանալու կապակցությամբ հեռախո-սային ինչ խոսակցություն է ունեցել, գործով ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը հայտնեց, որ Սիբիրում ուներ մեծ գործարաններ, իսկ Բաբայանը ունեցել է կազմակերպություն, Բաբայանին մատակարարել է տախտակ և այդ գումարային խոսակցությունը կապված էր նշված հանգամանքի հետ/թեև ամբաստանյալ Ս.Բաբայանը հիշատակում էր Ս.Գաբրիելյանի միջոցով Վրաստանից տախտակ ձեռք բերելու վերաբերյալ զրույց ունենալու մասին/:
Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրա-պարկված և հետազոտված նախաքննական ցուցմունքների համաձայն՝ ՌԴ Կրասնոյարսկի մարզում զբաղվել է փայտամշակման գործով: 2007 թվականից պարբերաբար մեկնել է Չուկա և ամռան ամիսներին վերադարձել ՀՀ: 1988 թվականից մինչև 2007 թվականը ծառայել է ՀՀ զինված ուժերում, զորացրվել է ՀՀ ՊՆ համակարգից փոխգնդապետի կոչումով և անցել թոշակի: Մասնակցել է արցախյան պատերազմին, մարտական ընկերների թվում են եղել ինչպես ԼՂՀ և ՀՀ պաշտպանության նախկին նախարարները: Երկար տարիներ օգտա-գործել է իր անվամբ գրանցված 098-504762 հեռախոսահամարը, այլ հեռախոսահամարներ չի օգտագործել:
2016 թվականի ապրիլյան պատերազմի ժամանակ անմիջապես վերադարձել է Հայաստան, մեկնել է ԼՂՀ՝ պաշտպանական մարտերին մասնակցելու և հանդիպել մարտական ընկերներին: Եղել է դիրքերում, որից հետո ղեկավարության ցուցումով իջել է հենակետ: Բանակին օգնելու համար որոշել է հայթայթել տարբեր տեսակի զենք և ռազմամթերք՝ ԼՂՀ տեղափոխելու համար: Այդ հարցով դիմել է Արմեն Պողոսյանին, որին կենցաղում Ժորա են անվանել, ով պատրաստակամություն է հայտնել հնարավորության սահմաններում իրեն աջակցել: Կոնկրետ զենքի կամ ռազմամթերքի անվանում չի տվել, սակայն առաջարկել է զբաղվել այդ հարցով: Ռազմամթերքը ցանկացել է գնել իր անձնական միջոցներով, քանի որ ակնկալում էր ստանալ որոշակի ֆինանսական միջոցներ՝ գոյացած ՌԴ Մոսկվա քաղաքում իրեն պատկանող անասնապահական համալիրը վաճառելու արդյունքում: Նշված գործընթացով զբաղվել են իր փաստաբանները, քանի որ վաճառքից ստացված գումարը, որը կազմել է մոտ 4.000.000 ԱՄՆ դոլար, այդպես էլ չի ստացել: Ժորայի հետ ծանոթացել է մեկ տարի առաջ, նրա հետ պայմանավորվածություն է ունեցել ԼՂՀ-ում ականապատված տարածքները վնասազերծելու վերաբերյալ: Ժորան ՀՀ հրավիրել է պարսիկ մասնագետների և ինքը վերջիններիս ուղեկցել է ԼՂՀ վարչապետի մոտ և ծանոթացրել նրանց: Պարսիկ մասնագետները պատրաստակամություն են հայտնել մաքրել ականապատված տարածքները, որից հետո այնտեղ զբաղվել անասնապահությամբ, սակայն վերջնական որոշում չի կայացվել:
Դեռևս 2016թ. մայիսից մտադրվել է իր նյութական միջոցների հաշվին զենք և/կամ ռազմամթերք ձեռք բերել հայոց բանակին նվիրաբերելու համար, միգուցե այդ նպատակն իրագործելու համար ընտրել է սխալ ուղի և անլուրջ մարդկանց՝ Արմեն Պողոսյանին և Հրաչյա Մայիլյանին: Ժորայի

հետ ունեցած խոսակցությունների ժամանակ նրան ասել է, որ զենք և զինամթերք կարող են գտնել նաև Վրաստանում, վերջինս խոստացել է հետաքրքրվել և տեղեկացնել այդ մասին: Ժորայի միջոցով սեպտեմբեր ամսին ծանոթացել է Վաղարշապատ քաղաքի բնակիչ Հրաչի /ըստ դատաքննության տվյալների՝ Հրաչյա Մայիլյանի/ հետ: Հանդիպել են պատահական, Ժորան Հրաչին ներկայացրել է որպես ընկեր: Խոսակցության ժամանակ Հրաչը հայտնել է Թբիլիսի մեկնելու մտադրության մասին և առաջարկել է միասին գնալ, որին համաձայնել են: Թբիլիսի քաղաքում ինքն ու Ժորան առանձին են ժամանակ անցկացրել, իսկ Հրաչը զբաղվել է իր գործերով: Դա եղել է 2016 թվականի սեպտեմբեր ամսին, որից հետո մի քանի անգամ Ժորայի և Հրաչի հետ միասին մեկնել են Թբիլիսի, որտեղ ինքն այցելել է խաղատուն, իսկ նրանք զբաղվել են անձնական գործերով: Մի օր Ժորան իրեն տեղեկացրել է, որ Վրաստանի Ցխինվալի քաղաքում գտել է ,Իգլա, տեսակի հրթիռ: Ինքն ասել է, որ այդ հարցը պետք է համաձայնեցնի ՀՀ ՊՆ ղեկավարության հետ՝ այն մաքսային սահմանով տեղափոխելու համար, սակայն նշել է, ար կգնի այն կոմպլեկտի ամբողջական, այսինքն՝ 3 հատ հրթիռներից բաղկացած լինելու դեպքում: Ժորան ասել է, որ լրացուցիչ կհայտնի այդ հանգամանքի մասին, իսկ ինքը տեղեկացրել է, որ պատրաստ է դրա համար վճարել 50.000 ԱՄՆ դոլար գումար՝ իմանալով հանդերձ, որ ամբողջական կոմպլեկտի արժեքը գերազանցում է 200.000 ԱՄՆ դոլարը: Ժորային ասել է, որ իրեն հարկավոր է հրթիռի ամբողջական կոմպլեկտն իր արկղով, սակայն առաջարկել է դրանով չսահմանափակվել, քանի որ իրեն հետաքրքրել է նաև այլ զինամթերք: Հայտնել է նաև, որ իր միջոցներով ,Իգլա, տեսակի հրթիռ գնելու դեպքում այն նվիրելու է ՀՀ ՊՆ-ին՝ ղեկավարության թույլտվությամբ: Դրանից հետո՝ 2017թ. մարտի 12-ին, Հրաչը, սրճարանում իրեն և Ժորային հանդիպելով, ասել է, որ կա ,Իգլա, տեսակի հրթիռ՝ 50.000 ԱՄՆ դոլարով, ինքը պատասխանել է, որ անհրաժեշտ է այն տեսնել՝ պիտանելիության և ամբողջականության մեջ համոզվելու համար: Որոշ ժամանակ անց, կոնկրետ օրը չի տպավորվել իր հիշողության մեջ, Ժորան իրեն բերել է պլանշետ և ցույց է տվել ,Իգլա, տեսակի հրթիռի լուսանկարը: ,ՕՐՕ, դաշինքի նախընտրական բացիկն այդ նկարի մեջ դնելու առաջարկն իրենն էր, այդ կերպ փորձել է փորձել է հավաստիանալ, որ նկարն իսկական է և ոչ թե ներբեռնվել էր համացանցից: Տեսնելով, որ ռազմամթերքն ամբողջական չէ, առանց արձակման մեխանիզմի է՝ Ժորային հայտնել է այդ մասին՝ նշելով, որ պատվիրել է 3 հատ հրթիռներից բաղկացած ամբողջական կոմպլեկտ և հրաժարվել է վճարել մեկ հրթիռի համար՝ պատճառաբանելով, որ դա չի կարող պիտանի լինել ՀՀ զինված ուժերին: Սակայն վերջնականապես համոզվելու համար որոշել է լուսանկարը ցույց տալ իր մարտական ընկեր Սամվել Բաբայանին: Ժորային հայտնել է, որ անհրաժեշտ է հրթիռի լուսանկարը, այն իրեն բերել են պլանշետով: Հստակ օրը հիշողության մեջ չի տպավորվել, սակայն Ժորայի հետ գնացել են Սամվել Բաբայանի նախընտրական շտաբ, որը գտնվում էր Երևան քաղաքում, միայնակ հանդիպել է Սամվել Բաբայանին, ում, որպես մասնագետի, ցույց է տվել հրթիռի լուսանկարը: Ժորային չի ասել, թե ու՞մ է լուսանկարը ցույց տալու: Տեսնելով Արմեն Պողոսյանի կողմից բերած և իրեն հանձնած պլանշետային հեռախոսում ,Իգլա, տեսակի զենիթահրթիռային համալիրի լուսանկարը՝ Բաբայանը բացատրել է դրա թերությունները, հայտնել է, որ այն պիտանի չէ և որևէ արժեք չի ներկայացնում, սակայն, այնուամենայնիվ, իրեն խորհուրդ է տվել տեղադրել այն արկղի մեջ, տանել և թաղել ԼՂՀ Նարիշտար գյուղում: Դուրս գալով շտաբից՝ Ժորային ասել է, որ այդ հրթիռը իրեն այլևս չի հետաքրքրում և այդ հարցով իրեն այլևս չդիմի, այդ խոսքերը փոխանցի նաև Հրաչին: Այդ ժամանակ Ժորան ասել է, որ Հրաչը ծախս է արել այդ հրթիռը գտնելուց և ինքը պետք է վճարի նրան 4.000 ԱՄՆ դոլար գումար, ինչին պատասխանել է, որ ապրանքն իր ուզածը չէ, դրա համար չի վճարելու: Դրանից հետո Հրաչի հետ է հեռախոսազրույց ունեցել, որի ժամանակ վերջինս ասել է, որ գումար է ծախսել և պահանջել է 4.000 ԱՄՆ դոլարը, ինքը պատասխանել է, որ հրթիռը գնելու ցանկություն չունի, դա իրեն այլևս չի հետաքրքրում և նույնիսկ նրանց խորհուրդ է տվել դրանով չզբաղվել: Անձամբ ,Իգլա, տեսակի հրթիռը չի տեսել, սակայն Հրաչը տեղեկացրել է, որ այն

Հայաստանում է և ցանկության դեպքում կարող է իրեն ցուցադրել: Քանի որ լուսանկարով համոզվել է, որ այն ամբողջական չէ, ցանկություն չի ունեցել անձամբ տեսնելու: Ինքը տեղյակ չէր, թե ,Իգլա, տեսակի հրթիռը որտեղ է պահվել, իսկ ՀՀ զինված ուժերի համար հրթիռ ձեռք բերելու մտադրության մասին Սամվել Բաբայանին չի հայտնել, այն ցանկանում էր գնել իր ֆինանսական միջոցներով, հրթիռի համար Սամվել Բաբայանը չէր վճարելու, իսկ ներքին դիտման արդյունքներով իր և Ս.Բաբայանի միջև արձանագրված զրույցի ժամանակ նրանից գումար է խնդրել իրենց շտաբի աշխատանքները կազմակերպելու համար: Միաժամանակ, Սամվել Բաբայանի խնդրանքը չմերժելու համար որոշել է ձևականորեն գնալ Նարիշտար գյուղ և այնտեղ լուսանկարվել՝ Բաբայանի համոզելու համար, որ նրա խնդրանքը կատարել է: Դրա համար զանգահարել է ընկերոջը՝ Աշոտ Շուշանյանին և առաջարկել է Ղարաբաղ գնալ, նպատակը չի պարզաբանել, իսկ երբ 2017թ. մարտի 20-ին իր ավտոմեքենայով շարժվել են դեպի Ղարաբաղ՝ առանց այդ ռազմամթերքի, իրենց կանգնեցրել են ոստիկանության աշխատա-կիցները և ստուգել են ավտոմեքենան:

2.1 Օրինականացման ենթակա 5.000 եվրո գումարի նախապես հափշտակված լինելու դեպքի ստուգում և հաստատում.

Վերոնշյալ գումարի՝ նախապես հափշտակված լինելու փաստը Դատարանը հաստատված է համարում հետևյալ ապացույցների համադրման և գնահատման արդյունքներով.
Փաթեթ ներկայացնելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ գործով ամբաստանյալ Դավիթ Հարությունյանը 2016թ. սեպտեմբերի 20-ին ,Ֆոլսվագեն Զետտա, մակնիշի 35 OP 756 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահից վարույթն իրականացրած մարմնին է ներկայացրել փաթեթ, որում առկա էին 50 եվրո անվանական արժեքով թվով 100 ներկոտված թղթադրամներ: Դ.Հարությունյանը հայտարարել է, որ փաթեթը վերցրել է 2016թ. սեպտեմբերի 20-ին Երևանի Ֆուչիկի 1-ին նրբանցքի 4-րդ տան հարակից տարածքից՝ Գոռից, որն ուղարկել էր Մոսկվա քաղաքում բնակվող ծանոթներից Սարգիսը, որի հեռախոսահամարը և կոորդինատները չունի:
Իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված՝ գործով ամբաստանյալ Դավիթ Հարությունյանի կողմից 2016թ. սեպտեմբերի 20-ին ներկայացված՝ ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկված 50 եվրո անվանական արժեքով տարբեր սերիաների և համարների թվով 100 թղթադրամների առկայությամբ և դրանք Դատարանում զննելու արդյունքներով (արձանագրությամբ):
Իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված՝ գործով ամբաստանյալ Ժորա Զաքարյանի տան խուզարկությամբ 2016թ. սեպտեմբերի 21-ին հայտնաբերված ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկված 2 հատ 20 եվրո և մեկ հատ 50 եվրո անվանական արժեքներով թղթադրամների առկայությամբ և դրանք Դատարանում զննելու արդյունքներով (արձանագրությամբ):
Քննչական փորձարարություն կատարելու վերաբերյալ արձանագրությամբ, համաձայն որի՝ 2017թ. հուլիսի 7-ին կատարված այդ քննչական գործողության ժամանակ գործով ամբաստանյալ Կարեն Քոչարյանը մատնացույց է արել Երևանի Կասյան 5 հասցեով գործող տարադրամի փոխանակման այն կետը՝ հայտարարելով, որ 2016 թվականի օգոստոսին այդ կետ է ստուգման համար ներկայացրել Սամվել Բաբայանից նախապես ստացած, ներկոտված 20 եվրո անվանական արժեքով թղթադրամը՝ հավաստիանալով դրա իսկության մեջ: Քննչական փորձարարության կատարման ժամանակ կիրառվել է լուսանկարահանում բջջային հեռախոսով, լուսանկարչական հավելվածը կցվել է վերոնշյալ արձանագրությանը:
ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով կատարված հարցումների արդյունքներով ստացված գրություններով, մասնավորապես՝

- 2017թ. հունվարի 27-ի №9/A-245-CF1/208/139/16 գրությամբ, համաձայն որի՝ ՀՀ-ում հայտնաբերված և ստուգման համար նրանց ներկայացված գունավորված եվրո թղթադրամների վրա առկա են Եվրոպական Կենտրոնական Բանկի 3 տարբեր նախագահների ստորագրությունները, հետևաբար՝ դրանք ,գողացվել են տարբեր ժամանակներում,: Իտալիայի իրավասու մարմիններին փոխանցված X սերիայի 09178737887 համարի 50 եվրո արժողությամբ թղթադրամի նախնական փորձաքննությամբ հաստատվել է, որ թղթադրամը գողացվել է պաշտպանիչ ներկանյութեր պարունակող բանկոմատից, թղթադրամի մակերեսի վրա առկա ներկանյութի բաշխվածությունից կարելի է պնդել, որ նշված թղթադրամը հորիզոնական դիրքով տեղադրված է եղել կոնտեյների մեջ: Թղթադրամը երեք տարբեր ուղղություններից ներկող կարմիր գույնը և դրա վրա առկա ներկի քանակը վկայում է այն մասին, որ դա բնորոշ է բանկոմատներում անվտանգության նպատակով տեղադրված ներկերին: Թղթադրամների վրա բանկոմատներում անվտանգութ-յան նպատակով կիրառվող ներկանյութերի առկայությունը փաստում է, որ այդ բանկոմատները հանցագործների կողմից հարձակման են ենթարկվել: Եթե թղթադրամը պատահաբար է ներկոտվել, ապա այն շրջանառության մեջ դնելու միակ տարբերակը ֆինանսական հաստատության աշխատակիցների կամ ընկերությունների կողմից կատար-վող ,ներքին գողություն, է, որը հազվադեպ հանդիպող երևույթ է: ,Հատուկ ներկանյութերով ներկոտված թղթադրամների առկայությունը ցույց է տալիս, որ դրանք գողացվել են այս կամ այն եղանակով,:
- 2017թ. փետրվարի 2-ի թիվ 9/A-317-CF1/208/139/16 գրությամբ, համաձայն որի՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից ,Ինտերպոլ,-ի գլխավոր քարտուղարություն փոխանցված 50 եվրո արժողությամբ X09178737887 թղթադրամը փոխանցվել է իտալական ,MIB, ընկերությանը, որը հաստատել է, որ այդ թղթադրամի վրա առկա ներկն օգտագործվել է իրենց համակարգերի կողմից, ինչպես նաև նշել են, որ հիշյալ թղթադրամը ներկից քիմիական միջամտությամբ մաքրման փորձեր են արվել: Միաժամանակ տեղեկացրել են, որ ,MIB, ընկերության համակարգերում օգտագործված կարմիր ներկն արտադրվել է շվեյցարական ,SICPA, ընկերության կողմից:
- 2017թ. մարտի 17-ի թիվ 9/A-761-CF1/208/139/16 գրությամբ, համաձայն որի՝ իտալական ,MIB, ընկերությունը հաստատել է, որ 50 եվրո արժողությամբ X09178737887 թղթադրամի փորձաքննության արդյունքում փորձագետների կողմից այդ թղթադրամի վրա հայտնաբերված հատկանիշները համապատասխանում են ներկանյութերի 2 տարբեր խմբաքանակների, հաճախորդներին են մատակարարվել տարբեր ժամանակահատվածում: Առաջին խմբաքանակը՝ 2NS33012, 2010 թվականին իտալական ,MIB, կողմից մատակարարվել է գերմանական ,NCR GmBH, ընկերությանը, իսկ երկրորդը՝ 2NS33053-ը 2015 թվականին մատակարարվել է ֆրանսիական ,Credit Mutuel-Euro information, ընկերությանը: 2 տարբեր խմբաքանակները միևնույն թղթադրամի վրա, հա-վանաբար, հայտնվել են քիմիական մաքրող լուծույթի միջոցով մաքրման փորձի դեպքում:
- 2017թ. ապրիլի 3-ի թիվ 9/A-896-CF1/208/139/16 գրությամբ, որին կից ներկայացվել է շվեյցարական ,SICPA, ընկերության կողմից 10 ներկոտված թղթադրամների հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը (ըստ էության փորձագիտական եզրակացությունը), համաձայն որի՝ դրանց վրա առկա ներկի հետքերի ընդհանուր վիճակը, չափսը և բաշխվածությունը համապատասխանում են անվտանգության համար նախա-տեսված ներկանյութեր պարունակող թղթադրամների չեզոքացման համակարգերի գործարկման արդյունքում ներկոտված լինելուն: Բոլոր թղթադրամների վրա առկա են ,SICPA, կարմիր ներկանյութին հատուկ բաղադրատարրեր: Բոլոր 10 թղթադրամների վրա առկա հետքերից կարելի է եզրակացնել, որ դրանք ներկված են նույն խմբաքանակի ներկանյութով: Թիվ 2NS33053 խմբաքանակի ներկը 500 կգ ընդհանուր քաշով 2014թ. նոյեմբերին մատակարարվել է իտալական ,MIB, ընկերությանը: Բացի այդ, վերոնշյալ հետազոտությամբ մասնագետները եզրահանգել են, որ այդ թղթադրամները ներկոտվելուց հետո /փաստորեն՝ մինչև սույն գործով ամբաստանյալ Դավիթ

Հարությունյանի տրամադրության տակ հայտնվելը/ քիմիական նյութի միջոցով ենթարկվել են մաքրման:
ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետ Հր.Սուվարյանի 2017թ. հունիսի 16-ի թիվ 13.06/001326-17 գրությամբ, համաձայն որի՝ ՀՀ-ում գործող բանկերը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ՀՀ դրամով հնամաշ դրամանիշների փոխանակումը, սովորաբար, իրականացնում են անվճար, իսկ արտարժույթի դեպքում սահմանված սակագները տատանվում են 2-ից 5 տոկոսի միջա-կայքում:
Մասնագիտական հատուկ գիտելիքների տիրապետող, որպես փորձագետ ճանաչված Յուրի Ավետիսյանի կազմած դատափաստաթղթաբանական փորձաքննության 2016թ. սեպտեմբերի 21-ի եզրակացությամբ, համաձայն որի՝ փորձաքննությանը ներկայացված եվրո-թղթադրամներն իրենց պատրաստման եղանակով և հիմնական պաշտպանական հատկանիշներով համապատասխանում են եվրո թղթադրամների պատրաստման եղանակին և հիմնական պաշտպանական հատկանիշներին, այսինքն՝ հանդիսանում են Եվրոմիության կողմից թողարկված թղթադրամներ: Ինչ վերաբերում է թղթադրամների վրա առկա մուգ կարմիր գույնի ներկանման նյութին, ապա այն կարող է հանդիսանալ ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակներով օգտագործվող հատուկ ներկ, որն անթույլատրելի գործողություն կատարելու դեպքում վնասվում է՝ ներկոտելով թղթադրամները:
Բնակարանի խուզարկություն կատարելու արձանագրությամբ, համաձայն որի՝ 2016թ. սեպտեմբերի 21-ին ժամը՝ 03.15-ից մինչև 05.20-ն ընկած ժամանակահատվածում գործով ամբաստանյալ Ժորա Զաքարյանի՝ Բուժական 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի 8 հասցեում գտնվող տանը կատարված այդ քննչական գործողության ընթացքում և արդյունքներով հայտնաբերվել և վերցվել են ներկոտված թղթադրամները քիմիական մաքրման ենթարկելու համար նախատեսված նյութեր:
Բնակարանի խուզարկություն կատարելու արձանագրությամբ, համաձայն որի՝ 2016թ. սեպտեմբերի 21-ին ժամը՝ 03.15-ից մինչև 05.00-ն ընկած ժամանակահատվածում գործով ամբաստանյալ Անդրանիկ Քոչարյանի՝ Բուժական 1-ին փողոցի 20 հասցեում գտնվող տանը կատարված այդ քննչական գործողության ընթացքում և արդյունքներով հայտնաբերվել և վերցվել է նաև ներկոտված թղթադրամները քիմիական մաքրման ենթարկելու համար նախատեսված նյութ:
Քիմիական փորձաքննության 2016թ. նոյեմբերի 1-ի թիվ 58213816 եզրակացությամբ, համաձայն որի՝ ամբաստանյալներ Ժորա Զաքարյանի և Անդրանիկ Քոչարյանի առանձնատների խուզարկությամբ հայտնաբերված և փորձաքննությանը ներկայացված նյութերը պիտանի են նպատակային օգտագործման համար և հանդիսանում են՝ ա) նատրիումի հիդրօքսիդի 52%-ոց լուծույթ, բ) սպիտակեցնող և ախտահանող հեղուկ, որում ակտիվ քլորի զանգվածային մասը կազմում է 60գ/լ, գ) ջրի, ացետոնի և իզոպրոպիլ սպիրտի խառնուրդ՝ լաքուներկերի լուծիչ, դ) ույթ սպիրիտ՝ լաքուներկերի լուծիչ, ե) ացետոնի և ջրի խառնուրդ:
Իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված՝ գործով ամբաստանյալներ Ժորա Զաքարյանի և Անդրանիկ Քոչարյանի առանձնատներում կատարված խուզարկությամբ հայտնաբերված և վերցված ներկոտված թղթադրամները քիմիական մաքրման ենթարկելու համար նախատեսված վերոնշյալ նյութերի առկայությամբ և դրանք Դատարանում զննելու արդյունքներով (արձանագրությամբ):

2.2 Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման դեպքի առկայության, դրան ամբաստանյալների առնչության, նրանց մեղավորության, արարքներում քրեական օրենքով նախա-տեսված հատկանիշների առկայության ստուգում և հաստատում.

Վերոնշյալ հանգամանքների առկայությունը Դատարանը հաստատված է համարում հետևյալ ապացույցների համադրման և գնահատման արդյունքներով.
Վկա Գոռ Շակոյանի դատաքննական և հրապարակված և հետազոտված

նախաքննական ցուցմունքներով, համաձայն որոնց՝ վերջինիս հիմնադրած ,Գոռ Շակոյան, Ա/Ձ-ն իրականացրել է Երևանից դեպի Մոսկվա քաղաք և հետադարձ ուղղություններով ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ: Դավիթ Հարությունյանի հետ ծանոթ է շուրջ 2 տարի, մտերիմ են: 2016 թվականի սեպտեմբերի 16-ին Դավիթը զանգել և ասել է, որ ծանոթներից մեկի համար անհրաժեշտ է Մոսկվայից Հայաստան տեղափոխել 5.000 եվրո գումար, որին համաձայնել է: Դավիթը զգուշացրել է, որ նշված գումարի վրա ինչ-որ ,լաքաներ, կան, ինչին պատասխանել է, որ եթե փողը նորմալ է, այն կբերեն: Դավիթը վստահեցրել է, որ դրանք նորմալ փողեր են, կեղծ չեն, իսկ թե ինչի հետևանքով են առաջացել այդ ,լաքաները,, չի մանրամասնել: Լսելով, որ դրանք կեղծ գումարներ չեն՝ մնացած հանգամանքներին այլևս ուշադրություն չի դարձրել: Դավիթին է փոխանցել իրենց դիսպետչերներից Արայի՝ +79688588868 հեռախոսահամարը, որ ՌԴ-ում գտնվող Դավիթի ծանոթները կապվեն նրա հետ և հանձնեն գումարը՝ այն Հայաստան բերելու համար: Դավիթին հայտնել է, որ մոտակա օրերին Հայաստան ավտոբուս է գալու և հասնելուց հետո ավտոբուսի վարորդից կվերցնի գումարը և կփոխանցի նրան: Դավիթի ծանոթները նույն կամ հաջորդ օրը Արային են տվել նշված 5.000 եվրոն՝ փակված վիճակում: Այդ ժամանակ էլ Արային հայտնել են դրանց վրա ինչ-որ ,լաքաների, առկայության մասին՝ միաժամանակ նշելով, որ դա նորմալ փող է: Արան նշված գումարը տվել է ,SETRA, ավտոբուսի վարորդ Արմենին՝ Հայաստան տեղափոխելու և իրեն հանձնելու համար: 2016թ. սեպտեմբերի 20-ին ավտոբուսը հասել է Հայաստան, որից հետո ինքը վարորդ Արմենից վերցրել է փաթեթի մեջ առկա 5.000 եվրո գումարը, որն էլ այնուհետև փոխանցել է Դավիթին: Փաթեթի պարունա-կությունը չի ուսումնասիրել, սակայն նույն օրը՝ որոշ ժամանակ անց, բերման է ենթարկվել ՀՀ ԱԱԾ:

Վկա Արմեն Հակոբյանի ցուցմունքներով, ով Դատարանում հայտնեց, որ մոտ 2 տարի աշխատել է ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունում՝ որպես վարորդ, ընկերության ավտոբուսներով կատարել է ուղևորափոխադրումներ Երևան-Մոսկվա, Երևան-Ուֆա, Երևան - Ադլեր և հետադարձ ուղղություններով: Հիմնականում շահագործել է ընկերությանը պատկանող ,Սետրա, մակնիշի, 94 VQ 444 համարանիշի ավտոբուսը: Ընկերությունն իր գործունեությունը ծավալել է Երևան քաղաքի Մարգարյան 23/6 հասցեում, երևանյան գրասենյակի դիսպետչեր հանդիսացել է Գոռ Շակոյանը, իսկ մոսկովյան գրասենյակինը՝ Արա Գրիգորյանը: 2016թ. սեպտեմբերի 14-ին ,Սետրա, մակնիշի, 94 VQQ 444 համարանիշի ավտոբուսով ուղևորներ են տեղափոխել Մոսկվա քաղաք, ավտոբուսը վարել են ինքն ու վարորդ Գենադի Զոհրաբյանը՝ ճանապարհին միմյանց փոխարինելով: 2016թ. սեպտեմբերի 18-ին Մոսկվա քաղաքում դիսպետչեր Արան Հայաստան տեղափոխելու համար իրեն է փոխանցել սպիտակ ծրար՝ փաթեթավորված կպչուն ժապավենով, տեղեկացրել է, որ ծրարի մեջ ինչ-որ փաստաթղթեր են, մանրամաս-նություններ չի հայտնել, միայն նշել է, որ Երևանում իրենից այդ ծրարը կվերցնեն: Այդ ծրարը դրել է բաճկոնի ծոցագրպանում և ուղևորվել Հայաստան: Երևան հասնելուց հետո իրեն է մոտեցել դիսպետչեր Գոռը և հարցրել, թե որտեղ է Արայի տված ծրարը, որից հետո բաճկոնի գրպանից ծրարը հանել և փոխանցել է Գոռին: Տեղեկություն չի ունեցել, թե ծրարում ինչ էր, ըստ Արայի խոսքերի՝ դրա մեջ ինչ-որ փաստաթղթեր էին, այն տեղափոխելու համար իրեն չեն վարձատրել:

Վկա Համիկ Իխտիարյանի ցուցմունքներով, ով Դատարանում հայտնեց, իսկ հակասական նախաքննական ցուցմունքը հրապարակելուց հետո պնդեց, որ աշխատում է ,Փարվանա, ՈՒՎԿ ,Արաքս, մասնաճյուղում՝ որպես կառավարիչ: Մանկուց ծանոթ է Դավիթ Հարությունյանին, վերջինս իր ընկերն է: 2016 թվականի սեպտեմբերին, սովորականի պես, հանդիպել է Դավթին և որի ընթացքում վերջինս իրեն ցույց է տվել 20 եվրո արժեքով հնամաշ, գունավորված թղթադրամ՝ ասելով, որ այն տվել է նրա մտերիմներից մեկը: Դավիթն այդ հարցով իրեն դիմել է՝ տեղյակ լինելով իր աշխատանքի բնույթից և մասնագիտական փորձի առկայությունից: Ուսումնասիրելով Դավիթի ցուցադրած հնամաշ և գունավորված թղթադրամը՝ հայտնել է, որ իր կարծիքով այն կեղծ չէ, սակայն կոնկրետ

իրենց վարկային կազմակերպությունում հնամաշ գումարներ չեն ընդունում, նման գումարներ վերցնում են բանկերը՝ թղթադրամի արժեքից պահելով որոշակի գումար՝ 2-ից 15 տոկոսի սահմաններում: Դավթին ասել է, որ դրա համար չարժե դիմել նույնիսկ ծանոթների, քանի որ այն սահմանված կարգով կարող է բանկում փոխանակել: Դավթին հայտնել է նաև, որ իրեն այդ թեման չի հետաքրքրում, խորհուրդ է տվել այդ թղթադրամը վերադարձնել ծանոթին, ով ցանկության դեպքում կարող է այն հանձնել բանկերում՝ նշելով, որ դրանից ինչ-որ օգուտ ստանալը դժվար կլինի: Այդ խոսակցության ժամանակ նշված թղթադրամը վերադարձրել է Դավթին և այլ անձանց չի ցուցադրել: Թե Դավիթը կոնկրետ ումի՞ց էր այդ թղթադրամը վերցրել, տեղյակ չէ: Նշված թղթադրամը իրացնելու կամ բանկերում փոխանակելու վերաբերյալ որևէ պայմանավորվածություն Դավիթի հետ ձեռք չի բերել:
Դրանից հետո այդ թեմայի շուրջ Դավիթի հետ խոսակցություններ չեն եղել, շարունակել են սովորականի պես շփվել: Որոշ ժամանակ անց իմացել է, որ այդ թղթադրամների առնչությամբ Դավթի նկատմամբ ԱԱԾ-ում գործ է քննվում, այլ մանրամասներին տեղեկացել է մամուլից:
Ընդունեց, որ 2016թ. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 17:50-ին իր 091-777660 հեռախոսա-համարով զրուցել է Դավթի հետ, խոսակցությունը վերաբերել է 4.000-ից 5.000 եվրո ներկոտված թղթադրամներին: Դավիթը ցանկացել է, որ ինքն ինչ-որ կերպ նրան օգնի, սակայն հրաժարվել է, քանի որ այդ թեման իրեն չէր հետաքրքրում, ուղղակի չի ցանկացել կոպիտ կերպով նրան մերժել, դրա համար էլ տվել է խուսափողական պատասխաններ:
Վկա Վրեժ Առաքելյանի ցուցմունքներով, ով Դատարանում հայտնեց, որ Դավիթ Հարությունյանի հետ ծանոթացել է 2007 թվականին աշխատանքի բերումով, ընկերացել են: 2016 թվականի սեպտեմբերին հանդիպել է Դավթին, ով խոսակցության ընթացքում ցույց է տվել մեկ հատ 20 եվրո արժեքով հնամաշ և թանաքոտված թղթադրամ: Դավիթն ասել է, որ այն իսկական թղթադրամ է, կեղծ չէ և վերցրել է իր մտերիմներից մեկից:
Ընդհանուր խոսել են հնամաշ գումարները բանկեր հանձնելու և պահվող տոկոսի վերաբերյալ, ինքը հայտնել է, որ սովորաբար բանկերը հնամաշ գումար վերցնելուց պահում են միջինը 7-ից 8 տոկոսը: Այդ խոսակցության ընթացքում Դավթին ասել է, որ խնդիր չկա, թղթադրամի տերը կարող է այն տանել բանկ և հանձնել, ինչին Դավիթը պատասխանել է, որ միգուցե այդ հնամաշ թղթադրամների հանձնման դեպքում տոկոսների տարբերությունից հնարավոր լինի գումար վաստակել: Դրանից հետո Դավիթը վերցրել է թղթադրամը, որը հետագայում այլևս չի տեսել:
Խոստացել է հետաքրքրվել փոխանակման տարբերակների վերաբերյալ, սակայն այդպես էլ ոչ ոքի չի դիմել՝ զբաղված լինելու պատճառով:
Տեղեկացել է, որ Դավիթը նշված թղթադրամի մասին հայտնել է նաև ընդհանուր ընկեր Էդմոնին, քանի որ վերջինս իրենից հետաքրքրվել է, թե ի՞նչ թղթադրամի մասին է խոսքը, արդյոք հնարավո՞ր է այն կեղծ լինի, ինչին պատասխանել է, որ նման կարծիքի չէ: Դավիթի հետ ներկոտված թղթադրամներ գնելու, իրացնելու կամ բանկերում փոխանակելու վերաբերյալ որևէ պայմանավորվածություն չի ունեցել: Դրանից մի քանի օր հետո արդեն հարազատներից իմացել է, որ Դավթի նկատմամբ թղթադրամների հետ կապված գործ է քննվում ԱԱԾ-ում:
Ընդունեց, որ 2016թ. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 17:45-ին իր հեռախոսահամարով զրուցել է Դավթի հետ, խոսակցության ընթացքում Դավիթն ասել է, որ 5.000 եվրո ներկոտված թղթադրամներ է բերելու Հայաստան և այդ կապակցությամբ ցանկություն է հայտնել զանգել Էդոյին, որին ճանաչում էր իր միջոցով: Մինչ այդ Հայաստան 5.000 եվրո տեղափոխելու մասին իրեն չէր հայտնել:
Որպես ապացույց ճանաչված և գործին կցված փաստաթղթերի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումների հիման վրա Սամվել Բաբայանի նկատմամբ ՀՀ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների իրականացրած ,Հեռախոսային խոսակցությունների վերահսկում, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներով և դրանց զննման արձանագրությամբ, մասնավորապես՝

Սամվել Բաբայանի և Կարեն Քոչարյանի միջև 17.06.2016թ, ժամը 23:38-ին

տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-874-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1399-16__2016-06-17_23-38-20_37494390073_in_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Ալո, զբաղված եք պարոն Բաբայան:
Սամվել Բաբայան՝ Չէ:
Կարեն Քոչարյան՝ Ես էտա նոր բան արեցի պրծա, չէ բան ասում չէ, բայց ստեղ կարելի ա աշխատել:
Սամվել Բաբայան՝ Ինչ նկատի ունես:
Կարեն Քոչարյան՝ Տարբեր տեղեր էտի հենց էդ ձև մանրել, բան անել, 80 տոկոս /չի լսվում/:
Սամվել Բաբայան՝ Դե տես վաղը:
Կարեն Քոչարյան՝ Հա վաղը մի հատ կհանդիպեմ:
Սամվել Բաբայան՝ Բայց դե էն մի գծով էլ հանդիպի էլի, մաքրող:
Կարեն Քոչարյան՝ էդ ձև բաների տակ իրանք չեն մտնում, բայց կարաս ըստեղ ընդեղ դիմես, ուղղակի բան անես, ինչ-որ մեկը չի վերցնի էլի, որ էդ ձև բան անեն, բայց ձև կա, տարբերակներ կան:
Սամվել Բաբայան՝ … բայց ինչ ի նկատի ունի, ինքը սաղ չի կարա վերցնի քիչ-քիչ թե, ոնց: Անդոն ասեց ինքն էլ ա ինչ որ մեկին ճանաչում, բան արեք տեսեք, եթե:
Կարեն Քոչարյան՝ Մի երկու տեղ տեսնենք ինչ ա:
Սամվել Բաբայան՝ Որ պրոստո բան չանի էլի, կողքից քերեն, ստուգեն հետո նոր:
Կարեն Քոչարյան՝ էտի, էն մաքրվածն էլ ինքը ուրիշ ձևի բան ա հետո իրան անում, հետո վաղը, որ հանդիպեմ կասեմ, դրանք սաղ էտի փորձած ունի:
Սամվել Բաբայան՝ Չէ չհասկացա:
Կարեն Քոչարյան՝ Մաքրվում ա չէ, էս անգամ հոտ ա ընկնում:
Սամվել Բաբայան՝ Չէ, չէ ես տեսել եմ, մաքրած էլ բան էլ: Ք… ա ուտում: Ես քեզ ինչ ասում եմ դու էտ լսի, վաաբշե ոչ մի բան, ինքը չի էլ կարա տաբերի, էդ անձը չի էլ կարա տարբերի, եթե բանը գտան, ասենք նյութը էլի, որով էդ վերև վերցնում ա իրան չվնասելով, ոչ մի բան էլ ոչ օդ, ոչ բան, բանկոմատներում էլ կարաս ուտացնես գնա, հասկացար:
Կարեն Քոչարյան՝ Հասկացա:
Սամվել Բաբայան՝ Իսկ տենց կեղտոտ որ բանկոմատի բերանն էս տալիս, շպրտում ա, կծում ա, կգաս կբացատրեմ, էլի:
Կարեն Քոչարյան՝ Եղավ, եղավ, մի հատ հանդիպեմ:
Սամվել Բաբայան՝ Լավ:

- Սամվել Բաբայանի և Արկադիի միջև 18.06.2016թ, ժամը 12:40-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-874-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1399-16__2016-06-18_12-40-03_37477000075__in__094390073_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Լսում եմ, պարոն Բաբայան, հիմա մի հատ ուրիշ էլ կա, ասում ա իմ մոտ եղել ա, լողզվել ա, մխտռվել ա, բայց մի հատ մարդ կա վարպետն ա Հրազդանում ա, հիմա չգիտեմ գնամ, թե չգնամ, եթե 5-ին է կարող է չհասցնեմ:
Սամվել Բաբայան՝ 5 ժամում չե՞ս կարողանալու:
Կարեն Քոչարյան՝ էդի ասեց երկուսին նոր ստեղ կլինի, թաղում-մաղում ուներ ինչ-որ:
Սամվել Բաբայան՝ Ես քեզ ասեցի, եթե ընդհանուր ա էլի անում, ասա իմաստ չունի:
Կարեն Քոչարյան՝ Չէ, ընդհանուր չի, ասում ա արել իրա մոտ ստացվել ա:
Սամվել Բաբայան՝ Դե ասա, եթե էս մեկը չոտկի անես, ուղարկենք հետ տիրոջը, որ արդեն…
Կարեն Քոչարյան՝ Ասում ա բեր, ես էս մի անկյունը անեմ:
Սամվել Բաբայան՝ Մի անկյունը չրէ, ասա լրիվ արա, եթե կարում ես, որ ուղարկենք էդ մարկդանց որ պաչկա-պաչկա բերել տանք, չգիտեմ ոնց էլի
Կարեն Քոչարյան՝ Դե, թեկուզ լրիվ անի, հիմա ես որ 2-ին էնտեղ լինեմ, կարող ա չհասցնեմ, մինչև էդ պրոցեսը լինի:
Սամվել Բաբայան՝ Չի անելու կողքիդ:

Կարեն Քոչարյան՝ Ասեց, անելու ա, հետ գնամ:
Սամվել Բաբայան՝ Տես, դե կփորձես կասես:
Կարեն Քոչարյան՝ Լավ, դե տեսնեմ՝ ինչ ա, ես հիմա ասեմ, գնում եմ:
Սամվել Բաբայան՝ Հա-հա գնա, դե էդ եթե էն կենդանին ա, որը որ կա, դա քո փրկությունն ա:
Կարեն Քոչարյան՝ Լավ, հեսա կպայմանավորվեմ:
Սամվել Բաբայան՝ Դու իրան ասա, որ դա մի գույն չի:
Կարեն Քոչարյան՝ Ես հասկացա, գիտեմ, Դուք ինձ ասել էիք:
Սամվել Բաբայան՝ Կարա նենց էլ լինի, նենց էլ լինի, մի քիչ շատ լղոզված լինի:

- Սամվել Բաբայանի և Արկադիի միջև 20.06.2016թ, ժամը 15:54-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-874-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1399-16__2016-06-20_15-54-46_37494390073__in__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Ամսի 28-29-ին նոր կլինի ստեղ:
Սամվել Բաբայան՝ Լավ, բա չասեցիր, իրանց, որ ուզում ա խոսի հետը:
Կարեն Քոչարյան՝ Ինչ:
Սամվել Բաբայան՝ Դրանց ասեցիր:
Կարեն Քոչարյան՝ Ես ուրիշ մարդով ճշտեցի, որը ասում ա եթե 28-ին պետք եղավ, կասեմ կպայմանավորվենք կգաք: Բանկի աշխատողին չեմ ասել, իրա հետ մեկը կար շինարարություն ունի թե ինչ:
Սամվել Բաբայան՝ Լավ, դե մի արանքով էդի կբերես, կթողնես:
Կարեն Քոչարյան՝ էդ վերև չտանենք, տանք, վախտը չի՞:
Սամվել Բաբայան՝ Չէ, կբերես կասեմ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 24.08.2016թ, ժամը 15:25-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16_2016-08-24_15-25-16_79660181844__out__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Նայի, առաջին համարը, որ ուղարկել եմ, Վասյայի համարն ա, զանգ ես տալիս, գնում ես 10.000 դոլար ա, զանգես տալիս Տիկոյին, Տիկոյին համարը չունես:
Մարատ Նալբանդյան՝ Հա, չունեմ:
Սամվել Բաբայան՝ Հեսա դա էլ ՍՄՍ-ով կուղարկեմ, զանգ ես տալիս Տիկոյին, ասում ա՝ ումից պետք է գնես, տանում ես՝ 5000 եվրո վերցնում ես, 52 տոկոսը դոլարով հաշված՝ 2900 դոլար, տանում ես տալիս՝ 5000 եվրո վերցնում ես, դրա վրա 100 դոլար ես դնում, տալիս ես ավտոբուսի վարորդին, որպեսզի բերի Կարենին, համարը գիտես, տակի մնացածը ուղարկում ես Կարենին, փոխանցում ես՝ նրա անձնագրով, անուն-ազգանունով:
Մարատ Նալբանդյան՝ Ստացվում ա՝ 5000 ու քանի՞սը պետք է դոլար սարքեմ:
Սամվել Բաբայան՝ Չէ, չէ, 5000 եվրոն ես վերցնում, կեղտոտը:
Մարատ Նալբանդյան՝ էդ Տիկոյին հիմա ինչքան պետք ա տամ 2 ու քանիսը:
Սամվել Բաբայան՝ Հեսա հստակ ասեմ՝ ինչքան պետք ա տաս, 1.12, 2912 դոլար պիտի տաս:
Մարատ Նալբանդյան՝ 2912, 12…
Սամվել Բաբայան՝ Տալիս ես, 5000 վերցնում, դնում ծրարում, տալիս ես վարորդին, խոսում..
Մարատ Նալբանդյան՝ Դրան զանգում եմ, չի պատախանում:
Սամվել Բաբայան՝ Գարիկի միջոցով կարող ես կապնվել, դե տես ոնց ա՝ էտ 100 դոլարն էլ տուր վարորդին, ասա՝ թող էս ապրանքը տեղ հասցնենք, էն երկրորդ համարը՝ 077000075 համարը գրում ես, ասում ես՝ տանի էս համարով զանգի տա, տակի մնացածը ,Յունիստրիմով, ուղարկի Կարենին՝ իրա անուն ազգանունով:
Մարատ Նալբանդյան՝ 7 հազար ա դառնում, հա:
Սամվել Բաբայան՝ Հա: Դե դավայ, արագացրու:
Մարատ Նալբանդյան՝ Հեսա զանգեմ ասեմ, տեսնեմ՝ ինչ ա ասում:

Սամվել Բաբայան՝ Հենց նոր է խոսել իմ հետ, սկզբից ինքը պետք է բերեր, ես ուղարկեի քո վրա, որ ասել եմ տվյալներդ ուղարկի, հետո ասել ա՝ չեմ կարող գալ, էտա ասել եմ՝ Մարատը ըտեղա, թող Մարատ ուղարկեր:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Էդ Տիկոյին էլ որ տենաս, ինքն անընդհատ ինձնից փող ա ուզում, ասա՝ ես իմ գրպանից եմ դրել, ձեռքիս այդքան, հեսա Տիկոյի համարն ուղարկում եմ հենց հիմա: Ցանկանալի է հիսունանոցներ վերցնես, էդ կեղտոտը հիսունանոցներ վերցու, էդ Տիկոյից չէ էլի, ընդեղ ասելու ա՝ ումից, ապրանքի 52 տոկոսն ա անում: Դե եթե պետք լինի կապի մեջ կլինեն ….. Թիվը 2.9 անում:

-Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 24.08.2016թ, ժամը 15:50-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-922-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-08-24_15-50-17_37477000075_out_094300018_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Խոչարյան՝ Պրծա՞ր դասդ, Պոնչ:
Անդրանիկ Քոչարյան՝ Շուտ եմ պրծել:
Կարեն Խոչարյան՝ Գնացիր պառկա՞ր:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա, ժամը վեցին ընդից հելա:
Կարեն Խոչարյան՝ Պոնչ, էն ժորան գնացել ա՞, թե՞ չէ:
Անդրանիկ Քոչարյան՝ Չգիտեմ, Կարեն Քոչարյան՝
Կարեն Խոչարյան՝ Կարաս չէ՞ բայց իմանաս:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա, խի չէ:
Կարեն Խոչարյան՝ Դե իմանաս, արդեն գործ կա, պայմանավորվենք, քյալամները առնենք իրա:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա:
Կարեն Խոչարյան՝ Մի հատ իմացի՝ ստեղա, չէ, ինձ ասա:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա:
Կարեն Խոչարյան՝ Ես կասեմ՝ երբ կգամ, կպայմանավորվենք, էդքան բան:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 24.08.2016թ, ժամը 19:14-ին տե-ղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-08-24_19-14-40_79660181844__in__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Ալո, հա Մարատ:
Մարատ Նալբանդյան՝ Կարում ե՞ս խոսես: Դե, էդ տղեն զանգեց:
Սամվել Բաբայան՝ Կարում ե՞ս առաջինը հիսունանոցները վերցրու, 5 հազարը բերում ա, տալիս ես իրան էդ թիվը՝ ինչ որ ասել եմ, վսյո:
Մարատ Նալբանդյան՝ Էս որ նայեմ, կարող ա բան չհասկանամ, դրանք կարգի՞ն են լինելու:
Սամվել Բաբայան՝ Չէ, դե սպլաշնոյ չի, ասելա՝ մի 50 տոկոսը մաքուր ա:
Մարատ Նալբանդյան՝ Հա, խարաշո:
Սամվել Բաբայան՝ Վերջը վերցրու, էդքանը թող բերի, փողը տուր ու բան արա, ուղարկի:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 24.08.2016թ, ժամը 21:11-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-08-24_21-11-02_79660181844__out__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Մարատ Նալբանդյան՝ Դե, վերցրեցի: Նոր պրծա, մի քիչ ջոկջկեցի, որովհետև շատերի վրա շատ բաներ կար:
Սամվել Բաբայան՝ Դու դրանց հետ որ խոսում ես, որի վրա որ շատ ա, ասա՝ 45 տոկոսով: Ձոգում ե՞ս, ինչ եմ ասում:
Մարատ Նալբանդյան՝ Հա-ա: Սպասի ուզում ես՝ մի հատ զանգ տամ, խոսես իրանց հետ:
Սամվել Բաբայան՝ Ա, դու չե՞ս կարում խոսես, արա:
Մարատ Նալբանդյան՝ Չէ, կարում եմ խոսեմ, պրոստո պտի ջոկջկես, որտև ընդեղ կա, որ շատ ա…

Սամվել Բաբայան՝ Դու իրանց ասա՝ վախտին 52 եք ասել տոկոս, տենց էինք առնում, իսկ որը շատ ա ՝ 45 տոկոսով: Տուր իրանց ասեմ, ասեմ՝ վերցնում ենք, բայց 45 տոկոս ենք տալու:
Մարատ Նալբանդյան՝ Հա: Զոկջկելու ա, տասը բերել ա, ասում ա՝ ջոկեք, վերցրեք:
Սամվել Բաբայան՝ Վերջը: Նորմալ ա, տուր իրան, ես ասեմ, որ տոկոս իջեցրեք, 45-ով վերցնենք:
Մարատ Նալբանդյան՝ Դե սպասի, դուրս եկան, է, հեսա ձայն տամ:
Սամվել Բաբայան՝ Բա զանգեիր, է: էդ ի՞նչ ազգ են:
Մարատ Նալբանդյան՝ Հայեր են, լենինականցի-մենինականցի, սպասի ձեն տամ: Մի հատ ռազվառոտ անեմ:
Սամվել Բաբայան՝ Դավայ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 24.08.2016թ, ժամը 21:15-ին տե-ղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-08-24_21-15-59_79660181844__in__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Ալո:
Մարատ Նալբանդյան՝ Դե ասեցի, կառոչե ասեց՝ լավ կլնի, հեսա տղորանց հետ խոսենք՝ կասենք: Վերջը, էն մյուս անգամ… դե համարը ունեմ, բայց վաբշե ասել եմ ՝ 40, որտև շատ ա կեղտոտ:
Սամվել Բաբայան՝ Հա, էդ ա, բազար արա: Կարաս գիտես ինչ խոսես՝ ասես, տես լավն ա, վատն ա, բոլորը 40-ով վերցնում ենք, էլ չենք ջոկում:
Մարատ Նալբանդյան՝ Դե ասեցի՝ ընդեղ ինչ կա.. ասեց՝ բա քանիսով, ասեցի՝ 40 էլի մոտ: Բա ասում ա՝ հեսա տղերքի հետ պայմանավորվեմ, կասեմ: Հեսա կզանգի: Ես Գարիկի հետ խոսեցի, ասում ա՝ երեքշաբթիա եկել, չորեքշաբթի գնում ա: Ասեցի՝ բա էլ չի գնում, ասեց՝ չէ, մնում ա մյուս շաբաթ:
Սամվել Բաբայան՝ Հա:
Մարատ Նալբանդյան՝ Մնաց մյուս շաբաթ ուղարկեմ ավտոբուսով:
Սամվել Բաբայան՝ Հա, խնդիր չկա:
Մարատ Նալբանդյան՝ Երեքշաբթի:
Սամվել Բաբայան՝ Հա դե: Բա ինչ ա ասում՝ ընդհանրապես ավտոբուս չկա՞:
Մարատ Նալբանդյան՝ Դե, ասում ա՝ երեքշաբթի գալիս ա, չորեքշաբթի գնում:
Սամվել Բաբայան՝ Դե խոսի, տես՝ ի՞նչ ա ասում: Հիսունանոցներ ե՞ս վերցրել:
Մարատ Նալբանդյան՝ Հա, լրիվ հիսունանոցներ ա, հա, ուզում էր 20-անոցներ էլ տար, ես չվերցրի:
Սամվել Բաբայան՝ Վերջը, իջացրու 40, բեր մի հատ տեսնենք, անենք՝ նորմալ ա, նորմալ չի, կապ չունի՝ մի սանտիմետր է ներկոտ, թե 100, մենակ թե ներկը մաքրվի, եթե կարողանա մաքրի, վերջ, թե ինչքանն ա մաքրում՝ կապ չունի:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ Հասկացա՞ր: Բայց գինն իջեցրու, հատկապես էդ մակուլատուրան: Բայց ճղած-բան չլինի, տես՝ փողի որակը նորմալ ա:
Մարատ Նալբանդյան՝ Դե ես ջոկել եմ, որը որ մաշած ա, զգում ես էլի, որը մաշած ա, ասել եմ՝ պետք չի:
Սամվել Բաբայան՝ Հա, էդ տեսակ թղթերը պետք չի, նույնիսկ էդքանի դեպքում, բայց ասում ա՝ ի՞նչ քանակ ունի:
Մարատ Նալբանդյան՝ Դե, գալուց խոսցնում էի, ասեց՝ մի 300 ունի:
Սամվել Բաբայան՝ Հա:
Մարատ Նալբանդյան՝ Չնայած դրանք կատուն կռասկա տվող են, կարող ա…
Սամվել Բաբայան՝ Հա, դե էն ժամանակ 100 էր ասում, հիմա 300 ա ասում, դու իրան ասա՝ արա, դուք դա մեկա ոչ մեկին չեք ծախելու, ամբողջը ես եմ վերցնելու, համ թիվը պայմանավորվենք, համ էլ ստաբիլ, նորմալ քանակ եթե ունեք, ասեք, որ խարաշո տանենք: Ասա՝ եթե 20-50-անոց ես տալու, հետո ասես՝ 100-անոց ունեմ, ասեիր, էն էլ տանեի: Բայց գիտեմ, որ մի քանի լիմոն ունեք, հո խաղ չե՞նք անում:

Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Դե բացատրի, որ ... /չի հասկացվում/, դավայ պայմանավորվենք էդ թիվը ու գործ անենք հանգիստ:
Մարատ Նալբանդյան՝ Դե ասում ա՝ մենք ոչ մեկի չենք թողում ջոկի, որ ես սկսեցի ջոկջկել, ասում ա ՝ ,...(հայհոյանք), ինչ ես ջոկում, արդեն ջոկած ա,: Որտև խառն էր, էլի: Վերջը, ասեց՝ դե լավ խարաշո, ասեց՝ կզանգենք, ասի՝ դե կզանգենք, որ լավ լինի՝ լավ պայմաններով կխոսենք:
Սամվել Բաբայան՝ Դե դա շուտ տանենք, տեսնենք՝ ոնց ա, էդ գումարը դնենք շրջանառության մեջ՝ ամեն անգամ, մի անգամ՝ 10 եվրոյանոցները, մի անգամ՝ 20 եվրոյանոցները:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Դե լավ, լավ կաց: էգուց փորձի ուղարկես: էն տախտակի հա՞րցն ինչ ես անում:
Շարունակում են զրուցել տախտակի թեմաներով:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 30.08.2016թ, ժամը 13:17-ին տե-ղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-08-30_13-17-10_79660181844_out_79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Ի՞նչ կա, ի՞նչ չկա, ի՞նչ ես արել:
Մարատ Նալբանդյան՝ Դե, հլը հեսա ուզում եմ գնամ դեպի ընդեղ տեսնեմ, որ ուղարկեմ, հեսա զանգ եմ Գարիկին, ասել է՝ երեքշաբթի գալու է, տանեմ ուղարկեմ:
/Որից հետո, Սամվելը հետաքրքրվում է, թե Մարատը տախտակների համար խոսե՞լ է ««այն»» տղաների հետ, թե ոչ: Մարատը նշում է, որ առայժմ չի խոսել: Սամվելը նշում է, որ ինքը խոսել է այդ տղաների հետ, նրանք պետք է երկուշաբթի օրը լուր տային: Մարատը նշում է, որ մտադիր էր««էս մեկը»» ուղարկել, որպեսզի վաղն էլ զբաղվեր այդ տախտակի հարցերով: Սամվելը համաձայնում է՝ նշելով, որ լավ կանի, որ կազմակերպի ուղարկի և ավելացնում նաև, որ այնտեղ ռեալ է, խոսացած է, մնում է Մարատը զբաղվի ֆիրմայի ձևակերպումներով, որ ինքը կարողանա կազմակերպել այդ բոլոր հարցերը: Մարատը խոստանում է ուղարկել և վաղն էլ գնալ Սոլնեչնոգորսկ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 30.08.2016թ, ժամը 14:17-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-08-30_14-17-17_79660181844__in__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Մարատ Նալբանդյան՝ Դե զանգ եմ տվել, ասում է՝ ոչ մի ձևի չեմ կարում, վերջը, հիմա չեն զբաղվում, հիմա էլ տախտակ չկա, կարոչի տենց խոսեց:
Սամվել Բաբայան՝ էդ բալամը, հա՞:
Մարատ Նալբանդյան՝ Հա, ոնց որ իրանք մի ձև պետք է ճարեն, իրանք վիվոզ անեն, ոնց որ դուք, էլի, բայց էդ վիվոզ անողն էլ ասում է…: Ասում եմ՝ լեննականցուն տար, ասում է՝ մենք դրանք չենք կարում, սենց բաներ էր ասում: Դրա համար ասեց տախտակ չկա, մի երկու ամսից հետո ենք սկսելու գործը, մեզ խաբել են՝ սենց բաներ էր ասում, ասեցի՝ պարզ է:
Սամվել Բաբայան՝ Լավ է, ս...ր արա: Լավ էդ թղթերով զբաղվի, հլը մի հատ տեսնենք, ուղարկի, գա, տեսնենք՝ ոնց է, տենց մեկը ճարել եմ, որ ծրի տա՝ պայմանավորվելու ենք 45-ով վերցնելու ես, 5-ն էլ քեզ՝ 50, ուղարկես, դե 200-ով պիտի բերեն քեզ տան, հիմա պիտի էսօր–էգուց խաբար անեն, սպասում եմ խաբարին, վրոդի նորմալ է: Դա հլը մի հատ ուղարկի ստեղ, իրար ընկնենք՝ տեսնենք էդ ի՞նչ է: Նմուշը արել եմ էլի, նմուշը արած է, մաքրվել է, տեսնենք՝ ոնց է, դալշե գործ անենք: Տախտակն էլ դե ման արի, եսիմ, տես քո կանալները:
Մարատ Նալբանդյան՝ Չէ, էդ տախտակը ման գալը, հայերի հետ էդ գործը բռնելու չի, ես տենց հասկացա:
/Շարունակում են քննարկել տախտակի հետ կապված հարցերը, Սամվելը նշում է, որ մի մաքուր ֆիրմա է հարկավոր ճարել, որ հաշվարկեն, թե այդ ֆիրմայի գործընթացը բարձելու, ձևակերպելու՝ ինչքան է իրենց վրա նստում, որպեսզի հասկանան՝ ինչպես են տեղավորվում: Մարատը նշում

է, որ Գարիկի հետ կփորձի խոսել, կարծում է, որ նա կկարողանա այդ հարցերով զբաղվել: Սամվելը նշում է, որ մի սուտասան էլ Գարիկն է Մարատը նշում է, որ խոսել է նաև դոկումենտները ուղարկելու համար/:
Մարատ Նալբանդյան՝ Խոսեցի: Ասում եմ՝ դոկումենտները ուղարկեմ, ասում է՝ թող այստեղ, ես կտանեմ, կտամ, ասում եմ՝ դե կարամ ես տամ, էլի, ասում է՝ ապրանք չի՞, ասում եմ՝ ապրանք չի, դոկումենտներ է, դե ասում է՝ փողը թող, ես կտանեմ տամ, ասում եմ՝ դու ավտոբուսի համար ասա՝ ես կտանեմ, ես փողը կտամ, արխային կաց:
Սամվել Բաբայան՝ Ի՞նչ է ասում:
Մարատ Նալբանդյան՝ Դե ուզում է չերեզ իրան լինի էլի, ի՞նչ պիտի ասի: Ասում եմ՝ դե տեսնեմ, հլը ժամանակ չունեմ, պրոստը ես կարող է ընդեղով անցնելուց լինեմ, թողեմ իրանց կգնամ, վերջը, փողը…
Սամվել Բաբայան՝ Դե, դու էն բալամին չե՞ս ճանաչում, վեր կաց գնա այնտեղ էլի:
Մարատ Նալբանդյան՝ Չէ հիմա ուրիշ է, փոխվել է, նրա համարը անջատված է:
Սամվել Բաբայան՝ Դե, վեր կաց գնա իրա մոտ, ասա, արա, հեսա սենց բան եմ վերցրել, էս բանն եմ ուղարկում, էգուց մի հատ քաք բացվեց՝ ասես՝ բերել եք ինձ քաքի մեջ գցել:
Մարատ Նալբանդյան՝ Դե վերջը: Ես ինձանով եմ անում, ոնց որ կա՝ գնամ հետը խոսեմ, ասեմ: Ասեցի՝ դե լավ, հեսա գամ, քեզ հետ խոսեմ:
Սամվել Բաբայան՝ Հա էլի, խոսա, ասա՝ սենց հարց է, էգուց, հավայի մի բան լինի՝ ասես՝ բա բերեցիր ինձ քաքի մեջ գցեցիր, գործ չունես, ասա, դու ծանոթացրու, ես գնամ՝ իրա հետ խոսեմ, իրա հախը տամ, տանի-բերի էլի, ես իրանց հետ կապը պահեմ, կամ ասա՝ ուզում ե՞ս, քեզ տամ, դու տար, ասա՝ տար ուղարկի, իմ համար ի՞նչ տարբերություն կա: Ասա՝ ամեն անգամ բերեմ քեզ տամ, տանես, հետը խոսա, ասա՝ մարդ է, գալիս է, հախը տալիս ենք՝ տանում է էլի, ծրի հո չե՞նք ասում տար:
Մարատ Նալբանդյան՝ Հեսա գնամ մոտը, տեսնեմ՝ ինչ է ասում:
Սամվել Բաբայան՝ էսօր 5 է, պրոբնի է, էգուց կարող է 50 դառնա, 100 դառնա, ամեն անգամ գալու եմ մո՞տդ: Դե գնա, գնա արագացրու, դավայ, գործ արա, Մարատ:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 30.08.2016թ, ժամը 18:43-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-08-30_18-43-42_79660181844__out__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Տեսա՞ր:
Մարատ Նալբանդյան՝ Գնացի, հա, տեսա, հետը խոսեցի, ժամը 11-ին զանգել ասում է՝ ուշանում ենք, գիշերն է գալու ավտոբուսը, էգուց դուրս եմ գալու ամեն դեպքում:
Սամվել Բաբայան՝ Դե դու Կարենին որ տաս համարը, բանը վերցրու, որ Կարենին զանգես ասես էն համարը, որ ես քեզ տվել եմ:
Մարատ Նալբանդյան՝ էն էգուց մեկ է՝ գնալու եմ դրա համար, զանգ եմ տալու, գիտեմ:
Սամվել Բաբայան՝ Հա, բայց իրան չե՞ս բացատրել…: Կարենի համարը՝ 077000075 է, զանգում ես, ասում ես՝ հեսա, էս համարն է, իրա վրա հաղորդագրությունով ուղարկի էդ շոֆերի համարը, որ զանգի՝ գնա, վերցնի: Կամ շոֆերին՝ էս համարը:
Մարատ Նալբանդյան՝ Շոֆերն ինքը զանգելու է:
Սամվել Բաբայան՝ Հա, դե տուր շոֆերին:
Մարատ Նալբանդյան՝ Որովհետև իրանք չգիտեն, ասել էին՝ 6-ին ստեղ էին լինելու, բայց 11-ին է ստեղ լինելու:
Սամվել Բաբայան՝ Հա, բայց էդ էշին բացատրե՞լ ես, որ ամեն անգամ չենք գալու-գնանք, ո՞նց ենք անում:
Մարատ Նալբանդյան՝ Ասել եմ:
Սամվել Բաբայան՝ Ի՞նչ է ասում:
Մարատ Նալբանդյան՝ Ասել է՝ եղավ, շատ լավ: Դե ասեցի՝ էգուց կգաս, կզանգես, համ էլ էն տախտակի մոմենտն էլ, ասել եմ՝ կառոչի շոֆերի-բանի, վիվոզի մոմենտը ճարի, մնացածը քու գործը չի: Տախտակը մենք

կանենք, տեղը կա, պերեվոզկայի հարցը եթե կարու՞մ ես, ասեց՝ լավ կլինի, կճշտեմ:
Սամվել Բաբայան՝ Պերեվոզկան մենք կարում ենք անենք:
Մարատ Նալբանդյան՝ Ռազրեշենիան բա ո՞նց:
Սամվել Բաբայան՝ Հա, ռազրեշենիան ասա ֆիրման է, դոկումենտները:
Մարատ Նալբանդյան՝ Հա էլի, ֆիրման աֆորմիտ արվի, ասեց՝ լավ կիմանամ: Վերջը էգուց նաղդի ղրկելու եմ, էսօր գիշերն է գալիս, էգուց դուրս է գալիս, միշտ տենց է, էդ մոմենտով արխային եղի, խոսենք:
Սամվել Բաբայան՝ Լավ, որ ուղարկես, ինձ էլ խաբար արա, որ արագացնենք, ահագին այդտեղ կուտակված է, որ տեսնենք ինչ է էլի, կարանանք գործ անենք:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 01.09.2016թ, ժամը 15:53-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-09-01_15-53-41_79660181844_out_79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Ի՞նչ կա, ի՞նչ չկա քո մոտ:
Մարատ Նալբանդյան՝ Ոչ մի բան, տիշինա է:
Սամվել Բաբայան՝ Ուղարկեցի՞ր էդ բանը:
Մարատ Նալբանդյան՝ Հա, նա ուղարկել եմ: ժամը իննին-տասին դուրս են եկել:
Սամվել Բաբայան՝ էսօ՞ր:
Մարատ Նալբանդյան՝ Չէ, երեկ են դուրս եկել ժամը տասին:
Սամվել Բաբայան՝ Իրիկունը էլի:
Մարատ Նալբանդյան՝ Հա գիշերը: Ասում է՝ ուրբաթ շաբաթ ըտեղերք են: Կամ եթե ուրբաթ…, զանգ են տվել /տալու/, Կարենն ու ինքը իրար զանգ են տվել /տալու/:
/Այնուհետև զրուցում են տախտակի թեմայից:/

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 05.09.2016թ, ժամը 17:54-ին տե-ղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-09-05_17-54-47_79660181844__out__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Ավտոբուսիդ շոֆերին գտե՞լ ես:
Մարատ Նալբանդյան՝ Զանգ եմ տվել Գարիկին, ասում է՝ տիպը բռնել են, ինչ են արել, երկու օր սպասի, վերջը, տիպը չի կարում խոսա, պիտի գա, կարոչի հեքիաթներ է պատմում աչքիս:
Սամվել Բաբայան՝ Ո՞նց է հեքիաթներ պատմում:
Մարատ Նալբանդյան՝ Դե տիպը բռնել են, ես ինչ գիտեմ, տիպը ապրանքի կեսը խլել են:
Սամվել Բաբայան՝ Ի՞նչն են խլել:
Մարատ Նալբանդյան՝ Տիպը ապրանքի կեսը խլել են, ավտոբուսը կանգնացրել են տամոժնիայում, սենց բաներ է պատմում, չեմ հասկանում՝ ինչ է, ասում եմ՝ հիմա ի՞նչ է ասում: Ասում է՝ էս երկու օրը գալու ենք, կգանք կխոսենք, տենց: Սենց, վերջը, պատմություններ են պատմում աչքիս:
Սամվել Բաբայան՝ Հա, էդ յանի էն նույն մարդիկ ե՞ն, որոնց դուք բան եք տվել, բան եք վերցրել, թե՞: Բա խի ձեռքին ի՞նչ է ատոմնի բոմբ է բերելուց եղել, որ խլել եք, ավտոբուսի շոֆերը ի՞նչ պիտի բռնեն, խլեն:
Մարատ Նալբանդյան՝ Նու, վերջը էլի, ասում եմ՝ ո՞նց յանի խլել են: Ասում է՝ տիպը ապրանք են խլել: Դե ասում եմ՝ Գարիկ ո՞նց կարա լինի, դե վերջը ասում է՝ էս երկու օրը սպասի, հեսա գալու են, ասել են՝ սպասի գանք, խոսենք, ասում եմ՝ ի՞նչ խոսելու բան կա, յա չէ է, յա հա է, վայո, խոսելու ի՞նչ կա յանի: Հիմա էգուց, մյուս օրը գալիս են, ինչ է, վերջը, սենց բաներ ասեց, ասեցի՝ լավ, հասկանալի է, ներվերիս ազդեց: Աչքիս ինքն է մի գ.../ անվայել բառ/ արել:
Սամվել Բաբայան՝ Հա, բայց ի՞նչ գ... պիտի անի, փող տալ է՝ բռնել են, չեն բռնել, դա ի՞նչ:
Մարատ Նալբանդյան՝ Դե, ինչ իմանամ, չգիտեմ, չեմ հասկանում, հիմա էգուց … Զանգ եմ տվել, ասում է՝ չէ, զանգ եմ տվել իրան, ասում է՝ սպասի

հեսա զանգեմ, ուտոչնիտ անեմ, հինգ րոպեից հետո զանգ է տվել, ասում է՝ ավտոբուսը կանգնացրել են, տամոժնիայում է, չի կարում խոսի, սենց բաներ էր ասում, էս երկու օրը տիպը գալու է, ասել է՝ կգամ, կխոսենք:
Չհասկացա՝ ինչ է ասում: Այսինքն հասկացա, որ մի գ... են արել:
Սամվել Բաբայան՝ Արա, քու դարդից են գ… արե՞լ, թե՞ վաբշե ուրիշ գ.... է:
Ի՞նչ է ուզում ասի:
Մարատ Նալբանդյան՝ Դե, ես սենց եմ հասկանում, կամ փողի գլուխն են, չգիտեմ, կերել, ես տենց եմ հասկանում, դե չգիտեմ, էգուց մեկ է՝ ուզում եմ գնամ, ասեմ՝ ի՞նչ եք արել: Սրանով-նրանով են էլի գցում, ես նենց գլուխ ընկա, որ ուզում են սրանով-նրանով գցեն, որ էդ փողը չկա:
Սամվել Բաբայան՝ Ո՞նց չկա, յանի:
Մարատ Նալբանդյան՝ Բա ի՞նչ իմանամ, ես տենց եմ հասկանում, ասում եմ՝ հիմա բա ու՞ր է, տիպը դե ապրանքի կեսը խլել են, ձեռքին չի եղել, յաշիկի մեջ է եղել, սենց բաներ էր ասում: Արա, ասեցի, լավ էլի, ներվեր չունեմ, փողս հետ տուր ինձ, ո՞նց կարող է, ձեռքը պիտի լինի, փոքր կոնվերտ է, ո՞նց կարա յաշիկներում է, էս է, էն է, հասկացա որ ….(հայհոյանք) զրույց է անում: Ի՞նչ անենք:
Սամվել Բաբայան՝ Դե ի՞նչ կարանք անենք, ճակատագիր է, էլի:
Մարատ Նալբանդյան՝ Ճակատագիր չի, ոչ մի բան էլ չի եղել, ես նենց եմ հասկանում, որ /չի ավարտում/:
Սամվել Բաբայան՝ Ասա՝ ես փողը տվել եմ, փողս հետ տուր ինձ, չես կարացել տանես, լավ ես արել, ինձ հետ տուր:
Մարատ Նալբանդյան՝ Դա եմ ասել, ասել եմ կառոչի….
/Կապը կեսից ընդհատվում է/:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 11.09.2016թ, ժամը 20:27-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-11_20-27-59_37477000075__in__093887770_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Կար ջան, բայց հետդ մի քիչ խոսալու ունեմ, է':
Կարեն Քոչարյան՝ է՛, խոսանք, ախպերս, էն ֆուռի հետ դու խոսուցի՞ր:
Դավիթ Հարությունյան՝ Հա, բա, էդ եմ ասում, էլի, օբշի մի քիչ խոսալու կա, էլի, հետդ: Ե՞րբ տենանք, էսօր կարա՞նք տենանք:
Կարեն Քոչարյան՝ Վաղն առավոտ, Դավ ջան, հիմա գործ ունեմ, գնում եմ հանդիպման, վաղն առավոտ: Եթե շուտ պրծնեմ, կզանգեմ, եթե չէ, առավոտ: .
Դավիթ Հարությունյան՝ Վայո: Դե, զանգի, ախպերս, իլը, որ քուչեքն եմ:
Կարեն Քոչարյան՝ Լավ:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 15.09.2016թ, ժամը 12:29-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-15_12-29-54_37494300018_out_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Անդրանիկ Քոչարյան՝ Կարեն, տեսա ես իրան: Այ Անդո ջան, ասում ա, նենց ա, որ փորձում եմ, ասում ա՝ մի սուտկա ա էդ հեղուկների, բանի մեջ, ասում ա՝ ջուրը դառնում ա կարմիր, ալ արյուն, բայց բան չի անում: Ասում ա՝ իլը պիտի բան անեմ, էլի: Ասի՝ դե, նայի, լավ բան արա: Ասում ա՝ հա: Շատ գիտեմ:
Կարեն Քոչարյան՝ Ասա՝ տեմպ տուր:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա, հա:
Կարեն Քոչարյան՝ Հա, լավ:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 15.09.2016թ, ժամը 20:46-ին տե-ղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-15_20-46-13_37477000075_out_093887770_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Դու ո՞ր կողմերն ես, հեռու ե՞ս:
Կարեն Քոչարյան՝ Հա, քաղաք եմ:
Դավիթ Հարությունյան՝ Հա: Դե, խոսացի, ինքը Սադախլո ա, դե, ասում ա՝

ախպեր, պրոբլեմ չկա, ասում ա՝ ես կիրակի օրը կարամ օր ասեմ՝ կիրակի օրն ա, շաբաթ ինքը ստեղ ա լինելու, էլի, հիմա Սադախլո էր, էթում էր էն կողմ՝ հակառակ կողմ:
Կարեն Քոչարյան՝ Հա:
Դավիթ Հարությունյան՝ Ասեց շաբաթ օրը ստեղ եմ լինելու, բայց ասում ա՝ ինձ տարբերություն չկա, համարը կտամ, ընդեղ կասեմ, որ իմ անունին, ընդեղ էլ կզգուշացնի, թող տանի տա, ես ստեղ կվեկալեմ, կտամ ձեզ:
Կարեն Քոչարյան՝ Կլինի, մի խոսքով:
Դավիթ Հարությունյան՝ Հա դե, ասեց, ասում ա՝ կլինի, ախպեր, հիմի ուզում ե՞ս … շաբաթ օրն ասեց՝ ես հետ եմ գալու, հիմա էթում էր, նոր զանգեցի, էթում էր, ասում ա՝ արդեն հասա Սադախլո, շարունակելու էր, էլի: Դե, ինքը օբշի ռեյսերը…: Հետո իրանց լավը գիտես որն ա՞, ապեր, իրանք ավտոբուս չեն փոխում:
Կարեն Քոչարյան՝ Հը՞:
Դավիթ Հարությունյան՝ Իրանց մոտ Մոսկվան ու ստեղի ավտոբուսը նույնն ա, ջոգի՞ր, ախպեր, էտի համարյա քաղաքում ընտենց գիծ չկա:
Կարեն Քոչարյան՝ Լավ, Դավ ջան, էսօր շուտ պրծա՝ կտենամ, չէ՝ քեզ վաղը կտենամ մի հատ:
Դավիթ Հարությունյան՝ Լավ, ախպերս: Լավ, բռատ ջան:
Կարեն Քոչարյան՝ Լավ: Մերսի:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 15.09.2016թ, ժամը 20:01-ին տե-ղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-15_20-01-47_37493887770_in_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Դու հանդիպա՞ր:
Դավիթ Հարությունյան՝ Չէ, հեսա մի հատ ուզում եմ զանգեմ հիմա տենամ՝ ի՞նչ ա:
Կարեն Քոչարյան՝ Մի հատ զանգի, հասկանանք, էլի, մյուս ռեյսով տենանք /չ.շ./, հա, ախպերս, մի հատ, եթե բան ա՝ կոորդինատ-բան վերցնես, թեկուզ ուշոտ հանդիպենք, բան անենք:
Դավիթ Հարությունյան՝ Եղավ, հեսա քեզ զանգեմ, ախպերս:
Կարեն Քոչարյան՝ Դե, ինձ զանգի, ախպերս:
Դավիթ Հարությունյան՝ Հա:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 16.09.2016թ, ժամը 11:12-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-16_11-12-16_37494300018_in_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Մի հատ հոպլոյի հետ ե՞րբ ես խոսալու:
Անդրանիկ Քոչարյան՝ Հեսա մի քիչ հետո:
Կարեն Քոչարյան՝ Ինձ էլ կզանգես, էլի: Կարող ա ստացված լինի, չէ՞ էսօր արդեն:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա:
Կարեն Քոչարյան՝ Լավ, կզանգես:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 16.09.2016թ, ժամը 11:58-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-16_11-58-46_37493887770_in_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ էն տղեն կարա՞ արդեն գնա էդ ապրանքը առնի, որ ուզում էր:
Դավիթ Հարությունյան՝ Հեսա զանգեմ, զանգեմ քեզ:
Կարեն Քոչարյան՝ Մի հատ զանգի, եթե բան ա՝ ասեմ, թող գնա, առնի:
Դավիթ Հարությունյան՝ …(1բառ կտրտվում է), վեկալեմ, հա, ախպերս: Հեսա զանգեմ, զանգեմ քեզ:
Կարեն Քոչարյան՝ Յոթ հարյուր դոլար իրան հետ ենք տալիս, չէ՞:
Դավիթ Հարությունյան՝ Մի րոպե ախպերս: Հաա, էնտե՞ղ, պրյամո՞ էնտեղ:
Կարեն Քոչարյան՝ Հա:

Դավիթ Հարությունյան՝ Հաա, էդի պիտի իրան զանգեմ, ասեմ, ցավդ տանեմ:
Կարեն Քոչարյան՝ Զանգի, տես, եթե փողը կա, կարանք ձեռնարկենք:
Դավիթ Հարությունյան՝ Ես չէի իմանում, էլի, հա, ես չէի իմանում, դրա համար քեզ ասեցի, ախպեր, բան ա: Վոբշեմ Մոսկվայում ա հիմա էդի:
Կարեն Քոչարյան՝ Հա, ախպերս:
Դավիթ Հարությունյան՝ Ավյո, լավ, հեսա սպասի քեզ զանգեմ, ես գիտեի…
Կարեն Քոչարյան՝ էդ էլ կա, էն մյուսն էլ: Տես՝ երբ կբերեն, եթե կբերեն՝ բերեն, ախպերս:
Դավիթ Հարությունյան՝ Ես գիտեի, թե մի հատ նմուշ գալու ա ստեղ նոր, էլի, դրա համար:
Կարեն Քոչարյան՝ Չէ, եթե պիտի նմուշը գա, ինքը տենա, ուրեմն նմուշը… տրանսպորտը գա, նոր:
Դավիթ Հարությունյան՝ Հա, ջոկի: Հեսա սպասի, հենց հիմա զանգեմ:
Կարեն Քոչարյան՝ Եթե էդ ձև ա, ուրեմն ախպեր, մի զանգի: Եթե պետք ա ինքը տեսնի:
Դավիթ Հարությունյան՝Չէ, մարդ ես, կարող ա ասում ա՝ լավ: Դե, էդ եմ ասում, կարող ա մարդ ես, ասում ա…
Կարեն Քոչարյան՝ Դե, տես, տես ինչ ա, ինձ ասա:
Դավիթ Հարությունյան՝ Հեսա ես քեզ զանգեմ, ախպերս:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 16.09.2016թ, ժամը 12:10-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-16_12-10-20_37493887770__out__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Կար ջան, ասում ա՝ մի հատ նմուշից հետո մենք իրար հետ գործ կանենք: Ասի՝ ուրեմն թող մեր տախտակները գա էս ռեյսը Երևան:
Կարեն Քոչարյան՝ Դե, մի հատ հլը տես էնի ոնց ենք կազմակերպում, հոպար:
Դավիթ Հարությունյան՝ Հենց հիմա զանգեմ ու զանգեմ քեզ, ախպեր ջան:
Կարեն Քոչարյան՝ Լավ, ախպեր ջան:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 16.09.2016թ, ժամը 12:13-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-16_12-13-36_37493887770_out_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Կար ջան, մի հատ համար ասեմ, գրի:
Կարեն Քոչարյան՝ Ասա:
Դավիթ Հարությունյան՝ 9688588868, անունը Արո ա: Ում ա տալու' Գոռի՞ն, ստեղ:
Կարեն Քոչարյան՝ Ստեղ Գոռին:
Դավիթ Հարությունյան՝ Հա: Ուրեմն ես էնտեղ ասել եմ Գոռին, ասի' ապեր, հինգ հազար խորանարդ մետր ա տախտակները, ասի՝ նորմալ, ասի՝ տեղը տեղին բարձեք, ասի՝ ոնց ա, ինչ ա: Բայց ես քեզ մի հատ բան ասեմ, չեմ ասել, որ վրեն լաքեք-մաքեք կա, որովհետև էդ ոչ մեկին չի հետաքրքրում, չի էլ… պետք էլ չի հետաքրքրի, հասկացա՞ր: Էդի ճիշտ ա, էլի, ապեր:
Կարեն Քոչարյան՝ Մի հատ ամեն դեպքում ես ասեմ, բանը, ով որ էդ պիլառաման/ըստ լսողության/ ունի, հանդիպի իրան, հա՞:
Դավիթ Հարությունյան՝ Ո՞վ ինչ ունի:
Կարեն Քոչարյան՝ Ով որ ունի էդ տախտակի էդ պիլառաման, մի հատ հանդիպի իրան: Հա՞, ես ասե՞մ հանդիպի, թող մի հատ քննարկեն, եթե կլինի' կլինի, եթե չէ…
Դավիթ Հարությունյան՝ Ախպերս, քննարկելու բան չկա, ես ասել եմ՝ փակած կոնտեյներ ա էդ տախտակները, մարդը վարձը տալու ա, ու բերեք ստեղ: Երբ ա ավտոն դուրս գալիս՝ կիրակի դուրս ա գալիս, ասեց՝ երեքշաբթի Երևան ա լինելու: Ասում ա՝ տրեյլերը կոխած քշում ա:
Կարեն Քոչարյան՝ Արո, հա՞, Արոյին:
Դավիթ Հարությունյան՝ Արո, հա: Ինձ թվում ա, էդ եմ ասում, ախպեր,

մանրանալու բան կա՞, Կար ջան: Եթե փակած տալու ա, էդ տախտակները փակած բերելու ա: Թե հիմա տախտակի վրա, կոպիտ ասած լաք… ներկա ա թափել, կամ…
Կարեն Քոչարյան՝ Չէ, Դավ ջան, դե ճիշտը տեղյակ լինելն ա: Չէ, ախպերս, չէ: էդ ոստոտ-մոստոտ, հիմա կարող ա բերենք, չծախվի, ասենք մարդիկ մտածեն, կարող ա ասենք ուրիշ ապրանք են բարձում, կարող ա սիլիկոն են բարձում:
Դավիթ Հարությունյան՝ Եսիմ: Ուզու՞մ ես կանգնի զանգեմ Գոռին ասեմ ես: Սպասի հենց հիմա զանգեմ, Գոռոն էնտեղա պրոստո, դուրսն ա, սպասի հենց հիմա զանգեմ, ասեմ: Ասեմ, որ տախտակների վրա լաքա կա:
Կարեն Քոչարյան՝ Հա, լավ:
Դավիթ Հարությունյան՝ Պե՞տք ա ասեմ որտեղից ա էդ լաքեն:/
Կարեն Քոչարյան՝ Չէ, չէ, շատ մի մանրացի, ուղղակի բան ա:
Դավիթ Հարությունյան՝ Հա, դե, էդ եմ ասում: Լավ, վայո, դե, սպասի զանգեմ, ասեմ:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 16.09.2016թ, ժամը 12:17-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-16_12-17-59_37493887770__out__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Ասեցի, ասի՝ ախպեր, սենց-սենց, դե, ասում ա՝ ախպեր… ասի՝ վոբշեմ սենց ա, ասում ա՝ հա, դե, ախպեր թող… ասում ա՝ էնտեղ էլ թող սվոբոդնի Արոյի հետ խոսան արդեն, ասում ա, որ խոսքի բան ա թափվել վրեն, էդքան բան, հիմա տախտակ ա:
Կարեն Քոչարյան՝ Լավ: էնտեղ քո՞ անունից են մոտիկանալու:
Դավիթ Հարությունյան՝ Չէ, Գոռի, Գոռի, իմ անունը էնտեղ Արոն չգիտի: Ես Արոյին չեմ էլ ճանաչում:
Կարեն Քոչարյան՝ Լավ, ախպերս:
Դավիթ Հարությունյան՝ Իրանք միշտ էնտեղ սենց ա… բայց վաղը թող զանգեն:
Կարեն Քոչարյան՝ Հա, կասեմ վաղը զանգի, մի հատ հանդիպի:
Դավիթ Հարությունյան՝ Ասա՝ թող վաղը օրվա երկրորդ կես զանգի, Արոյին ուզի, ասի՝ ապեր, Գոռը, որ քեզ ասել ա, էդքան բան, արդեն իրանք իրար հետ կկապվեն:
Կարեն Քոչարյան՝ Եղավ, ախպեր ջան:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 16.09.2016թ, ժամը 12:54-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16_2016-09-16_12-54-34_79660181844_out_79099199858_0 անվանմամբ ձայ-նային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Հեսա ես քեզ մի հատ համար եմ ,սմս, անում, անունն էլ Արո է, կկարանա՞ս, որ ասեմ գրես:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ 9688588868: Արո է անունը Գոռի կողմից, ասա ես Գոռի կողմից եմ:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Դե էգուց, վաղը առավոտ զանգի, կիրակի օրը գալու, վաղը առավոտ զանգ տուր հանդիպի, էդ բանը ցույց տուր ինչը, որ տալիս ես իրան, կանվերտում դիր ցույց տուր, էդ բանն էլ տուր իրան, ինքը բերելու է:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Ոչ մեկի համարը, բան, կոնվերտի վրա չգրես:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Հլա տուր իրան, ինքը գիտի, իրա նաչալնիկին է բերելու տա:
Մարատ Նալբանդյան՝ Լավ: Եղավ:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 16.09.2016թ, ժամը 19:10-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-

16_19-10-53_37494300018_out_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Ի՞նչ կա էն մի կենդանուց:
Անդրանիկ Քոչարյան՝ Ասում ա՝ մի քիչ առաջ էլ բան արեց, ասում՝ ա նատրի օ հաշ /ըստ լսողության/, լաբորատորիաներում, էդ պիտի ճարվի:
Կարեն Քոչարյան՝ Դե ճարի, ասա:
Անդրանիկ Քոչարյան՝ Ես շատ գիտեմ, ինձ ասում ա՝ եթե բան ա, մի հատ տես, ասում ա՝ էդ լաբորատորիաներում ա լինում, կոնցենտրիրովանի /ըստ լսողության/
/Կապն ընդհատվում է/:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 16.09.2016թ, ժամը 19:24-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-16_19-24-30_37494300018__in__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Դրան ասա, թող ճարի, ինչ որա ա՝ կտամ, բայց արագ իրար արի:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա:
Կարեն Քոչարյան՝ Խոսա Պոնչ, ականջի հետև մի գցի: Խոսա, դե կխոսանք:
Անդրանիկ Քոչարյան՝ Լավ:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 17.09.2016թ, ժամը 11:19-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-17_11-19-41_37494300018__in__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Խոսացել ե՞ս դրա հետ:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա: Ասեցի, որ բան արա, ասում ա՝ դե բան արեք, ասի՝ հա, դե ինչ- որ պետք ա, բան արա, ասում էր՝ դու էլ հետաքրքրվի, լաբորատորիաները ... Կարող ա՞ Մերիենց մոտ լինի:
Կարեն Քոչարյան՝ Չգիտեմ, դժվար, հարցրեցի, չկար էդ ձևի բան:
Անդրանիկ Քոչարյան՝ Հլը մի հատ ապտեկա-մապտեկա էլ հարցրու, էլի: էդ նատրիի խիտն ա, նատրի օ հաշ կանցենտրիրովանի, այսինքն խիտ: էդ, որ հարցնես, էդ կասեն: Ես իրան ասել եմ, հետաքրքրվի, գտի, որտեղից ա, ինչ ա, նենց որ պրոբլեմ չկա: էն էլ ասեց՝ հա, հարց չկա: Ասի, կարող ա քաղաք մարդ-մուրդ ունենաս, մի հատ թող հարցնեն-մարցնեն, էդ մոմենտն ա:
Կարեն Քոչարյան՝ Լավ, եղավ:
Անդրանիկ Քոչարյան՝ Կարեն, Իշխանիկը բերել ա:
Կարեն Քոչարյան՝ Հա, կհանդիպեմ, կվերցնեմ:
Անդրանիկ Քոչարյան՝ Լավ:

- Սամվել Բաբայանի և Կարեն Քոչարյանի միջև 17.09.2016թ, ժամը 18:25-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-893-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1782-16__2016-09-17_18-25-07_37493544444_in_077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Բիձեն ձեն չհանե՞ց հլա, արա: Արա, էս /անվայել բառ/ տղան կերավ, էնքան զանգեց:
Կարեն Քոչարյան՝ էն տղե՞ն:
Սամվել Բաբայան՝ Հա: /Ծիծաղում է/:
Կարեն Քոչարյան՝ Ասեց՝ վերցրել եմ, հետ եմ գնում:
Սամվել Բաբայան՝ Դե, տես-տես, վաղը գոնե կպրծնի՞ էդ հիմարը:
Կարեն Քոչարյան՝ Վերցրել ա, հետ ա գնում, վաղը ինչ անի, չանի, եթե չէ, ես կհանդիպեմ իրան:
Սամվել Բաբայան՝ Հա էլի, մի հատ հասկանանք:
Կարեն Քոչարյան՝ Ընդեղ բանը, Մարատը հանդիպե՞ց:
Սամվել Բաբայան՝ Մարատը զանգել ա, խոսել ա, նա վաղվա վրա ժամ ա դրել:
Կարեն Քոչարյան՝ / Հա, վաղն ա դե դուրս գալու:
Սամվել Բաբայան՝ Հա էլի, վերցնելու ա, գա:

Կարեն Քոչարյան՝ Հա, լավ, դե, ես դրան ասեմ՝ երկուշաբթի ստեղ կլինեք: էդ էլ էդ ձև կանեմ:
Սամվել Բաբայան՝ Հա, բիձին էլ բան արա, ասա՝ արա, վաղը գոնե պրծի, որ հասկանանք էս հետևից մի բան լինելու ա՞, թե՞… : Դա, որ երկու- երեք հատն ա /թեթև ծիծաղ/ սենց ա տևում…
Կարեն Քոչարյան՝ Չէ, հաստատ անելու ա, էտի հեչ, էտի խնդիր չի, հաստատ անելու ա, ոնց-որ հեշտ տարբերակի վրա ինչ-որ իլյուզիաներ ա արել էլի:
Սամվել Բաբայան՝ Հը: Ավելի շուտ՝ էժան, չի ուզեցել բան ծախսի գ…-ը:
Կարեն Քոչարյան՝ Չէ, երևի, չգիտեմ:
Սամվել Բաբայան՝ Դե, եթե լավ բան ա եղել, խի՞ չի գնացել վախտին առել, անի:
Կարեն Քոչարյան՝ Չեմ կարա ասեմ:
Սամվել Բաբայան՝ Լավ: Դե, տեսնենք, Աստված մեր հետ, տեսնենք:
Կարեն Քոչարյան՝ Լավ, ահա:
/Այնուհետև, Սամվելն ասում է, որ ինքն այժմ բանակցություններ է վարում տախտակի հարցով, հավելում է, որ փեսային, միգուցե, ուղարկի Նիժնի Նովգորոդ, որպեսզի այնտեղից բերեն, նշում է, որ Գնելին հանձնարարել է ՀՀում մի քանի տեղ հետաքրքրվել մեքենաների հարցով: Բոլորը տոննայից են խոսում, ինքն էլ զարմանում է. ,Կարող ա՞ տախտակը տոննայով են ծախում,, հավելում է, որ ինքը երևի պետք է այնտեղ ավել գումար տա, 10 $- ով էլ չորացնեն, խոնավությունը 0,5 դարձնելու համար, որպեսզի կարողանան 22 տոննան 44-45 խորանարդ մետր բարձեն, խնդիրը քաշն է, ոչ թե տեղը: Այդ տղան ամիսը երկու հազար խորանարդ մետր կտրում է, պետք է պարզել, թե չորացնելու դեպքում, ինչ գումար կուզեն:/

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 18.09.2016թ, ժամը 15:38-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-09-18_15-38-23_79660181844__out__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Սամվել Բաբայան՝ Ե՞րբ ես եկել, թե՞ իլը:
Մարատ Նալբանդյան՝ Հիմա գնում եմ տուն, գնամ, տանեմ տամ:
Սամվել Բաբայան՝ Հա տար տուր, դու դրա հետ երևի մշտական դրա հետ գործ անես: Նորմալ դու խոսի: Իրան պետք չի համարմամար, զիբիլ էլի: Պրոստը տանես իրան, ու մշտական օպերատիվ, որ մենք գործ անենք, մյուսն էլ մի հատ էլ տեղ կա արդեն հարյուրանոցներ,երկու հարյուրանոցներ, հիսուն… վերջը նորմալ էլի: 45 էլ ա ասել, մենք էսօր վաղը խաբար ենք անելու, տեսնենք՝ էդ չերեզ Տիկո դուրս կգա, հնարավորա՝ դա էլ անես: էն բալամներին էլ ասա՝ եթե չեք տալու, մենք կողմնորոշվենք: էդ ա ասա մեր գինը: Բազար արեք պրծեք: Դա էլ գնա ուղարկի, որովհետև շուտ-շուտ ա պետք, դա գործ պտի անի:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ Դա տենց բան չի դառնա: էս մեկը դե ես քեզ…
Մարատ Նալբանդյան՝ Բայց դա…
Սամվել Բաբայան՝ Տար նադյոժնիին հա, էդ մշտական, որ ստեղ գալիս են-գնում են, ըտեղ ինչքան եկող-գնացող կա՝ իրանց ենթակայության տակ են:
Մարատ Նալբանդյան՝ Հասկանալի ա:
Սամվել Բաբայան՝ Հասկացա՞ր:
Մարատ Նալբանդյան՝ Դե լավ դե: Դե ընդեղ ասեց՝ չորսին արի: Հիմա գնում եմ:
Սամվել Բաբայան՝ Դավայ, դավայ: Արագացրու:
Մարատ Նալբանդյան՝ Մի կես ժամից
Սամվել Բաբայան՝ Որ ուղարկես՝ խաբար արա:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:
Սամվել Բաբայան՝ Դավայ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 18.09.2016թ, ժամը 16:16-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16__2016-09-

18_16-16-01_79660181844__in__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Մարատ Նալբանդյան՝ Դե սաղ նորմալ ա, տվել եմ: Վերջ:
Սամվել Բաբայան՝ Հա, վսյո: Լավ:
Մարատ Նալբանդյան՝ էդ էդ իրար հետ հաշիվն էր: Լավ:
Սամվել Բաբայան՝ Լավ: Դավայ: Լավ կաց: Ես կզանգեմ:
Մարատ Նալբանդյան՝ Դավայ:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 19.09.2016թ, ժամը 9:52-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-19_09-52-28_37477000075_out_094300018_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Մի հատ մատորիստի հետ խոսա, էտի հեղուկ ա, թե՞ փոշին: էդ որ լցնում ա մատորի մեջ:
Անդրանիկ Քոչարյան՝ Հեղուկ:
Կարեն Քոչարյան՝ Հեղու՞կ: Մի հատ զանգի, ինձ ասա: Ճարել եմ, որ բան անեմ վերցնեմ:
Անդրանիկ Քոչարյան՝ Հեսա մի հատ զանգեմ, ասեմ հեղուկ թե ինչ, հա՞:
Կարեն Քոչարյան՝ Հեղուկ, թե փոշի: Երկուսից ա լինում: Ինչ-որ H2-ը հեղուկ ա, H3-ը փոշի ա, ինչ ա:
Անդրանիկ Քոչարյան՝ Հեսա կիմանամ, կասեմ:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 19.09.2016թ, ժամը 9:57-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-19_09-57-38_37494300018__out__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Անդրանիկ Քոչարյան՝ Կարեն, խոսացի: Հեղուկը, կոնցենտրիրովանի:
Կարեն Քոչարյան՝ Հա: Բանը, ինչ էի ասում: Հարսնիքից էի ասում: Հլը չի եկել չէ՞ էտի, որ հրավիրի քեզ:
Անդրանիկ Քոչարյան՝ 20-ին պիտի գա:
Կարեն Քոչարյան՝ Վաղը, էլի: 23-ին ժամը 6-ին, չէ՞:
Անդրանիկ Քոչարյան՝ Չգիտեմ ժամ-մամ:
/Ապա Պ-ն ասում է, որ շատ վիրավորված է, մինչև հատուկ հրավերք չստանա, չի մասնակցի հարսանիքին: Այնուհետև./
Կարեն Քոչարյան՝ էտ էշը չէր ճարել, չէ՞, մատոռի հեղուկից:
Անդրանիկ Քոչարյան՝ Չէ, ասում ա Աբովյանի ճամփին եմ, Աբովյան եմ էթում: Չէ: Ասեց՝ չեմ ճարել:
Կարեն Քոչարյան՝ ,Գազելդ, քանիսին ա գալի:
Անդրանիկ Քոչարյան՝ 11-ն անց կես ըտեղից հելնում ա:
Կարեն Քոչարյան՝ Մյուսը՞:
Անդրանիկ Քոչարյան՝ Մյուսը 5-ին ա հելնում:
Կարեն Քոչարյան՝ Ռաֆոն եկե՞լ ա:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա, եկել ա Ռաֆոն:
Կարեն Քոչարյան՝ Լավ, կասեմ քեզ:
Անդրանիկ Քոչարյան՝ Հա, տես ինչ ա: Լավ:

- Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջև 19.09.2016թ, ժամը 11:08-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-19_11-08-40_37494300018__in__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Կարեն Քոչարյան՝ Մի հատ անունը ասա, էլի էտ բանի:
Անդրանիկ Քոչարյան՝ NaOH:
Կարեն Քոչարյան՝ NaOH կանցետրովանի: Լավ:

- Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 19.09.2016թ, ժամը 12:00-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-939-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-1989-16__2016-09-19_12-00-22_37493887770__in__077000075_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝

Դավիթ Հարությունյան՝ Ասի՝ տենամ ի՞նչ ա արել, տարել, տվել ա՞ էդ տղեն:
Կարեն Քոչարյան՝ Հա, Դավ ջան, հեսա ես քեզ մի կես ժամից, մի ժամից զանգեմ:
Դավիթ Հարությունյան՝ Լավ, լավ:

- Դավիթ Հարությունյանի և Իխտիարյան Համիկի միջև 19.09.2016թ, ժամը 13:31-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-906-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2134-16__2016-09-19_13-31-25_37491040800__in__091777660 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով:
Համիկ Իխտիարյան՝ Խոսացի՞ր Արոյի հետ:
Դավիթ Հարությունյան՝ Ես խոսացի Արոյի հետ, ասեց՝ գործերով եմ լինելու: Ասեց՝ խառն եմ, բան, տենց: Ասի՝ դե իրիկուն կզանգվենք: Կարճ խոսացի:
Համիկ Իխտիարյան՝ Առավոտը շուտ տենց 9-ի կողմերը հելել ա, հա՞, ինչքան հասկացա:
Դավիթ Հարությունյան՝ Խաբար չեմ, չհարցրեցի:
Համիկ Իխտիարյան՝ Հա, ինչ-որ շուտոտ հելել ա:
Դավիթ Հարությունյան՝ Դու ու՞ր ես, օֆի՞սն ես:
Համիկ Իխտիարյան՝ Օֆիսն եմ, Դավ ջան:
Դավիթ Հարությունյան՝ Դե, կգամ հեսա: Հեսա Բելլային, էրեխուն իջացնում եմ Սայաթ-Նովա: Հեսա կգամ մոտդ:
Համիկ Իխտիարյան՝ Դավ ջան, քեզ ինչքան պետք ա՝ վերցրա, դու մի բան արա: Քեզ ինչքան պետք ա՝ վերցրա, մեռնեմ ջանիդ:
Դավիթ Հարությունյան՝ Լավ, հեսա կգամ, Համ ջան: Ըտեղ ես չէ՞ լինելու, թե՞ տեղ ես էթալու:

- Գոռ Շակոյանի և Դավիթ Հարությունյանի միջև 20.09.2016թ, ժամը 17:43-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-907-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2136-16__2016-09-19_15-47-33_37499969299_out_096715055 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Ի՞նչ կա, նորմալ ա՞ սաղ:
Գոռ Շակոյան՝ Հա, նորմալ:
Դավիթ Հարությունյան՝ Ախպեր, ե՞րբ կհասնեն:
Գոռ Շակոյան՝ Հենա ճամփին են, գալիս են, մի չորս- հինգ ժամից:
Դավիթ Հարությունյան՝ Հա, սահմանն անցել ե՞ն:
Գոռ Շակոյան՝ Հա:
Դավիթ Հարությունյան՝ Լավ, ցավդ տանեմ: Ստեղ մեր մոտ ե՞ն, էլի, հայկականում ե՞ն:
Գոռ Շակոյան՝ Լավ, ախպերս:

- Վրեժ Առաքելյանի և Դավիթ Հարությունյանի միջև 20.09.2016թ, ժամը 17:45-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-906-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2134-16__2016-09-20_17-45-14_37491040800__out__099034007 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ Ու՞ր ես դու:
Վրեժ Առաքելյան՝ Ես հենց նոր մտա տուն: Ասա՝ ի՞նչ ա պետք:
Դավիթ Հարությունյան՝ Ոչ մի բան: Ի՞նչ ես անելու:
Վրեժ Առաքելյան՝ Ասա՝ ի՞նչ ա պետք, ասա:
Դավիթ Հարությունյան՝ Ախպերս, էն էդոյին զանգեմ մի հատ, ասեմ՝ էն տախտակները 5000 խորանարդ մետր գալիս ա, մի երկու ժամից մոտս կլինի:
Վրեժ Առաքելյան՝ Զանգի:
Դավիթ Հարությունյան՝ Հիմա, եթե ինքը վարյանտ ունի, տեղում ստեղ էդ 5000-ն էլ առնել, թող առնեն, իրան բանը անենք, եթե նմուշ ա ուզում, բան, չգիտեմ, հա կտանք, բայց … Որովհետև 10.000 խորանարդ արդեն տվել են, մեկը կա, կպած առնում ա, ջոկի՞ր:
Վրեժ Առաքելյան՝ Հա՞:
Դավիթ Հարությունյան՝ Հա, մեկը կպած առնում ա:

Վրեժ Առաքելյան՝ Գոնե մեջը մի քյար տեսա՞ր:
Դավիթ Հարությունյան՝ Ո՞վ:
Վրեժ Առաքելյան՝ Դու:
Դավիթ Հարությունյան՝ Չէ, իմ կանալով չէ, իմ կանալս էս ա, հիմա գալիս ա էդ ավտոն, հեսա կհասնի Երևան: Էն տաս խորանարդը…
Վրեժ Առաքելյան՝ Բա հիմա ու՞ր ես, Հալաբյան ե՞ս:
Դավիթ Հարությունյան՝ Հա:
Վրեժ Առաքելյան՝ Երկար ե՞ս մնալու:
Դավիթ Հարությունյան՝ Դե հլը, դու ինչքա՞ն ես մնալու տունը:
Վրեժ Առաքելյան՝ Ամենաշատը կես ժամ:
Դավիթ Հարությունյան՝ Լավ, դե հել, զանգի:
Վրեժ Առաքելյան՝ Մի հատ վռազ հաց ուտեմ ու գամ:

- Վրեժ Առաքելյանի և Դավիթ Հարությունյանի միջև 20.09.2016թ, ժամը 17:47-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-905-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2133-16__2016-09-20_17-47-37_37493887770__out__093855555 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Դավիթ Հարությունյան՝ էդ ջան, էն բանը սահմանը անցել ա, տախտակները բերում ա էլի, տասը խորանարդը բան արինք, էն մյուսն ասեց՝ արդեն մեկը կա՝ վեկալում ա, հինգ խորանարդ կա, ասի՝ նավսյակի քեզ հարցնեմ, ճիշտ ա, նմուշ կտամ քեզ, հարցը էդ չի, պրոստո ասի, կարող ա՞ դու մոմենտ ունենաս, էդ հինգ խորանարդն է…
էդմոն Ղազարյան՝ Դե հլը թող գա հասնի, տեղում նայենք, էն վախտ կջոկենք էլի, մի հատ թող գա հասնի:
Դավիթ Հարությունյան՝ Լավ, դե կգաս, որ սաղ ջոկես:
էդմոն Ղազարյան՝ Դե որ գա՝ գամ, լա՞վ: Դու որ ժամ լինի, զանգի գամ ախպերս:

-Կարեն Քոչարյանի և Դավիթ Հարությունյանի միջև 20.09.2016թ, ժամը 17:58-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-905-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2133-16__2016-09-20_17-58-46_37493887770__in__077000075 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝

Դավիթ Հարությունյան՝ Ու՞ր ես:
Կարեն Քոչարյան՝ Դուրսը, դու ասա:
Դավիթ Հարությունյան՝ Ես էլ եմ դուրսը, հեռուներն ե՞ս:
Կարեն Քոչարյան՝ Թումանյան եմ, մի հատ հելնում եմ Արաբկիրի քաղմաս:
Դավիթ Հարությունյան՝ Ի՞նչ ա եղել, հո բա՞ն չի եղել:
Կարեն Քոչարյան՝ Չէ, չէ, մի հատ գործով ուղղակի հելնում եմ, մի հատ գործ կա: Չէ, ախպերս, նորմալ ա: Քո մոտ նորմալ ա՞:
Դավիթ Հարությունյան՝ Հա, նոր զանգեցի, անցել են, նորմալ ա սաղ, արդեն /1 բառ կտրտվում է/ ասեց՝ մի երեք-չորս ժամից կլինեն Երևան, ասեց՝ մինչև կանգնենք, հաց ուտենք, բան:
Կարեն Քոչարյան՝ Հա, Դավ ջան, հա ախպեր ջան:
Դավիթ Հարությունյան՝ Ասեց, որ ժամն էլ լինի, ես քեզ կզանգեմ:
Կարեն Քոչարյան՝ Եղավ ախպերս, ես քեզ տենամ բան ասեմ: էդ քո մոտերը շներ- մներ կա կապած, էդ դրանք անտեր են, ոնց որ:

- Սամվել Բաբայանի և Մարատ Նալբանդյանի միջև 21.09.2016թ, ժամը 4:03-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի գաղտնալսմամբ, գրառված X-894-16 գրառմամբ լազերային սկավառակի վրա՝ 95-2306-16_2016-09-21_04-03-58_79660181844__out__79099199858_0 անվանմամբ ձայնային ֆայլի տեսքով, հետևյալ բովանդակությամբ՝
Մարատ Նալբանդյան՝ Ալո:
Սամվել Բաբայան՝ Բարի իրիգուն:
Մարատ Նալբանդյան՝ Բարի իրիգուն:
Սամվել Բաբայան՝ Ա, էս ի՞նչ թղթեր ես ուղարկել, ավտոբուսը բռնեցին, էդ ղ…պա Սաշան քեզ կարող ա՞ ֆալշիվի թղթեր ա տվել:
Մարատ Նալբանդյան՝ Չգիտեմ:
Սամվել Բաբայան՝ Դու տեսել ե՞ս էդ ծրարի մեջինը:

Մարատ Նալբանդյան՝ Տեսել եմ:
Սամվել Բաբայան՝ Բա որ տեսել ես, ֆալշիվին ինչի՞ ես բան անում: Ուշադիր ես չէ՞ լսում, ասում եմ՝ էդ Սաշան փողը պարտք ա արել, բերել ա քեզ տվել, դու ստուգել ե՞ս՝ ինչ փողա քեզ բերել տվել: Ծրարով էլ տվել ես ավտոբոսի շոֆերին, բերել ա:
Մարատ Նալբանդյան՝ Չէ, ես տեսել եմ..
Սամվել Բաբայան՝ Լավ: Դու պտի գլխի ընկնեիր՝ ինչ եմ ասում: Հասկացա՞ր: էդ Սաշի համարը պահում ե՞ս, կա՞: Սաշա ա, ինչ ա:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ Որ փողա էլի ինձ պարտք, բերել ա քեզ տվել: Դե որ հանկարծ գան քեզ բռնեն՝ Սաշան բերել ա քեզ տվել, դու ծրարով տվել ես շոֆերին, բերել ա: Ուրիշ բան չգիտես:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ Հասկացա՞ր:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ Լավ, դե ասի նախապես իմանաս, էդ ինչ որով որ խոսում ես, էդ համարը, շպրտի, ուրիշը գտի, դրանով զանգի:
Մարատ Նալբանդյան՝ Հա:
Սամվել Բաբայան՝ Վերջը:
Մարատ Նալբանդյան՝ Լավ:

Ամբաստանյալ Ժորա Զաքարյանի ցուցմունքներով, ով առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս նախ՝ իրեն մասնակիորեն մեղավոր ճանաչեց, ապա՝ հրաժարվեց որևէ դիրքորոշում հայտնել: Օգտվեց լռելու իրավունքից, որի հիմքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարակվեցին և հետազոտվեցին նրա նախաքննական ցուցմունքները (տրվել են նաև պաշտպան Ա.Գրիգորյանի մասնակցությամբ):
Համաձայն այդ ցուցմունքների՝ 2016 թվականի օգոստոսի կեսերին իր համագյուղացի Անդրանիկ Քոչարյանն իրեն է տվել ներկված 20 եվրո արժեքով 1 հատ թղթադրամ և հարցրել, թե այն կարո՞ղ է մաքրել ներկից, ինքը խոստացել է փորձել: Թղթադրամը մաքրելու համար օգտագործել է եղունգների մաքրման հեղուկ, ինչի արդյունքում այն բավականին մաքրվել է կարմիր ներկից, բայց հետքեր մնացել են: Այդ թղթադրամը 3-4 օր անց փոխանցել է Անդրանիկին: Որոշ ժամանակ անց Անդրանիկը տվել է ևս 2 հատ 20 եվրո արժեքով և մի հատ 50 եվրո արժեքով ներկված թղթադրամներ՝ դրանք մաքրելու նպատակով, ինչին համաձայնել է: Դրանց մաքրման համար Անդրանիկից պահանջել է ,NaOH, լուծույթ, որն էլ մի քանի օրից վերջինս տրամադրել է իրեն՝ մոտ 1 լիտրի չափով: Դրանք մտադրվել է մաքրել՝ ,NaOH, H2SO4, HCL, քիմիական լուծույթներով և հետո նորից ,NaOH, լուծույթով, մյուս նյութերը մտադրվել է գնել Մալաթիայի տոնավաճառից: Անդրանիկն իրեն թղթադրամների ձեռք բերման աղբյուրը չի պարզաբանել, սակայն ինքը հասկացել է, որ դրանք ինչ-որ հանցավոր ծագում ունեն: Թղթադրամների մաքրման եղանակի և օգտագործվող միացությունների մասին Անդրանիկին ոչինչ չի հայտնել, մտածելով, որ նա կարող է հետագայում անձամբ իրականացնել մաքրումը: Անդրանիկից վերցրել է 5000 ՀՀ դրամ՝ մի քանի այլ լուծույթներ գնելու համար: Թղթադրամները մաքրելու ընթացքում Անդրանիկն անընդհատ հետաքրքրվել է արդյունքներով՝ նշելով, որ նոր խմբաքանակ է գալու, սակայն դրա չափի վերաբերյալ ոչինչ չի հայտնել: Այդ նոր խմբաքանակը մաքրելու համար ինքը նոր գումար էր ուզելու, իսկ մինչ թղթադրամը մաքրելու համար գումար չի պահանջել: Անդրանիկի հետ կապ է պահպանել իր 093-065804 հեռախոսահամարից՝ զանգելով նրա 094-300018 հեռախոսահամարին: Թե ինչպես էին օգտագործվելու իր կողմից մաքրված թղթադրամները, տեղյակ չի եղել: Անդրանիկն իրեն ասել է, որ ներկված թղթադրամները նրան է տվել եղբայրը՝ Կարենը, ում հետ անձամբ մոտիկ չի եղել, սակայն տեղեկացել է, որ մաքրման համար իրեն տրամադրված թղթադրամները Կարենինը չէին, պատկանում էին այլ անձի, սակայն թե ում, տեղեկացված չի եղել:
Վերոնշյալ ցուցմունքների հրապարակումից հետո ամբաստանյալ Ժ.Զաքարյանը հայտարարեց, որ նախաքննական ցուցմունքները պնդում է, իսկ մեղադրողի հարցին ի պատասխան՝ հայտնեց, որ Դատարանում

հետազոտված իրեղեն ապացույցներից քիմիա-կան նյութերն իրենն են, ուղղակի տարաներից մեկը, հավանաբար, փորձագետների կողմից փոխվել է:
Ամբաստանյալ Անդրանիկ Քոչարյանի ցուցմունքներով, ով առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս դիրքորոշում չհայտնեց, օգտվեց լռելու իրավունքից, որի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարկվեցին և հետազոտվեցին վերջինիս նախաքննական ցուցմունքները (տրվել են նաև պաշտպան Ա.Քալաշյանի մասնակցությամբ):
Այդ ցուցմունքների համաձայն՝ 2016 թվականի օգոստոսի կեսերին եղբայրը՝ Կարեն Քոչարյանն իրենց տանը տվել է 1 հատ 20 եվրո արժեքով ներկոտված թղթադրամ և հարցրել է, կարո՞ղ են արդյոք այդ ներկը մաքրել թղթադրամի մակերեսից: Այդ նպատակով նշված 20 եվրո արժեքով թղթադրամն ինքը ցույց է տվել իր համագյուղացի Ժորա Զաքարյանին, որին ճանաչել է նաև Կարենը և ում հետ երկար տարիներ աշխատել է դպրոցում, հաշվի առնելով քիմիայի ոլորտում վերջինիս գիտելիքները: Այդ թղթադրամը թողել է Ժորայի մոտ, հաջորդ օրը վերցրել է արդեն մաքրված վիճակում և վերադարձրել է եղբորը: Ժորայից թղթադրամը մաքրելու եղանակով չի հետաքրքրվել, մի քանի օր անց Կարենը փոխանցել է ևս երկու հատ 20 եվրո արժեքով և մեկ հատ 50 եվրո արժեքով թղթադրամներ՝ մակերեսից ներկը մաքրելու համար: Այդ նպատակով դարձյալ դիմել է Ժորայինը, ում փոխանցել է եղբոր տված վերոհիշյալ թղթադրամները՝ ներկից մաքրելու համար: Որոշ ժամանակ անց Ժորան ասել է, որ նշված 3 թղթադրամների մակերեսից ներկը մաքրել չի հաջողվել և մի քանի օր հետո այդ պատճառաբանությամբ պահանջել է 1 լիտրի չափով NaOH՝ հեղուկ վիճակում: Այդ հարցով դիմել է Կարենին, ով 2016 թվականի սեպտեմբերի 19-ին ուղարկել է Ժորայի կողմից պահանջված հեղուկը՝ 4-5 լիտրի չափով: Այդ հեղուկից Ժորային է տվել մոտ 1-1.5 լիտր: Կարենն իրեն անընդհատ շտապեցրել է և ցանկացել է իմանալ արդյունքների մասին, քանի որ սպասել է նմանատիպ թղթադրամների նոր խմբաքանակը, սակայն կոնկրետ դրա քանակությունը և ստանալու ժամկետն իրեն չի հայտնել ասել: Ժորային աշխատանքի հա-մար գումար չի տվել, միայն խոստացել է, որ լավ կլինի: Սեպտեմբերի կեսերին Ժորայի կնոջ՝ Նուշիկ Գալստյանի միջոցով նրան է փոխանցել 5000 ՀՀ դրամ, նրա կողմից ինչ-որ նյութեր գնելու և ներկանյութը թղթադրամների մակերեսից մաքրելու համար: Թղթադրամների մշակման գործընթացին ներկա չի եղել, ինչպես նաև չի իմացել, թե այդ թղթադրամները Կարենը որտեղից է ձեռք բերել և ում էր հանձնելու:
Նախաքննական ցուցմունքների հրապարակումից հետո ամբաստանյալ Ա.Քոչարյանը հայտարարեց, որ դրանք պնդում է, իսկ պաշտպանի հարցադրման ի պատասխան՝ նշեց, որ նախապես տեղյակ չէր, թե թղթադրամների վրա առկա ներկանյութը ինչ հանգամանքներում է առաջացել, որ դրանք առաջացել են հափշտակվելու հետևանքով, տեղեկացել է միայն նախաքննության ընթացքում:
Ամբաստանյալ Սամվել Բաբայանի ցուցմունքների ստուգման, այլ ապա-ցույցների հետ համադրման և գնահատման արդյունքներով արժևորված փաստական տվյալներով. Այսպես, հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման դրվագով առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս ամբաստանյալ Սամվել Բաբայանն իրեն մեղավոր չճանաչեց, հակասելով մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքին /հակասության մասով ցուցմունքը հրապարակվել և հետազոտվել է/ և պատճառաբանելով, թե իբր պարտքի չափը հստակ չի հիշում, Դատարանում հայտնեց, որ Մոսկվայում բնակվող ծանոթը՝ Վասիլին իրեն պարտք էր ոչ թե 17.000 ԱՄՆ դոլար, այլ 35.000 ԱՄՆ դոլար գումար, որը գլխավորապես վերադարձրել էր, այն էլ՝ նորմալ թղթադրամներով և իրեն պարտք մնացել 5.000 եվրոյի չափով: Նա տեղեկացրել է, որ կարող է գումար փոխանցել, բայց այն ներկոտված է, ինքն առաջարկել է նմուշ ուղարկել՝ հասկանալու, թե ինչի մասին է խոսքը: Վասիլին իրեն ուղարկել է 20 և 50 եվրո անվանական արժեքով 4 թղթադրամներ, որոնք ներկոտված են եղել կարմրավուն ներկով, պատկերացում չի ունեցել, թե դա ինչով էր պայմանավորված: Իմանալով, որ նշված թղթադրամներն իրացնելու դեպքում բանկերը կարող են մինչև

20-ից 25 տոկոս պահել, ինչը բավականին մեծ գումար է կազմել, որոշել է փորձել՝ հնարավո՞ր է արդյոք այդ ներկից թղթադրամները մաքրել: Թղթադրամները ներկից մաքրելու համար Կարեն Քոչարյանին խնդրել է գտնել որևէ մասնագետի, մի քանի օր անց Կարեն Քոչարյանը հայտնել է, որ իրենց գյուղում կա քիմիայի ոլորտի մասնագետ: Դրանից հետո թղթադրամ-ները տվել է Կարենին, որ փորձի դրանք ներկից մաքրել: Այդ մասնագետի հետ ծանոթ չի եղել, վերջինիս հաջողվել է ներկից մաքրել թղթադրամներից մեկը և ինքը Կարենին խնդրել է այն տանել արտարժույթի փոխանակման կետ՝ ստուգելու թղթադրամի իսկությունը: Ստուգելուց հետո Կարենը հայտնել է, որ այն իսկական է, իսկ թե որտե՞ղ է դա ստուգվել, չի հետաքրքրվել: Կարենը թղթադրամը վերադարձրել է իրեն, իսկ թե ինքն այն ի՞նչ է արել, չի հիշում: Համոզվելով թղթադրամի իսկության մեջ՝ կապվել է Վասիլիի հետ, որ նա ուղարկի իրեն պարտք եղած ողջ գումարը: Իր խնդրանքով գումարը Վասիլիից վերցրել է իր ծանոթը՝ մոսկվայաբնակ, ծագումով Ղարաբաղից Մարատ Նալբանդյանը, ում առաջարկել է փողն ուղարկել Մոսկվա - Երևան երթուղային ավտոբուսով, սակայն, քանի որ Մարատը չի կարողացել ոմն Գարիկի միջոցով ուղարկել թղթադրամները, դրա համար էլ Կարեն Քոչարյանին խնդրել է Երևանից Մոսկվա գնացող ավտոբուսի ծանոթ վարորդ գտնել՝ գումարը Հայաստան տեղափոխելու համար: Մի քանի օր անց Կարենն ասել է, որ իրենց հարևաններից ինչ-որ մեկը զբաղվել է ՌԴ-ից ուղևորների փոխադրմամբ: Կարենը տվել է Մոսկվայում գտնվող այն մարդու հեռախոսահամարը, որը կարճ հաղորդագրությամբ ուղարկել է Մարատին և ասել, որ գումարն ուղարկի այդ անձի միջոցով: Կարենի հարևանին, ինչպես նաև Մոսկվայում գտնվող վարորդին և նրա ղեկավարի հետ ծանոթ չի եղել, Կարենին զգուշացրել է, որ վարորդին տեղյակ պահեն, թե ինչ է փոխադրելու՝ հետագայում խնդիրներից խուսափելու համար: Կարենին նախապես ասել է, որ այդ գումարը նույնպես ներկոտված է լինելու՝ ներկից մաքրելու համար նախկինում տված նմուշի պես, և այն իրեն ուղարկելու են որպես պարտքի մարում: Երբ Կարենին ցույց է տվել այդ թղթադրամի նմուշը, վերջինս նույնպես չի հասկացել, թե դա ինչ ներկ է, պարզապես մտածել է, որ ինչ-որ բան է թափվել դրանց վրա, բայց կոնկրետ ինչ՝ չի իմացել և կասկած չի ունեցել, որ այդ մասին Վասիլիին հարցնի: Միայն քրեական գործի շրջանակներում է տեղեկացել թղթադրամների վրա եղած ներկի նշանակության մասին, մինչ այդ դրա մասին պատկերացում չի ունեցել, նախապես իմանալու դեպքում, բնականաբար, կհրաժարվեր այդպիսի թղթադրամներ ընդունելուց և պարտքի գումարը նման թղթադրամներով ընդունելուց: Չի իմացել նաև, թե Վասիլին որտեղից է ձեռք բերել այդ գումարը, իր համար էական էր ստանալ պարտքը: Չի ցանկացել բանկերում կամ փոխանակման կետերում փոխարկման համար որևէ տոկոսագումար թողել, այդ պատճառով էլ փորձել է ներկը մաքրել: Եթե պարզվեր դրա անհնարինությունը, ապա ստիպված՝ օգտագործելու նպատակով այն պետք է փոխանակեր բանկում կամ փոխանակման կետում, քանի որ դա ի վերջո իրեն պարտք եղած գումարն էր կամ էլ ընդհանրապես կհրաժարվեր այդ գումարը վերցնելուց: Կարենի գտած մասնագետին հաջողվել է թղթադրամը մաքրել ներկից: 2016թ. օգոստոսի 24-ին գաղտնալսված հեռախոս-սազրույցում հիշատակված 52 տոկոսը՝ 2900 ԱՄՆ դոլարը չի վերաբերել 5.000 եվրոն ձեռք բերելուն, Տիգրանին ճանաչել է 1992 թվականից, մահապարտների ջոկատից, գործարք են արել և նախնական պայմանավորվածության համաձայն՝ գործարքից ստացված շահույթի 52 տոկոսը նրան էր տալու: Այդքան գումարի չափով Տիգրանին պարտք է մնացել և Մարատին խնդրել է Տիգրանին փոխանցել, որ այդ գումարը տվել է որպես պարտքի մասնակի մարում, քանի որ Տիգրանին ավելի շատ գումար էր պարտք: Խոսակցության մեջ հիշատակված 5.000 եվրոն վերաբերել է որպես Վասիլիի պարտքի մարում իրեն ուղարկվող գումարին, իսկ խոսակցության մնացած մասը՝ գործարք կատարելու, տոկոսների վերաբերյալ, վերաբերել է Տիգրանի հետ շինարարական ներկի հետ կապված բիզնեսին, որով զբաղվել են տևական ժամանակ: Այդ բիզնեսով զբաղվելու արդյունքում ստացած շահույթից՝ 2016 թվականի մայիսից հետո թե փոխանցումներով, թե առձեռն ստացել է գումարներ և վճարումներ է կատարել բանկերում՝

մարելով իր պարտքերը: Տիգրանի հետ կապը հիմ-նականում պահպանել է Մարատի միջոցով, օգտագործել է 007-9660181844 հեռախոսահա-մարը: Հետագայում թղթադրամների այլ խմբաքանակներ Հայաստան բերելու նպատակ չի ունեցել:
Ընդունեց, որ իր շահագործած բջջային հեռախոսահամարների բոլոր գաղտ-նալսումներում խոսում է ինքը, սակայն իր հեռախոսազրույցների բովանդակությունը սխալ է մեկնաբանվել:
Հարցերին պատասխանելիս նշեց, որ ներկոտված թղթադրամների տեղափոխման և մաքրման հետ կախված իր խնդրանքները Կարեն Քոչարյանը կատարել է իր հետ մտերիմ լինելու պատճառով, ոչ թե նյութական օգուտ ստանալու ակնկալիքով:
Ամբաստանյալ Կարեն Քոչարյանի ցուցմունքներով, ով առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս իրեն մեղավոր չճանաչեց, օգտվեց լռելու իրավունքից, որի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարկվեցին և հետազոտվեցին վերջինիս նախաքննական ցուցմունքները (տրվել են նաև պաշտպան Ա.Գրիգորյանի մասնակցությամբ):
Այդ ցուցմունքների համաձայն՝ իր մտերիմ Սամվել Բաբայանը 2016 թվականի օգոստոս ամսին որպես նմուշ տվել է մի փոքր ներկոտված և մաշված 20 եվրո անվանական արժեքով թղթադրամ և առաջարկել է տանել փոխանակման կետ՝ ստուգելու դրա իսկությունը: Փոխանակման կետում ստուգել է թղթադրամը և պարզել, որ այն կեղծ չէ և բանկում հանձնելու դեպքում կպահվի գումարի 2 տոկոսը: Այդ մասին տեղեկացրել է Սամվել Բաբայանին, ով հարցրել է, թե այդ պարագայում ինչպե՞ս կարող են թղթադրամը ներկից մաքրել: Ինքը հիշել է իրենց համագյուղացի Ժորային և եղբոր՝ Անդրանիկ Քոչարյանի միջոցով նշված թղթադրամը փոխանցել է Ժորային, ով որոշակի գործողություններ կատարելուց հետո մաքրել է թղթադրամը և վերադարձրել իրեն, ինքն էլ՝ Սամվել Բաբայանին: Մի որոշ ժամանակ անց Սամվել Բաբայանն իրեն է տվել ներկոտված ևս երեք թղթադրամ՝ Ժորայի կողմից մաքրելու համար: Ինքը թղթադրամները փոխանցել է Ժորային, ով դրանք այդպես էլ չի վերադարձրել:
Միաժամանակ Սամվել Բաբայանն իրեն է դիմել Մոսկվա քաղաքից դեպի Երևան 5.000 եվրո գումար տեղափոխելու համար, ինչին համաձայնել է և այդ հարցով դիմել է իր ընկերներից Դավիթ Հարությունյանին, ում ընկերներից Գոռը զբաղվել է ուղևորափոխադրումներով: Դավիթն իրեն է տվել Մոսկվայում գործող նրանց դիսպետչերի հեռախոսահամարը, որն ինքը փոխանցել է Սամվել Բաբայանին՝ կապ հաստատելու համար: Իմացել է, որ Մոսկվայում այդ գումարը փոխանցելու էր Սամվել Բաբայանի ընկերներից Մարատը, ում անձամբ չի ճանաչել, բայց մի քանի անգամ շփվել է հեռախոսով, քանի որ 2016 թվականի օգոստոսի վերջին կամ սեպտեմբեր ամսվա սկզբներին նա երկու անգամ իր անունով մոտ 7.000 ԱՄՆ դոլար է փոխանցել՝ որպես Սամվել Բաբայանի պարտքի մարում, այդ գումարները ստացել և փոխանցել է Բաբայանին:
Դավթին խնդրել է նախապես Գոռին տեղյակ պահել, որ լաքոտված գումար են տեղա-փոխելու: Դավիթը Գոռից պետք է վերցներ գումարը և տար իրեն, իսկ ինքն էլ այն փոխանցելու էր Սամվել Բաբայանին, նախապես պայմանավորվել էին այդ գումարը ևս քիմիական վերամշակման ենթարկելու վերաբերյալ, որն իրականացնելու էր Ժորա Զաքարյանը:
2016թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 12:15-ին իր կողմից օգտագործվող 077-000075 հեռախոսահամարից խոսել է Դավիթի հետ, խոսակցության սկզբում Դավիթը տվել է ՌԴ-ում կոնտակտային անձի համարը, որը հետո տվել է Սամվել Բաբայանին, որ Մոսկվայում այդ անձին փոխանցեին ներկոտված գումարը՝ վարորդի միջոցով ՀՀ տեղափոխելու համար:
,Լաքա, ասելով, ի նկատի են ունեցել թղթադրամների ներկոտված լինելը, իսկ երբ Դավիթը հարցրել է, թե արդյոք պե՞տք է ասել, որտեղից այդ լաքան, առաջարկել է չմանրամասնել, ապա՝ ասել է, որպեսզի վարորդին տեղյակ պահեն, որ ներկոտված գումարներ է փոխադրելու: ,Մանրանալ, ասելով, ի նկատի է ունեցել, որ կարիք չի եղել հայտնելու, թե ով է գումարը տալու և ում համար, վարորդին դա ասելն ավելորդ է համարել:
2016թ. օգոստոսի 24-ին՝ ժամը՝ 15:50-ին նույն հեռախոսահամարից խոսել է եղբոր՝ Անդրանիկ Քոչարյանի հետ, խոսակցությունը վերաբերել է

սկզբում տրված 20 եվրո անվանական արժեքով ներկոտված թղթադրամին: Եղբորից հետաքրքրվել է, թե արդյոք Ժորան մաքրե՞լ է այն, թե՝ ոչ: Խոսակցության այն հատվածը, որտեղ օգտագործել է ,քյալամներ, արտահայտությունը, վերաբերել է ձեռք բերվող նույնանման թղթադրամների խմբաքանակին: Երբ Ժորան մաքրել է թղթադրամը, կոնկրետ թղթադրամների խմբաքանակի չափի վերաբերյալ դեռևս տեղեկություններ չի ունեցել: Նույն կամ դրան հաջորդող օրը եղբայրն իրեն է փոխանցել Ժորայի կողմից մաքրված թղթադրամը, ինքն էլ իր հերթին փոխանցել է Սամվել Բաբայանին:
2016թ. սեպտեմբերի 17-ին՝ ժամը՝ 18:25-ին Սամվել Բաբայանը զանգահարել է 093-544444 հեռախոսահամարից և զրուցել իր հետ, խոսակցություն մի մասը վերաբերել է իր համագյուղացի Ժորա Զաքարյանի կողմից թղթադրամները մաքրելուն, նախատեսել են 5.000 եվրո արժեքով ներկոտված թղթադրամները մաքրելու համար դարձյալ փոխանցել Ժորա Զաքարյանին:
Վերոնշյալ ցուցմունքների հրապարակումից հետո ամբաստանյալ Կ.Քոչարյանը հայտարարեց, որ դրանք պնդում է:
Ամբաստանյալ Դավիթ Հարությունյանի ցուցմունքներով, ով առաջադրված մեղադրանքի շուրջ Դատարանում հարցաքննվելիս հրաժարվեց դիրքորոշում հայտնել, օգտվեց լռելու իրավունքից, որի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարկվեցին և հետազոտվեցին վերջինիս նախաքննական ցուցմունքները:
Այդ ցուցմունքների համաձայն՝ իր հարևան Կարեն Քոչարյանին ճանաչել է վաղուց, մտերիմ են եղել: Քննվող դեպքից մոտ քսան օր առաջ ավտոլվացման կետում հանդիպել է Կարեն Քոչարյանին և զրույցի ընթացքում վերջինս հայտնել է, որ որպես նմուշ ունի 20 եվրո արժեքով թղթադրամ՝ մակերեսին կարմիր բծերով: Վերջինս հարցրել է, հնարավոր է արդյոք մաքրել թղթադրամից կարմիր բծերը, համոզվելով, որ թղթադրամի իսկության մեջ, առաջարկել է այն թողել իր մոտ պարզելու համար, թե ինչով կարող է օգնել: Հետաքրքրության համար թղթադրամը ցույց է տվել իր ընկերներին, որոնք ասել են, որ առաջին անգամ են նման բանի հանդիպել, կարմիր բծերը հնարավոր չէ մաքրել, խորհուրդ են տվել թղթադրամը վերադարձնել: Օրվա վերջ ներկոտված 20 եվրո արժեքով թղթադրամները վերադարձրել է Կարեն Քոչարյանին:
Այնուհետև Կարեն Քոչարյանը խնդրել է իրեն օգնել 5.000 եվրո գումարը Մոսկվայից Երևան տեղափոխելու հարցում, նշելով, որ այն բաղկացած է նախկինում տվածի 20 եվրո արժեքով թղթադրամի պես ներկոտված թղթադրամներից: Համաձայնել է զուտ օգնելու համար, սակայն Կարեն Քոչարյանը խոստացել է գումարը բարեհաջող Դրան հասնելու դեպքում ինչ-որ շահույթ, նշելով, որ իրեն նույնպես լավ է լինելու: Դրանից հետո դիմել է ՌԴ-ից Հայաստան ուղևորափոխադրումներով զբաղվող ընկերոջը՝ Գոռին, խնդրել է տալ իրենց ընկերության Մոսկվա քաղաքի գրասենյակի հեռախոսահամարը, հայտնելով, որ ներկոտված թղթադրամներ է տեղափոխվելու Հայաստան: Դա արել է Կարենի ցուցումով, Գոռը տվել է Մոսկվայում իրենց դիսպետչերի հեռախոսահամարը, որն էլ փոխանցել է Կարենին: Գոռի հետ պայմանավորվել է նաև հետագայում հնարավոր տեղափոխումների համար, ինչին Գոռը ասել է, որ մեկ անգամ բարեհաջող գործն անելուց հետո ապագան կորոշեն: Դրանից հետո Կարենը կամ նրա ծանոթը կապվել են Մոսկվայի դիսպետչերի հետ, փոխանցել գումարը, որը բերվել է Հայաստան: Ավտոբուսի Երևան հասնելուց հետո Գոռը զանգահարել և հայտնել է այդ մասին, ինքը գնացել Գոռի նշած վայր և ավտոբուսի մոտ հանդիպել վերջինիս հետ, ով վերցրել է գումարը և փոխանցել իրեն: Այն տեղադրված է եղել սպիտակ թղթի մեջ, պարունակությունը չի երևացել: Այն վերցնելուց հետո ցանկացել է զանգահարել Կարենին՝ փոխանցելու համար, սակայն չի կարողացել, քանի որ մոտեցել են ՀՀ ԱԱԾ աշխատակիցները և բերման ենթարկել:
Կարենն իրեն ասել է, որ դրանք ,կեղտոտ փողեր, են, ինչից հասկացել է, որ դրանք գողացված գումարներ են, թեև Կարենը գողացված լինելու մասին իրեն բան չի ասել: Կարենն ինչ-որ ծանոթներ ուներ, ովքեր պետք է մաքրեին այդ ներկը՝ սովորական գումար դարձնելու համար: Նշել է նաև, որ գործով ամբաստանյալներ Ժորա Զաքարյանի, Անդրանիկ Քոչարյանի և

Սամվել Բաբայանի հետ ծանոթ չէ:
Վերոնշյալ ցուցմունքների հրապարակումից հետո ամբաստանյալ Դ.Հարությունյանը հայտարարեց, որ դրանք պնդում է, իսկ դատական քննության ավարտական փուլում՝ հայտարարեց, որ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում:
Վկա Էդմոն Ղազարյանի՝ հրապարակված և հետազոտված նախաքննական ցուցմունքներով, համաձայն որոնց՝ այն մասին, որ Դավիթ Հարությունյանի հետ ծանոթացել է մոտ մեկ տարի առաջ, Վրեժ Առաքելյանի միջոցով: Նրա հետ հանդիպել է հազվադեպ, եղել են սովորական շփումներ: 2016 թվականի սեպտեմբերին Դավթի հետ խոսակցության ընթացքում վերջինս հայտնել է, որ մոտը ներկոտված թղթադրամ ունի և դիմելով իրեն՝ հետաքրքրվել է, թե կարո՞ղ են արդյոք իր ծանոթները բանկում այն փոխանակել՝ հնարավորինս ցածր տոկոսադրույքով: Խոստացել է ճշտել և տեղեկացնել, սակայն գործնականում որևէ գործողություն այդ ուղղությամբ չի կատարել: Դրանից հետո Դավթին չի տեսել, նրա հետ չի խոսել, լրացուցիչ որևէ պայմանավորվածություն նրա հետ չի ունեցել, նրա նշած թղթադրամը նույնիսկ չի տեսել:
Ընդունել է, որ 2016թ. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 17:47-ին հեռախոսով զրուցել է Դավթի հետ, խոսակցությունը վերաբերել է ներկոտված գումարին և չգիտի, թե ինչու՞ է վերջինս խոսակցության ընթացքում օգտագործել ,տախտակ, բառը: Քանի որ թղթադրամների պահով Դավթի հետ որևէ պայմանավորվածություն չի ունեցել, Դավթի առաջարկին պատասխանել է ,թող գա հասնի,՝ նկատի ունենալով, որ նշված թղթադրամները տեսնելուց հետո, միգուցե այն հնարավոր լինի բանկում փոխանակել: Նշված խոսակցության ընթացքում Դավիթն ասել է, որ իրեն նմուշ կտա, քանի որ մինչ այդ թղթադրամը չէր տեսել: Խոսակցությունը զուտ տեղեկատվական բնույթ է ունեցել, Դավթի հետ թղթադրամներ գնելու մասին խոսք չի եղել և նրա հետ խոսել է միայն բանկերում նրան օգնելու թեմայով, որ փոխանակվող գումարը փոխանակվի ավելի քիչ տոկոսի պահմամբ: Այլ պայմանավորվածություն Դավիթի հետ չի եղել:
Անդրադառնալով վերոնշյալ նախաքննական ցուցմունքի օգտագործման և սույն դատական ակտի հիմքում դնելու հնարավորության հարցին՝ Դատարանը փաստում է, որ այն թեև վերոնշյալ դրվագով ամբաստանյալների մեղադրանքի հիմքում դրված միակ կամ վճռորոշ ապացույցը չէ, ըստ էության սպառվել էր տվյալ անձին ողջամիտ ժամկետում Դատարան հրավիրելու և հարցաքննելու հնարավորությունը /ոտքի ոսկրի կոտրվածք ստանալու հետևանքով տևական ժամանակ Դատարան ներկայանալու պատճառով/, սակայն, այնուամենայնիվ, Դատարանն այդ ապացույցը սույն դատական ակտի հիմքում չի դնում՝ հաշվի առնելով, որ պաշտպանական կողմի համար չի ապահովվել վերոնշյալ վկային հակընդդեմ հարցում իրականացնելու հնարավորությունը, այն էական ապացուցողական արժեք չի ներկայացնում, իսկ դրանում առկա փաստական տվյալներն ամբաստանյալների անմեղությունը չեն հիմնավորում, նրանցից որևէ մեկի պատասխանատվությունն ու պատիժը չեն մեղմացնում:

Դատարանի իրավական վերլուծությունները և դատողությունները.
Օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանք-ներ ունեցող գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ:
Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալների մեղավորության հարցը ստուգելու և պարզելու համատեքստում վերը թվարկված ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության և բավարարության հարցերը քննարկելիս կիրառելի են Արարատ Ավագյանի վերաբերյալ ԵԿԴ/0252/01/13 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատա-րանի 2014թ. հոկտեմբերի 31-ի արտահայտած իրավական դիրքորոշումները/օրենքի մեկնաբանությունները/:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ,(…) 3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել են-թադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ,Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ,:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ ,Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝
1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).
2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.
3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները…,:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ ,1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:
2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկա-վարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզ-մամբ,:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ,Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360-րդ հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ,:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ ,Դատավճռի նկարագրական - պատճառաբանական մասում ցույց է տրվում (...) 3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները,:
,Ապացույցների բավարարություն, հասկացության էությունը, ապացույցների բավարարությունը որոշելու ընդհանուր չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը Վճռաբեկ դատարանը քննարկել և վերլուծել է Ս.Սաքանյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման շրջանակներում:
Վկայակոչված որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով ,ապացուցման առարկա, և ,ապացույցների բավարարություն, հասկացություն-ները, նշել է. ,(…) եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների

հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ի՞նչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ի՞նչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար: Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշում, որ հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանա-կական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:
Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:
Վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ,ապացույցների բավարարությունը, որոշելու չափանիշներն են՝
1) անմեղության կանխավարկածը,
2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:
Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:
Վճռաբեկ դատարանը Մ.Հակոբյանի գործով որոշման մեջ շեշտել է. ,(…) ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մե-ղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար

ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (…), (տե՛ս Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013թ. մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը): Անմեղության կանխավարկածի սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել և իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով որոշման մեջ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքը, ի թիվս այլոց, ենթադրում է մեղադրանքի կողմի պարտականությունը ներկայացնելու անձին դատապարտելու համար բավարար ապացույցներ (Barbera Messegue and Jabardo v. Spain, գանգատ թիվ 10590/83, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, 77-րդ կետ, Janosevic v. Sweden, գանգատ թիվ 34619/97, 2002 թվականի հուլիսի 23-ի վճիռ, 97-րդ կետ):
Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքն ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:
Ապացույցների բավարարությունը որոշելու մյուս չափանիշին՝ ներքին համոզմունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ 2010թ. փետրվարի 12-ի թիվ ԵՔԴՈ/0632/01/08 որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ ,(…) ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստա-հությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահ-պանմամբ:
Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող կամայական լինել: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգա-մանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը: Ապացույցների գնահատումն համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառաբանական եզրահանգումների ձևով՝ հիմնավորելով, թե ինչու որոշ ապացույցներ դրվել են որոշման հիմքում, իսկ մյուսները՝ մերժվել են՝ ճանաչվելով ոչ հավաստի,: Համաձայն նույն նախադեպային որոշման՝ հակասական ապացույցների առկայության պարագայում, երբ հնարավոր չէ հիմնավորված հետևության հանգել անձի մեղավորության կամ անմեղության և այլ հարցերի վերաբերյալ, վարույթն իրականացնող մարմինը միայն ապացույցների հետազոտությունից և գնահատումից հետո կարող է ապացույցների մի մասին մյուսների նկատմամբ առավելություն կամ նվազ կարևորություն տալ:
Վերոնշյալ մեջբերման լույսի ներքո Դատարանը փաստում է, որ գործն ըստ էության քննող դատարանը կաշկանդված չէ քննվող դեպքի և դրա հանգամանքների, արարքի որակման (բացառությամբ ամբաստանյալի վիճակը վատթարացնելու) վերաբերյալ նախորդ դատավարական փուլերում տրված գնահատականներով, քանի որ ապացույցները գնահա-տելիս ղեկավարվում է իր ներքին համոզմունքով, ինչը կարող է տրամագծորեն տարբերվել մինչդատական վարույթի ընթացքում նույն ապացույցներին, դրանց վերաբերելիությանը, թույլատրելիությանը, գործի լուծման տեսանկյունով՝ արժանահավատության և բավարա-րության վերաբերյալ տրված գնահատականներից՝ պայմանով, որ ապացույցների գնա-հատումը լինի օրինական, փաստարկված և պատճառաբանված:
Այսպիսով, ,ներքին համոզմունքը, սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապա-ցույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածութ-յունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ

ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ):
Ելնելով այն հանգամանքից, որ ներքին համոզմունքն ունի օբյեկտիվ հիմքեր՝ անհրա-ժեշտ է այն տարբերակել ինտուիցիայից, ենթադրություններից և այլ անհաշվետու զգացմունքներից: Ի տարբերություն դրանց՝ ներքին համոզմունքը չի կարող ձևավորվել առանց օբյեկտիվ հիմքի և հիմնվել անթույլատրելի, ոչ վերաբերելի, անարժանահավատ ապացույցների վրա: Այլ խոսքով, ներքին համոզմունքը հիմնվում է ողջամիտ կարծիքի, գիտելիքի վրա, այլ ոչ թե ենթադրությունների, երևակայության, համակրանքի, հակակրանքի կամ կանխակալ կարծիքի վրա:
Ներքին համոզմունքի՝ որպես ապացույցների գնահատման արդյունքի օբյեկտիվ հիմքը քրեական գործով ձեռք բերված, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտված ապացույցների բավարար համակցությունն է: Վերոնշյալ իրավական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի լուծման համար ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշները սերտորեն փոխկապակցված են և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց: Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր հանոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կիաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:
Ս.Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է. ,Ապա-ցույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով (…): Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝
1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,
2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքն անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,
3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում, (տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 17-րդ կետը):
Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի ,հիմնավոր կասկածից վեր, ապացուցողական չափանիշը: Ընդ որում, ,հիմնավոր կասկածից վեր, ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:
Նույն նախադեպային որոշմամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ արժանահավա-տության տեսանկյունից ապացույցը գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.
ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),
բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից

կոնկրետ հան-գամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),
գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,
դ)ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,
ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:
Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները:
Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:
Դատաքննությամբ հետազոտված ապացույցների՝ վկաների, որպես մեղադրյալ հար-ցաքննված Հրաչյա Մայիլյանի, գործով ամբաստանյալների նախաքննական ցուցմունքների թույլատրելիության և օգտագործման հնարավորության հարցը պարզելիս Դատարանը ղեկավարվում է նաև ,Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի, գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016թ. նոյեմբերի 10-ի վճռով արտահայտված իրավական դիրքո-րոշումներով, այն է՝ ստուգում, թե դրանց օգտագործումն արդյո՞ք չի խախտում ,Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին, եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի ,դ, ենթակետով ամրագրված՝ ամբաս-տանյալների հակընդդեմ հարցման իրավունքը:
Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարանը) վերահաստատել է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի ,դ, ենթակետով սահմանված երաշխիքներն այդ դրույթի 1-ին կետով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ են (տե՛ս Ալ-Խավաջան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC]], թիվ 26766/05 և 22228/06, , 118, ՄԻԵԴ 2011):
Եվրոպական դատարանը փաստել է, որ բոլոր ապացույցները, սովորաբար, պետք է ներկայացվեն դռնբաց դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այդ սկզբունքից բացառությունները չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի ,դ, ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի [Khodorkovskiy and Lebedev v. Russia], թիվ 11082/06 և 13772/05, , 707, 2013 թվականի հուլիսի 25):
Ալ-Խավաջայի և Թահերիի գործի 119-147-րդ պարբերություններում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝
i) Դատարանը նախապատրաստական փուլում նախ՝ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, և որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.

ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես Ալ-Խավաջայի և Թահերիի գործում (վերևում հիշատակված), վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաև այլ օրինական պատճառներով.
iii) այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել վարույթի նախորդ որևէ փուլում, դատական քննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված գրավոր ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է ծայրահեղ միջոց լինի.
iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված գրավոր ցուցմունքները որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն ունենա: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ներկայացրած ապացույցների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.
v) ,միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի, համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաս-տանյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.
vi) այս համատեքստում ,վճռորոշ, բառը պետք է հասկանալ միայն այնպիսի նշանա-կության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը վճռորոշ կհամարվի.
vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի դատաքննության արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքը պետք է կիրառվի ճկուն եղանակով.
viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են հանդիսանում չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է դատական քննությունը հանգամանորեն իրականացնի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետևանքով, այն շատ կարևոր գործոն կհանդիսանա հավասարակշռությունն ապահովելու հարցում, և դրա համար անհրաժեշտ կլինեն բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ հուսալի ընթացակարգային երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ ձևով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձը դատապարտվի այդպիսի ցուցմունքների հիման վրա միայն այն դեպքում, եթե դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարևորությունը:
Վերոնշյալ սկզբունքները մանրամասնորեն պարզաբանվել են Շաչաշվիլիի գործում (տե՛ս Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Schatschaschwili v. Germany [GC]], թիվ 9154/10, ,, 111-131, ՄԻԵԴ 2015), որում Մեծ պալատը հաստատել է, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության արդարացի չլինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարևոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի ,դ, ենթակետի խախտում

արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի ոչ միայն բավարար հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել դիմու-մատուին դատապարտելու համար, ինչպես նաև այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության [Seton v. the United Kingdom], թիվ 55287/10, ,, 58 և 59, 2016 թվականի մարտի 31):
Դատարանը փաստում է, որ գործով որպես մեղադրյալ ներգրավված Հրաչյա Մայիլյանը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր ամբաստանյալ Սամվել Բաբայանի դրդմամբ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Վարդան Աղվանյանի հետ խմբի կազմում նախնական համաձայնությամբ ապօրինաբար ,Իգլա, տեսակի ռազմամթերք ձեռք բերելուց, փոխադրելուց և պահելուց՝ այդ ռազմամթերքը կամովին հանձնելու հիմքով, մինչդատական վարույթի ընթացքում վերոնշյալ ամբաստանյալների հետ չի առերեսվել, Դատարանում օգտվեց լռելու իրավունքից, որի պատճառով հրապարկվեցին նրա նախաքննական բոլոր ցուցմունքները, սակայն պաշտպանական կողմն ըստ էության զրկվեց նրան հարցաքննելու հնարավորությունից, քանի որ նա հրաժարվեց հարցերին պատասխանելուց: Տվյալ դրվագով նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված հավաստի ապացուցների բավարար ամբողջությունը՝ ռազմամթերքը կամովին ներկայացնելու արձանագրությունը, իրեղեն ապացույց ճանաչված ռազմամթերքի և դրա նկարները բովանդակող պլանշետ-համակարգչի առկայությունը, որպես ապացույց ճանաչված փաստաթղթերը /այդ թվում՝ նրա և գործով ամբաստանյալների հեռախոսային խոսակցությունների վերահսկման արդյունքները, ամբաստանյալ Ս.Բաբայանի նկատմամբ իրականացված ներքին դիտման ՕՀՄ արդ-յունքները/, համակարգչատեխնիկական և դատաձգաբանական փորձաքննությունների եզրակացությունները, վկաներ Սուսաննա Հարությունյանի, Աշոտ Շուշանյանի և Ռուստամ Սադոյանի, գործով ամբաստանյալների արժևորված ցուցմունքները և այլն, բավարար հակակշռող գործոն է, որն էականորեն նվազեցնում է այդ ապացույցի նշանակությունը՝ գործի լուծման և տվյալ դրվագով ամբաստանյալների մեղավորության փաստման հարցում: Դատարանը նաև արձանագրում է, որ որպես մեղադրյալ հարցաքննված Հրաչյա Մայիլյանի նախաքննական ցուցմունքները, որոնք ըստ վերջինիս՝ Դատարանում արված հայտարարության ճիշտ են, տվյալ դրվագով նրա ենթադրյալ հանցակիցների՝ ամբաստանյալների մեղադրանքների հիմքում դրված միակ կամ վճռորոշ ապացույցը չեն, հետևաբար՝ այդ ապացույցի օգտագործումն ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի արդար դատաքննության իրավունքը չի խախտում:
Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ կամ 190-րդ հոդվածի 1-ին մասի վերագրված դրվագով գործով ամբաստանյալներ Սամվել Բաբայանը, նրան օժանդակած Կարեն Քոչարյանը, Դավիթ Հարությունյանը, Անդրանիկ Քոչարյանը և Ժորա Զաքարյանը ևս մինչդատական վարույթի ընթացքում միմյանց հետ չեն առերեսվել, Դատարանում, բացառությամբ Սամվել Բաբայանի, օգտվեցին լռելու իրավունքից, որի պատճառով նրանցից յուրաքանչյուրն ըստ էության զրկվեց իր դեմ վկայած մյուս ամբաստանյալներին/բացառությամբ Ս.Բաբայանին/ հարցաքննելու հնարավորությունից, թեև նրանցից յուրաքանչյուրն էլ հայտարարեց, որ պնդում է Դատարանում ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի կարգով հրապարակված իրենց նա-խաքննական ցուցմունքները:
Տվյալ դրվագով նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված հավաստի ապացուցների բավարար ամբողջությունը, մասնավորապես՝ իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված՝ գործով ամբաստանյալ Դավիթ Հարությունյանի կողմից 2016թ. սեպտեմբերի 20-ին ներկայացված՝ ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկված 50 եվրո անվանական արժեքով տարբեր սերիաների և համարների թվով 100 թղթադրամները և դրանք Դատարանում զննելու արդյունքները (արձանագրությունը), այդ գումարը գործով ամբաստանյալ Դ.Հարությունյանի կողմից ներկայացնելու արձանագրությունը, իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված՝ գործով ամբաստանյալ Ժորա Զաքարյանի տան խուզարկությամբ հայտնաբերված ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկված 2 հատ 20 եվրո և մեկ հատ 50 եվրո անվանական արժեքներով թղթադրամները և դրանք Դատարանում զննելու արդյունքները (արձանագրությունը), ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով կատարված հարցումների արդյունքներով ստացված գրությունները, դատափաստաթղթաբանական փորձաքննության 2016թ. սեպտեմբերի 21-ի եզրակա-ցությունը, գործով ամբաստանյալներ Ժորա Զաքարյանի և Անդրանիկ Քոչարյան բնակարանների խուզարկություն կատարելու արձանագրությունները, քիմիական փորձաքննության 2016թ. նոյեմբերի 1-ի թիվ 58213816 եզրակացությունը, իրեղեն ապացույց ճանաչված և գործին կցված՝ գործով ամբաստանյալ Ժորա Զաքարյանի տանը կատարված խուզարկությամբ հայտնաբերված և վերցված ներկոտված թղթադրամները քիմիական մաքրման ենթարկելու համար նախատեսված նյութերը և դրանք Դատարանում զննելու արդյունքները (արձանագրությամբ), վկաներ Գոռ Շակոյանի, Արմեն Հակոբյանի, Համիկ Իխտիարյանի, Վրեժ Առաքելյանի դատաքննական ցուցմունքները, որպես ապացույց ճանաչված և գործին կցված փաստաթղթերը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումների հիման վրա գործով ամբաստանյալ Սամվել Բաբայանի նկատմամբ ՀՀ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների իրականացրած ,հեռախոսային խոսակցությունների վերահսկում, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները և դրանց զննման արձանագրությունը, ամբաստանյալ Սամվել Բաբայանի ցուցմունքների ստուգման, այլ ապացույցների հետ հա-մադրման և գնահատման արդյունքներով արժևորված փաստական տվյալները և այլն, բավարար հակակշռող գործոն է, որն էականորեն նվազեցնում է գործով վերոնշյալ ամբաս-տանյալների՝ հակընդդեմ հարցմամբ չապահովված նախաքննական ցուցմունքների նշանա-կությունը՝ գործի լուծման և տվյալ դրվագով ամբաստանյալների մեղավորության փաստման հարցում: Դատարանը նաև արձանագրում է, որ Դատարանում լռելու իրավունքից օգտված, սակայն միևչդատական վարույթի ընթացքում ցուցմունքներ տված գործով ամբաստանյալների նախաքննական ցուցմունքները նրանց մեղադրանքների հիմքում դրված միակ կամ վճռորոշ ապացույցները չեն, հետևաբար՝ նախաքննական այդ ցուցմունքների օգտագործումն ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի, Անդրանիկ Քոչարյանի և Ժորա Զաքարյանի արդար դատաքննության իրավունքը չի խախտում:
Դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 4-րդ կետերով նախատեսված հարցերը սույն դատական ակտով լուծելիս, այդ համատեքստում ամբաստանյալ Սանասար Գաբրիելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ նրա և վերջինիս պաշտպանների հարուցած և խորհրդակցական սենյակում անդրադառնալու պայմանով լուծումն հետաձգված միջնորդությունը /նույն փաստարկներով ներկայացված պաշտպանական ճառերը/ քննարկելիս, փաստում է, որ այդ միջնորդությունն անհիմն է, ենթակա է մերժման,

ամբաստանյալ Ս.Գաբրիելյանին, ինչպես նաև Արմեն Պողոսյանին, նրանց վերոնշյալ հանցագործությանը դրդած Սամվել Բաբայանին առաջադրված մեղադրանքները հիմնավոր են, նրանք ենթակա են քրեական պատասխանատվության և պատժի, որպիսի հետևության Դատարանը հանգում է հետևյալ իրավական վերլուծությունների և դատողությունների արդյունքներով.
ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահ-մանում ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:
Հոդվածում նկարագրված գործողությունների հանրային վտանգավորությունն այն է, որ դրանցով նշված առարկաների հանցավոր նպատակներով օգտագործման իրական հնարա-վորություն է ստեղծվում, ինչը վտանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտ են հանդիսանում հոդվածում նշված առարկաների և սարքավորումների անօրինական շրջանառությունից մարդու և հասարա-կության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություննե-րը:
ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործութ-յան առարկա է հանդիսանում նաև ռազմամթերքը (բացի ողորկափող հրազենի փամփուշտ-ներից): Ռազմամթերքի հասկացությունը նույնպես տրված է ,Զենքի մասին, ՀՀ օրենքում, ո-րի 1-ին հոդվածի ,ը, կետի համաձայն՝ ռազմամթերքը նշանակետը խոցելու համար նախա-տեսված զինման առարկաներն են, սարքերը և նետվող հարմարանքները, որոնք պարունա-կում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր կամ դրանց հա-մակցություն: Ռազմամթերք են համարվում հրանոթային արկերը, ականները, ռումբերը, փամփուշտները:
Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ապօրինի կերպով հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու մեջ, այսինքն՝ հանցակազմի օբյեկ-տիվ կողմը նկարագրված է երկընտրելի գործողությունների միջոցով, որոնցից թեկուզ մեկի կատարումը բավական է արարքն ավարտված հանցագործություն ճանաչելու համար: Հան-ցակազմը ձևական է. արարքն ավարտված հանցագործություն ճանաչելու համար բավական է հոդվածում նկարագրված գործողություններից որևէ մեկի կատարումը՝ անկախ հետևանք-ներից:
ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է, որ տվյալ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված գործո-ղությունները կատարվեն ապօրինի կերպով, այսինքն՝ ,Զենքի մասին, ՀՀ օրենքի պահանջնե-րի խախտմամբ: Զենք ձեռք բերելու, ինչպես նաև զենքի այլ շրջանառության հետ կապված հարցերը կարգավորվում են այդ օրենքով:
Հանցագործությունը կատարվում է միայն գործողությամբ, հանցակազմի օբյեկտիվ կող-մը դրսևորվում է հոդվածում նկարագրված գործողություններից որևէ մեկի /ձեռք բերել, ի-րացնել, փոխադրել, պահել, կրել/ կատարմամբ:
Հրազենի կամ հոդվածում նշված մյուս առարկաների ձեռք բերել ասելով՝ հասկացվում է նշված առարկաների գնումը, նվեր ստանալը, փոխանակելը, պարտքի դիմաց ստանալը, գտնելը, ապօրինի պահել ասելով՝ դրանք որոշակի տարածքներում, գաղտնարաններում, ինչպես նաև այնպիսի վայրերում պահելը, որոնք ապահովում են նշված առարկաների պահ-պանությունը: Վերոնշյալ առարկաների փոխադրել ասելով՝ օրենսդիրն ի նկատի է ունեցել դրանց տեղափոխումը տրանսպորտային տարբեր միջոցների օգտագործմամբ:
Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:
Որպես ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցա-կազմի ծանրացնող հանգամանք՝ նախատեսված է

նույն արարքների կատարումը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Հանցանքը կհամարվի նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարված, եթե խմբի առնվազն երկու անդամ իրականացնում է հանցագործության օբյեկտիվ կողմը (առնվազն երկու անդամ ապօրինի կերպով ձեռք են բե-րում, իրացնում, պահում կամ կրում են հոդվածում նշված առարկաներից որևէ մեկը):
ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածն ունի խրախուսական նորմ. այդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերոնշյալ առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունա-կում:
Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը իր հայեցողությամբ է հանձնում նշված ա-ռարկաները՝ գիտակցելով, որ իրեն բացահայտելու իրական սպառնալիք այդ պահին չկար: Եթե անձը զգում է, որ առկա է իրեն բացահայտելու իրական սպառնալիքը և դրանից դրդված է իրականացնում հանձնումը, ապա այն չի համարվում կամովին:
Դատարանը, հաշվի առնելով, որ գործով ամբաստանյալ Ս.Գաբրիելյանին մե-ղադրանք է առաջադրվել խմբի կողմից նախնական համաձայնությամբ ապօրինաբար ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և փոխադրելու համար, ինչը դատաքննության արդյունքներով հաստատվեց, փաստում է, որ նախ՝ անհրաժեշտ է նաև հակիրճ անդրա-դառնալ հանցանքը խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարելու, խմբի անդամներից որևէ մեկի կողմից հանցանքի կատարումից կամովին հրաժարվելու, ինչպես նաև ռազմամթերքը կամովին հանձնելու ինստիտուտների քրեաիրավական վերլուծությանը:
Ձենքը կամովին հանձնելու վերաբերյալ իրավական դիրքորոշում ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 18-ի ԵԱՆԴ/0011/01/14 գործով և քրեական օրենքի վերոնշյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև սույն քրեական գործով:
ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախա-տեսում ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:
Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:
Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա են նորմեր, որոնք կարգավորում են հանցագործություն կատարելուց հետո անձի կողմից դրսևորած պոզիտիվ վարքագծի հիման վրա ծագող հատուկ հասարակական հարաբերություններ: Օրենսդրի կողմից հիշյալ հարաբերությունները կարգավորող նորմերը զետեղված են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 11-րդ գլխում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված առանձին հոդվածներում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և այլ հոդվածներ): Վկայակոչված նորմերն իրենց բնույթով խրախուսական են, որոնք քրեորեն հետապնդելի արարք կատարած անձին առաջարկում են իրականացնել սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագիծ՝ նրա արարքը խթանելով խրախուսանքով: Այդ նորմերում սահմանվում են պահանջներ, որոնց իրականացման դեպքում հնարավոր է եզրակացնել, որ հանցագործություն կատարած անձը կորցրել է իր երբեմնի հանրային վտանգավորությունը, որի արդյունքում նպատակահարմար է այդ անձին ազատել քրեաիրավական ներգործության միջոցներից, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունից:
ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առանձին հանցակազմերի առնչությամբ խրախուսական նորմերի նախատեսումն ինքնանպատակ չէ: Այն որոշակի բնույթի հանցագործությունների դեմ պայքարի յուրահատուկ միջոց է, որն ուղղված է դրանց խափանմանը կամ դրանց հետ կապակցված այլ հանցագործությունների կանխմանը կամ բացահայտմանը:
ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմը նպատակ ունի ապօրինի պահվող զենքի և նորմում

թվարկված մյուս առարկաների կամավոր հանձնումը խրախուսելու եղանակով դադարեցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումը և այդպիսով կանխելու հետագայում դրանց հնարավոր գործադրմամբ անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված կամ այլ հանցագործությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքների հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով նախատեսված առարկաները հանցավոր նպատակով օգտագործելու իրական հնարավորություն է ստեղծվում, ինչը վտանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը հոդվածում նշված առարկաների անօրինական շրջանառությունից մարդու և հասարակության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հետևաբար՝ հոդվածում նշված առարկաների հանձնման դեպքում ապահովվում է տվյալ հանցագործութ-յան օբյեկտի պահպանությունը, իսկ հանձնման կամավորության դեպքում՝ վերանում հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը:
Հոդվածում նշված առարկաների հանձնման կամովին լինելու հարցը Վճռաբեկ դատարանն իրավական վերլուծության է ենթարկել Հ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. ,Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, (տ՛ս Հ.Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/ 01/08 որոշման 20-րդ կետը):
Վերահաստատելով և զարգացնելով վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկվող հոդվածում նշված առարկաների հանձնումը կարող է համարվել կամովին, եթե անձը, գիտակցելով դրանք ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորությունը, այդուհանդերձ հանձնում է քննարկվող առարկաները կամ հայտնում դրանց գտնվելու վայրի մասին: Քննարկվող առարկաներն ապօրինի պահելու իրական հնարավորություն անձը կարող է ունենալ, եթե, օրինակ, վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէ զենքի գոյության մասին կամ բացակայում են դրա բացահայտման օբյեկտիվ հնարավորության մասին վկայող հանգամանքները և անձը ողջամտորեն գիտակցում է դա:
Նախնական համաձայնությամբ գործած խմբի հատկանիշների պարզաբանմանը և խմբի անդամների քրեաիրավական պատասխանատվության անհատականացման խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գևորգ Ճաղարյանի և մյուսների վերաբերյալ 2012թ. օգոստոսի 24-ի ԵԴԴ/0002/01/11 գործով, որպիսի իրավական դիրքորոշումները՝ քրեական օրենքի մեկնաբանության առումով կիրառելի են նաև սույն քրեական գործով:
ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ,Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար,:
ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ,Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից,:
ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ,Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական

ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար,:
ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ ,Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը,:
ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ,Համակատարողները հանցագործության համար ենթակա են պատասխանատվության սույն օրենսգրքի Հատուկ մասի նույն հոդվածով,:
ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ,Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը,:
ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝
, (...) 2. Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործություն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:(...),:
ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում ամրագրված հանցակցության դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել են Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի գործով կայացված որոշման մեջ (տե՛ս mutatis mutandis Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-30-րդ կետերը):
ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում ամրագրված դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել են Հ.Սարգսյանի և այլոց գործով կայացված որոշման մեջ (տե՛ս mutatis mutandis Հակոբ Սարգսյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԴ/0136/01/10 որոշման 12-18-րդ կետերը): Նշված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ ,Նախնական համաձայնությամբ գործող անձանց պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մաս) հանցագործության մասնակիցները մինչև հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններն սկսելը պայմանավորվում են հանցանքը համատեղ կատարելու մասին: Ընդ որում, համաձայնությունը ձեռք է բերվում խմբի անդամների կողմից գործողությունների համատեղ կատարման ուղղվածության, հանցագործության կատարման տեղի, ժամանակի, եղանակի և միջոցների, ինչպես նաև խմբի անդամների միջև դերաբաշխման շուրջ (…), (տե՛ս Հակոբ Սարգսյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԴ/0136/01/10 որոշման 18-րդ կետը):
Վերահաստատելով և զարգացնելով Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի, ինչպես նաև Հ.Սարգսյանի և այլոց գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանցակիցներից յուրաքանչյուրի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս անհրաժեշտ է հաստատել, որ նա մասնակցել է այնպիսի հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը, որն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում և որի կապակցությամբ հաստատված է նրա մեղքը: Այլ խոսքով՝ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս նրանցից յուրաքանչյուրի արարքը պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ մյուս բոլոր հանցակիցների հետ համակցության մեջ՝ պարզելով հանցակիցներից յուրաքանչյուրի արարքի հանրային վտանգավորությունն ու հակաիրավականությունը և հետևաբար՝ նաև հանցակիցներից յուրաքանչյուրի արարքում հանցագործության հատկանիշների և քրեական պատասխանատվության հիմքերի առկայությունը:
Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է

	պարզի և գնահատի հանցակիցների կողմից համատեղ կատարված բոլոր արարքները, ինչպես նաև այդ արարքների հետևանքները՝ արդյունքում՝ ուրվագծելով հանցակիցներից յուրաքանչյուրի՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու սահմաններն ու ծավալները: Վերոշարադրյալ դիրքորոշման լույսի ներքո համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածում ամրագրված՝ ըստ մեղքի պատասխանատվության և 10-րդ հոդվածում ամրագրված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր, այդ թվում՝ համատեղ կատարված հանցավոր արարքն անհատական բնույթ ունի, ուստի հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից և բացառել կատարված արարք(ներ)ի համար հանցակիցներին ,հավասարաչափ,, այսինքն՝ ոչ ըստ յուրաքանչյուր հանցակցի մեղքի քրեական պատաս-խանատվության ենթարկելու հնարավորությունը: Իրականացնելով պատասխանատվության անհատականացում՝ վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր հանցակցի մասով պետք է պարզի, թե ինչպիսին է եղել նրա դերը հանցավոր վարքագծի դրսևորման ժամանակ, ինչ մասնակցության աստիճան է նա ունեցել, ինչ ձևով է դրսևորվել այդ մասնակցությունը՝ ակտիվ, թե՝ պասիվ: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասում իր ամրագրումը ստացած՝ հանցագործությանը հանցակիցներից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը հաշվի առնելու պարտականությունն առկա է ոչ միայն հանցակիցներին պատասխանատվության ենթարկելու, այն է՝ գործով դատավճիռ կայացնելու փուլում, այլ նաև հանցակիցներից յուրաքանչյուրին մեղադրանք առաջադրելիս նրանց արարք(ներ)ին քրեաիրավական որակում տալու փուլում: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանցակիցներից յուրաքանչյուրի նկատմամբ կոնկրետ հանցակազմի սանկցիայի շրջանակներում կոնկրետ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հաջորդաբար պարզել, թե՝ ա) ինչ արարք է կատարվել և արդյոք դրանում առկա է հանցակազմ, բ) արդյոք արարքի կատարմանը մասնակցել են երկու կամ ավելի անձինք և արդյոք նրանց գործողություններում (անգործությունում) առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հանցակցության ձևերից որևէ մեկը, գ) հանցակիցներից յուրաքանչյուրը կոնկրետ ինչ գործողություն (անգործություն) է կա-տարել, դ) հանցակիցներից յուրաքանչյուրը մասնակցության ինչ աստիճան է ունեցել հանցավոր արարքի կատարմանը, ե) հանցակիցներից յուրաքանչյուրին ինչ ծավալով պետք է մեղսագրվի կատարված արարքը: Ամփոփելով վերոնշյալ վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հան-ցակցությամբ կատարված արարքը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեղի է ունեցել հանցավոր արարք, որի կատարմանը մասնակցել են երկու և ավելի անձինք, ովքեր գործել են համատեղ, դիտավորյալ և կատարել են դիտավորյալ հանցագործություն: Ուստի, իրավախախտման փաստը պետք է կոնկրետացվի յուրաքանչյուր հանցակցի մասով, իսկ դրա հանգամանքները անհատականացվեն՝ հաշվի առնելով անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ միայն վերոնշյալ հանգամանքների հստակ պարզման և դատավարական փաստաթղթերում ամրագրման դեպքում է հնարավոր լուծել այդ արարքները կատարած անձանց քրեական պատասխանատվության հարցը: Սույն գործի դատաքննության արդյունքներով Դատարանը փաստում է, որ իրեղեն ապացույց ճանաչված ռազմամթերքը կամովին հանձնելու համար քրեական հետապնդումը դադարեցվել է բացառապես

Հր.Մայիլյանի նկատմամբ, որի վերաբերյալ քրեական գործում առկա և դատաքննությամբ հետազոտվել են համապատասխան փաստաթղթեր /ռազմամթերքը կամովին հանձնելու արձանագրություն, Հր.Մայիլյանի՝ հրապարակված և հետազոտված նախաքննական ցուցմունքները, վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2017թ. հունիսի 7-ի որոշումը/, որի պայմաններում Դատարանն իրավասու չէ անդրադառնալ պաշտպանական կողմի վիճարկած՝ Հր.Մայիլյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու որոշման իրավաչափությանը: Այն գտնվում է սույն գործի դատական քննության սահմաններից դուրս, ավելին՝ իրավասու ան-ձինք այն կարող էին վիճարկվել այլ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վե-րահսկողության շրջանակներում: Դատարանը արձանագրում է նաև, որ ռազմամթերքի կամովին հանձնումը տեղի է ունեցել խմբի կազմում գործած ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և այլ անձի կամքից անկախ հանգամանքներով, առանց նրանց գիտության և համաձայնության, հետևաբար՝ ռազմամթերքի կամովին հանձնմամբ պայմանավորված իրավական հետևանքները վերջիններիս նկատմամբ կիրառելի չեն:
Դատարանը փաստում է, որ ուղղակի դիտավորությամբ կատարվող հանցագործության հանցակազմի փուլերն են՝ հանցագործության նախապատրաստությունը, հանցափորձը և ավարտված հանցագործությունը: Այն դեպքում, երբ հանցագործությունն ավարտվում է, հանցագործության նախապատրաստությունն ու հանցափորձի փուլերը կլանվում են վերջինիս կողմից և կորցնում են իրենց ինքնուրույն իրավաբանական նշանակությունը:
ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը /անգործությունը/, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:
ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստութ-յունը կամ հանցափորձը կամ հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործութ-յունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնա-րավորությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձն ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարածն այլ հանցակազմ չի պարունակում:
Տվյալ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ հանցագործության դրդիչը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կարարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Եթե /.../ դրդիչի վերոնշյալ գործողությունները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս կարող են հաշվի առնվել որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:
ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համակատարողները հանցագործության համար ենթակա են պատասխանատվության նույն օրենսգրքի Հատուկ մասի նույն հոդվածով:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ /.../ դրդիչը ենթակա է պատասխանատվության կատարված հանցանքը նախատեսող հոդվածով՝ հղում կատարելով սույն օրենսգրքի 38-րդ հոդվածին, բացառությամբ այն դեպքերի, երբ նա միաժամանակ եղել է հանցագործության համակատարող:
Տվյալ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կատարողի կողմից իրենից անկախ հանգա-մանքներով հանցագործությունն ավարտին չհասցնելու դեպքում մյուս հանցակիցները պատասխանատվություն են կրում հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձին հանցակցելու համար:
ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե /.../

դրդիչի գործողությունները չեն հաջողվում իրենից անկախ հանգամանքներով, ապա այդ անձի պատասխանատվությունը վրա է հասնում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար:
Մեջբերված իրավական նորմերի մեկնաբանությունից ակնհայտ է, որ տվյալ իրադ-րությունում անձի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու կամ նրա կատարածը որպես հանցափորձ (դրդիչի դեպքում՝ նախապատրաստություն) որակելու հարցը որոշվում է մեկ չափանիշով՝ արդյոք անձը գիտակցե՞լ է տվյալ իրադրությունում հանցանք ավարտին հասցնելու իր հնարավորությունը, թե՝ ոչ, այսինքն՝ էականն ու որոշիչն հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումն է. եթե անգամ օբյեկտիվորեն հնարավորություն չի եղել հանցագործությունն ավարտին հասցնել, սակայն անձը թյուրիմացաբար կարծել է, թե նման հնարավորություն ունի՝ դադարեցնելով հանցանքի կատարմանն ուղղված իր գործունեությունը, ապա հանցագործությունից կամովին հրաժարումն առկա է:
Սույն դատական ակտում արդեն նշվել էր, որ ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանին և Արմեն Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, նրանց դրդած Սամվել Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրվող հանցակազմը նյութական է, հանցանքն ավարտված է համարվում ռազմամթերքը ձեռք բերելու, պահելու և փոխադրելու արարքներից որևէ մեկը կատարելու պահից:
Ըստ ամբաստանյալներ Ս.Գաբրիելյանին և Ա.Պողոսյանին, նրանց հանցագործության դրդած Ս.Բաբայանին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումների՝ 50.000 ԱՄՆ դոլար ապօրինի կերպով ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիր ձեռք բերելու վերաբերյալ տալով իր համաձայնությունը՝ Սանասար Գաբրիելյանը հանցավոր այդ մտադրությունն իրականացնելու համար դիմել է Վաղարշապատ քաղաքի բնակիչներ Արմեն Պողոսյանին և Հրաչյա Մայիլյանին, ով Վրաստանում գործնական կապեր է ունեցել՝ խոստանալով տրամադրել նախապես պայմանավորված գումարը: Ձեռք բերված համաձայնության շրջանակներում հանցավոր մտադրությունն իրագործելու համար Սանասար Գաբրիելյանը, Արմեն Պողոսյանը և Հրաչյա Մայիլյանը 2016թ. սեպտեմբերի 1-ին մեկնել են Վրաստան, որտեղ, օգտագործելով Մայիլյանի ծանոթությունները և կապերը, փորձել են գտնել վերոնշյալ ռազմամթերքը, այնուհետև ինչպես միասին, այնպես էլ առանձին-առանձին, նույն նպատակով պարբերաբար մեկնել են Թբիլիսի, ինչպես նաև Ուկրաինայի Գորլովկա քաղաք: Վրաստան հերթական այցելության ժամանակ՝ 2017թ. փետրվարի 22-ին, Արմեն Պողոսյանը և Հրաչյա Մայիլյանը նույն հարցով հանցավոր համաձայնություն են ձեռք բերել ՀՀ քաղաքացի, Վաղարշապատ քաղաքի բնակիչ, վերջին մի քանի տարիներին Վրաստանում բնակվող Ռոբերտ Աղվանյանի հետ, ով պատրաստակամություն է հայտնել 38.000 ԱՄՆ դոլար գումարով տրամադրել պահանջող դյուրակիր զենիթահրթիռային համալիրը, իսկ 2017թ. մարտի 15-ին արդեն ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, Հրաչյա Մայիլյանին հնարավորություն է տվել վերջինիս ,Սամսունգ, ապրանքանիշի պլանշետ-համակարգչի ֆոտոխցիկով նկարել այդ համալիրը՝ ձեռքբերման նախաձեռնող Սամվել Բաբայանին ցույց տալու համար, իսկ 2017թ. մարտի 17-ին Հր.Մայիլյանից 4.000 ԱՄՆ դոլար կանխավճար ստանալու դիմաց նույն գյուղում ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի բաղկացուցիչ մաս կազմող, ռազմամթերք հանդիսացող արձակման խողովակը և 9Մ39 տեսակի 03277 համարի հրթիռը փոխանցել է Հր.Մայիլյանին՝ գումարի մնացած մասը պատվիրատուներից ստանալու պայմանով: Իր հերթին, Հրաչյա Մայիլյանը նույն օրը ռազմամթերքը տեղափոխել և պահել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Թամանյան փողոցի 24 հասցեում գտնվող ավտոտնակում, որտեղ Սանասար Գաբրիելյանի ցուցումով՝ Արմեն Պողոսյանի հետ նույն պլանշետ-համակարգչի ֆոտոխցիկով այն վերստին լուսանկարել են՝ լուսանկարները Սամվել Բաբայանին ցուցադրելու նպատակով: Հաջորդ օրը՝ 2017թ. մարտի 18-ին, Սանասար Գաբրիելյանը Արմեն Պողոսյանից վերցրած պլանշետ-համակարգչում

առկա լուսանկարները ցուցադրել է Սամվել Բաբայանին, ով հանձնարարել է սարքին պահելու և նպատակային նշանակությամբ օգտագործելու պիտանելիությունը պահպանելու համար այդ ռազմամթերքը տեղավորել արկղի մեջ, տեղափոխել ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նարիշտար գյուղ, պահել հողի մեջ՝ լուսանկարելով պահման վայրը: Միաժամանակ, Սանասար Գաբրիելյանի խնդրանքին ի պատասխան՝ Սամվել Բաբայանը պարտավորվել է մի քանի օրվա ընթացքում նրան հանձնել խոստացված գումարը՝ վերոնշյալ ռազմամթերքի ձեռքբերմամբ և փոխադրմամբ զբաղված անձանց փոխանցելու համար: Նույն խոստումը Սամվել Բաբայանը պնդել է Սանասար Գաբրիելյանի հետ նաև հաջորդ օրը՝ 2017թ. մարտի 19-ին կայացած հանդիպման ժամանակ, սակայն Հրաչյա Մայիլյանը 2017 թվականի մարտի 22-ին ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և 9Մ39 տեսակի 03277 համարի հրթիռը կամովին հանձնել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցներին: Տեղեկանալով հանցակցի՝ Սանասար Գաբրիելյանի ձերբակալման մասին՝ Սամվել Բաբայանը միջոցներ է ձեռնարկել Ս.Գաբրիելյանի հետ նախնական համաձայնության շրջանակներում վերոնշյալ ռազմամթերքը՝ ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և 9Մ39 տեսակի 03277 համարի հրթիռը ձեռք բերած այլ անձանց գտնելու, այդ ռազմամթերքը թաքցնելու և պլանշետ- համակարգչով իրեն ցուցադրված լուսանկարները ջնջելու ուղղությամբ, սակայն Ս.Բաբայանը ևս ձերբակալվել է:

Դատաքննությամբ հաստատվեց, որ Սամվել Բաբայանի կողմից նյութապես շա-հագրգռվելու խոստում ստանալու պայմաններում Սանասար Գաբրիելյանն ապօրինի ռազ-մամթերք ձեռք բերելու, պահելու և փոխադրելու հարցով նախնական համաձայնություն է ձեռք բերել նախ՝ Արմեն Պողոսյանի, վերջինիս միջոցով՝ Հրաչյա Մայիլյանի, ապա՝ նաև Ռոբերտ Աղվանյանի հետ /Մայիլյանի գործողությունները հիշատակվում են այնքանով, որքանով, որ դրանք անհրաժեշտ են սույն վերլուծությունը կատարելու և սույն գործով ամբաստանյալների արարքների որակման իրավաչափությունը պարզելու նպատակով՝ հաշվի առնելով, որ Հր.Մայիլյանի նկատմամբ առկա է քրեական հետապնդման մարմնի՝ քրեական հետապնդում չհրականացնելու մասին չվերացված որոշում, իսկ սույն գործով մեղադրանքի հետ առնչվող մեկ այլ գործով մեղադրյալ Ռոբերտ Աղվանյանը գտնվում է հետախուզման մեջ, նրա մեղավորության հարցը հեռակա կարգով Դատարանն իրավասու չէ պարզել և նման նպատակ չի հետապնդում/: Ռոբերտ Աղվանյանը չպարզված աղբյուրից ենթադրաբար ձեռք է բերել և ՀՀ-ում պահել վերոնշյալ ռազմամթերքը և 4.000 ԱՄՆ դոլար կանխավճար ստանալով՝ այն, դարձյալ ՀՀ-ում, հանձնել է Հրաչյա Մայիլյանին: Իր հերթին Հր.Մայիլյանը վերոնշյալ ռազմամթերքը, առանց վերոնշյալ խմբի մյուս անդամների՝ սույն գործով ամբաստանյալներ Արմեն Պողոսյանի և Սանասար Գաբրիելյանի գիտության և նախնական համաձայնության, կամովին հանձնել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցներին:

Վերոնշյալ իրավական վերլուծությունները սույն գործով հաստատված հանգամանքների վրա տարածելով՝ Դատարանը փաստում է, որ՝ ամբաստանյալ Սանասար Գաբրիելյանը ,Իգլա, տեսակի դյուրակիր ՋՀՀ-ի համար չվճարելու մասին իր մտադրությունը Արմեն Պողոսյանին և Հրաչյա Մայիլյանին հայտնել է այն ժամանակ, երբ նրա և Ա.Պողոսյանի հանցավոր գործողությունների արդյունքում խմբի ենթադրյալ մյուս երկու անդամները՝ Ռոբերտ Աղվանյանը և Հրաչյա Մայիլյանը ձեռք էին բերել, փոխադրել և ՀՀ-ում պահում էին վերոնշյալ ռազմամթերքը, այսինքն՝ խմբի ենթադրյալ մյուս անդամները Ս.Գաբրիելյանի և Ա.Պողոսյանի գիտությամբ և համաձայնությամբ, ռազմամթերք ձեռք բերելու նախնական հանցավոր դիտավորության շրջանակներում գործելով, ավարտել էին ապօրինաբար ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու և պահելու հետ կապված գործո-ղությունները: Այսպիսով, տվյալ կոմպլեկտավորմամբ ,Իգլա, տեսակի դյուրակիր ՋՀՀ-ի ձեռքբերման համար վճարելուց հրաժարվելու պահին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունն արդեն իսկ ավարտված էր, այդ թվում՝ խմբի կազմում գործած ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի և Արմեն Պողոսյանի

համար, որի պայմաններում նրանց փաստացի կատարած գործողությունները պարունակում են այդ հոդվածով նախատեսված ավարտված հանցագործության հատկա-նիշներ: Ավելին, դատաքննությամբ հետազոտված ապացույցների համադրման և գնա-հատման արդյունքներով հաստատվեց, որ գործով ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը և Ա.Պողոսյանը, նրանց վերոնշյալ հանցանքին դրդած Ս.Բաբայանը ,Իգլա, տեսակի ռազմամթերքի համար վճարելուց, այդ կերպ՝ ըստ պաշտպանական կողմի վարկածի՝ այն ձեռք բերելու հանցավոր մտադրությունից հրաժարվել են ոչ թե վերջնականապես, այլ միայն հետաձգել են դա, որի մասին են վկայում՝ իրեղեն ապացույց ճանաչված ռազմամթերքը ԼՂՀ Նարիշտար համայնքում թաքցնելու և անհրաժեշտ պայմաններում պահելու Ս.Բաբայանի և Ս.Գաբրիելյանի միջև կայացած զրույցը, միաժամանակ դրա բացակայող, սակայն բաղկացուցիչ մասերի որոնման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու մտադրության մասին խմբի անդամների՝ վերահսկված հեռախոսային զրույցները, ինչպես նաև մեկի փոխարեն երեք հրթիռներով կոմպլեկտավորված և այլ բաղկացուցիչ մասերով հագեցված ,Իգլա, տեսակի դյուրակիր ՋՀՀ գնելու պատրաստակամության մասին Ա.Պողոսյանին, Հր.Մայիլյանին և Ռ.Աղվանյանին հայտնելու փաստը և այլն:

Անդրադառնալով Ս.Բաբայանին տվյալ դրվագով վերագրված արարքի որակման և նրան առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության խնդրին՝ Դատարանը փաստում է, որ վերը նշված վերլուծությունների և դատողությունների համատեքստում այդ որակումն ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով իրավաչափ է, այն չի կարող որակվել որպես տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության նախապատրաստություն, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումից: Տվյալ հետևության հանգելիս Դատարանը հաշվի է առնում Հր.Մայիլյանի կողմից ռազմամթերքը կամովին հանձնելուն նախորդած ժամանակահատվածում խմբի մյուս անդամների հանցավոր գործողությունների՝ ավարտված հանցակազմ պարունակելու փաստը, որի պայմաններում անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ միայն ռազմամթերքը կամովին հանձնած Հր.Մայիլյանի՝ հանձնմամբ պայմանավորված գործողությունը, այլ նախնական համաձայնության շրջանակներում նրա հետ ռազմամթերք ձեռք բերած, փոխադրած ու պա-հած Արմեն Պողոսյանի, Սանասար Գաբրիելյանի և այլ անձի ավարտված հանցավոր գոր-ծողությունները:

Անդրադառնալով պաշտպանական կողմի վիճարկումներին, դրա հիմքում դրված ,Ներքին դիտում, և ,Հեռախոսային խոսակցությունների լսում և ձայնագրառում, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների՝ որպես ապացույց անթույլատրելիության և օգտագործման անհնարինության վերաբերյալ պնդումներին/ նաև միջնորդությանը/, ռազմամթերքը կամովին հանձնած և այդ հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված Հրաչյա Մայիլյանի նկատմամբ քրեական հետապնդում չհրականացնելու իրավաչափության վերաբերյալ վիճարկումներին՝ Դատա-րանը փաստում է, որ դրանց մի մասն անհիմն է, իսկ մյուս մասի քննարկումն ու լուծումը դուրս է գործն ըստ էության լուծող դատարանի լիազորությունների սահմաններից, քանի որ՝

- գործի նյութերում առկա և դատաքննությամբ հետազոտվել են համապատասխան փաստաթղթեր, որոնք հաստատում են այն, որ վերոնշյալ ՕՀ միջոցառումներն իրականացվել են Դատարանի թույլտվությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանր հանցանք կատարելու համար կասկածվող Հրաչյա Մայիլյանի նկատմամբ, հետևաբար՝ չպարզված աղբյուրից կամ դատավարական կարգի խախտմամբ վերոնշյալ ապացույցները ձեռք բերելու վերաբերյալ պաշտպանական կողմի պնդումները փաստական հիմք չունեն, վերացական դատողություններ են, տվյալ ՕՀ միջոցառումներ իրականացրած հետաքննության մարմնի ղեկավարի և համապատասխան աշխատակիցների գործողությունները պաշտպանական կողմը կարող էր այդ փաստաթղթերն իրենց հասու դառնալու պահից վիճարկվել դատախազական հսկողության, ապա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, իսկ նշված ՕՀ

միջոցառումների իրականացումը թույլատրած դատարանի որոշումները՝ վերաքննության կարգով, քանի որ այդ ՕՀ միջոցառումների արդյունքներն անմիջականորեն վերաբերելի էին ինչպես Սամվել Բաբայանին, այնպես էլ սույն գործով մյուս ամբաստան-յալներին /առնչվում էին նրանց շահերին/:
- Նախաքննական մարմնի չվերացված որոշման առկայությունը՝ ռազմամթերքը կամովին հանձնած Հրաչյա Մայիլյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը սահմանափակում են գործն ըստ էության քննող դատարանի լիազորությունները՝ տվյալ որոշման իրավաչափությունը ստուգելու և պարզելու հարցում, հետևաբար՝ պաշտպանական կողմը, իրենց պաշտպանյալների իրավունքներին առնչվելու հանգամանքը բավարար հիմնավորելու պայմաններում, զրկված չէր նաև այդ որոշումը նրանց հասու դառնալու պահից սկսած դատախազական հսկո-ղության, ապա միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում վիճարկելու հնարավորությունից: Դատարանը արձանագրում է միայն, որ ,Իգլա, տեսակի ռազմամթերքն ենթադրաբար ոչ կամովին հանձնելու վերաբերյալ պաշտպա-նական կողմի վարկածը Հրաչյա Մայիլյանի՝ Դատարանում հրապարակված և հետա-զոտված նախաքննական ցուցմունքներն անարժանահավատ և անթույլատրելի ճանաչելու բավարար և հիմնավոր փաստարկ չէ, քանի որ այդ վարկածը չի հաստատվել դատաքննությամբ հետազոտված թույլատրելի, վերաբերելի և հավաստի որևէ ապացույցով: Ավելին, դատաքննությամբ, ի թիվս այլ ապացույցների, հետազոտվեց նաև Հրաչյա Մայիլյանին բերման ենթարկելու արձանագրությունը, համաձայն որի՝ վերջինս 2017թ. մարտի 21-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենք է բերման ենթարկվել ոչ թե ,Իգլա, տեսակի դյուրակիր ՁՀՀ ապօրինի շրջանառությամբ զբաղվելու, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով և ծագած այդ կասկածանքի շուրջ հարցաքննվելիս է հայտնել կամովին ռազմամթերք հանձնելու իր մտադրության մասին, ի վերջո հանձնել այն:
Արձանագրելով, որ դատարանի թույլտվությամբ իրականացված ՕՀ միջոցառումների արդյունքները թույլատրելի և վերաբերելի, հարաբերականորեն չեզոք/օբյեկտիվ/ ապացույցներ են՝ Դատարանը հակիրճ անդրադառնում է դրանց այն հատվածին, որոնք անմիջականորեն հաստատում են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքին դրդելու վերաբերյալ գործով ամբաստանյալ Սամվել Բաբայանի գործողությունները, բացահայտում այն հերքող նրա և այլ ամբաստանյալների դատաքննական ցուցմունքների և պատճառաբանությունների մտացածին բնույթն ու անարժանահավատությունը:
Այսպես, 2017թ. փետրվարի 22-ին՝ ժամը 11.26-ին Սանասար Գաբրիելյանի և Հրաչյա Մայիլյանի միջև կայացած զրույցի ժամանակ Ս.Գաբրիելյանը երկու անգամ նշում է, որ ,Իգլա, դյուրակիր ՁՀՀ-ն ձեռք բերելու հարցով հանդիպման է գնում ինչ-որ մարդկանց, ովքեր նրան հարց են տալիս, սակայն չի կարողանում պատասխանել, նշում է նաև, որ Ժորայից /Արմեն Պողոսյանից/ տեղեկանալով դրա արժեքի՝ 50.000 հազարի մասին՝ ,մարդիկ, համաձայնել են: Նշվածից հետևում է, որ ,Իգլան, ձեռք բերելու իրական նախաձեռնողը Սանասար Գաբրիելյանը չէ, այդ կապակցությամբ վերջինիս ցուցմունքներն անարժանահավատ են:
Ամբաստանյալ Սամվել Բաբայանի նկատմամբ իրականացված ներքին դիտման 2017թ. մարտի 18-ի արձանագրության /նաև ձայնագրառման/ համաձայն՝ պլանշետում առկա նկարները Սամվել Բաբայանի հետ ցուցադրելու և զուգահեռաբար նրա հետ ծավալված զրույցի ընթացքում Ս.Բաբայանը Ս.Գաբրիելյանին առաջարկում է պատվիրել արկղ, պլանշետ-համակարգչով նրան ցուցադրված առարկան թաղել հողի մեջ, որ չփչանա, ավելին՝ առաջարկում է այն տեղափոխել և պահել ԼՂՀ-ում՝ տալով Նարիշտար գյուղի անունը: Ընդ որում, այդ առաջարկը Սանասար Գաբրիելյանին կատարվում է այն պարագայում, երբ վերջինս ըստ խոսակցության բովանդակության /նաև Ս.Գաբրիելյանի ցուցմունքների/, դեռևս չէր կողմնորոշվել ,Իգլա, տեսակի դյուրակիր ՁՀՀ-ի դիմաց

վճարելու հարցում: Վերոնշյալից հետևում է, որ գործով ամբաստանյալներ Ս.Բաբայանի և Ս.Գաբ-րիելյանի պնդումն առ այն, որ վերոնշյալ ՁՀՀ-ն օգտագործման համար ոչ պիտանի էր, առնվազն անարժանահավատ է, քանի որ այդ պարագայում որևէ տրամաբանություն չկար այն փաթեթավորելու և հողի մեջ անվնաս վիճակում թաքցնելու հանձնարարություն կամ խորհուրդ տալու առումով: Բացի այդ, ամբաստանյալ Ս.Բաբայանի կողմից ,Իգլա, ՁՀՀ-ը որոշակի պայմաններում պահելու, դեռ ավելին՝ Նարիշտար գյուղ տեղափոխելու և հողի մեջ թաքցնելու վերաբերյալ Ս.Գաբրիելյանին առաջարկություն անելու կամ խորհուրդ տալու փաստն անուղղակիորեն, զրույցի ողջ բովանդակության համատեքստում՝ նաև ուղղակիորեն վկայում է դրա ձեռքբերման գործընթացին նաև նրա առնչության մասին:
Միայն ,Իգլա, դյուրակիր ՁՀՀ-ի թեմայով Ս.Գաբրիելյանի և Ս.Բաբայանի միջև կայա-ցած վերոնշյալ զրույցի ժամանակ և այդ զրույցի համատեքստում Ս.Բաբայանը Ս.Գաբրիելյանին տեղեկացնում է, որ Լուսինեն նրան գումար կտա ամսի 24-ին կամ 25-ին, սակայն Ս.Գաբրիելյանը, նշելով, որ մարդիկ եկել են, ,սաղ օրը ռազբորկա են անում,, Ս.Բաբայանից խնդրում է գումարը տալ նույն օրը՝ նշելով, որ անձամբ նման հնարավորություն չունի: Ի պատասխան՝ Ս.Բաբայանը շոշափում է 45.000 գումարի մասին խոսակցություն, պնդում, որ ամիս 24-ից շուտ Ս.Գաբրիելյանին գումար տալ չի կարող, ինչին վերջինս արձագանքում է՝ խնդրելով գումարը նրան փոխանցել Ս.Բաբայանի հիշատակած ժամկետից գոնե երեք օր շուտ, զրույցի ժամանակ նշում է նաև, որ ,վզին նստած են, անհրաժեշտ է շարժ անել, որ ինքը էթա ու գա,, ընդ որում՝ այդ գնալն ու գալը համընկնում է Ս.Գաբրիելյանի կողմից իր ավտոմեքենայով ԼՂՀ Նարիշտար գյուղ ժամանակահատվածին:
Վերոնշյալից հետևում է, որ դյուրակիր ՁՀՀ-ի ձեռքբերման ֆինանսավորումն ի սկզբանե հանձն է առել Ս.Բաբայանը, հակառակը պնդող գործով ամբաստանյալներ Ս.Գաբրիելյանի և Ս.Բաբայանի ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում: Ավելին, Ս.Գաբրիելյանի կողմից վերոնշյալ գումարը Վրաստանից տախտակ ձեռք բերելու համար Ս.Բաբայանից խնդրելու վերաբերյալ վերջինիս վարկածը չի հաստատվել ոչ միայն որևէ ՕՀ միջոցառումների՝ հեռախոսային զրույցի վերահսկման կամ ներքին դիտման արդյունքներով, այլև այն չի հաստատել նույնիսկ գործով ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը:
Ավելին, վերոնշյալ հանդիպմանը նախորդող օրը՝ 2017թ. մարտի 17-ի ժամը 17.29-ին, Սանասար Գաբրիելյանի և Սամվել Բաբայանի միջև կայացած խոսակցությունների վերահսկման արձանագրության համաձայն՝ Ս.Գաբրիելյանը զանգահարում և կես ժամով հանդիպում է խնդրում, Ս.Բաբայանին տեղեկացնում. ,Շատ երկար չենք կարա ընդե սպասենք,, որին ի պատասխան Ս.Բաբայանը հայտնում է.,Քեզ ինչ ասում եմ՝ էդ լսի, ... պետք չի սպասել ոչ մի բանի, կգաս վաղը իմ մոտ, կասեմ՝ ինչ անեք, հասկացա՞ր: Կարաս չխկացնես, բերես հետդ ցույց տաս,, որին Ս.Գաբրիելյանը համաձայնում է: ,Կասեմ՝ ինչ անեք, հասկացա՞ր, պետք չի սպասել ոչ մի բանի, արտահայտությունները ևս վկայում է այն մասին, որ ամբաստանյալ Ս.Բաբայանի գործողությունները չէին սահմանափակվում միայն Ս.Գաբրիելյանի խնդրանքով պլանշետ-համակարգչում առկա լուսանկարները տեսնելու և ռազմամթերքի՝ օգտագործման համար պիտանիության վերաբերյալ մասնագիտական կար-ծիք հայտնելու հանգամանքով:
2017թ. մարտի 19-ին՝ ժամը 05.05-ին Արմեն Պողոսյանի և Սանասար Գաբրիելյանի միջև կայացած հեռախոսային խոսակցությունների վերահսկման արձանագրության համաձայն՝ Գաբրիելյանը նախապես պայմանավորվում է Արմեն Պողոսյանի հետ առավոտյան հանդիպելու և զրուցելու՝ տեղեկացնելով, որ դրանից հետո է գնալու ,էն իրենց առաջինի,, ըստ դատաքննության արդյունքների՝ իր գրասենյակում գտնվող Սամվել Բաբայանի մոտ, որպիսի հանդիպումը նույն օրը՝ ավելի ուշ, կայանում է:
Ամբաստանյալ Սամվել Բաբայանի նկատմամբ իրականացված ներքին դիտման 2017թ. մարտի 19-ի արձանագրության /նաև ձայնագրառման/ համաձայն՝ Ս.Գաբրիելյանը պլանշետ-համակարգչով նկարները ցուցադրելու հաջորդ օրը Ս.Բաբայանի հետ նրա գրասենյակում կայացած զրույցի ընթացքում նրան հիշեցնում է խոստացված գումարի մասին, ինչին

	ի պատասխան՝ Ս.Բաբայանը տեղեկացնում է, որ նույն օրը՝ երեկոյան, Մոսկվայից մարդ է գալու և , էդ կեղտը, բերելու, երեկոյան կողմը կզանգի, որ Ս.Գաբրիելյանը գա և 10 ,մանեթը, վերցնի, փոխանցի նրանց, որ հանգիստ վեր ընկնեն, պարտավորվում նույն անձանց համար նախատեսված գումարի մնացածը մասը Ս.Գաբրիելյանին փոխանցել ամիս 24-ին, նույն գրասենյակում: Նույն զրույցի ընթացքում Ս.Գաբրիելյանը Ս.Բաբայանից գոնե 1.000-ի չափով գումար է խնդրում՝ նշելով, որ մեքենայով է, անհրաժեշտ է ,հասնել-տեղավորել և հետ գալ,, սակայն լսելով Ս.Բաբայանի պատասխանը՝ ,կոպեկ չունեմ, համաձայնում և հեռանում է՝ պարտավորվելով վերադառնալ երեկոյան: Ավելին, 2017թ. մարտի 20-ին իր ավտոմեքենայով Ս.Գաբրիելյանը ընկերոջ՝ Աշոտ Շուշանյանի ուղեկցությամբ ուղևորվում է ԼՂՀ, ճանապարհին՝ ՃՈ Սևանի հենակետի մոտ, նրա մեքենան կանգնեցնում և զննում են: Սանասար Գաբրիելյանի և Արթուր Պետրոսյանի միջև 2017թ. մարտի 19-ին՝ ժամը 9:59-ին կայացած հեռախոսազրույցի վերահսկման արձանագրության համաձայն՝ Սանասար Գաբրիելյանը ԼՂՀ-ում գտնվող զրուցակցից ճշգրտում է Ս.Բաբայանի հայտնած Նարիշտար գյուղի տեղակայումը, այդտեղ բնակչության բացակայությունը և պարզելով, որ դա սար է, որտեղ անասուն են պահում՝ խնդրում է նրան այդ գյուղի անունը մտապահել՝ խոստանալով, որ առաջիկա երկու օրը գալու է Արթուր Պետրոսյանի մոտ: Հրաչյա Մայիլյանի և Սանասար Գաբրիելյանի միջև 2017թ, մարտի 19-ին՝ ժամը 13:00-ին կայացած հեռախոսազրույցի վերահսկման արձանագրության համաձայն՝ Սանասար Գաբրիելյանը նրան տեղեկացնում է հետևյալը. ,Ախպեր, ասում ա՝ դրանից իրեք հատ պտի ըլնի, արա ախպեր, ասում եմ՝ մթամ մեկը ճարել ենք, հըմի էլ իրեք հատ պտի ըլնի, ասի տենց բան չի ըլնում, ցավդ տանեմ, իրեք հատը ո՞նց եմ ես ճարում, ... ախպեր, մենք առավոտն ենք հա ու չէ-ն իմացել, ես ասել եմ Արմեն Պողոսյանին, բա դու իրա հետ չես խոսացե՞լ,: Սանասար Գաբրիելյանի և Արմեն Պողոսյանի միջև 2017թ, մարտի 20-ին՝ ժամը 11:55-ին կայացած հեռախոսազրույցի վերահսկման արձանագրության համաձայն՝ Սանասար Գաբրիելյանը, զրուցակցին պատմելով Հրաչյա Մայիլյանի հետ կայացած զրույցի մասին, հայտնում է հետևյալը. ,Խնդալու գործ, արա, ասում ա՝ ախպեր, բանը տեսել ես՝ պիտի տաս, արյուն թափեցի էդ գիշերով, 4.000 դոլար փող եմ դրել, էդ ինչի ասելու բան ա՞: Ես իրան նույն հարցը տալիս եմ, ասում եմ՝ ապեր, բա որ մարդը չուզեց, ասում ա՝ էդ քո գործը չի, թող մնա իմ մոտ: Թող մնար, մնար, բա էդ, որ մնա քո մոտ, մեզ ինչի՞ ես ասում դրա համար: Կարող ա դու ուրիշ կլիենտ ունես, եսիմ ինչ ունես,: Հրաչյա Մայիլյանի և Ռոբերտ Աղվանյանի միջև 2017թ. մարտի 21-ին՝ ժամը 12:53-ին կայացած հեռախոսազրույցի վերահսկման արձանագրության համաձայն՝ Մայիլյանը հայտնում է հետևյալը. ,Ապեր, էդի ոբշըմ նենց բացատրական աշխատանք ա տարել, որ էդ մատորը էդ խփած ավտոյի վրա չի ըլնի դնել, կոմպլեկտավորել, ձև չկա, ասում ա,, որին ի պատասխան Աղվանյանը հայտնում է. ,Ընգեր, զանգել եմ, մարդ կա, սկայպով հետը խոսացել եմ, որ քեզ ասում էի, որ կա, ասում ա՝ ապեր, մենք հանում ենք, տակինները սաղ դրանց վրա հագցնում ենք, էսքան բան, այսինքն, 100 տոկոս եմ ասում, էդ մարդը կոնկրետ էդ գործով ա, ասում ա մենք հանում ենք, փոխում ենք, դնում ենք վրեն,: Զրույցի գրեթե վերջում Հրաչյա Մայիլյանը Աղվանյանին առաջարկում է գալ Հայաստան, որ տեսնեն, թե ինչ են անելու: Ամբաստանյալ Սամվել Բաբայանի նկատմամբ իրականացված ներքին դիտման 2017թ. մարտի 22-ի արձանագրության /նաև ձայնագրառման/ համաձայն՝ Ս.Բաբայանը մինչ այդ անծանոթ Աշոտ Շուշանյանի հետ կայացած զրույցի ժամանակ, նրանից պարզում է, որ նախորդ օրը՝ առավոտյան Աշոտը և Սանասար Գաբրիելյանը վերջինիս ավտոմեքենայով փորձել են մեկնել ԼՂՀ՝ Քելբաջարով, սակայն նրանց ՃՈ Սևանի պահակակետում ՃՈ աշխատակիցները կանգնեցրել են և Սանասարի մեքենան մի քանի անգամ , քանդել են,, որի հետո Ս.Բաբայանը, հավաստիանալով, որ Աշոտը Սանասարի 100 տարվա ընկերն է, հե-տաքրքրվում է նրանից, թե վերջինս արդյոք Ս.Գաբրիելյանի հետ Վրաստան չի գնացել, ինչ-որ բան այնտեղից չի բերել և բացասական

պատասխան ստանալով՝ պահանջում է, որ համապատասխան տղաներին Աշոտը արագ ,ճարի, և ,էդ բանից, արագ ազատվեն, որին ի պատասխան Աշոտը համաձայնություն է տալիս և հեռանում:
Նույն արձանագրության /նաև ձայնագրառման/ համաձայն՝ Ս.Բաբայանը Աշոտի հետ զրույցի ավարտից մոտ 10 րոպե անց, նույն վայրում քննությամբ չպարզված անձի հետ զրույցի ընթացքում խոսելով ձերբակալված Սանասար Գաբրիելյանի մասին և խոսելով ,իր վրա երգելու,, այսինքն՝ վերջինիս կողմից իր դեմ ցուցմունք տալու հավանականության մասին՝ հայտնում է, որ Ս.Գաբրիելյանը չի կարող դա անել, վերջինս հասկանում է, որ նրա վրա պետք է երգի, այսինքն՝ բացառապես ինքնախոստովանական ցուցմունք տա: Նույն զրույցի ընթացքում Ս.Բաբայանը ընդունում է, որ հետաքրքրվել և պարզել է, որ նկարը ջնջվել է, տեղյակ է, որ էդ ապրանքը՝ ,Տրուբան, բերել և տեղ են հասցրել, ավելին՝ հանձնարարել է գնալ և պարզել, թե նկարագրված այդ ապրանքը որտեղ է: Աշոտ Շուշանյան և ինքնություն չպարզված անձի հետ միմյանց հաջորդած զրույցների և դրանց բովանդակության համադրման արդյունքներով Դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ս.Բաբայանի ,էդ բանից, ազատվելու հանձնարարությունը վերաբերում է ոչ թե պլանշետ-համակարգչին, որում առկա լուսանկարները ջնջված լինելու մասին տեղեկություն Ս.Բաբա-յանը, ըստ քննությամբ չպարզված անձի հետ այդ պահին կայացած զրույցի բովանդա-կության, արդեն ուներ, այլ ,Իգլա, տեսակի դյուրակիր ՋՀՀ-ից ազատվելու մասին, ավելին՝ տեղյակ էր նաև ,Իգլան, Վրաստանից բերվելու և ՀՀ-ում գտնվելու մասին:
Վերոնշյալ վերլուծությունների և դատողությունների արդյունքներով Դատարանն արձանագրում է, որ խմբի կազմում նախնական համաձայնությամբ ապօրինաբար ռազ-մամթերք ձեռք բերելուց, փոխադրելուց և պահելուց կամովին հրաժարվելու, այդ հանցանքի կատարմանը կամ դրդելուն առնչություն չունենալու, այդ փաստարկներով ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանին, Արմեն Պողոսյանին և Սամվել Բաբայանին արդարացնելու վերաբերյալ պաշտպանական կողմի պնդումներն անհիմն են, ինչը պայմանավորված է դատաքննությամբ հետազոտված ապացույցների ոչ պատշաճ գնահատման, ինչպես նաև քրեական և քրեադատավարական նորմերի յուրովի մեկնաբանության հանգամանքով:
Անդրադառնալով որպես իրեղեն ապացույց ճանաչված 5.000 եվրո գումարի հափշտակության դեպքի բացակայության կամ առնվազն դրա վերաբերյալ գործով ամբաստանյալների նախապես իրազեկված չլինելու /դիտավորության բացակայության/ հանգամանքի՝ բավարար ապացուցողական զանգվածով ապացուցված չլինելու, այդ փաստարկներով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված և գործով ամբաստանյալներ Սամվել Բաբայանին, նրան օժանդակած Կարեն Քոչարյանին, Դավիթ Հարությունյանին, Անդրանիկ Քոչար-յանին և Ժորա Զաքարյանին վերագրված արարքներում հանցակազմի բացակայության վերաբերյալ պաշտպանական կողմի վիճարկումներին՝ Դատարանը փաստում է, որ դրանք ևս անհիմն են, ինչը պայմանավորված է դա-տաքննությամբ հետազոտված ապացույցների ոչ պատշաճ գնահատման, ինչպես նաև քրեական և քրեադատավարական նորմերի յուրովի մեկնաբանության հանգամանքով, որպիսի հետևության հանգում է հետևյալ իրավական վերլուծությունների և դատո-ղությունների արդյունքներով.
Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) հանցագործության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավո-րում են ՀՀ-ում օրինական ձեռնարկատիրական գործունեությունը և ներդրումային քաղա-քականությունը: Քրեաիրավական արգելքի էությունն այն է, որ ՀՀ տնտեսական համակարգը պաշտպանվի չվերահսկվող մեծ քանակի դրամական միջոցների և այլ գույքի ներդրումից, և կանխվի այնպիսի հանցավոր գործունեությունը, որը, որպես կանոն, իրականացվում է կազ-մակերպված հանցավոր խմբերի կողմից՝ ապօրինի ճանապարհով եկամուտ ստանալու նպատակով:
ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիայի համաձայն՝ հանցագործութ-յան առարկա կարող են լինել դրամական միջոցները կամ

այլ գույքը (ցանկացած նյութական միջոցներ կամ դրանց նկատմամբ իրավունքներ):
Հանցագործության օբյեկտիվ կողմը բխում է Եվրախորհրդի 1990թ. նոյեմբերի 8-ի ,Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հայտնաբերման, առգրավման և բռնագրավման մասին, Կոնվենցիայից, որտեղ նախատեսված են հետևյալ արարքները.
ա) անձի կողմից, ով տեղյակ է եղել նյութական արժեքները հանցավոր ճանապարհով ձեռք բերելու մասին, դրանք պահելն ու հանձնելը՝ նյութական արժեքների ապօրինի ծագու-մը թաքցնելու կամ հիմնական հանցագործություն կատարելու մեջ ներգրավված ցանկացած անձի պատասխանատվությունից խուսափելուն օժանդակելու նպատակով,
բ) նյութական արժեքների և դրանց առնչվող իրավունքների բնույթը, ծագման աղբ-յուրները, գտնվելու վայրը, շարժը կամ իրական պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթ-յուրելը, եթե իրավախախտում թույլ տված անձն իմացել է, որ այդ արժեքները իրենցից ներ-կայացնում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներ,
գ) նյութական արժեքների ձեռքբերումը, տիրապետումը, օգտագործումը այն անձի կողմից, ով տեղյակ է, որ դրանք իր կողմից ստանալու պահին հանդիսանում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներ:
ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ օբյեկտիվ կողմից այդ հանցա-գործությունը կարող է դրսևորվել հետևյալ գործողություններով՝
1. հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկում (կոնվերտացում) կամ փո-խանցում (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյուն-քում).
2. գույք ձեռք բերել կամ տիրապետել կամ օգտագործել կամ տնօրինել (եթե գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):
Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը իր կողմից օրի-նականացնելու փաստը, ցանկանում է դա:
Գույքը համարվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված, եթե գույքի ձեռքբերման երկրում գործող քրեական օրենսդրությամբ նման արարքը դիտվում է հանցագործություն: Վերոնշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք է հանդիսանում նույն օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված գույքը, որն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում:
Հանցագործության շարժառիթը, որպես կանոն, շահն է (ֆինանսական կամ այլ գոր-ծարքներից կամ տնտեսական գործունեությունից շահույթ ստանալը):
Սուբյեկտիվ կողմից հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում որոշակի նպատակը՝ թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որ նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):
Թաքցնել նշանակում է ընդհանրապես տեղեկություն չտալ կամ տալուց դիտավորյալ խուսափել, իսկ խեղաթյուրելն իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տալն է:
Քննարկվող հանցագործության սուբյեկտ, ըստ տվյալ հոդվածի դիսպոզիցիայի, հանդիսանում է այն անձը, ով հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ այլ գույքի հետ ֆինանսական կամ այլ գործարքներ է կատարում կամ տվյալ նյութական արժեքները օգտագործում է ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության հա-մար: Նշված անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե նա, մինչև համապատասխան արարք կատարելը, գիտակցել է դրամական միջոցների կամ այլ գույքի՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը, անկախ նրանից, թե ում

հետ է նա գործարքի մեջ մտնում՝ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերողի՞, թե՞ մեկ ուրիշ անձի: Միաժամա-նակ անձի քրեական պատասխանատվության հարցը վերջնականապես լուծելու համար անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով:
Վերոնշյալ իրավական վերլուծությունները սույն գործով պարզված փաստական հան-գամանքների վրա տարածելով՝ Դատարանը արձանագրում է, որ քրեական հետապնդման մարմինները բավարար ապացուցողական զանգվածով հիմնավորել են իրեղեն ապացույց ճանաչված և Դատարանում զննված 5.000 եվրո գումարի՝ նախապես հափշտակված լինելու փաստը, որի մասին են վկայում հետևյալ ապացույցները.
ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով կատարված հարցումների արդյունքներով ստացված գրությունները, համաձայն որոնց՝ ՀՀ-ում հայտնաբերված գունավորված եվրո թղթադրամների վրա առկա են Եվրոպական Կենտրոնական բանկի 3 տարբեր նախագահների ստորագրություններ, հետևաբար՝ դրանք ,գողացվել են տարբեր ժամանակներում,: Իտալիայի իրավասու մարմիններին փոխանցված X սերիայի 09178737887 համարի 50 եվրո արժողությամբ թղթադրամի նախնական փորձաքննությամբ հաստատվել է, որ թղթադրամը գողացվել է պաշտպանիչ ներկանյութեր պարունակող բանկոմատից, թղթադրամի մակերեսի վրա առկա ներկանյութի բաշխվածությունից կարելի է պնդել, որ նշված թղթադրամը հորիզոնական դիրքով տեղադրված է եղել կոնտեյների մեջ: Թղթադրամը երեք տարբեր ուղղություններից ներկող կարմիր գույնը և դրա վրա առկա ներկի քանակը վկայում է այն մասին, որ դա բնորոշ է բանկոմատներում անվտանգության նպատակով տեղադրված ներկերին: Թղթադրամների վրա բանկոմատներում անվտանգության նպատակով կիրառվող ներկանյութերի առկայութ-յունը փաստում է, որ այդ բանկոմատները հանցագործների կողմից հարձակման են ենթարկվել: Եթե թղթադրամը պատահաբար է ներկոտվել, ապա այն շրջանառության մեջ դնելու միակ տարբերակը ֆինանսական հաստատության աշխատակիցների կամ ընկերությունների կողմից կատարվող ,ներքին գողություն, է, որը հազվադեպ հանդիպող երևույթ է: ,Հատուկ ներկանյութերով ներկոտված թղթադրամների առկայությունը ցույց է տալիս, որ դրանք գողացվել են այս կամ այն եղանակով,: Վարույթն իրականացնող մարմնի կողմից ,Ինտերպոլ,-ի գլխավոր քարտուղարությանը փոխանցված 50 եվրո արժողությամբ X սերիայի 09178737887 համարի թղթադրամը փոխանցվել է իտալական ,MIB, ընկերությանը, որը հաստատել է, որ այդ թղթադրամի վրա առկա ներկն օգտագործվել է իրենց հա-մակարգերի կողմից, ինչպես նաև նշել են, որ հիշյալ թղթադրամը ներկից քիմիական միջամտությամբ մաքրման փորձեր են արվել: Միաժամանակ տեղեկացրել են, որ ,MIB, ընկերության համակարգերում օգտագործված կարմիր ներկն արտադրվել է շվեյցարական ,SICPA, ընկերության կողմից: Իտալական ,MIB, ընկերությունը հաստատել է, որ 50 եվրո արժողությամբ X սերիայի 09178737887 համարի թղթադրամի փորձաքննության արդյունքում փորձագետների կողմից այդ թղթադրամի վրա հայտնաբերված հատկանիշները համապատասխանում են ներկանյութերի 2 տարբեր խմբաքանակների, հաճախորդներին են մատակարարվել տարբեր ժամանակահատվածում: Առաջին խմբաքանակը՝ 2NS33012, 2010 թվականին իտալական ,MIB, կողմից մատակարարվել է գերմանական ,NCR GmBH, ընկե-րությանը, իսկ երկրորդը՝ 2NS33053-ը 2015 թվականին մատակարարվել է ֆրանսիական ,Credit Mutuel-Euro information, ընկերությանը: 2 տարբեր խմբաքանակները միևնույն թղթադրամի վրա, հավանաբար, հայտնվել են քիմիական մաքրող լուծույթի միջոցով մաքրման փորձի դեպքում: Բացի այդ, շվեյցարական ,SICPA, ընկերության կողմից 10 ներկոտված թղթադրամների հետազոտության վերաբերյալ հաշվետվության (ըստ էության փորձագիտական եզրակացությունը) համաձայն՝ դրանց վրա առկա ներկի հետքերի ընդհանուր վիճակը, չափսը և բաշխվածությունը համապատասխանում են անվտանգության համար նախատեսված ներկանյութեր պարունակող թղթադրամների չեզոքացման համակարգերի գործարկման արդյունքում ներկոտված լինելուն: Բոլոր

թղթադրամների վրա առկա են ,SICPA, կարմիր ներկանյութին հատուկ բաղադրատարրեր: Բոլոր 10 թղթադրամ-ների վրա առկա հետքերից կարելի է եզրակացնել, որ դրանք ներկված են նույն խմբա-քանակի ներկանյութով: Թիվ 2NS33053 խմբաքանակի ներկը 500 կգ ընդհանուր քաշով 2014թ. նոյեմբերին մատակարարվել է իտալական ,MIB, ընկերությանը: Դեռ ավելին, վերոնշյալ հետազոտությամբ մասնագետները եզրահանգել են, որ այդ թղթադրամները ներ-կոտվելուց հետո քիմիական նյութի միջոցով արդեն իսկ որոշակիորեն ենթարկվել էին մաքրման, այսինքն՝ գործով ամբաստանյալ Սամվել Բաբայանին ուղարկված ներկված 5.000 եվրո գումարը չէր կարող ձեռք բերված լինել օրինական ճանապարհով/ բանկոմատի հետ կապված տեխնիկական անսարքություն, թյուրիմացություն և այլ/, այդ կապակցությամբ պաշտպանական կողմի վիճարկումներն անհիմն են:
Դատափաստաթղթաբանական փորձաքննության 2016թ. սեպտեմբերի 21-ի եզրակացությունը, համաձայն որի՝ փորձաքննությանը ներկայացված եվրո-թղթադրամներն իրենց պատրաստման եղանակով և հիմնական պաշտպանական հատկանիշներով համա-պատասխանում են եվրո թղթադրամների պատրաստման եղանակին և հիմնական պաշտպանական հատկանիշներին, այսինքն՝ հանդիսանում են Եվրոմիության կողմից թողարկված թղթադրամներ: Ինչ վերաբերում է թղթադրամների վրա առկա մուգ կարմիր գույնի ներկանման նյութին, ապա այն կարող է հանդիսանալ ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակներով օգտագործվող հատուկ ներկ, որն անթույլատրելի գործողություն կատարելու դեպքում վնասվում է՝ ներկոտելով թղթադրամները:
Այն, որ վերոնշյալ թղթադրամները ձեռք էին բերվել հանցավոր ճանապարհով, որի մասին տվյալ դրվագով ամբաստանվող բոլոր անձինք նախապես տեղեկացված էին, այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրին վերագրված հանցավոր գործողությունները կատարել են ուղղակի դիտավորությամբ, Դատարանը հաստատված է համարում ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստացված վերոնշյալ գրությունները գործով ամբաստանյալներ Ժորա Զաքարյանի, Դավիթ Հարությունյանի և Անդրանիկ Քոչարյանի նախաքննական ցուցմունքների, ամբաստանյալներ Սամվել Բաբայանի և այլ անձի, Սամվել Բաբայանի և Կարեն Քոչարյանի հեռախոսազրույցների բովանդակության հետ համադրելու, ստուգելու և գնահատելու արդյունքներով: Ընդ որում, եթե ,Հեռախոսային խոսակցությունների վերահսկում, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների /արձանագրությունների/ համաձայն՝ Սամվել Բաբայանը իր զրուցակից Մարատի Նալբանդյանի հետ դրա մասին խոսում է ուղղակի, առանց ծածկագրման, ապա ամբաստանյալ Կարեն Քոչարյանը հափշտակված այդ գումարի մասին խոսում է քողարկված եղանակով, այդ գումարը ,քյալամներ, և այլն անվանելով, ինչը ևս վկայում է դրա հանցավոր ծագման մասին վերջինիս գիտակցելու և հեռախոսային զրույցների ժամանակ այդ գումարի մասին զգուշավորության կանոնների պահպանմամբ խոսելու մասին:
Դատարանը հակիրճ անդրադառնում է նաև դատարանի թույլտվությամբ իրականացված ՕՀ միջոցառումների արդյունքներին, որոնք հաստատում են ամբաստանյալ Սամվել Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ նրան օժանդակած անձանց ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով վերագրված գործողությունները, բացահայտում դրանք հերքող որոշ ամբաստանյալների ցուցմունքների և պատճառաբանությունների մտացածին բնույթն ու անարժանահավատությունը:
Այսպես, Կարեն Քոչարյանի հետ 2016թ. հունիսի 17-ին՝ ժամը 23.38-ին կայացած հեռախոսազրույցի ժամանակ ներկոտված եվրոները մաքրելու թեմայի շուրջ խոսելիս Սամվել Բաբայանը Կարենին պարզաբանում է, որ մաքրած եվրոներ նախկինում էլ տեսել է, եթե գտնվի այն նյութը, որով հնարավոր լինի, թղթադրամը չվնասելով, ներկը ,վերցնել,, այսինքն՝ մաքրել, նույնիսկ բանկոմատներում էլ կարող է դա ,ուտացնել գնա,, իսկ որ այդպես ,կեղտոտ բանկոմատի բերանը տաս, շպրտում ա, կծում ա,, որից կարելի է եզրակացնել, որ թղթադրամների ներկոտման իրական

հանգամանքի, այդ կերպ՝ հանցավոր ծագման, դրա մաքրման և իրացման հնարավորությունների մասին գործով ամբաստանյալ Ս.Բաբայանը նախապես տեղեկացված էր:
2016թ. հունիսի 18-ին՝ ժամը 12.40-ին Կարեն Քոչարյանի հետ հեռախոսազրույցի ժամանակ Սամվել Բաբայանը Կարենին խորհուրդ է տալիս, որ նա Հրազդանում գտնվող վարպետին առաջարկի փորձնական թղթադրամը մաքրել լրիվությամբ, ոչ թե միայն անկյունային հատվածը, նշում է նաև, որ եթե վարպետը կարողանա այն մաքրել, այն ինքը կուղարկի համապատասխան մարդկանց, ապա ,պաչկա-պաչկա, դրանցից բերել կտա: Նշվածով հերքվում է գործով ամբաստանյալ Ս.Բաբայանի այն վարկածը, թե իբր ներկոտված 5.000 եվրո գումարը նրան ուղարկել է որպես չվերադարձված պարտքի մնացորդ և որ նա տեղեկացված չէր այդ գումարի հափշտակված լինելու մասին:
2016թ. օգոստոսի 24-ին՝ ժամը 15.25-ին Մարատի Նալբանդյանի հետ միջազգային հեռախոսազանգի ժամանակ Սամվել Բաբայանը Մարատին տեղեկացնում է, որ նա 10.000 Վասիլիից վերցնի, ապա գնա Տիկոյի մոտ, ով կհուշի, թե ,կեղտոտ, 5.000 եվրոն որտեղից վերցնի, հաշվարկում, ապա նշում է, որ այդ գումարի 52 տոկոսը՝ 2.912 եվրոն, Մարատը տանի և տա, ,կեղտոտ, 5.000 եվրոն վերցնի, 50-անոցներով, դրա վրա դնի 100 ԱՄՆ դոլար գումար և փոխանցի ավտոբուսի վարորդին, որ վերջինս իր հերթին այդ ,կեղտոտ գումարը, բերի և տա Կարենին, ըստ դատաքննության արդյունքների՝ Կարեն Քոչարյանին: Նույն հեռախոսազրույցի ժամանակ Սամվել Բաբայանը Մարատին խնդրում է, որ նա Վասիլիից վերցրած այդ գումարի մնացած մասը, որն ըստ էության հանցագործության հետքեր իր վրա չէր կրում, ,Յունիստրիմ, համակարգով ուղարկի Կարենի անվամբ՝ փոխանցմամբ:
2016թ. օգոստոսի 24-ին՝ ժամը 21.11-ին Մարատ Նալբանդյանի հետ կայացած միջազգային հեռախոսազրույցի ժամանակ Ս.Բաբայանը նրան առաջարկում է ,կեղտոտ, թղթադրամները լեննականցի-մեննականցիներից գնելիս գինը սակարկել, որի վրա ներկը շատ է, առաջարկել անվանական արժեքի 45 տոկոսը: Ս.Բաբայանը նաև նշում է, որ ժամանակին 52 տոկոսով է կեղտոտ թղթադրամները ձեռք բերել, սակայն եթե ներկանյութը շատ է, հորդորում է գինը սակարկել և իջեցնել մինչև 45 տոկոս: Ս.Բաբայանը Մարատին նաև հորդորում է, որ վերջինս ուշադիր լինի, ճղած-մղած բան չվերցնի, ստուգի արդյո՞ք փողի որակը նորմալ է, հեռախոսազրույցի ժամանակ ընդգծում, որ ,մաշածը, պետք չէ: Բացի այդ, նույն հեռախոսազրույցի ժամանակ տեղեկանալով, որ նման ,կեղտոտ, թղթադրամներ վաճառողներն ունեն այդ գումարներից մոտ ,300-ի, սահմաններում՝ Ս.Բաբայանը Մարատին առաջարկում է վաճառողին փոխանցել, որ ինքն է ողջ քանակությունը գնելու, միևնույն է, նրանք դա ոչ մեկին չեն ծախելու: Նույն հեռախոսազրույցի ժամանակ Ս.Բաբայանը նշում է նաև, որ անհրաժեշտ է էդ գումարը դնել շրջանառության մեջ 10 եվրոյանոցներով, մեկ այլ անգամ՝ 20 եվրոյանոցներով, որից հետո միայն փոխում է խոսակցության թեման և հետաքրքրվում տախտակի հարցով:
2016թ. օգոստոսի 30-ին՝ ժամը 14.17-ին Մարատ Նալբանդյանի հետ կայացած միջ-ազգային հեռախոսազրույցի ժամանակ Ս.Բաբայանը, Մարատին վերստին ուղարկելով ,կեղտոտ փող, վաճառող անձի մոտ, նրան հայտնում է հետևյալը. ,էսօր հինգ է, ,պրոբնի, է, էգուց կարող է 50 դառնա, 100 դառնա,, ավելին, հորդորում է, որ Մարատը գնա-արագացնի, գործ անի:
2016թ. սեպտեմբերի 21-ին՝ ժամը 04.03-ին Մարատ Նալբանդյանի հետ կայացած միջազգային հեռախոսազանգի ժամանակ Ս.Բաբայանը Մարատին տեղեկացնում է, որ ավտոբուսը բռնել են, ապա հետաքրքրվում, թե էդ Սաշան նրան կարող ա՞ ,ֆալշիվի, թղթեր ա տվել, ապա դեռևս Մարատի պատասխանը չլսած՝ հուշում է. ,Ուշադիր ես չէ՞ լսում, ասում եմ՝ էդ Սաշան փողը պարտք ա արել, բերել ա քեզ տվել, դու ստուգել ե՞ս՝ ինչ փող ա քեզ բերել տվել: Ծրարով էլ տվել ես ավտոբոսի շոֆերին, բերել ա,: Երբ Մարատը պատասխանում է, որ ոչ, ինքը փողը տեսել է, Ս.Բաբայանը վերստին դիմում է նրան. ,Դու պտի գլխի ընկնեիր՝ ինչ եմ ասում, հասկացա՞ր: էդ Սաշի համարը պահում ե՞ս, կա՞: Սաշա ա, ինչ ա: Որ փող ա էլի ինձ պարտք, բերել ա քեզ տվել: Դե որ հանկարծ գան

քեզ բռնեն՝ Սաշան բերել ա քեզ տվել, դու ծրարով տվել ես շոֆերին, բերել ա: Ուրիշ բան չգիտես, հասկացա՞ր,: Երբ Մարատն ի վերջո պատասխանում է, որ Ս.Բաբայանին հասկացավ, վերջինս նրան հորդորում է էդ ինչով որ խոսում է, էդ համարը, շպրտի, ուրիշը գտնի, դրանով զանգի:
Անհիմն է նաև ամբաստանյալ Ս.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով վերագրված արարքը որպես հանցափորձ, իսկ նրան օժանդակ անձանց ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով որպես հանցագործության նախապատրաստություն վերաորակելու վերաբերյալ պաշտպանական կողմի փաստարկը, քանի որ նախ՝ ամբաստանյալ Սամվել Բաբայանը նախքան ներկոտված 5.000 եվրո գումարը ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելը, նախապես տեղեկացված լինելով եվրո թղթադրամների հափշտակված լինելու մասին, ենթադրաբար Տիգրան Հովհաննիսյանի ծանոթներից ձեռք էր բերել նույն եղանակով՝ ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով հատուկ նյութով ներկոտված 1 հատ 20 եվրո և 1 հատ 50 եվրո անվանական արժեքներով թղթադրամներ, փաստացի տիրապետել է դրանք, մաքրման և այդ կերպ վերոնշյալ թղթադրամների հանցավոր ծագման աղբյուրը թաքցնելու նպատակով 20 եվրո անվանական արժեքով ներկոտված թղթադրամը գործով ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի և Անդրանիկ Քոչարյանի միջոցով տրամադրել է Ժորա Զաքարյանին, ով և իրականացրել է դրանց մաքրումը և մաքրված վիճակում նույն հաջորդականությամբ այն վերադարձվել է ամբաստանյալ Ս.Բաբայանին: Նշված հանցավոր գործողություններն ինքնին բավարար էին ամբաստանյալ Ս.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով վերագրված արարքը որպես ավարտված հան-ցագործություն, իսկ նրան դիտավորությամբ աջակցած անձանց գործողությունները՝ որպես դրան օժանդակություն դիտարկելու և այդ հոդվածով նրանց մեղավորությունը փաստելու համար: Ինչ վերաբերում է ամբաստանյալ Դ.Հարությունյանին, ապա օբյեկտիվ կողմից նրան վերագրված գործողությունների կատարման արդյունքում վերջինս թեև կարճատև, սակայն ունեցել է հափշտակված 5.000 եվրո գումարը գործով վկա Գոռ Շակոյանից ստանալու /ձեռք է բերել/, այն տիրապետելու հնարավորություն /այն պահել է իր վարած ավտոմեքենայի սրահում, որից հետո միայն ինքնակամ ներկայացրել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցներին/ և նրա արարքին ևս տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական: Ավելին, նրան վերագրված հանցագործության ավարտված լինելու մասին է վկայում նաև այն, որ նախքան վերոնշյալ 5.000 եվրո գումարը ստանալը Դավիթ Հարությունյանը Կարեն Քոչարյանից ստացած ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով հատուկ նյութով ներկոտ-ված 20 եվրո թղթադրամը Կ.Քոչարյանի խնդրանքով ցուցադրել է մի շարք անձանց՝ գործով որպես վկա հարցաքննված Համիկ Իխտիարյանին և Վրեժ Առաքելյանին՝ հետաքրքրվելով ցածր տոկոսով դրա իրացման հնարավորության հարցով:
Դատարանը փաստում է, որ պաշտպանական ճառերում նշված այլ փաստարկները և վիճարկումները հատուկ վերլուծության ենթարկելու անհրաժեշտությունը բացակայում է, դրանք գործի լուծման տեսանկյունով էական նշանակություն չունեն, փաստերի և իրավական նորմերի յուրովի, այն է՝ թերի, ակնհայտ միակողմանի և սուբյեկտիվ մեկնաբանության և գնահատման հետևանք են: Նշված հետևությունը կատարելիս Դատարանը հիմնվում է դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով (օրինակ՝ Hiro Balani v. Spain, գանգատ թիվ 18064/91, 1994թ. դեկտեմբերի 9-ի վճիռ և այլն) արտահայտած իրավական դիրքորոշման վրա, ըստ որի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է դատարաններին՝ նշելու իրենց վճիռների և որոշումների պատճառ-ները, սակայն այն չի կարող հասկացվել որպես յուրաքանչյուր փաստարկին հանգամանա-լից պատասխան տալու պարտականություն: Եվրոպական դատարանը փաստել է, որ պատ-ճառները նշելու պարտականության կիրառման սահմանը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված դատական ակտի

բնույթով: Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ անհրաժեշտ է հաշվի առնել, ,inter alia,, փաստարկների բազմազանությունը, որոնք դատավարության կողմը կարող է ներկայացնել դատարանին և Պայմանավորվող կողմերի տար-բեր մոտեցումները օրենքի դրույթների, սովորութային կանոնների, իրավական կարծիքի և վճիռների, որոշումների ներկայացման և շարադրման վերաբերյալ: Հետևաբար՝ այն հարցը, թե արդյոք դատարանը թերացել է պատճառաբանելու իր պարտականությունը կատարելու հարցում, կարող է որոշվել միայն կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո:

Դատարանի եզրահանգումը.
Պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում դատաքննությամբ հետազոտ-ված ապացույցների ստուգման և գնահատման արդյունքներով Դատարանը հաստատված համարեց այն, որ Սամվել Բաբայանը նախնական համաձայնություն ձեռք բերած և այդ շրջանակներում գործող անձանց դրդել է ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելուն, փոխադրելուն և պահելուն, ինչպես նաև փոխարկման արդյունքում, այլ անձանց օժանդակությամբ ձեռք է բերել հանցավոր ճանապարհով ստացված գույք, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում.
Այսպես, Սամվել Բաբայանը, նյութապես շահագրգռելու խոստում տալով, 2016 թվականի ամռանն իր վաղեմի ծանոթ և զինակից Վաղարշապատ քաղաքի բնակիչ Սանասար Գաբրիելյանին դրդել է համապատասխան կապեր ունեցող անձանց ներգրավելու միջոցով ապօրինի կերպով ձեռք բերել ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիր՝ խոստանալով վճարել դրա դիմաց, ավելի ուշ համաձայնել դրա դիմաց պահանջված 50.000 ԱՄՆ դոլար գնի հետ: Սանասար Գաբրիելյանը, տալով իր համա-ձայնությունը, հանցավոր այդ մտադրությունն իրականացնելու համար այդ խնդրով դիմել է Վաղարշապատ քաղաքի բնակիչներ Արմեն Պողոսյանին և Հրաչյա Մայիլյանին, որոնցից վերջինը Վրաստանում գործնական կապեր է ունեցել՝ խոստանալով իբր իր միջոցների հաշվին տրամադրել դրա ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը և թաքցնելով իրական ֆինանսավորողի՝ Սամվել Բաբայանի անունը: Ձեռք բերված համաձայնության շրջանակ-ներում հանցավոր մտադրությունն իրագործելու համար Սանասար Գաբրիելյանը, Արմեն Պողոսյանը և Հրաչյա Մայիլյանը 2016թ. սեպտեմբերի 1-ին մեկնել են Վրաստան, որտեղ, օգտագործելով Մայիլյանի ծանոթությունն ու կապերը, փորձել են գտնել վերոնշյալ ռազմամթերքը, այդ նպատակով միասին նաև առանձին- առանձին պարբերաբար մեկնել են Թբիլիսի, ինչպես նաև Ուկրաինայի Գորլովկա քաղաք: Վրաստան հերթական այցելության ժամանակ՝ 2017թ. փետրվարի 22-ին Արմեն Պողոսյանը և Հրաչյա Մայիլյանը նույն հարցով հանցավոր համաձայնություն են ձեռք բերել ՀՀ քաղաքացի, Վաղարշապատ քաղաքի նախկին բնակիչ, վերջին տարիներին Վրաստանում բնակվող Ռոբերտ Աղվանյանի հետ, ով պատրաստակամություն է հայտնել ի վերջո 38.000 ԱՄՆ դոլար գումարով տրամադրել պահանջող դյուրակիր զենիթահրթիռային համալիրը, իսկ 2017թ. մարտի 15-ին արդեն ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, Հրաչյա Մայիլյանին հնարավորություն է տվել վերջինիս ,SAMSUNG, ապրանքանիշի, ,GT-P3100, մոդելի և ,RF1C9601LNN, սերիական համարի պլանշետ - համակարգչի ֆոտոխցիկով նկարել այդ համալիրը՝ Սանասար Գաբրիելյանին, իրականում վերջինիս միջոցով ձեռքբերման նախաձեռնող Սամվել Բաբայանին ցույց տալու համար, իսկ 2017թ. մարտի 17-ին Հր.Մայիլյանից 4.000 ԱՄՆ դոլար կանխավճար ստանալու դիմաց ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի բաղկացուցիչ մաս կազմող արձակման խողովակը և ռազ-մամթերք հանդիսացող 9Մ39 տեսակի 03277 համարի հրթիռը Ռ.Աղվանյանը նույն գյուղում փոխանցել է Հր.Մայիլյանին՝ գումարի մնացած մասն ավելի ուշ ստանալու պայմանով: Իր հերթին, Հրաչյա Մայիլյանը նույն օրը ռազմամթերքը ավտոմեքենայով տեղափոխել և պահել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Թամանյան փողոցի 24 հասցեում գտնվող ավտոտնակում, որտեղ Սանասար Գաբրիելյանի ցուցումով՝ Արմեն Պողոսյանի հետ նույն պլանշետ-համակարգչի ֆոտոխցիկով այն վերստին լուսանկարել են՝

լուսանկարները Սանասար Գաբրիելյանի միջոցով Սամվել Բաբայանին ցուցադրելու նպատակով: Հաջորդ օրը՝ 2017թ. մարտի 18-ին, Սանասար Գաբրիելյանը Արմեն Պողոսյանից վերցրած պլանշետ-համակարգչում առկա լուսանկարները ցուցադրել է Սամվել Բաբայանին, ով հանձնարարել է սարքին պահելու և նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունը պահպանելու համար այդ ռազմամթերքը տեղավորել արկղի մեջ, տեղափոխել ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նարիշտար գյուղ, պահել հողի մեջ՝ լուսանկարելով պահման վայրը: Միաժամանակ, Սանասար Գաբրիելյանի խնդրանքին ի պատասխան՝ Սամվել Բաբայանը պարտավորվել է մի քանի օրվա ընթացքում նրան հանձնել խոստացված գումարը՝ վերոնշյալ ռազմամթերքի ձեռքբերմամբ և փոխադրմամբ զբաղված անձանց փոխանցելու համար: Նույն խոստումը Սամվել Բաբայանը պնդել է Սանասար Գաբրիելյանի հետ նաև հաջորդ օրը՝ 2017թ. մարտի 19-ին կայացած հանդիպման ժամանակ, սակայն Հրաչյա Մայիլյանը 2017թ. մարտի 22-ին ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և 9Մ39 տեսակի 03277 համարի հրթիռը կամովին հանձնել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցներին: Տեղեկանալով հանցակցի՝ Սանասար Գաբրիելյանի ձերբակալման մասին՝ Սամվել Բաբայանը միջոցներ է ձեռնարկել Ս.Գաբրիելյանի հետ նախնական համաձայնության շրջանակներում վերոնշյալ ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակը և ռազմամթերք հանդիսացող 9Մ39 տեսակի 03277 համարի հրթիռը ձեռք բերած այլ անձանց գտնելու, նրանց միջոցով այդ ռազմամթերքից ազատվելու ուղղությամբ, սակայն ինչպես Ս.Բաբայանը, այնպես էլ Ա.Պողոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու կասկածանքով ձերբակալվել են:

Այսպիսով, Սանասար Գաբրիելյանը, Արմեն Պողոսյանը և այլ անձինք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, խմբի կազմում կամ ավելի ուշ ընդգրկվելով նույն խմբում, Սամվել Բաբայանի դրդմամբ ապօրինի ձեռք են բերել, փոխադրել և պահել ռազմամթերք, այսինքն՝ Ս.Գաբրիելյանը և Ա.Պողոսյանը կատարել են հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Սամվել Բաբայանը՝ հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, Սամվել Բաբայանը, տեղեկացված լինելով, որ Ռուսաստանի Դաշնություն-ում բնակվող իր մտերիմ Տիգրան Հովհաննիսյանի ծանոթները հնարավորություն ունեն տրամադրելու ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված՝ հափշտակված, սակայն ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկոտված եվրոյի թղթադրամների խմբաքանակ՝ վճարելով դրա անվանական արժեքի 52 տոկոսը, մտադրվել է նշված գույքը ձեռք բերել և տեղափոխել ՀՀ, քիմիական մաքրման և վերամշակման եղանակով խեղաթյուրելով դրա հանցավոր ծագումն ու իրական բնույթը՝ որպես հնամաշ թղթադրամներ Հայաստանի Հանրապետության տարածքում դնել օրինական շրջանառության մեջ: Այդ նպատակով Սամվել Բաբայանը փորձնական նպատակով վերոհիշյալ Տիգրան Հովհաննիսյանի ծանոթներից ձեռք է բերել 3 հատ 20 եվրո և 1 հատ 50 եվրո անվանական արժեքներով ներկոտված թղթադրամներ, որից հետո ձեռնամուխ է եղել դրանք քիմիական մաքրման ենթարկելու համար մասնագետ որոնելուն, ինչը հանձնարարել է իր վստահելի անձին՝ Երևանի բնակիչ Կարեն Քոչարյանին՝ տրա-մադրելով նշված 20 եվրո արժեքով թղթադրամներից մեկը: Համաձայնելով վերացնել ներկոտված թղթադրամները ՀՀ ներկրելուն և իրացնելուն խոչընդոտող որոշակի դժվարությունները՝ այն է՝ իր կապերի օգտագործմամբ աջակցել և այդ կերպ օժանդակել Սամվել Բաբայանի կողմից ձեռք բերված ներկոտված թղթադրամների խմբաքանակը Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխելու գործում և խոստանալով գտնել թղթադրամների՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը խեղաթյուրելու համար համապատասխան մասնագետի, այդ կերպ ամրապնդելով Սամվել Բաբայանի մոտ վերոնշյալ հանցագործության կատարման վճռականությունը՝ Կարեն Քոչարյանը այդ թղթադրամները քիմիական

մաքրման ենթարկելու հարցով 2016 թվականի օգոստոսին դիմել է իր եղբոր՝ Անդրանիկ Քոչարյանին, ով համաձայնել է օգնել և այդ կերպ օժանդակել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված վերոնշյալ թղթադրամները ներկայությից մաքրող համապատասխան մասնագետ գտնելու հարցում: Վերջինս իր հերթին դիմել է Կոտայքի մարզի Բուժական համայնքի բնակիչ, քիմիայի ոլորտում որոշակի գիտելիքներ ունեցող Ժորա Զաքարյանին, ով համաձայնել է օժանդակել ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված՝ հափշտակված և հատուկ նյութով ներկոտված վերոնշյալ թղթադրամները քիմիական լուծույթով վերամշակելու ու ներկայությից մաքրելու միջոցով դրանց հանցավոր ծագումն ու իրական բնույթը խեղաթյուրելու և որպես հնամաշ թղթադրամներ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական շրջանառության մեջ դնելու խոչընդոտները վերացնելու հարցում, ի կատարում այդ խոստման՝ Ժորա Զաքարյանը ստացած 20 եվրո անվանական արժեքով թղթադրամի ներկոտված հատվածները քիմիական լուծույթով մաքրել է, որը նույն անձանց միջոցով վերադարձվել է Սամվել Բաբայանին՝ մաքրման աշխատանքների որակը գնահատելու նպատակով:
Համոզվելով թղթադրամը ներկայությից մաքրելը հնարավոր է՝ Սամվել Բաբայանը 2016թ. օգոստոսի 24-ին բջջային հեռախոսահամարով զանգահարել է Մոսկվայում բնակվող ընկերոջը՝ Մարատ Նալբանդյանին ու հանձնարարել ՌԴ քաղաքացի Վասիլի Մնացական-յանից վերցնել 10.000 ԱՄՆ դոլար գումար, որից 2.900 ԱՄՆ դոլարը փոխանցել Տիգրան Հով-հաննիսյանի ծանոթներին՝ ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկոտված 5.000 եվրո գումար ձեռք բերելու համար, իսկ 7.000 ԱՄՆ դոլար գումարը բանտով, օրինական կարգով փոխանցել Երևան: Մարատ Նալբանդյանի միջոցով Տիգրան Հովհաննիսյանի ծանոթներին փոխանցելով 2.900 ԱՄՆ դոլար գումար՝ Սամվել Բաբայանը փոխարկման արդյունքում ձեռք է բերել ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված՝ հափշտակված, սակայն ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկոտված 50 եվրո անվանական արժեքով թղթադրամներ, ընդհանուր 2.648.150 ՀՀ դրամին համարժեք 5.000 եվրո գումար՝ ցանկանալով Հայաստանի Հանրապետության տարածքում այդ թղթադրամների քիմիական մաքրման և վերամշակման եղանակով խեղաթյուրել դրանց հանցավոր ծագումն ու իրական բնույթը և որպես հնամաշ թղթադրամներ՝ դնել օրինական շրջանառության մեջ:
Այդ ընթացքում Սամվել Բաբայանը Տ.Հովհաննիսյանի ծանոթներից մինչ այդ փորձ-նական ձեռք բերված և իր մոտ գտնվող 3 թղթադրամները 2017 թվականի սեպտեմբերի սկզբներին կրկին հանձնել է Կարեն Քոչարյանին՝ ներկայությից մաքրել տալու և մասնագետի հմտությունները վերստին ստուգելու նպատակով, ով դրանք եղբոր՝ Անդրանիկ Քոչարյանի միջոցով փոխանցել է Ժորա Զաքարյանին: Ավելին, եղբոր միջոցով նախապես իրազեկվելով՝ Անդրանիկ Քոչարյանը Ժորա Զաքարյանին տեղեկացրել է ներկոտված թղթադրամների նոր, ավելի մեծ խմբաքանակ մաքրելու անհրաժեշտության մասին, որին Ժ.Զաքարյանը համաձայնել է՝ պարտավորվելով դրանք ևս մաքրել:
Այնուհետև, ձեռք բերված ներկոտած թղթադրամների խմբաքանակը Հայաստան տեղափոխելու հարցով Սամվել Բաբայանը դիմել է Կարեն Քոչարյանին, վերջինս էլ ընկերոջը՝ Դավիթ Հարությունյանին, ով համաձայնել է իր կապերի միջոցով օժանդակել ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված՝ հափշտակված, սակայն հատուկ նյութով ներկոտված վերոհիշյալ թղթադրամների խմբաքանակը Մոսկվա քաղաքից Երևան անվնաս տեղափոխելու, այդ կերպ՝ որոշակի խոչընդոտները վերացնելու հարցում: Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Դավիթ Հարությունյանը իր մտերիմ, Մոսկվա-Երևան երկկողմ ուղղություններով բեռների և ուղևորների փոխադրմամբ զբաղվող Գոռ Շակոյանի միջոցով ապահովել է ,SETRA, մակնիշի 94VQ444 համարանիշի երթուղային ավտոբուսի վարորդ Արմեն Հակոբյանի կողմից 5.000 եվրո գումարի տեղափոխումը Երևան: 2016թ. սեպտեմբերի 20-ին Գոռ Շակոյանը Երևան առաքված 5.000 եվրո ներկոտված թղթադրամները վերոնշյալ ավտոբուսի վարորդ Արմեն

Հակոբյանից վերցրել և փոխանցել է Դավիթ Հարությունյանին, սակայն նրանք բռնվել և բերման են ենթարկվել ՀՀ ԱԱԾ վարչական շենք, որտեղ էլ ԱԱԾ աշխատակիցների պահանջով Դ.Հարությունյանը իր ավտոմեքենայի սրահից վերցրել և իրավապահներին է ներկայացրել վերոնշյալ թղթադրամ-ները:
Այսպիսով, Սամվել Բաբայանը կատարել է նաև հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ վերոնշյալ գործողությունների կատարմամբ վերջինիս օժանդակած Կարեն Քոչարյանը, Դավիթ Հարությունյանը, Անդրանիկ Քոչարյանը և Ժորա Զաքարյանը՝ հանցավոր արարքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:
Վերոնշյալ անձինք քրեական պատասխանատվության և պատժի ենթակա են նշված հոդվածների համապատասխան մասերով և կետերով նախատեսված, մեղավորությամբ կատարված հանցանքների համար:

Պատժի և դատավճռով լուծման ենթակա այլ հարցեր.
Ամբաստանյալների նկատմամբ նշանակվող պատժի տեսակը և չափը որոշելիս Դատարանը հաշվի է առնում հետևյալը.
ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործութ-յան այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծան-րությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:
ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասն սահմանում է, որ հանցագործութ-յան համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցա-գործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմաց-նող և/կամ ծանրացնող հանգամանքներով:
ՀՀ Վճռաբեկ դատարանը, Ա.Պապիկյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հոկտեմբերի 26-ի ՎԲ-149/07 գործով մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նորմը, նշել է, որ այն Դատարանին օժտել է անձի պատասխա-նատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման լայն հայեցողությամբ, քանի որ պա-տիժ նշանակելիս Դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այնպիսի հանգա-մանքներ, որոնք նույն հոդվածի առաջին մասում նշված չեն:
Դատարանը, որպես ամբաստանյալ Սամվել Բաբայանի անձը բնութագրող տվյալներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2017թ. մարտի 22-ին կատարված հարցման արդյունքների՝ հաշվի առնելով, որ վերջինս ԼՂՀ Գերագույն դատարանի 2001թ. փետրվարի 26-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 67-րդ, 15-61 հոդվածի 1-ին մասով, 17-61 հոդվածի 1-ին մասով, 15-99 հոդվածի 1-ին մասով, 15-99 հոդվածի 3-րդ մասով, 15-99 հոդվածի 4-րդ մասով, 15-99 հոդվածի 6-րդ մասով, 17-99 հոդվածի 1-ին մասով, 17-99 հոդվածի 3-րդ մասով, 17-99 հոդվածի 4-րդ մասով, 17-99 հոդվածի 6-րդ մասով, 268 հոդվածի ,բ, կետով, 232.1 հոդվածի 2-րդ մասով և 90 հոդվածի 3-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 14 տարի ժամկետով, որպես լրացուցիչ պատիժներ են նշանակվել՝ զինվորական կոչումից և պաշտոնից զրկելը, գույքի բռնագրավում, սակայն ԼՂՀ առաջին ատյանի դատարանի 2003թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ Ս.Բաբայանի արարքները վերաորակվել են ԼՂՀ քրեական օրենսգրքի 34-305, 305 հոդված 39-ի կիրառմամբ, 34-104 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-104 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 34-104 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 104 հոդվածի 1-ին մասով 39 հոդվածի կիրառմամբ, 104 հոդվածի 2-րդ մասով, 104 հոդվածի 6-րդ մասով, 104

հոդվածի 8-րդ մասով, 375 հոդվածի 2-րդ մասով, 238 հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով, 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 179 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 179 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, որպես հիմնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 11 տարի ժամկետով, ԼՂՀ Նախագահի կողմից ներում շնորհվելու հիմքով պատիժների կրումից ազատվել է 2004թ. սեպտեմբերի 18-ին, դատվածությունը մարված), ԼՂՀ ինքնապաշտպանական գործողություններին ակտիվորեն մասնակցելը, իսկ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք՝ փողերի լվացման դրվագով վերագրված հանցանքը կատարելիս առանձնապես ակտիվ դերը՝ հաշվի առնելով, որ նա է պայմանավորվել հափշտակված այդ գումարների իրացմամբ զբաղվող անձանց հետ, դրանք ձեռք բերելու, ՀՀ տեղափոխելու, մաքրելու և իրացնելու հա-մար ներգրավվել մի շարք անձանց, տվյալ դեպքում՝ սույն գործով ամբաստանվող Կ.Քոչարյանին, վերջինիս միջոցով Դ.Հարությունյանին, Ա.Քոչարյանին և Ժ.Զաքարյանին:
Դատարանը, որպես ամբաստանյալ Սանասար Գաբրիելյանի անձը բնութագրող տվյալներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2017թ. մարտի 3-ին կատարված հարցման արդյունքների), նաև կամավորության հիմունքներով ԼՂՀ ինքնապաշտպանական և ՀՀ սահմանների պաշտպա-նական մարտական գործողություններին մասնակցելը (ըստ մարտական ուղու վերաբերյալ ՀՀ ՊՆ թիվ 75937 զորամասի հրամանատարի տրամադրած տեղեկանքի), ՀՀ զինված ուժերում ծառայելու ընթացքում պարգևատրվելը (ըստ ՀՀ Նախագահի 2000թ. մայիսի 26-ի թիվ ՆՀ-587 հրամանագրի՝ պարգևատրվել է Արիության մեդալով), խնամքին՝ 2003թ. սեպտեմբերի 18-ին ծնված որդու՝ էդգար Սանասարի Գաբրիելյանի առկայությունը (ըստ ԱԱ սերիայի 384203 համարի ծննդյան վկայականի պատճենի), իսկ որպես պատասխանատ-վությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ բնակության վայրում դրականորեն բնութագրվելը (ըստ Արմավիր մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վ.Գրիգորյանի կողմից 2017թ. նոյեմբերի 10-ին տրված բնութագրի) :
Դատարանը որպես ամբաստանյալ Ս.Գաբրիելյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է գնահատում՝ հանցանքը կատարելիս առանձնապես ակտիվ դերը՝ հաշվի առնելով, որ վերջինս միակ անձն է, ով ճանաչել, անմիջականորեն կապ է պահպանել և պայմանավորվածություններ ձեռք բերել ռազմամթերքի դրվագին առնչվող գրեթե բոլոր անձանց /բացառությամբ որպես մեղադրյալ ներգրավված Ռոբերտ Աղվանյանի/, դրանց թվում՝ թե՛ հանցավոր խմբի կազմում ընդգրկվածների, թե՛ վերոնշյալ հանցանքը կատարելուն դրդած Ս.Բաբայանի հետ:
Դատարանը, որպես ամբաստանյալ Արմեն Պողոսյանի անձը բնութագրող տվյալներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2017թ. մարտի 22-ին կատարված հարցման արդյունքների), վատառողջ լինելը (ըստ ՀՀ ԱՆ Վաղարշապատի հիվանդանոց ախտորոշիչ բաժանմունքի բժիշկ-սոնոգրաֆիստ Հ.Ռևազյանի տված եզրակացության և բժշկական այլ փաստաթղթի), խնամքին գործազուրկ կնոջ՝ էլիզա Սողոմոնյանի, կենսաթոշակառու ծնողների՝ Նշան Պողոսյանի և Զեմմա Մխիթարյանի և առկայությունը (ըստ Վաղարշապատ քաղաքի Պատկանյան փողոցի թաղային լիազոր Գրիգորյանի կողմից 2017թ. նոյեմբերի 15-ին տրամադրած տեղեկանքի, էջմիածնի կենսաթոշակային ապահո-վագրության տարածքային կենտրոնի կողմից տրամադրված թիվ 12772 և 9260 վկայականների պատճենների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Վա-ղար-շապատի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն Ժ.Ումուրշատյանի կողմից 2017թ. նոյեմբերի 17-ին տրամադրված թիվ 301 տեղեկանքի), իսկ որպես պատասխանատ-վությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ բնակության վայրում դրականորեն բնու-թագրվելը (ըստ Վաղարշապատ քաղաքի Պատկանյան փողոցի թաղային լիազոր Գրիգոր-յանի տրամադրած բնութագրի, մինչդատական վարույթում խոստովանական ցուցմունքներ տալը:
Դատարանը, որպես ամբաստանյալ Կարեն Քոչարյանի անձը բնութագրող

տվյալներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2016թ. սեպտեմբերի 22-ին կատարված հարցման արդյունքների), ամուսնացած լինելը (համաձայն ամուսնության ԱԱ սերիայի թիվ 123502 վկայականի պատճենի), ֆիզիկապես վատառողջ լինելը (համաձայն ,Նաիրի, ԲԿ բժիշկ Ա.Գասպարյանի կողմից 2017թ. նոյեմբերի 16-ին տրված տեղեկանքի՝ ախտորոշվել է ,Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ (Բեխտերևի հիվանդություն), ակտիվություն 2, պերիֆերիկ ձև, երկկողմանի սակրոիլեիտ, ողնաշարի ֆունկցիայի խանգարում II աստիճան,, իսկ ,էրեբունի, ԲԿ օրթոպեդիայի բաժանմունքի կլինիկայի ղեկավար Ա.Չարչյանի և բուժող բժիշկ Հ.Գյուլ-զադյանի կողմից 2014թ. մարտի 15-ին տրված էպիկրիզի և այլ փաստաթղթերի՝ ախտորոշվել է ,աջ ծնկահոդի սինովիտ, պաթոլոգիկ մեդիոպատելար պլիկա,, իսկ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ խնամքին՝ 2004թ. փետրվարի 13-ին ծնված Միսակ Կարենի Քոչարյանի և 2007թ. հուլիսի 22-ին ծնված Դավիթ Կարենի Քոչարյանի առկայությունը (համաձայն ծննդյան թիվ ԱԱ սերիայի 161606 վկայականի և Նիդերլանդների Լայդեն քաղաքի քաղաքացիական ակտերի գրանցման բաժնի ծննդյան գրանցման թիվ 100362 ակտի քաղվածքի պատճենների), բնակության վայրում դրականորեն բնութագրվելը (համաձայն՝ Երևանի Աջափնյակ համայնքի ,Ֆիզիկոս, համա-տիրության նախագահ Մ.Գալստյանի կողմից 2017թ. հոկտեմբերի 9-ին հաստատված բնու-թագրի), հանցանքը Ս.Բաբայանից անձնական կախվածության ազդեցության տակ կատարելը՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ արարքը կատարել է՝ մտերիմ Ս.Բաբայանի խնդրանք-հանձնարարությունները կատարելով, ինչպես նաև դեռևս մինչդատական վա-րույթում խոստովանական ցուցմունքներ տալը:

Դատարանը, որպես ամբաստանյալ Անդրանիկ Քոչարյանի անձը բնութագրող տվյալներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2016թ. սեպտեմբերի 22-ին կատարված հարցման արդյունքների), ամուսնացած լինելը (համաձայն ամուսնության թիվ 388540 վկայականի պատճենի), ֆիզիկապես վատառողջ լինելը (համաձայն ,Արամյանց, ԲԿ սրտաբանական կլինիկայի ղեկավար Կ.Ադամյանի, տնօրեն Ս.Հարությունյանի, ինվազիվ սրտաբան Մ.Ադամյանի և բուժող բժիշկ Ն.Հարությունյանի կողմից 2015թ. սեպտեմբերի 8-ին հաստատված թիվ 1217/361 էպիկրիզի և այլ փաստաթղթերի՝ ախտորոշվել է ,Զարկերակային հիպերտենզիա III աստ. բարձր ռիսկ, հաճախակի կրիզային ընթացքով: Հիպերտոնիկ էնցեֆալոպաթիա: Հի-պերխոլեստերինէմիա IIb (ըստ Ֆրեդրիկսոնի, վիճակ կորոնարոգրաֆիայից հետո (08.09.2015թ.): Խրոնիկական հեպատոխոլեցիստիտ,), իսկ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ բնակության և աշխատանքի վայրերում դրա-կանորեն բնութագրվելը (ըստ Կոտայքի մարզի Բուժական համայնքի ղեկավար Կ.Գալստյա-նի և աշխատակազմի քարտուղար Ն.Խաչատրյանի, ինչպես նաև Կոտայքի մարզի ,Բու-ժականի Գ.Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ-ի տնօրեն Գ.Մուրադյանի և Արիմկոմի նախագահ Հ.Եգլարյանի 2017թ. հոկտեմբերի 13-ին հաստատած բնութագրերի), վերագրված հանցանքը եղբորից՝ Կարեն Քոչարյանից անձնական կախվածության ազդե-ցության տակ կատարելը, մինչդատական վարույթում խոստովանական ցուցմունքներ տալը:

Դատարանը, որպես ամբաստանյալ Ժորա Զաքարյանի անձը բնութագրող տվյալ-ներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆոր-մացիոն կենտրոն 2016թ. սեպտեմբերի 22-ին կատարված հարցման արդյունքների), տարիքը (67 տարեկան է), իսկ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք՝ մինչդատական վարույթում խոստովանական ցուցմունքներ տալը:

Դատարանը, որպես ամբաստանյալ Դավիթ Հարությունյանի անձը բնութագրող տվյալներ է գնահատում՝ նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2016թ. սեպտեմբերի 19-ին կատարված հարցման արդյունքների), ամուսնացած

լինելը, իսկ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ խնամքին՝ զավակների՝ 2012թ. հունվարի 18-ին ծնված Ալեն Դավիթի Հարությունյանի և 1999թ. դեկտեմբերի 13-ին ծնված Գոռ Դավիթի Հարությունյանի, 2-րդ խմբի հաշմանդամ մոր՝ Անահիտ Օնիկի Թադևոսյանի առկայությունը (համաձայն թիվ ԱԱ սերիայի 226321 համարի և ԱԲ սերիայի 179347 համարի ծննդյան վկայականների և բժշկասոցիալական փորձաքննության թիվ 1101491 որոշման պատճենների), բնակության վայրում դրականորեն բնութագրվելը (համաձայն՝ Երևանի Աջափնյակ համայնքի ,Ֆիզիկոս, համատիրության նախագահ Մ.Գալստյանի կողմից հաստատված բնութագրի և 2017թ. հուլիսի 28-ին տրված տեղեկանքի), դեռևս մինչդատական վարույթից խոստովանական ցուցմունքներ տալն ու անկեղծորեն զղջալը, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն աջակցելը՝ հաշվի առնելով, որ նա է վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել լեգալացման ենթակա գումարը՝ ներկոտված 5.000 եվրոն:
Դատարանն ամբաստանյալներ Արմեն Պողոսյանի, Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի, Անդրանիկ Քոչարյանի և Ժորա Զաքարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չարձանագրեց:
Պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող վերոնշյալ հան-գամանքները, ամբաստանյալների անձը բնութագրող տվյալներն հաստատված են գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված, թույլատրելիության ու վերաբերելիության չափանիշներին համապատասխանող ապացույցներով, ողջամտորեն նվազեցնում (ամբաստանյալներ Ս.Բաբայանի և Ս.Գաբրիելյանի պարագայում՝ նաև բարձրացնում) են նրանցից յուրաքանչյուրի անձի հանրային վտանգավորությունը:
Պատժի նպատակներն ապահովելու համատեքստում անդրադառնալով ամբաս-տանյալների նկատմամբ պատժի նշանակման խնդրին՝ Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են պատիժներ բացառապես ազատազրկման ձևով, հետևաբար՝ սույն գործով քննարկման ենթակա են՝ ամբաստանյալներից յուրաքանչյուրի նկատմամբ նշա-նակվող պատժի, ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ վերջնական պատժի, տվյալ հոդ-վածով, ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ հոդվածներով նախատեսված պատժից ավելի մեղմ պատժաչափ կամ պատժատեսակ նշանակելու (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդ-վածի կիրառում), նշանակվող պատիժը, ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ վերջնական պատիժը կրելու կամ չկրելու (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառում) հարցերը:
Հաշվի առնելով ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանին անձը, նրանցից յուրաքանչյուրին վերագրվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը (ծանր հանցագործություն է), Ս.Բաբայանի դեպքում՝ հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու օրենսդրական պահանջը, Սանասար Գաբրիելյանի և Սամվել Բաբայանի պարագայում՝ նաև վերագրված հանցագործություններում առանձնապես ակտիվ դերը՝ Դատարանը փաստում է, որ նրանց նկատմամբ տվյալ հոդվածով նախատեսվածից ավելի մեղմ պատժաչափ կամ պատժատե-սակ նշանակելու հիմքերը (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառում) բացակայում են: Նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ, Սամվել Բաբայանի դեպքում՝ վերջնական պատիժ կարող է նշանակվել բացառապես ազատազրկման ձևով, տվյալ հոդված/ներ/ով նախատեսված սանկցիաների սահմաններում:
Դատարանը նաև փաստում է, որ ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի անձը դրականորեն բնութագրող տվյալները, նրանց պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող /նաև ծանրացնող/ հանգամանքներն անհրաժեշտ է հաշվի առնել նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ, ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ նաև վերջնական պատիժ սահմանելիս, ինչպես նաև նշանակված այդ պատիժը/վերջնական պատիժը/ կրելու նպատակահար-մարության հարցը որոշելիս:

Ամբաստանյալ Ս.Բաբայանի կատարած յուրաքանչյուր հանցանքի համար պատիժ, իսկ հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ սահմանելիս Դատարանն հաշվի է առնում նաև այն, որ սույն գործով վերջինիս մեղսագրվում է ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ ծանր և միջին հանցագործությունների կատարում, հետևաբար՝ նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով, որը կիրառելի է համարում նաև պատիժները մասնակիորեն գումարելու կանոնը:
Անդրադառնալով ամբաստանյալների նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատիժը ռեալ կրելու կամ չկրելու (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառում) խնդրին՝ Դատարանը հաշվի է առնում հետևյալը.
ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կա-լանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշա-նակելիս հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելն հնարավոր է առանց պա-տիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխա-նատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:
ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ դրույթների մեկնաբանությունից ակնհայտ է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ինչպես հանցագործությունների տեսակների, քանակի, հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի ու բնույթի, այնպես էլ անձանց շրջանակի հետ կապված որևէ հատուկ սահմանափակում օրենսդիրը չի նախատեսել, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարվում դատարանի համոզվածությունն առ այն, որ ամբաստանյալի ուղղվելն հնարավոր է առանց որոշակի պատժատեսակները ռեալ կրելու (Հասմիկ Պետրոսյանի վերաբերյալ թիվ ԱՐԱԴ/0050/01/08 քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 29-ի որոշում):
Դատարանի այդ համոզվածությունը կարող է կայանալ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված (ինչպես նաև չնախատեսված, բայց Դատարանի համոզմամբ այդպիսին դիտարկվող) և 63-րդ հոդվածում սպառիչ թվարկված, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների գնահատման արդյունքներով:
Սակայն, դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, տվյալ հարցը քննարկելիս և լուծելիս պարտավոր է հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ինչը նշանակվող պատժի արդարացիության գրավականն է:
Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հան-ցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը, (տե՛ս, Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0078/01/09 որոշման 11-12-րդ կետերը):
Արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի մասին դիրքորոշում Վճռաբեկ դատարանն արտահայտել է Գարուշ Նորիկի Մադաթյանի վերաբերյալ 2009 թվա-կանի փետրվարի 17-ի ԵՇԴ/0029/01/08 գործով որոշման մեջ, որի համաձայն՝ ,Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:
Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ

պատճառված վնասի չափը, հանցա-գործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը,:
Ձարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Վ.Բեգյանի գործով որոշման մեջ արձանագրել է, որ ,(…) պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի՝
ա) կատարված հանցագործության նպատակն ու շարժառիթը,
բ) քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը,
գ) կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը,
դ) հանցագործության կատարման եղանակը,
ե) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը,
զ) հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը (…), (Վանյա Ռաֆիկի Բեգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13 որոշման 14-րդ կետը):
Վերոնշյալ իրավական վերլուծությունները սույն գործով հաստատված հանգամանք-ների վրա տարածելով՝ Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներից յուրա-քանչյուրի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատժի չափը որոշելիս և պատիժը (ամբաստանյալ Սամվել Բաբայանի պարագայում՝ վերջնական պատիժը) կրելու նպատակահարմարության հարցը պարզելիս հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի է առնել հան-ցակցության ձևը և տեսակը, կատարված հանցագործության մեջ յուրաքանչյուր ամբաստանյալի մասնակցության աստիճանն ու դերակատարությունը, հանցանքը կատա-րելու նպատակը և շարժառիթը, մեղքի տեսակը, հանցագործության ավարտից հետո դրսևորած վարքագիծը, յուրաքանչյուրի անձը դրականորեն բնութագրող տվյալները, պա-տասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխա-նատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը (վերջինս՝ բացառությամբ ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի և Սամվել Բաբայանի):
Վերոնշյալ բոլոր հանգամանքների ու անձը բնութագրող տվյալների համադրության և ամբողջական գնահատման պայմաններում է հնարավոր պատշաճ հետևության հանգել պատժի նպատակներն ապահովելու տեսանկյունով ամբաստանյալներից յուրաքանչյուրի նկատմամբ նշանակվող պատիժը (ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ վերջնական պատիժը) կրելու կամ չկրելու նպատակահարմարության վերաբերյալ:
Վերոնշյալ իրավական վերլուծությունների և մեջբերումների լույսի ներքո՝ դա-տաքննությամբ հետազոտված բոլոր ապացույցների համադրման և գնահատման արդյունքներով՝ Դատարանը փաստում է, որ ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի և Արմեն Պողոսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատիժը, իսկ Սամվել Բաբայանի պարագայում՝ վերջնական պատիժը պայմանականորեն չկիրառելու քրեաիրավական հիմքերը բացակայում են, ինչը պայմանավորված է նրանց վերագրված հանցագործության բնույթով և վտանգավորության աստիճանով (կատարել են ծանր կամ նաև ծանր հանցագործություն), ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի և Սամվել Բաբայանի դեպքում՝ հանցանքները կատարելիս առանձնապես ակտիվ դերով, ամբաս-տանյալ Սամվել Բաբայանի պարագայում՝ նաև հանցագործությունների քանակով և հան-ցանքների համակցությամբ պատիժ նշանակելու անհրաժեշտությամբ:
Դատարանը ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի անձը դրականորեն բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները հաշվի է առնում նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ազա-տազրկման ձևով նշանակվող պատժի, ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ նաև վերջնական պատժի չափը որոշելիս և դրանք անհատականացնելիս:

Ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի, Անդրանիկ Քոչարյանի և Ժորա Զաքարյանի նկատմամբ նշանակվող պատիժը նպատակահարմար է չկիրառել, առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելու քրեաիրավական հիմքերը և հետևյալ փաստարկները.
- Ամբաստանյալ Կարեն Քոչարյանը նախկինում դատապարտված չէ, կատարել է միջին ծանրության հանցանք, քննվող դեպքին մասնակցել է օժանդակողի կարգավիճակով, ունի բարձրագույն կրթություն, վատառողջ է, ամուսնացած է, խնամքին են՝ 9-ամյա և 12-ամյա զավակները, բնութագրվում է դրականորեն, հանցանքը կատարել է ամբաստանյալ Ս.Բաբայանից անձնական կախվածության մեջ գտնվելու ազդեցությամբ, դեռևս մինչդա-տական վարույթից տվել է խոստովանական ցուցմունքներ, նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են:
- Ամբաստանյալ Դավիթ Հարությունյանը նախկինում դատապարտված չէ, ունի բարձրագույն կրթություն, ամուսնացած է, նրա խնամքին են գտնվում 5-ամյա և 17-ամյա զավակները, 2-րդ խմբի հաշմանդամ մայրը, բնութագրվում է դրականորեն, կատարել է միջին ծանրության հանցանք, քննվող դեպքին մասնակցել է օժանդակողի կարգավիճակով, դեռևս մինչդատական վարույթից տվել է խոստովանական ցուցմունքներ և զղջացել է, աջակցել է հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն՝ հաշվի առնելով, որ նա է վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել լեգալացման ենթակա գումարը՝ 5.000 եվրոն, նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են:
- Ամբաստանյալ Անդրանիկ Քոչարյանը նախկինում չդատապարտված է, վատառողջ է, ամուսնացած է, բնակության և աշխատանքի վայրերում բնութագրվում է դրականորեն, կատարել է միջին ծանրության հանցանք, քննվող դեպքին մասնակցել է օժանդակողի կարգավիճակով, վերագրված հանցանքը կատարել է հարազատ եղբորից՝ գործով ամբաստանյալ Կարեն Քոչարյանից անձնական կախվածության ազդեցության տակ, մինչդատական վարույթում տվել է խոստովանական ցուցմունքներ, նրա պատաս-խանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են:
- Ամբաստանյալ Ժորա Զաքարյանը նախկինում չդատապարտված է, կատարել է միջին ծանրության հանցանք, քննվող դեպքին մասնակցել է օժանդակողի կարգավիճակով, 67 տարեկան է, մինչդատական վարույթում տվել է խոստովանական ցուցմունքներ, նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են:
Այսպիսով, վերոնշյալ վերլուծությունների և դատողությունների լույսի ներքո՝ յուրա-քանչյուր ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները և պատասխանատվությունն ու պա-տիժը մեղմացնող հանգամանքները միմյանց հետ համադրելու և համակցությամբ գնահատելու արդյունքներով Դատարանը հանգում է այն համոզվածության, որ սոցիալական արդարության վերականգնելը, ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի, Անդրանիկ Քոչարյանի և Ժորա Զաքարյանի ուղղվելը և նոր հանցագոր-ծությունների կանխելը հնարավոր է նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու և ողջամիտ ժամկետով (վե-րագրված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը հաշվի առնելով՝ 2 տարով) փորձաշրջան սահմանելու, այլ կերպ՝ արդարացի պատիժ նշանակելու պայմաններում:
Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջներով, արձանագրում է նաև, որ ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի և Ժորա Զաքարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ հետևության հանգելու պայմաններում նախքան փորձաշրջան նշանակելն անհրաժեշտ է նրանցից յուրաքանչյուրի պատժի ժամկետին հաշվակցել նախաքննության ընթացքում նրանց անազատության մեջ պահելու (ձեր-բակալման մեջ գտնվելու) ժամանակահատվածը՝ 3 օրը:

Քննարկելով ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը պահպանելու հարցը՝ Դատարանը փաստում է, որ այդ խափանման միջոցը վերացնելու կամ փոփոխելու հիմքերը բացակայում են՝ պայմանավորված նրանց իրական պատժի՝ ազատազրկման դատապարտելու և դատավճռի կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ: Միաժամա-նակ անդրադառնալով ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի պատժի կրման սկիզբը հաշվարկելու և անազատության մեջ գտնվելու ժամկետը պատժին, ամբաստանյալ Ս.Բաբայանի դեպքում՝ վերջնական պատժին հաշ-վակցելու հարցերին՝ Դատարանը փաստում է, որ ամբաստանյալների պատժի կրման սկիզբն անհրաժեշտ է հաշվարկել սույն գործով նրանց արգելանքի վերցնելու օրվանից՝ 2017թ. մարտի 22-ից: Վերոնշյալ հաշվարկի պայմաններում ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանին, Արմեն Պողոսյանին և Սամվել Բաբայանին կալանքի տակ պահելու ժամ-կետները լրացուցիչ հաշվակցելու անհրաժեշտությունը վերանում է, քանի որ հաշվակցման ենթակա ժամկետը, առանց ընդհատման, ընդգրկում և ընդգրկելու է անազատության մեջ նրանցից յուրաքանչյուրի հայտնվելու առաջին իսկ օրվանից մինչև սույն դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելն ընկած ողջ ժամանակահատվածը:

Անդրադառնալով ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի, Անդրանիկ Քոչարյանի և Ժորա Զաքարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցների հարցերին՝ Դատարանը փաստում է, որ սույն դատավճիռը կայացնելու պահին նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստո-րագրությունը փոփոխելու կամ վերացնելու հիմքերը բացակայում են, դրանք անհրաժեշտ է թողնել անփոփոխ՝ մինչև սույն դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս Դատարանը պարտավոր է անդրադառնալ նաև իրեղեն ապացույց-ների, դատական ծախսերի, գույքի նկատմամբ կիրառված (կիրառվելիք) արգելանքի, քաղա-քացիական հայցի հարցերին:

Անդրադառնալով իրեղեն ապացույցների տնօրինման խնդրին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով՝ Դատարանը փաստում է, որ որպես իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ԱԱԾ քննչական վարչությանն ի պահ հանձնված ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակովը և դրանում առկա 9Մ39 տեսակի, 03277 համարի հրթիռն անհրաժեշտ է թողնել նախաքննական այդ մարմնի տնօրինությանը, իսկ Դատարանում պահվող 50 եվրո անվանական արժեքով 100 (հարյուր), 50 եվրո անվանական արժեքով 1 (մեկ) և 20 եվրո անվանական արժեքով 2 (երկու) թղթադրամներն անհրաժեշտ է վերադարձնել ՀՀ ԱԱԾ քննչական վարչությանը՝ նախաքննական այդ մարմնի վարույթում այլ անձանց վերաբերյալ շարունակվող թիվ 58204317 քրեական գործին կցելու և այդ գործի շրջանակներում տնօրինելու նպատակով: Իրեղեն ապացույց ճանաչված և Դատարանում պահվող՝ ամբաստանյալներ Ժորա Զաքարյանի և Անդրանիկ Քոչարյանի բնակարանների խուզար-կությամբ հայտնաբերված և վերցված քիմիական նյութերը՝ տարաներով հանդերձ, անհրաժեշտ է վերադարձնել նրանցից յուրաքանչյուրին (մինչ կոնկրետ բնակարանից դրանց առգրավումը փաստացի տիրապետող գործով ամբաստանյալին)՝ ի տնօրինություն:

Դատարանը արձանագրում է, որ որպես դատական ծախս՝ գործով ամբաստանյալներ Սամվել Անդրանիկի Բաբայանից, Սանասար Անդրանիկի Գաբրիելյանից և Արմեն Նշանի Պողոսյանից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության (ՀՀ պետական բյուջեի) համապարտությամբ անհրաժեշտ է բռնագանձնել ընդհանուր 339.000 (երեք հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ գումար /2017թ. մարտի 24-ի թիվ 17-0554/1 համակարգչատեխնիկական փորձաքննության կատարման վրա ծախսված 137.400 ՀՀ դրամ և 2017թ. հունիսի 7-ի թիվ 31611706 տեսաձայնագրային փորձաքննության կատարման վրա ծախսված

201.600 ՀՀ դրամ գումարները, քանի որ այդ փորձաքննությունների արդյունքները դրված են գործով ամբաստանյալներ Սամվել Անդրանիկի Բաբայանի, Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի և Արմեն Նշանի Պողոսյանի մեղադրանքների հիմքում/:
Դատաքննությամբ հետազոտված ապացույցներով պարզվեց նաև, որ սույն գործով նշանակված և կատարված փորձաքննությունների կատարման վրա ծախսվել են հետևյալ գումարները՝ 2016թ. հոկտեմբերի 5-ի թիվ 41891603 դատաձգաբանական փորձաքննության կատարման վրա՝ 33.600 ՀՀ դրամ, 2017թ. ապրիլի 7-ի թիվ 17-0554/1 համակարգչատեխնիկական փորձաքննության կատարման վրա՝ 480.900 ՀՀ դրամ, 2017թ. ապրիլի 21-ի թիվ 17-0554/3 համակարգչատեխնիկական փորձաքննության կատարման վրա՝ 412.200 ՀՀ դրամ, սակայն վերոնշյալ փորձագիտական եզրակացությունները գործով ամբաստանյալների մեղադրանքների հիմքում դրված և մեղադրական եզրակացությունում վկայակոչված չեն, հետևաբար՝ սեփական ռիսկով վերոնշյալ փորձաքննությունները նշանակելու, սակայն ապացուցողական արժեք ներկայացնող որևէ նյութ ձեռք չբերելու բացասական հետևանքները չպետք է տարածվեն գործով ամբաստանյալների վրա՝ հանգեցնելով այդ գումարների բռնագանձմանը:
Դատարանն արձանագրում է նաև, որ սույն քրեական գործով ամբաստանյալներ Կարեն Քոչարյանի, Դավիթ Հարությունյանի, Անդրանիկ Քոչարյանի և Ժորա Զաքարյանի գույքերի վրա արգելանք չի կիրառվել, նրանց, ինչպես նաև ամբաստանյալներ Սանասար Գաբրիելյանի, Արմեն Պողոսյանի և Սամվել Բաբայանի դեմ քաղաքացիական հայց չի ներկայացվել:
Անդրադառնալով դեռևս մինչդատական վարույթից արգելանքի տակ գտնվող գույքերի տնօրինման խնդրին և քննարկելով գործով ամբաստանյալ Ս.Բաբայանի ,MERCEDES - BENZ S600, մակնիշի 44 UU 444 համարանիշի ավտոմեքենայի վրա դրված կալանքը վերացնելու վերաբերյալ լուծումն հետաձգված միջնորդությունը՝ Դատարանը փաստում է, որ Արմեն Նշանի Պողոսյանի անվամբ հաշվառված՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի 61-րդ շենքի 5-րդ բնակարանի, Սամվել Անդրանիկի Բաբայանի անվամբ հաշվառված ,MERCEDES - BENZ S600, մակնիշի 44 UU 444 համարանիշի ավտոմեքենայի, Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի անվամբ հաշ-վառված ,NISSAN PATHFINDER 3.5, մակնիշի 05 SO 075 համարանիշի ավտոմեքենայի, ինչպես նաև Սանասար Անդրանիկի Գաբրիելյանին, այդ թվում՝ համատեղ սե-փականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի՝ Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում գտնվող վարելահողի /04-035-0154-0012/, խանութի /04-035-0034-0007/, անասնաշենքի /04-035-0034-0013/ և երեք միավոր պահեստի /04-035-0034-0007, 04-035-0034-0014, 04-035-0034-0013/, տնամերձ հողամասով բնակելի տան /04-035-0034-0006/ նրա բաժնեմասի նկատմամբ մինչդատական վարույթի ընթացքում՝ դեռևս 2017թ. մարտի 31-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Դ.Թորոսյանի կայացրած որոշումներով դրված կալանքն անհրաժեշտ է պահպանել՝ մինչև սույն գործով դատական ծախսերի լրիվ փոխհատուցումը:
Գնահատելով և ամփոփելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 119-րդ, 357-360-րդ, 364-365-րդ, 369-373-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց՝

Ժորա Գերասիմի Զաքարյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 2/երկու/ տարի ժամկետով:
Պատժի նշված ժամկետին հաշվակցելով նախաքննության ընթացքում անազատության մեջ գտնվելու 3 /երեք/ օրը՝ Ժորա Զաքարյանի նկատմամբ նշանակված և չկրած պատիժը՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ)

ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն պայմանականորեն չկի-րառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:
Ժորա Զաքարյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանմանը:
Անդրանիկ Իշխանի Քոչարյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 2(երկու) տարի ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Անդրանիկ Քոչարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված վերոնշյալ պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:
Անդրանիկ Քոչարյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանմանը:
Դավիթ Վլադիմիրի Հարությունյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 2(երկու) տարի ժամկետով:
Պատժի նշված ժամկետին հաշվակցելով նախաքննության ընթացքում անազատության մեջ գտնվելու 3/երեք/ օրը՝ Դավիթ Հարությունյանի նկատմամբ նշանակված և չկրած պատիժը՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն պայմանա-կանորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:
Դավիթ Հարությունյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանմանը:
Կարեն Իշխանի Քոչարյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով:
Պատժի նշված ժամկետին հաշվակցելով նախաքննության ընթացքում անազատության մեջ գտնվելու 3/երեք/ օրը՝ Կարեն Քոչարյանի նկատմամբ նշանակված և չկրած պատիժը՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն պայմանականորեն չկիրառել՝ սահ-մանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:
Կարեն Քոչարյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանմանը:
Արմեն Նշանի Պողոսյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 2(երկու) տարի ժամկետով:
Արմեն Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ, պատժի կրման սկիզբը հաշվել նրան փաստացի արգելանքի վերցնելու օրվանից՝ 2017թ. մարտի 22-ից:
Սանասար Անդրանիկի Գաբրիելյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 3(երեք) տարի ժամկետով:
Սանասար Գաբրիելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ, պատժի կրման սկիզբը հաշվել նրան փաստացի արգելանքի վերցնելու օրվանից՝ 2017թ. մարտի 22-ից:
Սամվել Անդրանիկի Բաբայանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել պատիժ՝
ՀՀ քրեական 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում 3 (երեք)

	տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3(երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելով՝ Սամվել Բաբայանի նկատմամբ որպես վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով: Սամվել Բաբայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ, պատժի կրման սկիզբը հաշվել նրան փաստացի արգելանքի վերցնելու օրվանից՝ 2017թ. մարտի 22-ից: Որպես դատական ծախս՝ Սամվել Անդրանիկի Բաբայանից, Սանասար Անդրանիկի Գաբրիելյանից և Արմեն Նշանի Պողոսյանից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության (ՀՀ պետական բյուջեի) համապարտությամբ բռնագանձել 339.000 (երեք հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ գումար: Արմեն Նշանի Պողոսյանի անվամբ հաշվառված՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի 61-րդ շենքի 5-րդ բնակարանի, Սամվել Անդրանիկի Բաբայանի անվամբ հաշվառված ,MERCEDES - BENZ S600, մակնիշի 44 UU 444 համարանիշի ավտոմեքենայի, Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի անվամբ հաշվառված ,NISSAN PATHFINDER 3.5, մակնիշի 05 SO 075 համարանիշի ավտոմեքենայի, ինչպես նաև Սանասար Անդրանիկի Գաբրիելյանին, այդ թվում՝ համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի՝ Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում գտնվող վարելահողի /04-035-0154-0012/, խանութի /04-035-0034-0007/, անասնաշենքի /04-035-0034-0013/ և երեք միավոր պահեստի /04-035-0034-0007, 04-035-0034-0014, 04-035-0034-0013/, տնամերձ հողամասով բնակելի տան /04-035-0034-0006/ նկատմամբ նրա բաժնեմասի վրա նախաքննական մարմնի 2017թ. մարտի 31-ին կայացրած որոշումներով դրված կալանքը պահպանել՝ մինչև սույն գործով դատական ծախսերի լրիվ փոխհատուցումը: Իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ԱԱԾ քննչական վարչությանն ի պահ հանձնված ,Իգլա, տեսակի դյուրակիր զենիթահրթիռային համալիրի արձակման խողովակովը և դրա-նում առկա 9Մ39 տեսակի, 03277 համարի հրթիռը թողնել նախաքննական այդ մարմնի տնօրինությանը, Դատարանում պահվող 50 եվրո անվանական արժեքով 100 (հարյուր), 50 եվրո անվանական արժեքով 1 (մեկ) և 20 եվրո անվանական արժեքով 2 (երկու) թղթադրամները վերադարձնել ՀՀ ԱԱԾ քննչական վարչությանը՝ նախաքննական այդ մարմնի վարույթում այլ անձի վերաբերյալ շարունակվող թիվ 58204317 քրեական գործին կցելու և տնօրինելու նպատակով: Իրեղեն ապացույց ճանաչված և Դատարանում պահվող՝ Ժորա Զաքարյանի և Անդրանիկ Քոչարյանի բնակարանների խուզարկությամբ հայտնաբերված և վերցված քիմիական նյութերը՝ տարաներով հանդերձ, վերադարձնել նրանցից յուրաքանչյուրին՝ ի տնօրինություն: Դատավճիռը ստացման օրվանից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.Ժ.ՎԱՐԴԱՆՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	28-11-2017
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը գեներացվել է www.datalex.am պորտալի կողմից 29 Նոյեմբեր 2017